



Ոգի-Նաիրի  
Vogi-Nairi

**Trevor ŽAHRA**  
**VESPRI**

Novelli

Tradotti għall-Armen mill-verżjoni Ingliża minn  
Astghik Atabekyan

**Trevor ŽAHRA**  
**VESPER**

Stories

Translation from English into Armenian  
by Astghik Atabekyan

Vogi-Nairi, Yerevan

Թրևոր ԶԱՀՐԱ

# ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

*պատմականություն*

Թարգմանություններն անգլերեն տարբերակից՝  
Աստղիկ ԱԹԱՐԵՎԿԱՆԻ

Երևան 2023

ՀՏԴ 82-32 Ձահրա  
ԳՄԴ 84(4)-44  
Ձ 217

«Գեղարմ» հանդեսի մատենաշար

**Թ. Ձահրա**

**Ձ 217 Երեկոյան ժամերգություն.** պատմվածքներ/ Թ. Ձահրա:

Թարգմանություններն անգլերեն տարբերակից՝ Ա. Աթաբեկյանի.–  
Եր.: «Ոգի-Նաիրի» հրատ., 2023.– 172 էջ:

Թրևոր Ձահրան ժամանակակից մայթացի գրող է: Նա մեծ սեր է վայելում հայրենի ընթերցողների շրջանում: Ձահրան մի շարք ժանրերի վարպետ է, հատկապես նրա մանկական գրքերը տարիներ շարունակ ծիծաղով են լցրել բազմաթիվ տներ ու դասասենյակներ: Նրա վեպերն ու պատմվածքների ժողովածուները հուզել են նաև չափահաս ընթերցողների սրտերն ու մտքերը: Ձահրայի տաղանդը բարձր գնահատականի է արժանացել Մայթայի Գրքի ազգային խորհրդի կողմից, որը 2020 թվականին նրան մրցանակ է շնորհել գրական նվաճումների համար:

Գրեթե բոլոր տարիքի մարդկանց հասցեագրված սույն ժողովածուն առաջին անգամ մայթերեն հրատարակվել է 2015 թվականին:

Translation was funded by the National Book Council's  
Malta Book Fund 2022



Թարգմանությունը ֆինանսավորել է  
Մայթայի Գրքի ազգային խորհուրդը՝  
Գրքի հիմնադրամի միջոցով (2022)

ՀՏԴ 82-32 Ձահրա  
ԳՄԴ 84(4)-44

**ISBN 978-9939-75-947-0**

- © T. Zahra, 2015
- © Clare Vassallo (for English translation), 2021
- © Ոգի-Նաիրի (թարգմանության համար), 2023

ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

**Ջիզելի և Քնինի  
Աարոնի և Լավինիայի համար**

## ՁԵՍԱՔԵԼ

Սովոր եմ մեքենան վարել երրորդ գծով: Գուցե պատճառն այն է, որ սիրում եմ ուրիշներից մի քիչ ավելի արագ տեղաշարժվել: Այնպիսի տպավորություն է, որ երկրորդ գծով քշող վարորդներն անջատել են շարժիչները: Կամ էլ այսօր սովորականից ավելի անհամբեր եմ. մի ամբողջ օր հանդիպումներ եմ ունեցել, դեսուդեն վազվզել: Տուն վերադառնալու համար ավելի վատ ժամանակ հնարավոր չէր ընտրել: Հինգն անց երեսուն խցանման մեջ հայտնվելը շնչահեղձ է անում ինձ: Փորձիր չմեռնել: Ուղիո լսիր, մի այլքից մյուսը փոխիր. այգեպանը խորհուրդներ է տալիս մարդկանց, որոնք մաղադանոսի տերևը չեն տարբերում բանանի տերևից, Դի Տեյն իրեն հիմարի պես է պահում, աչքերը լայն բացած հոգևորականը փորձում է փոխել տիեզերքը: Եվ նախկին նախարար Չգիտեմինչի ինքնակենսագրության հարյուր հիսուներորդ սերիան: Ես թերևս նախընտրում եմ խցանումը: Կորչի՞ ռադիոն: Հետո նկատում եմ նրան: «Նիսան Տերանո», ինձնից մի քիչ առաջ, երկրորդ գծում: Վարորդը երիտասարդ կին է. ընտիր: Չեմ կարող մի կարգին տևողել: Մազերը շատ շեկ են, համարյա սպիտակ, գուցե գունաթափված, ուղիղ են ու փայլվիլում են արևի ճառագայթների տակ: Բայց դեմքը չեմ տեսնում: Սպասիր: Կարծես թե ուզում է թեքվել: Եթե կարողանայի գոնե մի քիչ առաջ գնալ, ուղիղ նրա կողքին կհայտնվեի ու կտեսնեի: Է՛հ, հիմա նա համարյա կես մետր առաջ է ինձնից: Փախա՛վ: Դիմացիս տղան ոնց որ կիսամեռ է: Բայց ուշադիր նայեցի նրա համարանիշին՝ JES-101: Գուցե անունը Տեսի՞ է: Տեսիկա: Կամ գուցե Տեսաբել: Չ՛, Աստված չանի: Այդ անունով միայն երկու աղջիկ եմ ճանաչում, երկուսն էլ գլխացավանք են, երկուսին էլ կուզեի վերցնել ու պատով տալ: Տեսաբելը չէր կարող այսքան գեղեցիկ մազեր ունենալ: ԾՉ՛. ահա մի քիչ էլ, ու ևս մի մետր կմոտենամ նրան: Հիմա հաստատ կտեսնեմ դեմքը: Գրո՛ղը տանի: Քիչ էր մնում հարվածեի դիմացիս մեքենային: Տեսին կարծես դիտմամբ է անում: Հենց որ դիմացիս մեքենան մի սանտիմետր շարժվում է, ևս արագորեն սահում է առաջ, համարյա դիպչում դրան: Գրագ կգամ՝ զգում է, որ մոտենում եմ իրեն, ու թույլ չի տա-

լիս: Ծաղրում է: Հիմա էլ ձեռքը հանել է պատուհանից: Ներկած եղունգների ծայրերը քառակուսի են: Ամեն եղունգի վրա էլ կարծես փայլփլուն քար կա: Ընտրված է: Եվ երկու փոքրիկ ոսկե ապարանջան ունի: Ինչ է, իրեն սուլթանի կին է պատկերացնում, թե ինչ: Հայելին է ուղղում: Դեռ չեմ տեսնում դեմքը: JES-010-ը, հևարավոր է, ամուսնու մեքենան է, Տեսմունդի: Հենց այդպես էլ կա: «Նիսան Տերանո» տղամարդուն ավելի է սագում: Ներկած եղունգներով մոխրաշիկափեր կնոջ համար չէ: «Տոյոտա Վիզ» կամ «Մագդա-2»-ն ավելի կսագեր: Բայց գուցե ես սեքսիստ եմ: Հևարավոր է, որ այս Տեսի-Տեսիկան մի քիչ տղամարդ կին է ու խոշոր մեքենաներ է նախընտրում: Բայց սպասե՛ք, մենք շարժվում ենք: Էլի մի քիչ: Գրո՛ղը տանի: Երևի զգում է, որ մոտենում եմ: Ասպե՛տը աղջիկ, ծաղրում է. նա էլ է նման մյուս երկու Տեսաբելներին: Հաստատ, Կովարար Տեսաբելն է: Բայց ի՛նչ գեղեցիկ են թևերը: Հիմա թևն ամբողջությամբ մեքենայից դուրս է եկել, ու ինձ թվում է՝ շարժվում է նրա լսած երաժշտության ռիթմի ներքո: Հետաքրքիր է՝ ո՞ր ալիքն է: 93.7 FM: Չէ՛, դա այն հոգևորականի ալիքն է, որը երբեք չի կորցնում հույսը: Գուցե 101-ն է: Չէ: Ա՛հ, իմացա, 89.7: Պետք է որ երգ լինի: Սպասեք ձայնը բարձրացնեմ, թող լսի ու նկատի ինձ: Հետաքրքրության ոչ մի նշույլ: Ավելի բարձրացնեմ: Դեռ տարված է երգով ու հիմա ռիթմով տկտկացնում է: Գրո՛ղը տանի, ի՛նչ զզվելի երաժշտություն է: Ուր որ է նորից կշարժվենք: Կարծես թե արագություն է հավաքում: Բոլորս շարժվում ենք: Փառք Աստուծո՛ւ: Բաց չեմ թողնի տեսադաշտից: Նա զիլ է, հիմա անիվները կճռռացնի ու օդ կբարձրանա: Բայց մի՛ անհանգստացեք, կհասնեմ նրան: Շրջանցիկ ճանապարհն անցնելուց հետո երթևեկությունն արագանում է: Փոքրիկ սատանա է, ինչպե՛ս է սեղմում գազի ոտնակը: Լույսը դեռ կանաչ է. Տեսն արագ անցնում է, ես՝ Լույսպես: Ընտրված կհասնեմ նրան: Գրողը տանի, ձախ թարթիչը միացրեց. Բուկեբել է գնում: Իսկ ես՝ Բիրգեբբուջա: Հիմա ի՛նչ: Սոված փողոցային շան նման հետևի՞ց ընկնեմ: Թե՞ ես էլ ձախ թարթիչ միացնեմ: Հետևիս մեքենան ազդանշան է տալիս, ճանապարհի չի տալիս: Լավ: Գրողի ձոցը գնա, Տեսաբել՛:

Ըարունակիր շեկ ներկել մազերդ: Թեզ սագում է: Եղունգներդ էլ միշտ այդպես հարդարիր: Կովարար քած ես, բայց ես քո թակարդն եմ ընկել, Տեսաբել՛:

## ՁԵՔԱ ՈՒ ՁԻՐԸ

Տեքն ու Տիլն ամուսնացան:

Նրանք այլևս չեն բարձրանում բլուրը՝ մի դույլ ջուր բերելու: Տեքն այլևս չի կոտրում իր թագը, իսկ Տիլը սայթաքելով չի գնում նրա հետևից: Մեծացել են: Սկզբում բացահայտեցին միմյանց մարմինները, լվացվեցին դույլի ջրով ու հասկացան, որ սիրում են իրար: Ամփջապես էլ որոշեցին ամուսնանալ:

Բոլոր ընկերներն ու հարազատները հավաքվեցին մատուռում, որտեղից երևում էր հովիտը:

– Դուք այստեղ եք եկել ձեր հոժար կամքով, ձեր ընտրությամբ ու առանց պարտադրանքի՞, եկել եք, որ միավորվեք ամուսնական կապերով:

– Իհարկե, իհարկե, և որովհետև հոգնել ենք բլուրը բարձրանալ-իջնելուց, ջրհորում էլ այլևս ջուր չի մնացել: Կոշիկի մեջ հարմարավետ տուն ենք կառուցել: Եվ իհարկե, այստեղ ենք եկել մեր հոժար կամքով:

– Պատրա՞ստ եք ամուսնական ճամփորդության, պատրա՞ստ եք միևնույն կյանքի վերջ սիրել ու հարգել իրար:

– Չե՞ք տեսնում, թե ինչքան ենք սիրում իրար: Եթե միայն տեսնեիք, թե ինչպես ենք սեր անում անտառում՝ հարթելով թունավոր սնկերն ու օդ թոցնելով չորացած տերևները: Ա՛խ, ինչքան սիրահարված ենք:

Նրանց հարսանիքի մասնակիցներն էին Աղվեսն ու Կատուն, որոնք շարունակ հայացքներ էին փոխանակում ու գլուխներն օրորում: Յոթ թզուկների աչքերից արցունք էր հոսում: Հենց որ արարողությունն ավարտվեց, բլուրն ուրախ-զվարթ ցատկոտեցին անտառ, որտեղ Ծեր կինն իր շոկոլադե տունը պատրաստել էր տոնակատարության համար: Նյութերը խժռեցին դռները, պատուհանները, շրջանակներն ու ամեն ինչ, խմեցին հեճաններից կաթոռ հյութն ու լիզեցին թեք տանիքի շաքարաշերտը: Կրճուկներից թխվածքաբլիթից հատակն ու հարբեցին ու քնով անցան նրա վրա, ինչ մնացել էր փոքրիկ մեկուսի առանձնատնից: Երբ արթնացան, Տեքն ու Տիլը գնացել էին. դե իհարկե, նրանց մեղրամիսն էր: Որոշեցին մազլցել



Բակլայի ցողունի վրա:

– Հիմա կբռնենք այդ Հավին, որը ոսկե ձվեր է ածում, – ասաց նրան Տեքը:

– Ու կգտնենք Երզող տավիղը, – պատասխանեց Տիլը:

Ճյուղից ճյուղ էին մագլցում, մի ամպից մյուսը ցատկում, մինչև որ նրանց առաջ հայտնվեց Ամրոցը: Բայց այնտեղ ոչ ոք չէր սպասում, որովհետև Հավը դադարել էր ծու ածել, իսկ Հսկան հավով ապուր էր եփել: Ու երբ Հսկան իմացավ, որ Տավիղը վարակվել է խրոնիկական լարինգիտով, ուղղակի հեռացավ՝ նոր ամպիկ գտնելու, իր հետևից փակելով մուտքի դուռը: Նրա կինը, որն արդեն քննադատել էր հսկայի մարմնի հետ սեր անելուն, այլևս հաճույք չէր ստանում, ուստի նա էլ հեռացավ:

– Մի՛ անհանգստացիր, – ասաց Տեքը կնոջը:– Մեր ինչի՞ն են պետք տավիղն ու հավը: Ես կաշխատեմ դեկանվի մոտ, քեզ համար ծղոտից ոսկի կսարքեմ: Ա՛խ, անուշիկս, մենք այնքա՛ն ենք սիրում իրար:

Ու առանց ավելորդ խոսելու շտապեցին ներքև՝ կոշիկի մեջ իրենց հարմարավետ տանը կյանք սկսելու: Բայց Տեքն ու Տիլը չգիտեին, որ իրենց փոքրիկ տնակը մռայլ մառանի վրա էր, որտեղ գորտնուկապատ քթով կիներ խառնում էր եռացող կաթսայի պարունակությունը: Ու մինչ Տեքն օրերն անցկացնում էր անիվը պտտելով, իսկ Տիլը հասմիկի թերթիկներից ծաղկաշղթա էր հյուսում ու խոսում թռչունների հետ, կաթսայի մեջ եռում էր եփուկը: Երբ ժամանակը եկավ, գորտնուկներով ծեր կինը կարմիր խնձոր գցեց կաթսայի մեջ, իսկ երեկոյան այն ափսեով դրեց սեղանի կենտրոնում: Որոշ ժամանակ անց Տեքն ու Տիլը նկատեցին դա. խնձորը սեղանին դնելուց հետո Տեքի մեքենան սկսեց խցանվել, ու ծղոտը վերածվեց ոչ թե ոսկու, այլ կոպիտ խոզանի: Տիլի հասմիկներն էլ չորացան ու կարծրացան, իսկ ծաղկաշղթաները վերածվեցին փշե պսակների: Թռչուններն այլևս չէին խոսում նրա լեզվով:

Մի օր նրանք նկատեցին ափսեի մեջ դրված խնձորն ու յուրաքանչյուրը մի կտոր կծեց: Համը դուր եկավ, ու կրծոտելով հասան միջուկին: Հաջորդ օրն ափսեի մեջ ևս մի խնձոր գտան ու նորից խժռեցին: Եվ այսպես, ամեն օր, մինչև մի գիշեր, երբ մերկ պառկած էին անկողնում, Տեքը բռնեց Տիլի կոկորդից ու ասաց.

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

– Պոռնիկ, անբարո՛ կին, ինչո՞ւ ես ինձ անընդհատ կերակրում այդ թոյլով: Հիմա ուղեղդ ցրիվ կտամ:

Ու Տիլը ծնկով խփեց նրա գոտկատեղից ներքև՝ պատասխանելով.

– Խո՛՛գ, այդ ե՛ս եմ թոյլն խմել քո պզուկոտ շուրթերից:

Նրանք հարձակվեցին միմյանց վրա՝ ձեռքի տակ ընկած ամեն ինչ նետելով իրար վրա: Քանդեցին իրենց ննջարանը, հյուրասենյակն ու խոհանոցը. մի քանի վայրկյանում կոշիկից տնակն արդեն գրկվել էր կաշվե քուղեթից ու նույնիսկ կրունկից: Տեքը նորից կոտրեց թագը, ինչպես այն ժամանակ, բլրից գլորվելիս ու քարերին բախվելիս, իսկ Տիլը մի սենյակից մյուսն էր գլուխկոնծի տալիս՝ ամեն ինչ ավերակների վերածելով: Ներքևից՝ մառանի խորքից, քաղցր-մեղր ծիծաղի ձայն էր բարձրանում:

Հաջորդ իսկ օրը ընկերներն ու հարազատները հավաքվեցին ընդարձակ սրահում, որտեղ Գայլը պիտի նախագահեր ու վկաներին լսելուց հետո վճիռ կայացներ:

– Որտե՞ղ են Աղվեսն ու Կատուն, – գոռաց Գայլը:– Նրանք ականատես էին: Լսել ու տեսել են, թե ինչպես խոստում տվեցիք:

– Համաձայն չեմ: Ես ոչինչ էլ չեմ տեսել, – հայտարարեց Կատուն:– Ինչ է, չե՞ք տեսնում ձախ աչքիս վրայի այս սև կտորը: Այդ աչքս կույր է, մյուս աչքով եմ տեսնում:

– Ես էլ այս անիծված անթացուպով եմ, – ասաց Աղվեսը:– Ամբողջ ընթացքում կենտրոնացել էի հավասարակշռությունս մի ոտքի վրա պահելու վրա: Չեմ հիշում, թե ինչ-որ խոստում լսած լինեմ:

Գայլը հրեց իր դիմացի սեղանն ու շրջեց այն, ու թանաքամանն օդ բարձրացավ: Հազավ տարիներ առաջ գողացած կարմիր թիկնոցն ու բոլորին վռնդեց: Տեքը գևաց Արևելք, Տիլը՝ Արևմուտք:

Այդ առավոտ գետափին բացվեցին շուշանները, ու եղյամի կաթիլները դեռ չչորացած՝ հայտնվեցին փոքրիկ Տեքն ու Տիլը. մերկ էին, հենց նոր էին բացել աչքերը: Շուշանների թմբի մոտ՝ բերնեբերան ջրով լի ջրհորի բլրից ոչ շատ հեռու, դատարկ դույլ էր ընկած:

Եվ նորից բոլոր Յոթ թզուկներն արցունք թափեցին:

## Պատրիկ

Պատրիկին տանջում էր այն սևեռուն միտքը, որ իրենը փոքր է: Ու ամենի մեղավորը Լուին էր: Մի օր, երբ դեռ չորրորդ դասարանում էի, ազատ ժամ ունեին, և ոչ մի ուսուցիչ չէր վերահսկում սրանց: Պրեֆեկտը՝ Սարկ Աթարդը, նախօրոք պատրաստել էր սրանց՝ ասելով, որ կատարյալ լռություն պահպանեն, որպեսզի ոչոք գլխի չընկնի, որ մենակ են: Սովորաբար այդպես էլ անում էին, բայց այս անգամ Պատրիկը դասարանի վերջում ծիծաղ լսեց. այնտեղ իր ընկերներից հինգը բռունցքի պես հավաքվել էին Լուիի սեղանի շուրջ: Պատրիկը շտապեց սրանց մոտ, որ տեսնի, թե ինչ է կատարվում: Նրան սպասում էր մի տեսարան, որն ընդմիշտ հետապնդելու էր: Լուին նստած էր, ոտքերը տարածած. վերնաշապիկը կախվել էր: Ներքևից դուրս էր ցցվել վարդագույն, փափուկ ու փայլուն ինչ-որ բան. մի բան, որ Պատրիկն առաջ երբեք չէր տեսել: Լուիի աջ ձեռքում քանոն կար: Պատրիկը կարողացավ մի արագ հայացք նետել միայն: Բայց դա էլ բավական էր, որ աչքերը դուրս թռչեն բևեռից, հատկապես երբ լսեց Չամլիի ձայնը:

– Գրո՛ղը տանի, համարյա քսան սանտիմետր:

Հենց այդ պահին դռան շեմին հայտնվեց պարոն Ֆրենդոն, և Լուին ստիպված եղավ շտապ տեղը դնել իր քսան սանտիմետրը: Ընկերները վազեցին իրենց սեղանների մոտ. նախանձն արդեն ներսից ուտում էր սրանց:

Այդ օրվանից քուն ու դադար չունեի: Համարյա քսան սանտիմետր: Երբ վերադարձավ տուն, գայթակղությունը հանգիստ չէր տալիս. ուզում էր քանոնը վերցնել ու զուգարան գնալ: Բայց հետո միտքը փոխեց: Զանոնից ի՞նչ օգուտ: Ավելի վատ կզգար: Գիտեի, որ Լուիի եկեղեցու զանգակատան համեմատ իրենն ընդամենը ծխնելույզ է: Իհարկե, տեղյակ էր, թե ազդրերի արանքում թաքնված փոքրիկ կենդանու ինքնավստահությունն ինչպես էր երկու, նույնիսկ երեք անգամ ավելանում, երբ անկողնու մեջ կուչ եկած՝ երազում էր Տեմմայի կրծքի մասին: Երբեմն այնքան էր ամրանում, որ վախենում էր, թե երկուկես կլինի: Բայց հաստատ քսան սանտիմետր չէր: Երբեք այնքան ինքնավստահ չի լինի, որ ցույց տա ինչ-որ աղջկա: Աղջիկը

երևի կփոթկա ու բոլորին կպատմի իր ծխնելույզի մասին:

Ճակատագիրը, թվում էր, դավ էր կյուրելի սրա դեմ: Մի անգամ իջավ Քարրի փողոցի հանրային զուգարան, ու միզապարկը դատարկելու ընթացքում հարևան միզարանի առաջ իր տեղը զբաղեցրեց մի հաղթանդամ երիտասարդ: Պատրիկն ամբողջ ուժով փորձեց մեջքով շրջվել, բայց տղամարդը երկու անգամ ավելի խոշորամարմին էր: Նա գաղափար չունեց, թե տղան ինչու է նայում իրեն, բայց երբ նրանց աչքերը հանդիպեցին, տեսավ, որ երիտասարդի դեմքի արտահայտությունը տարօրինակ է, մի տեսակ խոճահարությունից ու վշտից կոտրված: Այդպիսի տեսք ունեին նաև մարդիկ, որոնք եկել էին հարգանքի տուրք մատուցելու նաևնու՛կարմի մահվան առիթով: Մի կերպ դիմացավ, մինչև կվերջացներ գործը: Վերջին մի քանի կաթիլը թափվեց տաբատի վրա: Այնքան շփոթված էր, որ քիչ էր մտում տաբատի շղթայի արանքում թողնելը: Չուզարանի աստիճաններով վերև վազեց ու այլևս երբեք չօգտվեց հանրային զուգարանից: Կողավող խցիկ էր փնտրում: Եթե այն զբաղված էր լինում, սպասում էր, նույնիսկ եթե թվում էր, թե ուր որ է կպայթի:

Տասը տարեկանից Պատրիկը սկսուտական շարժման անդամ էր: Նրան դուր էր գալիս: Հույս ուներ, որ ջանասիրաբար կաշխատի ու մի օր կարժանանա Դելֆինի մրցանակի: Ամռանը՝ հիևգերորդ դասարանն ավարտելուց և քննությունների հետ կապված քաշքշուկից հետո, սկսուտները մեկօրյա ուղևորություն կազմակերպեցին դեպի Տնեյնայի լողափ: Մոտ վեց հոգուց բաղկացած մի խումբ լողալով դուրս եկավ ափ ու հենց այնտեղ, երկնքի ու անդունդի միջև կախված, խիզախ Դենին որոշեց նոր խաղ հորինել: Անսպասելի լողում էր մյուս տղաների կողմը, քաշում-հանում նրանց լողազգեստն ու բռնում ոտքերի արանքից: Հենց այնպես, զվարճանքի համար: Բայց Պատրիկը չհասցրեց ափ լողալ, երբ Մայքլն ու Դենին հարձակվեցին նրա վրա: Մեկը գլխիվայր շրջեց, իսկ մյուսն իջեցրեց տաբատը:

– Այս մեկը ծովախեցգետնից փոքր է, – ծիծաղելով գոռաց Դենին:

<sup>1</sup> Պասպիկ (մայթերեն)

– Ծովախեցգետին՝, ծովախեցգետին՝, – միացան մյուսները:

Ամառն ավարտվեց, Պատրիկը հեռացավ սկաուտների ճամբարից՝ իր հետ տանելով ոչ թե Դելֆինի, այլ Ծովախեցգետնի մրցանակ:

Հետո թվաց, թե ճակատագիրն իսկապես խաղ է խաղում գլխին: Պատրիկը նոր էր աշխատանք գտել, երբ ընկերները որոշեցին ուղևորության մեկնել, ու նա որոշեց միանալ: Տասն օրում շրջեցին մի քանի երկիր. Պանիա, Շվեդիա և Ֆինլանդիա: Եվ հենց այդտեղ էլ ի հայտ եկան խնդիրները:

– Եկեք գնանք շոգեբաղնիք, – ասաց Ջոնի-Բինգը ընկերներին:– Տիպիկ ֆիննական ավանդույթ է:

Պատրիկը զգաց, թե սիրտն ինչպես թրթռաց: Շոգեբաղնիք՝ Բոլորով ու մե՛րկ: Գոլորշու ու քրտինքի մեջ կորած՝ ուսումնասիրեն միմյանց բարեմասնությունները: Հետո ցատկեն սառցաջրով լի լողավազանի մեջ: Իսկ ծովախեցգետինը: Այն օրը, երբ պիտի գնային, արթնացավ գլխացավով: Դողում էր ու փորլուծություն ուներ: Խեղճ Պատրիկը ստիպված էր ամբողջ օրը մենակ անցկացնել հյուրանոցի սենյակում: Ընկերները խղճում էին նրան, բայց երբ վերադարձան, չկարողացան զսպել իրենց ու պատմեցին, որ ավելի ուրախ արձակուրդ չէին ունեցել: Պատրիկը տխուր դեմքի տառապագին արտահայտությամբ համաձայնեց, որ անբախտի մեկն է:

Նա սկսեց մտածել, որ երբեք չի կարողանա դիպչել աղջկա: Բայց Տուրիթը խենթանում էր նրա համար: Տուրիթի կազմակերպած պաշարումը Լենինգրադի շրջափակումից ավելի դաժան էր. ուր գնում էր, հայտնվում էր աղջիկը՝ թաշկինակի չափ մինի կիսաշրջագետստը հագին, մերկացրած լանջով, թարթիչները ճպճպացնելով: Նույնիսկ Էվերեստ լեռը չէր դիմակայի այս ուժգին հարձակմանը: Իսկ նա այնքան՝ գեղեցիկ էր, ասես տիկնիկ լիներ: Սկսեցին հանդիպել ու շաբաթներ հետո գնացին Savoy՝ «Մեծ փախուստը» դիտելու: Կյանքում առաջին անգամ չընդդիմացավ, երբ աղջիկն արձակեց իր տաբատի շղթան, բռնեց այն ու կորցրեց իրեն Սթիվ ՄաքԹուրիկի հետ մոտոցիկլետի մրցավազքում: Ամենից շատ Պատրիկն ուրախ էր, որ այդ ամենը կատարվում էր մթության մեջ:

Նրանք նշանվեցին, հետո ամուսնացան, ու տասը տարին գրորվեց մի

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

ակնթարթի պես: Ամեն անգամ, երբ սիրում էին իրար, Տուղիթը ճչում ու կծում էր նրա ուսը՝ հասկացնելով, որ իրեն յոթերորդ երկինք է հասցրել: Ու ամեն անգամ, երբ ամեն ինչ ավարտվում էր, քրտնած ու ուժասպառ պառկում էին մեջքի վրա, ու Պատրիկը միշտ հարցնում էր.

– Բայց սիրելիս, վստա՞հ ես, որ քեզ դուր եկավ: Հաստա՞տ գոհ ես: Չե՞ս կարծում, որ շատ փոքր է:

Այդպես ամբողջ տասը տարի:

Եվ ահա մի օր Պատրիկը դեմ առ դեմ հանդիպեց Լուիին: Երկուսն էլ ներկա էին Տուղիթի գարմուհու հարսանիքին. Լուին փեսայի հյուրն էր: Ուրախացան, երբ հանդիպեցին, մի քանի բաժակ վիսկի խմեցին, մեկին հաջորդեց մյուսը, հետո գրույցը թռավ հետ՝ մանկության անուշ ու խենթ տարիներ: Հանկարծ Լուին Պատրիկին քաշեց իր կողմն ու ականջին շնջաց:

– Հիշու՞մ ես՝ ինչպես բոլորդ խաբվեցիք ըսան սանտիմետրի կատակին: Ես ու Մարկը՝ պրեֆեկտը, գրագ էինք եկել, որ ոչ մեկդ գլխի չի ընկնի, որ ռեզինից է: Գրո՞ղը տակի, բայց ի՞նչ իրական էր տեսքը:

Այդ գիշեր Տուղիթը մտածեց, որ Պատրիկն ամենայն հավանականությամբ վիսկիի հետ հինգ-վեց «Վիագրա» է կուլ տվել:

## ՄԻՐԵԼԻՆ

Եկեղեցին արդեն լեփ-լեցուն է: Շտապիր: Նա սպասում է: Ես ամուրի էի ու գիտեի, որ ի վերջո կգտնեմ նրան: Ու այսօր ահա այս սպիտակ վերնաշապիկով ընտիր տեսք ունեմ: Ու ընտիր պիջակ եմ հագել, կյանքում առաջին անգամ: Ամռանը սովորական անթև բաճկոնակով եմ լինում. թող արևն այրի ինձ, թող թուրքի պես սևանամ զբոսաշրջիկներին Լ-Իսլայի գագաթից Պիկտոյի ափը տեղափոխելիս: Նոյեմբերին, երբ ժամանակը հետ են տալիս, ու նորից փչում է հյուսիսային սառը քամին, վերադառնում եմ վանդակավոր վերնաշապիկի, թևքերը ծալում-բարձրացնում. հերիք է թիերը ձեռքս ամռեմ, քրտիկս վրայիցս հոսում է: Եթե դեկտեմբերին սաստիկ ցուրտ է, ուրեմն ժամանակն է հագնել զինվորական բաճկոնը, որ շուկայից եմ գնել: Բայց այսպիսի պիջակ երբեք չեի հագել:

Նույնիսկ սափրվելուց հետո լույսն եմ քսել: Չգիտեմ, թե ինչու, երբ զբոսաշրջիկների հետ եմ լինում, երբեք չեմ մտածում այդ մասին: Կարծում եմ՝ նրանք կնախընտրեն ինչ-որ անուշ բուրմունք, այլ ոչ թե ուրիշ նավակների վառելիքի ու իր քրտիկների գարշահոտ խառնուրդը: Ու Մեծ նավահանգստի տիղմի ու ծխի հոտը: Թեև այդ հոտը զբոսաշրջիկներին երևի հիշեցնում է Մալթան:

Դե շտապիր, դեռ պատրաստ չես: Չգնա՛նք: Ճի՛շտ որ, կոշիկներ էլ են պետք: Կոշիկներս էլ են նոր. ամբողջ կյանքս բաց հողաթափերով անցավ: Տոնի թա՛թլաֆաթն ինձ զգուշացնում էր, որ մի օր փորձանք են բերելու գլխիս, հենց նավամատույցում բմբուկներս քամուն եմ տալու: Բայց ուրքերս սովորել էին ազատությանը. կապանքներ չեի ուզում: Խոր ձմռանը Բորմլայի Gauda-ից գնած մի գույգ կոշիկ էի հագնում: Առանց գուլպաների էի հագնում, բայց երբեք վերք կամ բշտիկ չէր առաջանում: Այսօր կոշիկներս նոփ-նոր են, շողշողուն. չէ՞ որ նա ուզում է, որ տեսքս լավ լինի:

Իսկ զլուխս բաց է: Նավակի մեջ միշտ գլխարկ էի դնում: Տես՝ գանգս ինչ ճերմակ է: Կեպիի տակ թաքնված՝ ո՛չ ամառ է տեսել, ո՛չ ձմեռ: Ոչ էլ գիշեր կամ ցերեկ: Միայն քնած ժամանակ է բաց լինում, բայց հենց վեր եմ

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

Կենում՝ առաջին անգամ միգելու, իսկ հետո՝ խոհանոցում թեյի առաջին բաժակը խմելու, ևորից դնում եմ կեպին: Այսօր գլուխս բաց է, ևսր մազափնջերս՝ կոկիկ հարդարված:

Ամուրու կյանքն իսկը ինձ համար է: Տոնի թա՛Քլաֆաթն ու Նենու ի-Քավեթը միշտ ստիպում էին, որ փոխեմ այդ վիճակը: Երբ քառասունս լրացավ, որոշեցին ամուսնացնել ինձ: Նենուն քույր ունի, համարյա իմ տարիքի պառաված օրիորդ, բայց բարի ու ընդունակ աղջիկ, որը, ինչպես ևա էր ասում, երբեք տղամարդու երես չի տեսել: Խոշոր սև աչքեր ու գեղեցիկ կուրծք ունի: Ստածեցի: Բայց ախր ես լողափի տղա եմ, հավերժ ամուսնացած նավակիս հետ: Նա իր մեծ աչքերով փնտրում է ինձ նավաքթի հետևից, ես էլ նրան եմ հետևում: Բայց միևնույն է, միշտ իմացել եմ, որ մի օր կգտնեմ իմ սիրելիին:

Հը, պատրա՛ստ ես: Լավ է: Հուսով եմ՝ ինձ սպասելուց ոչ ոք չի հոգնել: Հիմա ի՞նչ անենք: Ահա, տաքսու փոխարեն լուզզուով գնանք: Լավ միտք է, շնորհակալություն: Իսկ նավաստին ո՞վ է: Նրան երբեք չեմ տեսել ափին: Դե ինչ, հիմա ամեն ինչ քո ձեռքերում է: Կափարիչը դիր ու թող լինի այն, ինչ կլինի: Հանկարծ հոգնում ու թուլանում եմ: Էլ չեմ ուզում թնկթնկոց լսել, չեմ ուզում արցունքներ տեսնել: Ինձ դուր է գալիս այս խաղաղությունը, մթության մեջ, սիրելիիս հետ:



## ՇՐԿԱՀԱՎՈՐ

Այս տարի շիկահավը չեկավ: Երբ տղամարդը դուրս եկավ այգի, նրան դիմավորեց թաց հողի հոտը՝ ներծծված գիշերվա հորդառատ անձրևով, ու նկատեց, որ պուանսետայի տերևները սկսել են կարմրել: Բայց շիկահավը, միևնույն է, չէր գալիս: Մի բաժակ «Աուրֆակ» լցրեց դարակի վրա՝ այգու ծաղկամանների կողքին ու հետ գնաց ներս՝ ճնճողուկներին հետևելու: Հագիվ հասցրեց փակել դուռը, երբ զույգ-զույգ թռան ցած. ուժգին թափահարում էին թևերը՝ ֆշշալով, իրար հետ վիճելով, կերը թափելով մեխակների ծաղկամանների ու գալլետտիի լայն տերևների վրա: Կշտանալուց հետո միասին թռչում-հեռանում էին՝ իրենց հետևից թողնելով դողացող դարակը: Սովորաբար դա ազդարարում էր շիկահավի գալուստը: Նա գլուխը չէր թաղում սերմերի մեջ, ինչպես ճնճողուկը: Կանգ էր առնում, նայում շուրջը, հայացք նետում դռան կողմը: Արդյոք գիտե՞ր, որ մի զույգ այժմ ապակու հետևից հետևում է իր ամեն քայլին: Մի անգամ տեսավ, թե շիկահավն ինչպես իջավ այգու պինդ հողի վրա, ցատկեց դռան մոտ, բարձրացրեց գլուխն ու կարծես ասաց՝ հա՛, գիտե՛մ:

Բայց չգիտեր: Հիմա տղամարդն էլ դադարել էր մտածել ու էլ չէր փորձում հասկանալ: Թաց հողը կորցրել էր բույրը, պուանսետան՝ կարմրությունը: Ամեն ինչ էլ պատահում է, երբեմն՝ առանց պատճառի: Ոչինչ իրական չէ: Երբ գալիս էր դեկտեմբերը, նա մթության մեջ վիկի սերմեր էր ցանում, իսկ օրորոցի համար զուլբինա<sup>2</sup> էր հավաքում, ինչպես միշտ էր արել, որովհետև այդպես պիտի լիներ: Վերջերս ջրով լի պլաստմասե շշերում սերմերն անեցնելու խելացի ձև էր գտել. պետք էր ընդամենը մեկ անգամ ջրել ու ամուր փակել: Հետո Աստված ու բույսի գոյորշիները հոգ կտանեն մնացյալի մասին: Ինքը նույնիսկ ստիպված չի լինի ստուգել, թե ինչ վիճակում են: Ծիլերը մթության մեջ սրընթաց վերընձուղվում էին առանց օգնության կամ հասկանալու, թե ինչ են անում, ամեն ինչ աճում, սպիտակում, ծերանում ու տկարանում էր մթության մեջ:

<sup>2</sup> *Բույս, որով սովորաբար զարդարում էին օրորոցները:*

Շուտով ստիպված կլինի վերցնել աստիճանն ու ձեղնահարկի դարակներից իջեցնել արկղերը: Սովորաբար տոնաձառը շատ մանրամասն էր հավաքում, ճյուղերի ամեն խումբ՝ իր արկղի մեջ: Տոնաձառի լույսերն առանձին արկղում էին, գունավոր գնդերը՝ իրենց տուփերում: Որովիետև այդպես պիտի լիներ: Շուտով ստիպված կլինի սկսել զարդարել: Սկզբում ծառի բունն է դնում պատվանդանի վրա: Հետո բացում է ճյուղերի արկղերը: Սկսում է ամենավերևից, որ չփոթվի: Ամենակարճ ճյուղերը նշված են A տառով: A-ից ներքև B-ն է: Այդպես էր դասավորում շատ տարիներ առաջ, երբ շիկահավը դեռ գալիս էր: Այն ժամանակներում արկղերն ուղղակի դուրս էին թռչում դարակներից ու ազատորեն բացում սրտերը: Նա շտապում էր նվագարկչի մոտ, մի քանի ձայնապնակ ընտրում, ու սենյակը լցվում էր եղջերուների զանգակների զնգզնգոցով, հետո՝ Վեստմինսթրի երգեհոնի ու երգչախմբի հնչյուններով, իսկ երեխաները նրան էին տալիս գունավոր գնդակները, ժապավեններն ու բամբակը: Իսկ շիկահավը պտտվում էր նրանց շուրջ, իջնում ուներին ու դարձյալ ասում.

– Այո, գիտե՛մ: Գիտե՛մ:

Հիմա ձայնապնակները քերծված են, իսկ երգչախմբի անդամները կույ են տվել լեզուները: Նա հասել է G և H տառերով արկղերին՝ ամենաերկար ճյուղերին, ու շուտով կավարտի գործը: Հիմա հեքիաթային լույսերի ժամանակն է: Այդպես էր նշագրել արկղը տարիներ առաջ, երբ ամեն ինչ գրում էր, որ ոչինչ չմոռանա: Ամեն ինչ պետք էր անել բժախնդրորեն: Հերթով: Հետո գնդակները փաթաթել էր թերթի մեջ, որը հիմա դեղնել ու չորացել էր: Սակայն այս տարի հարթեցնում է մի կտորը, ու աչքերը սահում են տեքստի վրայով. «Times of Malta» թերթի 1972 թվականի դեկտեմբերի 9-ի համարն է: «Օդային ողբերգության ժամանակ սպանվել է ինքնաթիռի յոթ հափշտակիչ: Թրումենը պայքարում է կյանքի համար: Apollo 17-ը պատրաստվում է մուտք գործել Լուսնի ուղեծիր»: Ասես մի կում օդ լիներ այն ժամանակներից, որոնք հիմա աղոտ ու կորուսյալ էին թվում: Դեռ լավ է, որ լամպերն աշխատեցին առաջին փորձից: Կանաչ ատլասե կտորը զցեց փոքրիկ սեղանի վրա, կարմիր երիզը հանեց տուփից ու մի մեծ ժապավեն

կապեց:

Հիմա կարող եր հանգիստ նստել բազմոցին ու նայել, թե ինչպես են թարթում լույսերը: Հիշեց, որ պիտի իր համար խմիչք պատրաստեր: Բացեց խմիչքների պահարանն ու մի շիշ լեճ հանեց: Միայն երկու մատի չափ եր մնացել: Դատարկեց միակ թերմոսի մեջ, որ մնացել եր հարսանիքին նվեր ստացած հավաքածուից, ու հետ ընկավ բազմոցի թիկնակին: Միանում-անջատվում եր, միանում-անջատվում: Մի ակնթարթ բոլոր լույսերն անջատվեցին, ու սենյակը թաղվեց թանձր խավարի մեջ:

Հինգն անց կես եր, բայց թվում եր, թե արդեն գիշեր է:

Լեճ-ն թթու համ ուներ: Գուցե ինչ-որ բա՞ն են խառնել:

Վեր կացավ, կեղտոտ թերմոսը թողեց արմնկակալին, անջատեց ծառի լույսերը, վերցրեց մեքենայի բանալիները, իր հետևից շրխկացրեց դուռն ու հեռացավ: Ծառը թողեց մթության մեջ՝ գուլբիենայի, կենաց-մահու պայքար մղող Թրումենի, Apollo 17-ի ու իր սեփ-սև ուղեծրի հետ: Ամուր սեղմեց գազի ոտնակը՝ սլանալով փողոցներով, որոնց երկու կողմում պատուհանները զարդարված էին մսուրքում մանուկ Հիսուսի նկարներով, աստղերով ու ծառերով, որոնք իր ծառից շատ ավելի գեղեցիկ էին: Ու երբ անջատեց ստերեոն ու սեղմեց ոտնակը, հասկացավ. չէ՛, վերջին քսան տարվա մեջ առաջին անգամ շիկահավը հետ չի գալու:

## ԱՆՏԵՍԱՆԵԼԻ

Կարիք չկա բացատրելու, թե ինչպես անտեսանելի դարձա: Տգետ հիմարներ, դուք երբեք չեք հասկանա: Ուղղակի ասեք, որ անհաջող փորձ էր: Ինչքան միամիտ էի ես, որ կարծում էի, թե ծառայում եմ մարդկությանը, որ աշխարհի ամենամահացու հիվանդության պատճառների ու բուժման հայտնաբերման շեմին էի: Բայց նկատում էի, որ որոշ ժամանակ իմ շուրջ տեղի էին ունենում տարօրինակ իրադարձություններ, միայն թե չէի հասկանում, թե ինչ է դա: Վերջապես իրավիճակը հսկողությունից դուրս եկավ, ու ամեն ինչ հոգս ցնդեց: Ինչպես լաբորատորիան, այնպես էլ իմ ամբողջ հետազոտությունը: Կինս ու մանկահասակ որդիս՝ ընդամենը մի քանի ամսական: Ու ես անտեսանելի դարձա: Սկզբում մտածեցի, թե ես էլ եմ մահացել, ուրվական եմ դարձել: Բայց միտքս սուր էր, ինչպես երբեք. դեռ գիտնական էի: Հետո հասկացա, որ առաջվա պես պիտի մարմին եմ, կարող եմ դիպչել ամեն ինչի, այդ թվում և ինձ: Տեսնում ու լսում եմ, միայն թե անտեսանելի եմ: Դա իհարկե վատ էր, բայց ամենակարևոր փոփոխությունը չէր: Ես հանկարծ բոլորովին այլ մարդ էի դարձել, ամբողջությամբ հենացել էի միամիտ, աշխարհը փրկող գիտնականից, որ եղել էի, ու սկսել էի արհամարհել այդ ուրիշ մարդուն, ատել նրան: Ուզում էի ազատվել նրանից ու ամբողջ անիծված մարդկությունից: Որոշեցի, որ ինձ դուր է գալիս միայն մի մարդ, նա, ում վերածվել էի՝ դաժան, վանող, չար, և ուժ գտա այդ անտեսանելիության մեջ: Կարող էի անել այն, ինչ ուզում էի: Իմ առաջ փակ դուռ չկար: Ոչինչ գաղտնի չէր մնում, ոչ մի անձնական տարածություն չէր կարող փակվել իմ առաջ:

Հաճույքով հետևում էի, թե համերգասրահն ինչպես է լցվում օսլա-յաձ, գեղեցիկ հագնված մարդկանցով. բոլորը սպասում էին, թե երբ են ունկնդրելու երաժշտությունը, որ լսել էին սկավառակներով ու տեսել հեռուստացույցով: Բայց երբեք մոտիկից չէին տեսել նրան: Երբ վերջապես բեմ բարձրացավ, սրահը ողողվեց բուռն ծափահարություններով: Ես ար-

դեն իմ տեղում էի, Steinway-ի մոտ կանգնած: Թույլ տվեցի, որ նա հանգիստ սկսի համերգը, որ ապշեցնի հանդիսատեսին իր մատների ճարպկությամբ, որ զգա հաջողության բուրմունքը, երբ հանկարծ, չգիտես որտեղից, հանդիսատեսը լսեց մի սխալ ու ավելորդ նոտա: Տարօրինակ սայթաքում: Համերգի ծրագիրը ձեռքում մարդիկ քարացան: Հետո՝ ևս մի նոտա, հետո մյուսը, մյուսը, մինչև որ սկսվեց ոչ մեղեդային բաս նոտաների օկտավան: Հետո՝ բարձր ու պատահական թխկթխկոց ստեղնաշարին, անբարեհունչ գլխասանդուկներ<sup>3</sup>: Չէ, հաստատ խելքը թոցրել է: Կամ էլ ծաղրում է մեզ: Այդպես էլ կա: Կարծում է, թե անգրագետների խումբ ենք: Հանդիսականները մի մարդու պես ոտքի ելան. սուլելով, ճմռթած ծրագրերը բեմ նետելով: Ոմանք նույնիսկ բղավում էին, որ իրենց գումարը հետ տան: Հաճույքով հետևում էի, թե ինչպես է դողում ու նայում աչքերը լայն բացած, զոհ էի, երբ տեսա, թե ինչպես ծոխ թևով թռավ հետևաբեմ, որ թաքնվի, իսկ հետո շտապի հյուրանոց: Ամենալավ պահն այն էր, երբ լսեցի, թե ինչպես ատրճանակը մոտեցրեց քունքին: Իսկ կրակոցը շատ նման էր իմ լաբորատորիայի պայթյունին: Տխմար: Ինչպե՞ս կարելի է հավատալ, որ կարող է փրկել աշխարհը փառահեղ երաժշտությամբ:

Տեսին: Որոշ ժամանակ հետևում էի նրան: Հաշիվը կորցրել եմ, թե քանի անգամ եմ թաքնվել նրա ննջասենյակի անկյունում ու հետևել, թե ինչպես է հանում հագուստը: Երբ նա կեցվածք էր ընդունում հայելու առաջ (թեև ակնհայտ էր, որ չի տեսնում ինձ այնտեղ), մտածում էի, թե ինձ համար է անում: Ժպտում էր: Շրջվում էր այս կողմ, այն կողմ: Սեղմում էր կուրծքը: Ձեռքերն իջեցնում էր ազդրերին: Ձգվում էր: Ու մտքով անգամ չէր անցնում, որ տեսնում եմ դա: Բայց դեռ ոչ. կսպասեմ, քանի դեռ տղամարդն այստեղ է, նրա հետ: Նրանց մի քանի անգամ տեսել եմ միասին, բայց դեռ պիտի բռնացնեմ անկողնում: Անհանգստանալու կարիք չկա, շտապելու՝ նույնպես: Համբերությունն իմ միակ առաքինությունն է, որ մնացել է:

Այդ ընթացքում ահագին գործ արեցի: Հարվածեցի նրա դեմքին, երբ մենակ կանգնած էր դարպասների մոտ, հետո հաճույքով լսեցի, թե

<sup>3</sup> Երաժշտական եզրույթ

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

ամբողջ մարզադաշտն ինչպես ոտքի կանգնեց, որ վիրավորի նրան: Հետո նա խաղի ընթացքում ամենաքիչը վեց անգամ սայթաքեց, ու ամբոխը սկսեց պնդել, որ նրան կաշառել են, ու այդպես շարունակվեց այնքան ժամանակ, մինչև թիմի ղեկավարը հեռացրեց նրան: Հաջորդ իսկ օրը պատվիրեցին հետաքննություն անցկացնել, իսկ ավելի ուշ նրան տուգանեցին ու հեռացրին թիմից: Իհարկե, դա ծաղր էր, բայց ես համարյա նույնքան զոհ էի, որքան այն օրը, երբ տեսա, թե մի խանութպան ինչպես շփոթված խփեց ճակատին, երբ բացեց պատուհաններն ու տեսավ, որ իր ապակե ցուցափեղկերը կոտրված են, իսկ հախճապակե առարկաները փշուրփշուր ցրված են հատակով մեկ, բայց դրամարկոյից ոչ մի սենթ չէր անհետացել: Տեսուչը նույնպես շփոթված քորում էր գլուխը: Այդպես էլ մինչև կյանքի վերջ չհասկացան, թե ինչպես կարելի է ամբողջությամբ տակնուվրա անել խանութը, բայց չթալանել ու նույնիսկ չդիպչել կողպեքներին:

Դա միայն սկիզբն էր: Դեռ ուրիշ շատ ծրագրեր ունեի: Շատ շուտով սպասվում են համապետական ընտրություններ: Վարչապետն ու ընդդիմության առաջնորդը գաղափար անգամ չունեն, թե իրենց ինչ է սպասում, երբ քարոզարշավի ավարտին հանդես գան եզրափակիչ հանրային ելույթներով: Ես կնվաստացնեմ նրանց ամբողջ երկրի աչքի առաջ, ու Աստված գիտի, թե նրանք ինչպես կպայքարեն, եթե միասին փակված մնան հոգեբուժարանում: Արքեպիսկոպոսի հերթն էլ սարերի հետևում չէ: Կսպասեմ, մինչև ավարտի պապական պատարագը: Նույնիսկ Սուրբ Հովհաննեսի տաճարի արձանները կդողան, իսկ միանձնուհիները կուշաթափվեն:

Բայց վերադառնանք Տենիին: Վերջապես բռնացրի նրան, երբ մտնում էր Տենիի տուն, ու նրա հետևից անևկատ ներս սողոսկեցի: Հետևեցի, թե ինչ անզուսպ կրթով էին հանում միմյանց հագուստը, հետո թրմիոցով ընկան մահճակալին: Անմիջապես անջատեցի էլեկտրականությունը. չեմ ասի, թե լիակատար մթության մեջ սեր անելու միտքը խանգարեց նրանց: Նրանք հենց իմ ուզած տեղում էին. Տենին պառկած էր, ու համարյա ոչինչ չէր նկատում իր շուրջ, բացի սեփական շարժումներից: Տենին էր՝ իր մեղմ հառաչանքներով, որոնք վերածվեցին ճնցների, երբ զգաց,

թե զուգընկերն ինչպես կ'ծեց պարանոցն ու քերծեց դեմքը: Դա սովորական կրքոտ խայթոց չէր. նա քիչ էր մնում պատռեր երակը: Քերծվածքներն այրում էին դեմքը, երկու ձեռքով բռնել էր նրա կոկորդը, ու աղջիկը հագիվ կարողացավ ասել.

– Դու՛րս կորի՛ր, բա՛ց թող ինձ:

Ու երբ հասկացավ, որ իսկապես դժվար է շնչել, կոկորդը բռնած ձեռքերը թուլացան, ու լույսը նորից միացավ: Տղամարդն ուղղակի նայում էր նրա արևածոր դեմքին, պարանոցի կարմիր բծերին, իսկ նա հագում ու լաց էր լինում, հագուստը շարտում նրա դեմքին ու սպառնում, որ եթե անմիջապես չհեռանանա, ոստիկանություն կգանգի:

Հիմա Տենին իմն է, միայն իմը: Բայց դեռ ժամանակը չէ: Թող արյունը չորանա, վերքերը բուժվեն: Հետո կգնամ նրա մոտ, երբ խոր քնած կլինի, ու էլեկտրականությունը նորից կանջատվի: Կվերցնեմ նրան, կդարձնեմ իմը, կտեղավորեմ ինձ նրա կյանքում երկար ամիսներ տևած սպասումներից հետո, որ վստահ լինեմ, որ փորձս շարունակվում է: Ու երբ համոզվեմ, կկարողանամ պայթեցնել այս անտեսանելի լաբորատորիան ու հուսալ, որ այս դատարկ աշխարհում խաղաղություն կհաստատվի:

Դա կլինի, երբ Տենին ու նրա մանկաբարձուհին շփոթված ու սարսափած լսեն անտեսանելի մանկան ճիչերը:

## Needles and Pins<sup>4</sup>

Երբ լսեցին, որ Սայք Փենդերը, Ուեյն Ֆոնտանան, Դեյվ Բերին ու Բրայան Փուլը գալիս են Սալթա՝ 60-ականների երաժշտության մեգահամերգ տալու, տոմսեր գնեցին: Չէին կարող այդպիսի հնարավորություն բաց թողնել: Երիտասարդությունը կանչում էր նրանց անցյալի մշուշից:

Վրանը բազմամարդ էր: Իրենից չորս շարք հեռու տեսավ մեկին, ով ձեռքով էր անում նրանց:

– Տե՛ս, Կարմենն ու Ֆրենկին են: Օ՛, ևույնիսկ չճանաչեցի նրանց, – ասաց նա, երբ թրմփոթոցով ընկան իրենց տեղերը:– Սու՛րբ աստվածամայր, մի նայի՛ր դրա չափսերին:

– Վստա՞հ ես, որ նրանք են:

– Ուրիշ էլ ո՞վ: Տեսնո՞ւմ ես Ֆրենկիին: Սազերը լրիվ թափվել են:

– Իմի պես:

– Դե լա՛վ, քո գլխին գոնե մի քանի փունջ մնացել է:

Վրանը կքել էր կես դարի ծանրության տակ: Մեծ ժամացույցը թկթկում էր՝ ազդարարելով այն պահը, երբ բոլորը ծանոթացան հողացավի հետ: Վրանը, որը լեփ-լեցուն էր ճերմակած գլուխներով, 58 համարի տաբատներով ու անիմաստ ձգած իրանակալներով, միաժամանակ թե՛ ապաստան էր, թե՛ թաքստոց: Հանկարծ բարձր երաժշտությունը սկսվեց, լույսերը թարթեցին, բեմը լցվեց ծխով, ու այնտեղից ի հայտ եկավ մի սևազգեստ տղամարդ: Ճերմակ մազերը հասնում էին ուսերին: Փորը կախվել էր գոտու վրայից:

– Ողջո՛ւյն, ժողովո՛ւրդ: Ես Ուեյն Ֆոնտանան եմ:

Աղջիկն ամուսնու ձեռքից խլեց համերգի ծրագիրն ու արագորեն բացեց: Ուեյն Ֆոնտանայի սև-սպիտակ դեմքը ժպտում էր հիսունամյա կյանքի խոր անդունդից: Սայք Փենդերն ու մյուսները ևույնպես այնտեղ

<sup>4</sup> Ամերիկացի հեղինակներ Ջեք Նիցշեի և Սոննի Բոնոյի հեղինակած ռոք երգը, որը ձայնագրվել է 1963 թվականին:



Էին: Հետաքրքիր է ինչո՞ւ են այս սկարները տեղադրել, մտածում էր ևս: Ի՞նչ են ուզում ապացուցել: Անցյալի փա՞ռքը, թե՞ ժամանակի կործանարար ուժը: Եթե բեմում ծաղրանկար են ներկայացնելու, ինչո՞ւ են ծրագրում սկարել նախնական տարբերակը: Եւ շրխկոցով փակեց գրքույկն ու խցկեց ամուսնու ձեռքերի մեջ: Բայց հենց այդ պահին լսեց Love Potion No. 9 երգի առաջին նոտաներն ու զգաց, որ աչքերը լայն բացվում են, իսկ սիրտը սկսում է արագ բաբախել: Այո, ևա է, նույն Ուեյն Ֆրոստանան՝ ավելի երիտասարդ տարիներին: Նույն դադարները: Նույն հառաչանքը: Ժամացույցը հանկարծ հետ թռավ, ու վրանը հալվեց: Հանկարծ հասկացավ, որ նստած է Savoy-ի օթյակի հետևի շարքում, ճաշակում է կրքով ու խուճապով համեմված վայրի համբույրը, տղամարդը զգեստի արանքից բռնել է իր կուրծքը, ու ինքը սարսափած մտածում է՝ կնկատի՞ արդյոք կրծկալի մեջ խցկած բամբակը: Եվ նորից կուլ տվեց սիգարետի ծխից թանձրացած օդն ու լսեց գլխավերևում խրթխրթացող պրոյեկտորի աղմուկը: Ֆիլմից առաջ, որը չնայեց, կատարեցին Love Potion No. 9-ը: Իսկ ավելի ուշ ևա կանգնած էր Թագավորական փողոցի մայթին, «Կուլիզում» կինոթատրոնի մոտ, Ֆրեդի Սամութի ու Մայքով իլ-Լանդայի հետ հետևում էր դիմացի փողոցով վերուվեր անող աղջիկներին, ու Ֆրեդին քթի տակ հայիոյում էր, միայն որովհետև Տեյնը չէր նայում իրեն:

Վրանը հիմա ցնցվում էր: Երբ լսեցին, թե Բրայան Փուլն ինչպես կատարեց Twist and Shout երգը, բոլորը ոտքի կանգնեցին, ու դիմացի շարքերը սկսեցին պարել: Տարիներ առաջ, երբ նրանք պարում էին, հուզմունքից շլչահեղձ էին լինում: Շնչակտուր պարում էր այս երգի տակ՝ հուսալով, որ շարժման ընթացքում աղջիկը կնկատի ճմռթված թավշե բաճկոնը: Հենց նոր էր գնել այն, փոթազարդերով վերնաշապիկի հետ, որը շատ նման էր Rolling Stones-ից Բրայան Տոնսիի վերնաշապիկին: Քիթիի հետ գրագ էր եկել, որ կպարի Լինոյի հետ, որը հենց նոր մագերը կտրել էր Ռինգո Սթարի նման: Լսում էր իտալական վարդագույն կարճ շրջագեստի շրշուկը, որը թաքցրել էր մորից, այն կիսաշրջագեստի, որը հագնում էր պսիխոդելիկ նախշերով զուգագուլպաներով, երբ գոտկատեղն այսօրվա ազդրից ավելի

## ԹՐԱՌԻ ՁԱՀՐԱ

բարալիկ էր: Հիմա նորից պարում են նույն երգի տակ, նորից շնչակտուր, որովհետև առավոտյան մոռացել է խմել ճշման դեղերը, և ժամանակն է, որ մի քիչ «Ֆաստում» գել քսի: Վատ չէր լինի, եթե հիմա դանդաղ երգ երգեին: Օրինակ՝ Someone երգը:

Երբ վերջապես ընդմիջման ժամն էր, ու կարող էին հանգստանալ, վրանը համարյա դատարկվեց: Ձուգարանների առաջ անվերջ ձգվող հերթ էր, ու երկրորդ մասը կես ժամով հետաձգվեց:

Տունդարծի ճանապարհին շարունակ ասում էին իրար, որ այս երաժշտությունը երբեք չի մեռնի: Իսկական երաժշտությունը: Այսօրվա երաժշտությունը ոչինչ է, միայն խառնադմուկ, որտեղ մեղեդին կապ չունի խոսքի հետ: Նա հանկարծ սկսեց երգել:

Երբ ես տխուր եմ, ինձ մտում էմիայն  
Նայել քեզ, ու այլևս այդքան տխուր չեմ լինի:

Իսկ աղջիկը պատասխանում է.

Երբ դու կողքիս ես, զգում եմ սրտիդ զարկերը,  
Ձգում եմ շնչառությունդ ականջիս տակ...

Եվ երգչախումբը.

Համաձայն չես, սիրունս,  
Իմ ու քո սերը զիլ է:

Շատ հոգևած էին, երբ վերադարձան տուն, ու կինը «Ֆաստում» գել քսեց, ցանցով հավաքեց մազերը, որ չխառնվեն մինչև հաջորդ օրը: Ու երբ տղամարդը խմեց արյան ճշման մոռացած դեղերն ու ատամնապրոթեզները դրեց պղպջակներով գոլ ջրով բաժակի մեջ, նրանք մտան անկողին: Կինը փաթաթվեց նրան ու շնչաց.

– Այսօր հրաշալի ժամանակ անցկացրինք:

– Հա, կարգին ուրախացանք, – պատասխանեց ու համբուրեց նրա ճակատը:

«Դե՛ն մի՛ նետեք ձեր սերը...» Չնայած կախված կրծքին ու մահճակալի սեղանիկին դրված ատամնապրոթեզներին: Չնայած անցյալի խարույկից մնացած մարմրող ածուխին... «Դե՛ն մի՛ նետեք ձեր սերը»: Նա փորձեց քնել՝ մտածելով հաջորդ օրն իրենց դստեր տանը ճաշելու մասին: Փոքրիկի ծննդյան տարեդարձն էր: Հագնի՞ ճմռթված թավշե բաճկոնը, փոթազարդերով վերնաշապիկը, գլուխը հետ ու առա՛ջ զգի, որ երկար մազերն ընկնեն աչքերին:

Needles and Pins, ա՛խ, Needles and Pins:

## ՄԵՐԸ ԽՈՂԵՐԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ

Նա սովորել էր, որ բանկում աշխատող կանանց հաճախ մի մասնաճյուղից մյուսն են տեղափոխում: Ոմանք մնում են ընդամենը մի քանի շաբաթ, հետո անհետանում են: Եթե գեղեցիկ կին հայտնվեր, գուցե մի քիչ սիրահետեր, հետո մոռանար նրան: Բայց Ֆրանչեսկան ուրիշ էր: Այն մի քանի ամիսները, որոնք անցկացրեց իր մասնաճյուղում, հիմնովին ցնցեցին նրա կյանքը: Ճակատագիրն ակնհայտորեն դավ էր կյուբել, և սուրբ ծուղակ հյուսել իր համար: Այդ ինչպե՞ս պատահեց, որ Ֆրանչեսկան խոսում էր իսպաներեն, ինչպես ինքը, և որ նա Լատինական Ամերիկայի գրականության ավելի մեծ երկրպագու էր, քան ինքը: Նա խոսեց Վարգաս Լյոսայի մասին՝ պայուսակից հանելով պերուացի գրողի «Քաղաքն ու շները» գրքի մի օրինակ: Բոլորովին վերջերս էր սկսել կարդալ գիրքը: Իսկ ինքը չէր էլ լսել պարագվայի գրող Ռոա Բաստոսի մասին: Ֆրանչեսկան ուղղեց այդ սխալը: Հիշատակեց Գարսիա Մարկեսին, հարցրեց, թե արդյոք կարդացել է «Հարյուր տարվա մենությունը» և խոստացավ, որ նրան կտա «Մերը խոլերայի ժամանակ» գիրքը, որն ընդամենը նախորդ տարի էր լույս տեսել: Երբ խոսեց Կառլոս Ֆունենտեսի մասին, կինն աչքերը ուլորեց, ու թվաց նրա երակներով հաստատ մեքսիկացու արյուն է հոսում. ուղիղ սև, մետաքսե մազեր ուներ, ձիթապտղագույն դեմք, նշածն մուգ աչքեր, որ ասես մոշի հատիկներ լինեին, ու կատարյալ ատամներ: Շատ հանգիստ կարող էր հայտնված լինել La muerte de Artemio Cruz<sup>5</sup>-ի էջերից:

Ճաշի ընդմիջմանը գնում էին ինչ-որ խոլ սրճարան, սուրճ խմելու, ռոմանտիկ մի վայր, ինչպես խոլերայի ժամանակ: Շուտով հայտնվեցին ծուղակում, որ կարող էր լինել սեր կամ կիրք, կախվածություն կամ կախարդանք: Կինը նրանից հինգ տարով երիտասարդ էր, ամուսնացած չէր, իսկ տղամարդն ամուսնացած էր ու երկու տարեկան դուստր ուներ: Սիրում էր իր կնոջը: Բայց այս կինը, ով կարող էր ամենատաղանդավոր գրողների մտքի արգասիքը լինել, ավելի խոր թափանցեց ու բնակություն հաս-

<sup>5</sup> «Արյունիտ Կրուսի մահը». մեքսիկացի գրող Կառլոս Ֆունենտեսի վեպը:

տատեց նրա սրտում, քան Ֆերմիլիան՝ Ֆլորենտինո Արիզայի սրտում: Նրանց սերը խոսքի կարիք չուներ: Սիրային նամակների կամ բանաստեղծությունների անհրաժեշտություն չույնպես չկար: Ճնշումն ավելանում էր, եռում ու պղպջակներ տալիս, միևնույն վերջապես հրաբխի պես ժայթքեց հանգստավայրում, Քավրայում: Օրը միասին անցկացրին, և խոնավ, հեղձուկ բնակարանի սուր հոտերի մեջ նրանց միավորեց սերը՝ միաժամանակ բուռն ու նուրբ, կատաղի ու մեղմ, ինչպես կակտուսը Չիիուախուա անապատում: Դրսից՝ փշոտ, ներսից՝ հոսուն:

Սակայն հաջորդ օրը Ֆրանցին հանկարծ թվաց, թե կակտուսը փաթաթվում է սրտին: Հազիվ էր կարողանում նայել կնոջը: Սիրավեպերը գուցե գեղեցիկ են, բայց ոչ կյանքում: Իսկ աշխատավայրում Ֆրանչեսկան չէր կարողանում բարձրացնել աչքերն ու նայել նրան: Նա մտադիր չէր ընտանիք քանդել: Դեռ երիտասարդ էր ու ծուղակն ընկնելու պատճառ չուներ: Բայց այս անգամ ճակատագիրը խղճաց, զգաց նրանց ցավն ու պատռեց ցանցը, որը դրել էր՝ նրանց իր ճիրանների մեջ առնելու համար: Երկու օր հետո Ֆրանչեսկային տեղափոխեցին ուրիշ մասնաճյուղ, ու նա անհետացավ, ինչպես շատերը, որ անհետացել էին նրանից առաջ:

Նրանք այլևս երբեք չփնտրեցին իրար: Այն ժամանակ բջջային հեռախոսներ չկային: Կապ չունեին իրար հետ, մեկը չէր փորձում պարզել, թե ինչ եղավ մյուսին: Ընդամենը երեք հարյուր կիլոմետրանոց կղզում Ֆրանցն ու Ֆրանչեսկան անհետացան ու հալվեցին ունայնության մեջ: Այնուամենայնիվ, թեպետ հեռու էին իրարից ու իրար համար կորած, ամեն գիշեր, հենց որ քունը հաղթում էր, երկուսին էլ այցի էր գալիս՝ կրակը, որ վառվեց այն օրը Քավրայում: Մեկը տեսնում էր մյուսի շողշողուն մարմինն ադոտ լույսի տակ, լսում հառաչանքները, զգում, թե քրտինքն ինչպես է հոսում պարանոցն ի վար, զգում իրենց սիրո բույրը: Վերջին խոսքերը, որ ամեն գիշեր քնելուց առաջ Ֆրանցի միտքն էին գալիս, սրանք էին՝ ի՞նչ եղավ քեզ: Ու դատարկության մեջ հնչում էր կնոջ պատասխանը՝ սիրի՛ր ինձ այնպես, ինչպես այն օրը:

Քավրայի արկածից երեք տարի անց Ֆրանչեսկան ամուսնացավ կարճատև սիրավեպից հետո, որը բողբոջեց ու հանկարծ բացվեց փխրուն,

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

գիշերները ծաղկող կակտուսի պես: Նոր ու ինքնաբերական սեր էր, ու Ֆրանչեսկան հույս ուներ, որ այն կվռնդի ամեն գիշեր այցի եկող համառ տեսիլքները: Նա չգիտեր, որ նույն պահին, երբմտնում էր եկեղեցի՝ հետևից քարշ տալով երկար զգեստն ու քողը, Ֆրանցը մտնում էր մի ուրիշ եկեղեցի՝ ոտքերը քարշ տալով կնոջ դագաղի հետևից: Ճակատագիրն էլի իր հին գործին էր անցել:

– Ֆրանց:

– Ֆրանչե՛սկա:

Տարիներ հետո նրանք դեմառդեմ հանդիպեցին Վալլետտայում «Կորդիևս» սրճարանի դիմաց: Ֆրանչեսկան ութ ամսական որդի ուներ, որին թողել էր տանը, մոր մոտ, որպեսզի քաղաքում որոշ գործեր անի: Ֆրանցը նրան պատմեց, որ կինը հանկարծամահ է եղել, ու ինքը հիմա մեկնակ է ապրում: Գնացին սուրճ խմելու, և գրույցն անմիջապես տեղափոխվեց լատինաամերիկյան գրականության դաշտ: Տղամարդը հիշատակեց մեքսիկացի գրող Լաուրա Եսկիվելի «Շոկոլադը՝ եռման ջրի վրա» գրքի մասին, իսկ կինը կարմրեց ու ասաց, որ ամաչում է, որ այդպես էլ երբեք չվերադարձրեց նրա գիրքը: Խոսեցին միասին անցկացրած կարճ ժամանակի մասին, մասնաճյուղի աշխատողների, տիպիկ տնօրենի: Ու թեև նրանց մտքից դուրս չէր գալիս Քավրայի բնակարանը, նախընտրեցին չխոսել այդ մասին: Գուցե պատահական հանդիպումը ցնցել էր նրանց: Կինը զգում էր, որ իր առաջ կոտրված տղամարդ է նստած, վիրավոր սրտով ու շփոթված հոգով, բայց աչքերը դեռ փայլում էին առաջվա պես, ու երբ ժպտում էր, նույնիսկ եթե իրեն ստիպում էր ժպտալ, դեմքը լուսավորվում էր այնպես, ինչպես այն ժամանակ հալեցրեց կնոջ սիրտը: Նա նկատեց, որ Ֆրանչեսկայի մեքսիկական արտաքինը չի փոխվել: Հիփոթյան ընթացքում մի քիչ ավելացած քաշը սազում էր նրան: Շատ ավելի գրավիչ էր: Մի թեթև գրկախառնություն, ու նրանք բաժանվեցին: Տունդարձի ճանապարհին Ֆրանցը հասկացավ, որ չունի նրա հեռախոսահամարը կամ հասցեն: Դարձյալ կորցրել էր նրան, բաց թողել մատների արանքից: Գուցե այդպես ավելի լավ է: Հիմա նա ամուսնացած կին է: Ապահովված: Երիտասարդ ընտանիք ունի: Երևում է՝ ճակատագիրը լավ գիտի, թե ինչ խաղ է խաղում:

Կնոջ մահից մոտ յոթ տարի անց Ֆրանցը հանդիպեց Ռեբեկային: Եւ տասը տարով երիտասարդ էր, չամուսնացած, ու նրանց սերն արագ աճեց ու ծաղկեց, ինչպէս Ֆրանչեսկայի ու նրա ամուսնու հարաբերությունները: Ծանոթությունից ամիսներ անց նրանք ամուսնացան, և արևը դուրս եկավ թանձր մոխրագույն ամպերից ու նորից շողաց Ֆրանցի գլխավերևում: Ռեբեկան ոչ միայն մեծացրեց նրա դստերը, որը հիմա տասներկու տարեկան էր, այլև ևս մի փոքրիկ աղջիկ պարգևեց: Կնոջ մահից կարճ ժամանակ անց Ֆրանցը վաճառել էր Քավրայի բնակարանը, բայց կեսգիշերին, երբ Ռեբեկան մեջքով նրան դարձած քնում էր, բնակարանը նորից հայտնվում էր աչքի առաջ. Ֆրանցը տեսնում էր մահճակալի գլխի այն հետքը, որտեղ երեսպատվածքի շերտը պոկվել էր, և ուր ինքը հառում էր հայացքը, երբ Ֆրանչեսկան տնքում էր իր մարմնի տակ: Եղ միջանցքի հատակի մոխրագույն մանրատախտակը, ուր ևս գցել էր ջինսե տաբատը, իսկ ինքն էլ գիրկն էր առել նրան ու շտապել ննջասենյակ: Էժան լուսամփոփը, որի վրա ներկած աշնանային տերևները հաշվում էր, երբ քրտինքի մեջ կորած պառկում էին միմյանց գրկում: Ոչ մի կին չէր կարող փրկել նրան այդ տեսիլներից:

Անցավ ևս մի ութ ամիս, ու ևս նորից հանդիպեց Ֆրանչեսկային, ու դարձյալ Վալլետտայում: Սուրբ ծննդի նախորդ շաբաթն էր, ու նրանք նորից հարմար վայր գտան սուրճի համար: Այս անգամ կինը շփոթված էր երևում: Մի տարի առաջ ամուսնալուծվել էր, որդին ապրում էր հոր հետ, ու հայրը նրան տրամադրում էր մոր դեմ: Հետո Ֆրանցը պատմեց իր կյանքը. Ռեբեկան, իր երկու դուստրերը: Ֆրանչեսկայի բջջային հեռախոսը զանգեց:

– Պիտի գևամ, – ասաց ու շփոթված ոտքի ելավ:– Կներես:

Բայց երբ հրաժեշտի ժամանակ գրկեց նրան, Ֆրանցին թվաց, թե գրկախառնությունը փոքր-ինչ ամուր էր, ու Ֆրանչեսկան նրա ականջին շնչաց:

– Շատ ուրախ եմ քեզ համար, իմ սիրտ: Դու իմ մտքերում ես, միշտ: Ու հեռացավ:

2038 թվականը ծանր էր Ֆրանցի համար, ու նա տեղափոխվեց ծերանոց: Տարիներ առաջ երկրորդ անգամ կորցրել էր կնոջը: Դուստրերը հեռացել էին, ամուսնացել օտարերկրացիների հետ: Գրքերը նրա միակ ընկերներն էին: Լավ եղանակին ծրագրում էր առավոտներն անցկացնել այգու նստարանին, ընթերցելով:

– Սա երևի ձերն է, – լավեց մի ձայն, ու պլաստմասե տոպրակի մեջ փաթաթված մի գիրք իջավ նրա ձևկներին. «Սերը խլելրայի ժամանակ»:

Ֆրանչեսկան էր:

Նախորդ տարի տեղափոխվել էր նույն ծերանոց: Նրանք նայեցին միմյանց ծերացող աչքերին, նկատեցին սեխի պես կնճռոտ դեմքի մաշկը, յասամանագույն հեղուկը, որ Ֆրանչեսկան քսում էր իր սպիտակ մազերին, Ֆրանցի մնացած նոսր մազերը, որոնք մաղի պես պաշտպանում էին գլուխն արևից: Ժպտացին ու ձեռքերը մեկնեցին միմյանց:

Ծերանոցի երկարակյացները ծաղրում էին նրանց, կատակներ անում: Ու երբ հայտարարեցին, որ ամուսնանում են, ոմանք ուղղակի ցնցված էին, շատերն էլ արագ-արագ խաչակնքեցին: Ինչևէ, ծերանոցը հրաշալի խնջույք կազմակերպեց, նույնիսկ կրոստեր դուստրը Բրյուսելից եկավ հարսանիքին: Նույն օրը՝ երեկոյան, երբ եկան ամուսնական գույզին տրամադրված նոր սենյակ, Ֆրանցն ու Ֆրանչեսկան կանգ առան ու նայեցին իրար: Ֆրանչեսկան գնաց լոգարան ու հագավ գիշերանոցը: Հետո Ֆրանցը գնաց ու հագավ գիշերագգեստը: Երբ պատրաստ էին, նորից կանգ առան ու նայեցին իրար: Չէին ուզում տեսնել միմյանց մարմինը: Ուզում էին պահպանել հիշողության մեջ այն օրը. գեղեցիկ, նուրբ, կրքոտ՝ եռում էին Զավրայի խոնավ բնակարանում: Ուզում էին հիշողությունն առնել շոջանակի մեջ ու կախել՝ ի հեճուկս կյանքի խլելրայի:

Ֆրանցն ամուր գրկեց նրան, իսկ հետո պառկեցին տարբեր մահճակալների ու միմյանց ասացին՝

– Te quiero<sup>6</sup>:

Հետո հենվեցին մահճակալի թիկնակին ու միասին վայելեցին տեսիլքը. մահճակալի գլխի երեսպատվածքի պոկված կտորը:

---

<sup>6</sup> Միքում եմ քեզ:



## Հիսուն սսվեր

Ամուսնական կյանքի տասնինը տարին անցավ, մինչև որ ևս հասկացավ, որ սեր անելը սովորական բան է դարձել: Սեր դեռ կար, ու նրանք դեռ ուզում էին իրար, բայց ամեն ինչ մեխանիկական էր: Կանոնավոր սեքս՝ շաբաթը երկու անգամ, անպայման կիրակի առավոտները և ևս մեկ անգամ՝ շաբաթվա ընթացքում, ամենայն հավանականությամբ չորեքշաբթի կամ հինգշաբթի: Եվ միշտ ամեն ինչ՝ նույն հաջորդականությամբ, ինչպես տղամարդը փոխում է մեքենայի անիվը: Նախ համբուրում էր կնոջ պարանոցը, հետո՝ շուրթերը, սեղմում էր կուրծքը, հանում էր կափարիչը, թուլացնում պտտակները, դուրս բերում անվաղողը, բերում ամբարձիչը, օդ մղում. ամեն ինչ արվում էր բժախնդրորեն և նույն հերթականությամբ: Տասնինը տարվա ամուսնություն՝ մոտ ութ հազար սիրային սեսիա, որոնցից յուրաքանչյուրը նախորդի ֆոտոկրկնօրինակն էր:

Դա միշտ հաճելի էր, բայց տխրահոջակ «Հիսուն սովերները» կարդալուց հետո ևս հանկարծ հասկացել էր, որ իրենց այս օրինաչափությունն իրականում ոչ թե սիրո արտահայտություն է, այլ օտարացման ծես: Նրանք տրվել էին միապաղաղության խրոնիկական հիվանդությանը: Գրքի այդ գոհարը բացեց նրա աչքերը, ճանապարհ ցույց տվեց, այրեց, սովորեցրեց, որ սերը պիտի լինի բացահայտման չընդհատվող ճամփորդություն, մի վայր, որտեղ կարելի է նոր բան փորձել: Սերը պետք է լինի մարտահրավերների շարք, ստեղծագործական վարժություն: Բացահայտում բացահայտման հետևից, և յուրաքանչյուր ակտ պիտի տարբերվի նախորդից, պայթի անհայտության քաղցր վախի հետ: Ամուսնական կյանք անակնկալներ «ներարկելու» սուր անհրաժեշտություն կար:

Երբ կինը վերջապես նույնպես համաձայնեց կարդալ «Հիսուն սովերները», երկուսով տարվեցին դրանով: Իջնում էին ներքև՝ խավոտ գորգի վրա սիրով զբաղվելու: Հետո կնոջ համար վագրանախշ ներքնագգեստ գնեց: Հետո սկսեցին իրար ականջի վուլգար խոսքեր շնչալ, երբ հասնում էին հաճույքի գագաթնակետին: Վերջապես սովորեցին բարձրաձայն

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

ասել այդ բառերը: Սեր էին անում զուգարանում, ներքևում՝ ավտոտակում, Auris-ի սատարանին: Ինքնավստահությունն ավելանում էր, ու մի երեկո ամուսինն ասաց.

– Ինձ կապիր մահճակալին:

– Ինչպե՞ս, – հարցրեց կինը, ու սիրտը թարտաց կանխավայելումից:

– Ձեռքերս կապիր մահճակալի գլխին: Ոտքերս էլ: Հետո այնպես արա, որ ուզե՛մ քեզ, շա՛տ ուզեմ...

Կինը ենթարկվեց, բայց քանի որ մահճակալի ոտքերի մոտ տախտակ չկար, ամուսնու կոճերը կապեց մահճակալի ոտքերին:

– Ինչքան հնարավոր է ձիգ կապիր պարանը, – ասաց կնոջը:

– Չեմ ուզում ցավեցնել:

– Ցավեցրո՛ւ ինձ, ցավեցրո՛ւ:

Հիմա, երբ զոհը մերկ էր ու տեղում, կինը կանգնեց նրա գլխավերևում՝ զոհաբերության խորանի վրա, մի ոտքն այստեղ, մյուսն՝ այնտեղ, առանց նրան դիպչելու, ու սկսեց յոթ քողերի պարը՝ ճոճվելով այնպես, ինչպես ամառավերջի քաղցր զեփյուռին տրված խաղողի որթ: Պոկում էր տերև առ տերև ու զգում աշնանային տառապանքի վրա՝ ճոճվելով ու տնքալով: Զրոյիքը հոսում էր տղամարդու ճակատից մինչև աչքերի անկյունները, ուր ձեռքը չէր կարող հասնել: Նա սկսեց հևալ ու ձգել պարանները: Իսկ կինը, որքան շատ էր հետևում նրա պայքարին, քամիներն այնքան ուժգին էին փչում, մինչև որ վերածվեցին կատաղի փոթորկի, ու խաղողի որթի վրա միայն երեք փոքրիկ ոսկեզօծ տերև մնաց: Տղամարդը զգում էր, թե տերևներն ինչպես են քերծում իր դեմքը, կրծքավանդակը, ոտքերի բացվածքը:

Կինը կտրուկ դադարեց ու կայեց ամուսնուն: Շուրթերի վրա ծուռ ժպիտ էր ուրվագծված, ու հանկարծ թվաց, թե նա կենտրոնացել է դրա վրա: Հիշեց: Իհարկե: Տղամարդն անգոր էր, երբ իրեն խուտուտ էին տալիս: Գորգից բարձրացրեց նրա վարտիքն ու դրա ծայրով սկսեց խուտուտ տալ ոտնաթաթերը: Թիչ առաջ լսվող տնքոցները մի ակնթարթում վերածվեցին դժոխային ոռնոցի:

– Վերջ տուր: Դա խաղի կանոններից դուրս է:

Բայց նրա ժպիտը հիմա ավելի դիվային էր, քան ճիչերը: Ուռքերից հետո անցավ թևատակ, ու երբ տղամարդը ձգվեց դեպի մահճակալի զլուխը, այն ամբողջությամբ ցլցվեց, ու նա սկսեց հայհոյել. նրա գոռոցները վերածվեցին վիրավորանքների ու թունդ հայհոյանքի: Կինը նրան հասցրեց բանականության սահմանագծին, հետո վերցրեց մկրատն ու կտրեց նրա դաստակների պարանները:

Ազատվելով՝ տղամարդը թեքվեց կողք, զլուխը կախեց ուռքերի վրա, գնդակի նման կծկվեց, քնքուշ պտղի պես սկսեց դողալ ու սրթսրթալ ցրտից: Կինը կծկվեց նրա թիկունքում, գրկեց, կուրծքը սեղմեց նրա մեջքին, մկրատը դանդաղ տարավ կոճերին կապած պարաններին ու կտրեց լարը: Տղամարդը սկսեց կամացուկ լաց լինել:

Կինը համբուրեց նրա պարանոցը, շոյեց կրծքավանդակի մազածածկույթը: Տղամարդը շոջվեց կնոջ կողմը, ձեռքերով բռնեց դեմքն ու շուրթերով շոյեց շուրթերը: Մոտ քաշեց նրան, ու այդպես մնացին մի քանի ժամ, մինչև վերջապես խոր քուն մտան:

Երբ տղամարդը կիսաբաց աչքերով նայեց նոր օրվան, հանկարծ հասկացավ, որ իրենց տասնինը տարվա համատեղ կյանքում սիրո հիսունից ավելի ստվերներ են բացահայտել:

## ՆԱՄԱԿ ՀՈՐԵՊՈՐՏ

Սիրելի հորեղբայր Լյուդվիգ,

չեմ կարծում, թե ի վիճակի ես կարողալ այս նամակը, բայց ամեն դեպքում գրում եմ: Պետք է ստամոքսս դատարկեմ մաղձից ու ապացուցեմ քեզ, որ չկարողացար խաբել ինձ: Դու էլ, ես էլ լավ գիտենք. ծիծաղում է նա, ով վերջում է ծիծաղում:

Թույլ տուր, նախ, հիշեցնեմ քեզ, որ ինձնից բացի դու աշխարհում ոչ ոք չունեիր *(բացի այդ տարօրինակ թոմհից՝ ընկերոջից)*:

Մայրս ու հայրս քեզնից շատ առաջ էին մահացել: Ես քո միակ զարմիկն էի: Միակ մարդն էի, ով շաբաթական երկու անգամ այցի էր գալիս քեզ այդ փոքրիկ տուն՝ քանդված տանիքով ու խոնավ պատերով: Առաջ համակերպվում էի, որ շարունակ խոսում ու խոսում էիր քո սիրած զգվելի երաժշտության մասին: Երբ դեռ փոքր էի, փորձում էիր խրատել ինձ: Ուղեղս լվանում էիր Սոցարտի, Բեթհովենի, Հայդենի, Ստրավինսկիի *(օ՛ՖՖ, ինչ էլ ձանձրալի ցուցակ է)* անուններով, ու որքան շատ էիր ոմբակոծում, այնքան շատ էի ատում նրանց: Բայց ամեն ինչ պահում էի իմ ներսում: Այդպես շարունակվեց, ևույնիսկ երբ մեծացա: Տղամարդ դարձա: Կուչ էի գալիս, փակվում իմ մեջ: Ամեն անգամ, երբ պնդում էիր, որ միացնեմ այդ սարսափելի սիմֆոնիաներից մեկը, համբերատար լսում էի, միայն՝ որպեսզի հանգիստ լինես: Մինչև հիմա չես պատկերացնում, թե ինչքան թևաթափ էի լինում, երբ անվերջ խոսում էիր Մալերի ու Լիստի ու մյուս բոլորի մեծության մասին, որոնց հնչյուններից ստամոքսս կծկվում էր ու բարձրանում-հասնում կոկորդիս: Ատամներս սեղմում էի ու հայացքս գամում հատակի անհավասար սալիկներին: Բայց ևույնիսկ դա բավական չէր: Ուզում էիր, որ համաձայնեմ քեզ հետ: Պնդում էիր, որ սիրեմ այն, ինչ դու էիր սիրում: Ու երբ մի անգամ փորձեցի քեզ ցույց տալ այն երաժշտությունը, որից շունչս կտրվում էր, բռունցքներով խփեցիր սեղանին ու ինձ բարբարոս անվանեցիր: Բայց ես այլևս փոքրիկ տղա չէի: Իմ ներսում հորմոնները հասել էին գագաթնակետին: Ոչ մի ռոպե չդիմացա ու հրաբխի

պես ժայթքեցի: Ես քեզ պատմեցի Led Zeppelin- ի ու Iron Maiden-ի (*հնչ-պես նաև Black Sabbath-ի ու Deep Purple-ի*) մասին ու առաջարկեցի, որ լսես նրանց որոշ երգեր: Դու ընդունեցիր մարտահրավերը՝ կարծելով, որ դա մեծահոգություն է: Ասացիր, որ լայնախոի մարդ ես, որ պատրաստ ես լսել ու վերլուծել: Հաջորդ օրն իսկ եկա քեզ մոտ, բերեցի նվագարկիչս ու փորձեցի քեզ ներկայացնել Stairway to Heaven երգը: Բայց շուտով դիմակդ պատռվեց: Մնաք բարով, լայնախոիություն և հանդուրժողականություն: Համբերության ամենափոքր նշույլ անգամ չցուցաբերեցիր, այն համբերության, որով տարիներ շարունակ դիմացել էի քեզ: Քիչ էր մնում նվագարկիչս գետնով տայիր. հայիոյեցի ինձ՝ ասելով, որ չեմ ժառանգել մայրիկիս տաղանդներից ոչ մեկը. ասի՛ր չէ որ ես վերջիվերջո ԵՌՄ<sup>7</sup> ունեցող դաշնակահարուհի եր: Դու համարյա վռնդեցիր ինձ այդ զիշեր: Ես լուռ հեռացա: Դա վերջի սկիզբն էր: Այդ օրվանից ամեն անգամ, երբ այցի էի գալիս քեզ, ու պատահում էր այնպես, որ ընկերոջդ՝ Թոմիի հետ էիր լինում, ու երկուսով ոգևորված լսում էիք «Հերոսական» (*այո, դեռ հիշում եմ վերնագրերը, որովհետև ուրվականի պես հետապնդում են ինձ*) սիմֆոնիան, անմիջապես անջատում էիր նվագարկիչն ու ասում նրան.

– Ստիպված եմք դադար տալ. վախենում եմ հանկարծ իմ այս մեն ու միակ զարմիկը կաթվածահար չլինի (*իսկ ես հոգուս խորքում քեզ ու քո խելառ գլխի բոլոր Բեթհովեններին ասում էի՝ գնացե՛ք գրողի ծոցը*):

Այո, հորեղբայր, դու հանկարծ սկսեցիր շատ պարզ հասկացնել, որ ես արժեք չունեմ: Այլևս ինձ հետ չէիր խոսում երաժշտության մասին, ու թեև փորձում էի խախտել լռությունն ու պատմել քեզ իմ նոր գործի մասին (ի դեպ, տևօրենս քեզ հետ նույն դպրոցում է սովորել) կամ պատմել մի ֆիլմից, որի մասին ամբողջ Մալթան խոսում էր ու հերթ էր կանգնում, որ դիտի, դու շարունակում էիր թերթել սկավառակների քո հսկայական հավաքածուն: Ու չնայած իմ հանդեպ հարգանքից (*կամ էլ ձևացնում էիր, թե հարգանքից*) անջատում էիր երաժշտությունը, միևնույն է, մտքում շարունակում էիր լսել ու կարոտով ու երկյուղածությամբ նայել արբունների շապիկներին (*բանի տեղ չդնելով իմ գործը*):

<sup>7</sup>LRSM - Երաժշտության թագավորական դպրոցների արտոնագիր:

Բայց ես սպասում էի՝ շարունակ այցի գալով այլևս ոչ թե հարգանքի, այլ քո փողի պատճառով: Գիտեի, որ հարուստ ես. դեռ փոքր էի, երբ ինձ ասում էիր, որ քո շնորհիվ ես ունևոր եմ լինելու: Հրաշալի գիտեի, որ քո պարտատոմսերից, բաժնետոմսերից ու բաժնեմասերից ևույնքան լավ ես գլուխ հանում, որքան ֆուգաներից ու ռապսոդիաներից: Ես ապրում էի այն հույսով, որ մի օր կհավաքեմ այն ամբողջ ժամանակի պտուղները, որ զոհել եմ՝ հանուն քեզ:

Պտուղը ժամանակից շուտ հասունացավ, երբ 78 տարեկան էիր: Սիրելի ընկերո՞ւ՝ Թոմին, զանգահարեց ինձ ու ասաց, որ քեզ շտապ տեղափոխել են հիվանդանոց: Մի ակնթարթում հագնվեցի ու դուրս թռա: Բայց ուշացա: Սրտամկանի լայնածավալ կաթված (*Թոմիի խոսքով*): Հենց այնտեղ, մահճակալիդ մոտ, երբ աչքերդ դեռ նայում էին վեր, իսկ բերանդ բաց էր, սկսվեցին անակնկալները: Անշուշտ, դա ծրագիր էր, որ երկուսով էիք մոզոնել: Թոմին ինձ պատմեց պայմանագրի մասին, որ կնքել էիք թաղման բյուրոյի հետ՝ Remington պրեմիում կարգի պղնձե արկղիկի համար, որը պատվիրել էիք բերել Ավստրալիայից (*Վիկտորիայում գործող Coffinworld ընկերությունից*), և որը մի մեծ հարստությունն արժեր: Իսկ ձեր պատվիրած տապանաքարի վրա փոքրիկ արևային պանելներ էին տեղադրված՝ այնքան հզոր, որ կարող էին լիցքավորել MP3 ներկառուցված նվագարկչի մարտկոցները: Նա բացատրեց, թե ինչպես է աշխատում գերեզմանաքարի էլեկտրոնային համակարգը, որը սնուցում էր դազադի մեջ ներկառուցված չորս բարձրախոս: Ու հիմար ժպիտը դեմքին՝ Թոմին շարունակեց պատմել հազարների մասին, որոնք ծախսել էիր, որ ևույնիսկ գերեզմանիդ խավարի մեջ մի ամբողջ հավերժությունն լսես քո անգին երաժշտությունը:

Երբ ստացա կտակիդ կրկնօրինակը, հայտնաբերեցի, որ ինձ թողել ես բախտի քմահաճույքին: Սկավառակներիդ հավաքածուն կտակել ես Թոմիին, իսկ ինձ թողել ես միայն խոնավ, լքված տունդ, որը դժվար էր վաճառել ևույնիսկ ծիծաղելի ցածր գնով: Հարստությանդ մնացած մասը թողել ես բազմաթիվ կազմակերպությունների ու հիմնադրամների:

Ես մի ամբողջ տարի անիծեցի քեզ: Մի ամբողջ տարի գիշերներն

անցկացրի մեջքիս վրա պառկած, առաստաղին նայելով: Ականջիս մեջ զրնգում էին խոստումներդ, որ չկատարեցիր: Տեսնում էի, թե որքան գումար ես կուտակել կյանքիդ ընթացքում, որը կարող էր բաժին հասնել ինձ (*ՈՐ ՊԻՏԻ ԲԱԺԻՆ ՀԱՍՆԵՐ ԻՆՁ*): Ու մինչ ես անկողնում մեջքի վրա պառկած նայում էի առաստաղին, դու լսում էիր Բեթհոլմենի «Հինգերորդ սիմֆոնիան»:

Բայց հիմա իմ կյանքում սոր էջ եմ բացել: Երևի արդեն գիտես՝ քո ընկեր Թոմին երկու ամիս առաջ միացավ քեզ: Անսպասելի լքեց մեզ (*Վստահ չեմ, բայց գուցե երկուսիդ միջև ինչ-որ պայմանավորվածություն է եղել*), ինչպես դու: Հիմա եկել է վրեժի իմ ժամը: Հանդիպեցի մեկին, ով հասկանում է էլեկտրոնիկայից, ու ավելի շատ գումար առաջարկեցի, քան նա էր խնդրում: Փողի մասին չեմ էլ մտածում: Նա բացեց քո գերեզմանը ու հայտնաբերեց դրա գաղտնիքները, արեց ամեն բան, ինչ խնդրեցի:

Այնպես որ հիմա այլևս գիշերներն անկողնուս մեջ շուռումուռ չեմ գալիս ու չեմ նայում առաստաղին: Երեխայի պես քնում եմ: Իսկ դու քո Remington պրեմիում կարգի պղնձե արկղիկում լսում ես Deep Purple-ի Black Night երգի հավերժական հնչյունները, Iron Maiden-ի Wasted Years-ը և իմ մնացած «բարբարոսական» երաժշտությունը:

Մի՛ անհանգստացիր, սիրելի՛ հորեղբայր Լյուդվիգ: Վստահ եմ աշխարհում երբեք չի եղել հորեղբոր գերեզմանին այդքան նվիրված զարմիկ, ինչպիսին ես եմ: Կշարունակեմ հոգ տանել գերեզմանիդ մասին, չանհանգստանա՛ս:

R.I.P - Հանգչիր կտոր-կտոր<sup>8</sup>:

*Հ.Գ. Երբ խնամքով արտագրեն այս նամակը, կտեղադրեն գերեզմանաքարիդ տակ:*

<sup>8</sup> R.I.P – Rest in Peace – Հանգչի՛ր խաղաղությամբ: Բառախաղ է, որտեղ հեղինակը in peace (խաղաղության մեջ) արտահայտությունը փոխարինել է rest in pieces արտահայտությամբ, որը թարգմանաբար նշանակում է՝ հանգչիր կտոր-կտոր:

## ԴԱՇԱՄՈՒՐ

Երբ նախարարը բացման արարողության ժամանակ կտրեց ժապավենը, բոլորը համաձայնեցին, որ նոր ծերանոցը ոչևչով չի տարբերվում հինգաստղանի հյուրանոցից: Մեկ շաբաթ հետո, երբ տարեց բնակիչները սկսեցին ժամանել, աստղերը սկսեցին հերթով մեռնել:

Երբ պարոն Պաուլը մտավ իր նոր հրաշալի սենյակ (նրան հատկացրել էին բաց վարդագույն սենյակը), պարզեց, որ ամեն ինչ արդեն պատրաստ է:

– Նայի՛ր ինձ, – կանչեց մահճակալի կողքի կարմիր կոճակը:– Ես հոգ կտանեմ քո մասին: Եթե գիշերը շունչդ կտրվի, կամ կրծքավանդակում ցավ զգաս, կամ էլ ընկնես մահճակալի ու սեղանիկի արանքում, չվախենա՛ս: Ես շատ արագ օգնություն կկանչեմ: Որովհետև, գիտես, դու այլևս երիտասարդ չես ու վաղ թե ուշ շնչահեղձ ես լինելու, կամ սիրտդ ցավելու է, կամ էլ ընկնելու ես ու կոտրես ազդրդ: Դա անխուսափելի է, պարո՛ն Պաուլ:

Նա մտավ լոգասենյակ, ու գուգարանակոնքի կողքին մետաղյա ճաղը նույնպես դիմեց նրան.

– Կառչի՛ր ինձնից իջնելիս ու բարձրանալիս: Ռիսկի մի՛ դիմիր: Այստեղ կարմիր կոճակ չկա, որ հոգ տանի քո մասին: Ինձնից բացի այստեղ ոչինչ չունես, բայց մի՛ անհանգստացիր, կարող ես հենվել ինձ վրա: Ուղղակի չափից դուրս մեծամիտ մի՛ եղիր, մի՛ արհամարհիր ինձ: Զո ոտքերն այլևս առաջվանը չեն, ու գիտես, վաղ թե ուշ...

Բոլոր կոճակներն ու անջատիչները փորձում էին գրավել նրա ուշադրությունը: Կոճակները՝ մահճակալը բարձրացնելու և իջեցնելու, օղափոխիչը կամ հեռուստացույցը միացնելու և անջատելու, շերտավարագույրները բարձրացնելու և իջեցնելու համար: Նրանք լուռ մրցում էին. «Ընտրի՛ր ինձ», – աղաչում էին կոճակները, որոնք պատրաստ էին կանխագուշակել նրա ապագան, ինչպես առարկաները, որոնք տեղավորում ենք արձաթե սկուտեղի վրա՝ երեխայի կյանքի ուղին կանխագուշակելու համար: Պարոն Պաուլն արհամարհեց բոլորին ու երերալով քայլերն ուղ-



դեց դեպի պատուհանը, որից երևում էր այգին, այգու կենտրոնի ծվածն լճակն ու խորդենիները, ուղյակների երկայնքով աճող Մադագասկար հասմիկն ու պիտոսպորում բույսը: Բոլոր նստարանները դատարկ էին: Նրա հարևանները, երևում է, զգուշությամբ էին վերաբերվում գարնանային այգուն, փոխարենը նախընտրում էին բազկաթռռները, որոնք նրանց տրամադրել էին նախասրահի մուտքի երկու կողմի երկու քառակուսի ոտնաչափ անձնական տարածքում: Կիսախավարի մեջ նրանք կարծես կորչում էին հին լուսանկարների մեջ, որոնցով զարդարված էին իրենց շրջապատող պատերը: Ձկան շուկան՝ Նեպտունի հին ու հսկա արձանի խիստ հայացքի ներքո, որ ժամանակին այստեղ էր, և հայտնի «Շալե» ակումբը ծովափին՝ Գարիդ-Դուդում, որն ամռանը միշտ լեփ-լեցուն էր նավաստիներով ու մակույկավարներով: Իրենց ամուր բազկաթռռներից նրանք ընկղմվում էին «Շալեի» երկարաշունչ պարերի հիշողությունների մեջ. չարխթոն և ֆոքստրոտ, աղջիկները՝ ժապավենավոր լայնեզր գլխարկներով, տղամարդիկ՝ աղջիկներին իրենց ամուր սեղմած:

Մի երեկո, երբ պարոն Պաուլը գնաց՝ հին Թագավորական օպերային թատրոնի նկարի դիմաց իր տեղը զբաղեցնելու, նկատեց, որ սրահի ուղիղ կենտրոնում դաշնամուր են դրել: Հաստատ հենց այդ օրն էին բերել, հավանաբար հետճաշյա քնի ընթացքում: Ռոյալ Եր՝ սև ու փայլփլուն, արշավածիու պես: «Զիմմերման»: Նա հայացքը կենտրոնացրեց դաշնամուրի մակերեսին գլխիվայր արտացոլված օպերայի տան նկարի վրա ու վերադարձավ իր երիտասարդություն, հիշեց այն ժամերը, որ անցկացնում էր տանը, իրենց դաշնամուրի դիմաց: Առաջին դասարանի քննություններից մինչև դիպլոմային աշխատանք, Բախի «Աննա Մագդալենայի նոտաների տետրից» մինչև Շումանի «Արաբեսկը». ո՛նց էր կարոտում փոքրիկ ռոյալը, որ նման էր այս մեկին: Հայրն էր գնել Bentley-ի փոխարեն: Հետո պարոն Պաուլը նայեց իր մատներին, ծոմոված ու տձև, ինչպես ծառի ճյուղավորված արմատներ. նրա ձեռքերն ավելի ուժեղ էին դողում, քան տրեմոլոն<sup>9</sup> Բեթհովենի «Պաթետիկ» սոնատում: Մի ժամանակ նա կորչում էր աշխարհի երեսից, երբ նստում էր իր դաշնամուրի առաջ: Մի ժամանակ նա

<sup>9</sup> Երաժշտական եզրույթ

շատ ձգտումներ ուներ, երազում էր մեծություն դառնալ, ասենք, օրինակ, Ռուբինշտեյնից ու Ռախմանինովից ընդամենը մի աստիճան ցածր: Բայց դիպումը ստանալուց անմիջապես հետո նրա կյանք մտան աղջիկները՝ մատիտ-կիսաշրջագգեստներով ու Փիթեր Փեն օձիքներով, ու Bentley-ի կափարիչը մեկընդմիջտ փակվեց ու այլևս երբեք չբացվեց:

Նա դանդաղ վեր կացավ ու երերացող քայլերով գնաց այն ճանապարհով, որ նրան բերել էր դաշնամուրի մոտ: Հենց որ հասավ, դադարեց դողալ ու շոյեց դաշնամուրի փայլուն մակերեսը՝ ուշադրություն չդարձնելով ուրիշներին: Բացի՞, թե չէ: Նստի՞ աթոռին: Բայց այնտեղ, հենց հին թատրոնի արտացոլանքի կողքին, տեսավ նաև իր մատները: Եղջերենու արմատներ՝ Աքաղաղի ոտքեր՝ Վերադարձավ ու ապաստանեց իր նուրբ վարդագույն ննջարանում:

Այդ գիշեր երազում տեսավ Շոպենի պրեյլուդը, Կլեմենտիի Allegro-ն և Դեբյուսիի Valse Romantique-ը: Ուստի հաջորդ առավոտ, իր սենյակում մնալու և ինքն իրեն խոճալու փոխարեն, շտապեց ուղիղ նախասրահ՝ «Զիմմերմանի» մոտ: Համե՞րգ էր նախատեսվում: Գուցե երկու նվիրված երիտասարդ ուսանողներն են, որոնք դեռ հավատում են, որ կարող են հասնել Ռուբինշտեյնի բարձունքին: Սովորականի պես մոտեցավ իր բազկաթոռին, ընկղմվեց դրա մեջ ու սկսեց զննել դաշնամուրը: Բացի՞: Տո՞ւյց տա նրանց, որ չնայած եղջերենու արմատներին՝ իր հոգին դեռ նուրբ է, ինչպես փետրվարի առաջին տերևները: Իսկ եթե ծաղրի առարկա՞ դարձնի իրեն: Իսկ եթե մատները քարանձախ միջին օկտավայի վրա:

Գլխահակ վերադարձավ իր սենյակ: Նույն գիշեր՝ ավելի ուշ, երազները դարձյալ զբաղեցրին միտքը: Նրա օրերը ռիթմով հաջորդում էին իրար: Օրը սկսում էր փայլեցրած ռոյալի առաջ մոլորված կանգնելուց: Անթիվ-անհամար անգամներ մատները ձգվում էին դեպի ստեղնաշարի կափարիչը, ու այնպե՛ս էր ուզում բացել այն: Ու ճիշտ նույնքան անգամ էլ ձեռքերը հետ էին քաշվում՝ ամեն ինչ թողնելով այնպես, ինչպես կար: Թագավորական օպերայի տան լուսանկարի կողքին՝ բազկաթոռի մեջ անվտանգ ընկղմված՝ անցկացնում էր օրերը՝ հայացքը գամած սաղորիչ գեղեցկությանը, որ խաթարել էր հոգու հանգիստը հիշողությունների անվերջ սոնա-

տով, որը, առաջ թվում էր, լքել էր իրեն: Ընդմիջտ թաղվել: Ինչ է, ռոյալը բերել էին իրեն Նյարդայնացնելու համա՞ր:

Գիշերվա կեսին կտրուկ արթնացավ, դարձյալ երազների մեջ խորատուզված, քրտինքի մեջ կորած: Չէ՛, չի դիմանա այս տանջանքներին, հատկապես հիմա՝ կյանքի վերջին օրերին ու գիշերներին: Սեղմեց կանաչ կոճակը: Մահճակալը բարձրացրեց նրան, խալաթը գցեց ուսերին ու արագորեն իջավ Նախասրահ: «Զիմմերմանը» փայլում էր Նոյնիսկ սրահի թույլ գիշերային լույսի տակ, չնայած սև փայտով երեսպատմանը. համարյա համերգային ռոյալի պես էր: Նպատակաուղղված քայլեց վերև, վճռական նստեց աթոռակին. մատներն անհամբեր էին, ուզում էին բացել ստեղնաշարը: Փորձեց: Շատ ամուր էր փակած: Ավելի ուժեղ փորձեց: Ոչինչ չստացվեց: Կողպած էր: Վեր կացավ տեղից, արդեն դողալով, ու բարձրացրեց ավելի ծանր կափարիչը: Դատարկ էր: Լարեր բոլորովին չկային:

Պարոն Պաուլն այլևս ժամանակ չի անցկացնում իր բազկաթոռին: Փոխարենը դուրս է գալիս այգի ու նստում խորդենիների և պիտոսպորումի կողքին: Դատարկ ռոյալը դեռ Նախասրահի կենտրոնում է: Սև արկղը սպասում է իր լարերին: Ինչպես դիակը՝ դագաղին:

## ՔԱՅԻՐ

Բժիշկը հայացքը կենտրոնացրեց վրաս:

– Իզուր ժամանակ եք վատնում այստեղ, – ասաց:– Մինչև ձեր գլուխը չմտցնեք, որ պետք է սկսել քայլել, թեկուզ օրական կես ժամ, չվերադառնաք:

Այս խոսքերով նա տեղը դրեց արյան ճնշումը չափող սարքն ու հրաժարվեց վճարումից: Հաջորդ իսկ օրը սկսեցի քայլել ու վերջին վեց ամիսներիս անընդհատ քայլում եմ: Առավոտյան ժամը վեցին դողալով անցնում եմ ծովափի ամբողջ երկայնքով, ըմբոշխնում արևի ճառագայթները, որոնք արտացոլվում են մեղմ ալիքների վրա, շնչում եմ փոչոտ խեցգետինների հոտը, որոնք ինձ պես վաղ առավոտյան դուրս են գալիս լողափով զբոսնելու: Համարյա զգում եմ դրանց համր: Երբ ականջ եմ դնում ափին բախվող ալիքների ձայնին, դրանց ուժով ռումբա է հիշեցնում: Բայց բուրբուրիս այդպես չէ: Այս զբոսանքների շնորհիվ շատ ընկերներ եմ ձեռք բերել. ընկերներ, որոնց իրականում չեմ ճանաչում, որոնց հետ երբեք չեմ խոսել, ու նրանք համարյա երբեք չեն բարևել ինձ: Բայց մենք արդեն ծանոթներ ենք:

Միջին տարիքի երկու տղամարդու եմ հանդիպում մոտավորապես նույն վայրում՝ հենց առանձնատների հետևում, որտեղ սկսվում են բնակարանները: Հեռվից լսվում է, թե նրանք ինչպես են վիճում՝ միշտ բարեխղճորեն վերլուծելով աշխարհում տիրող իրավիճակը՝ ըստ օրվա նորությունների. անկարգություններ Եգիպտոսում նախագահ Մուրսիի ձերբակալությունից հետո, գնացքի բախում Փարիզի հարավում: Բայց նախորդ տարվա հունիսին նրանց ուշադրությունն ամբողջությամբ կենտրոնացած էր Սուրբ Կատերինայի տոնի վրա, որը Կուրիան անպատասխանատու կերպով չեղարկել էր, ու դրանից քիչ էր մնում քաղաքացիական պատերազմ սկսվեր:

Երկուսն էլ միաժամանակ խոսում են, ու երբ անցնում են, դեռ լսում եմ նրանց ձայները, մինչև որ Եգիպտոսի անկարգությունների մասին նրանց տաքացած առարկությունները միախառնվում են փոքրիկ մոտորանավա-

կի կամացուկ գվվոցին, որը շարժվում է դեպի նավամատույց, ու դրա ուղիքով խաղաղության զգացում է բերում աշխարհին:

Կա նաև մի ավելի երիտասարդ տղա, որը միշտ բարկացած է: Առաջին անգամ, երբ նկատեցի, որ անթարթ նայում է ինձ, ու փորձեցի բարևել, կտրուկ շրջվեց ու հայացքը հառեց ծովին, իսկ կատաղությունն ուղղեց ալիքներին: Առավոտյան զբոսանքը տառապանք է նրա համար, ապաշխարանքի մի ձև, ու նա գուցե դժկամորեն կատարում է այն ուխտը, որն արել է:

Նաև ճոճանակներ կան, համենայն դեպս ես եմ դրանք այդպես անվանում, որովհետև զինվորների պես թևերն առաջ ու հետ տանելու փոխարեն կամարը աջից ձախ է շարժվում: Որքան շատ ես մոտենում, այնքան թվում է, թե պապիկի ժամացույցի կրկնօրինակն են: Մի կին այնքան կատաղի է թափ տալիս թևերը, որ տպավորություն է, թե ուր որ է գետին կտապալիք ետ:

Բայց ամենալավը երիտասարդ կինն է՝ հետևապատկերում: Ես այդպես էլ չկարողացա կարգին ուսումնասիրել նրա դեմքը, որովհետև թիկունքից է մոտենում ինձ, վիթի պես վազվզելով ու ցատկոտելով: Տեսնում եմ միայն նրա հետույքը՝ փոքրիկ, կլորիկ ու կատարյալ, որ շարժվում է յուրաքանչյուր քայլի հետ: Ինձ մխիթարում է այն, որ երիտասարդության կայծը դեռ չի մարել, բայց այդպես էլ չեմ կարողանում վայելել այնքան ժամանակ, որքան կուզեի. մի ակնթարթում կատարյալ հետույքն արդեն փոքրանում է ու լողվում, որովհետև միախառնվում է ափամերձ մայթերին աճած արմավենիների ու կարմրանների պատկերներին:

Երբ սկսեցի գրել այս ամենը, մտքումս բուրբուլիկ այլ բան էր: Ուզում էի խոսել հորեղբայր Ֆրենցի մասին: Ես նրան հասնդիպում եմ, երբ վերադառնում եմ, ու զբոսանքս արդեն գրեթե ավարտված է լինում: Նրան այդպես եմ կոչել, որովհետև նման է մորս հորեղբորը. նրա դեմքը հստակ արտացոլվել է մտքումս, չնայած մահացավ, երբ ընդամենը վեց տարեկան էի: Այս նոր հորեղբայր Ֆրենցը շատ ծեր է երևում: Դանդաղ է քայլում՝ մի փոքր ձախ թեքված, միշտ հայացքը հորիզոնին: Զբոսնում է շան հետ, որն իրենից ավելի ծեր է երևում: Երբ առաջին անգամ նկատեցի նրան,

համարյա ժպտացի: Չէի հասկանում, թե ինչու է բռնել շան կապիչը. ախր շունը քայլելու ուժ անգամ չունի, ուր մնաց թե վազելու:

Ամեն օր քայլողները որպես կանոն արագաքայլ են ու համոզված են, որ արդյունավետ մարզումներից հետո պիտի ուժասպառ ու քրտնած լինեն: Բայց իմ հորեղբայր Ֆրենցը կրիայի պես է քայլում: Գուցե ուժերն էլ չեն հերիքում, բայց նրա տեսքից տպավորություն է, որ ընդհանուր առմամբ հանգիստ է վերաբերվում կյանքին: Հազար անգամ փորձել եմ գրավել նրա ուշադրությունը, որ ողջույն հղեմ, բայց նա երբեք չի նկատում ինձ: Հայացքը միշտ կենտրոնացած է հեռուն՝ ծովին: Երբեմն նայում է հետ՝ շանը, ու ինչ-որ ջերմ խոսք ասում նրան:

Ամեն անգամ չէ, որ տեսնում եմ երկու վիճողներին: Ոչ էլ զայրացած տղային կամ աստվածային հետույքով երիտասարդ կնոջը: Բայց հորեղբայր Ֆրենցին միշտ եմ տեսնում: Մի անգամ կանգնեցի կողքին ու ձևացրի, թե հեռախոսիս մեջ ինչ-որ բան եմ փնտրում՝ հուսալով, որ կնկատի ինձ, բայց կարծես ուրվական լինեի: Ո՞վ էր նա: Ուզում էի իմանալ նրա անունը, իմանալ, թե որտեղ է ապրում, ինչով էր զբաղվում երիտասարդ տարիքում, ինչ է շան անունը: Ուզում էի ցույց տալ նրան, որ անտարբեր չեմ, որ իր հետ ավելի կապված եմ, քան իմ իսկական հորեղբոր՝ Ֆրենցի հետ, որին համարյա չեմ ճանաչել: Այս ցանկությունն ինձ տարօրինակ էր թվում, բայց որքան հաճախ էի տեսնում նրան, այնքան ավելի էի տարվում: Մի առավոտ նրան տեսա ոչ թե սովորական դանդաղ քայլքի ժամանակ, այլ նստարանին նստած:

– Այսօր շատ շոգ է, ընկե՛րս, – մոտենալով բացականչեցի ես՝ ձևացնելով, թե դեմքիցս սրբում եմ քրտինքը:

Նա բարձրացրեց հայացքն ու աչքերը կենտրոնացրեց ինձ վրա, կարծես առաջին անգամ էր տեսնում: Ծիածանաթաղանթները մուգ կապույտ էին, ինչպես ծովախորշի ներկած ձկնորսական նավակները: Նստեցի նրա կողքին:

– Օգոստոսն ինքն էլ իրեն տանել չի կարողանում, – կամացուկ ասաց նա: Չէի սպասում, որ այդքան քաղցր ձայն ունի:

– Իսկապես հիանում եմ ձեզնով, երբ ամեն առավոտ տեսնում եմ այս-

տեղ. երբեք ոչ մի զբոսանք բաց չեք թողնում, – ասացի:– Եկթադրում եմ, որ յոթանասունն անց եք, ընկե՛րս:

Նրան ժամանակ էր պետք պատասխանելու համար, իսկ դեմքի արտահայտությունը կարծես ասում էր, որ կենտրոնանում է հարցիս վրա: Դանդաղ շրջվեց իմ կողմը: Ի՞նչ մուգ էին կապույտ աչքերը:

– Ութսունվեց տարեկան:

– Առողջ եղեք, – պատասխանեցի լայն ժպիտով:

Բայց ծերունին նայեց ինձ: Չայրացած էր:

– Ինչո՞ւ: Երկար կյանքից ի՞նչ օգուտ կա: Ուզո՞ւմ եք իմանալ, թե ինչպես եմ ապրել վերջին տասը տարիները: Տեսնելով, թե ինչպես են մեռնում իմ սիրելի մարդիկ, մեկ առ մեկ: Թաղել եմ երեխաներիցս երկուսին: Հիմա էլ սա:

Հանկարծ հասկացա, որ շունը չկա:

Նա կտրուկ վեր կացավ տեղից, մարմնի ծանրությունը դժվարությամբ մի կողմից մյուսը տեղափոխեց ու հեռացավ՝ առանց հրաժեշտ տալու: Նրա ձեռքում նկատեցի շան քրքրված վզկապը:

Կասկածում եմ, որ կշարունակեմ առավոտյան զբոսանքներս:

Ու նաև՝ այցելություններս բժշկին:

## ԲԱՅԻՎ

Ծագող արևը ներքող է ձուլում առավոտին Վիդ իւ-Այնի ծովախորշում ու տարածում իր բանաստեղծությունները մեր հորիզոնից մինչև Սիբիրի ժայռերը: Նավակները հանդարտ են, անշարժ, ոչ մի տեղ չեն գնում, որովհետև ծովը մոռացել է ձգվել ու հորանջել ու սպասում է, որ ես դուրս գամ ու փորձեմ ոտքով քայլել աղուներից մինչև ժայռերի սև-սպիտակ լողանը: Ծովապատնեշի մոտ մարդկանց մի փոքր խումբ սպասում է Սայմոն Փիթերի հրաշակերպ որսին: Նավակների պես՝ բոլորն էլ անշարժ են ու անխռով, ինչպես լուսանկարում, ու երագում են մի ափսե ձկնապորի մասին՝ մայրանի բույրով, ու ձվածն ափսեի վրա մեկ-երկու ծովային բրամ, որոնք գրքի պես բաց են՝ լուրիկից ու ձիթապտղից պատրաստված էջերով:

Հիսունին մոտ մի կին գբսանքի է հանել երկու փողոցային շներին, որոնց այնքան է սիրում, ու սովորել է նրանց պես հոտոտելով հասկանալ՝ իրեն հետևող մարդկանց ի՞նքն է հետաքրքրում, թե՛ շները: Եկեղեցու դիմացի հրապարակում անշտապ տեղավորվում է թանկարժեք զարդերի ցուցահանդեսը. սպիտակ խաղողի մարգարիտները շողշողում են՝ ողկույզներն իրար կիպ մոտեցրած: Փոքրիկ բամբինելլա տանձերը սպասում են, թե իրենց երբ են խժռելու: Դեղձերը գողացել են բիլիարդի սեղանի փափուկ խավն ու իրենց հագով մարզակոստյում կարել: Իսկ կտրատած ձմերուկները կրկնում են այս առավոտ ծագող արևի սովորեցրած կրկներգը: Վաղը դարձյալ կսկսվի օպունցիայի սեզոնը, ու վիրաբույժը կկտրի դրանց փշոտ կրծքավանդակն ու մեկը մյուսի հետևից դեղին, սպիտակ ու ալ կարմիր սրտերի փոխապատվաստում կանի: Նրա մատները հիշում են անցյալ տարվա ծակոցները: Նավամատույցի եզրին նիբիել է միայնակ ձկնորսը, կարթածողը ձեռքին, ինչպես նիզակով զինվորը, այնքան ժանգոտ, որ ծովածիռուկի կողմ էլ չի ծակի: Ցեմենտից ծովապատնեշի վրա չորս երիտասարդ տղամարդիկ հանվել են ու մերկ թևերը մերկ կրծքավանդակին խաչած՝ տնտղում են ծովի հատակը, որ երևում է մուգ փիրուզագույն ջրերի տակ, ու լսում, թե խեցգետիններն ինչպես են երգում առավոտյան ժամեր-



գուրջունը ծովապատնեշի խորքի իրենց ապաստարանում: Կառամատույցին ճոճանակի վրայով Consiglia Madre-ն բռնում է լաստանավերը, որոնք հարթ դասավորված են՝ առավոտյան սուրճի թխվածքաբլիթների տուփերի պես: Քիչ ուշ ճամփա կրկնկի դեպի ծովի խորքը, կլողա այդ կապույտ տարածության մեջ՝ ծովի ու երկնքի միջև՝ սովեր զգելով ու գայթակղելով մահվան դատապարտված լամպուկներին<sup>10</sup>:

Իսկ ես փորձում եմ լույիկ ու ձիթապտուղ լցնել երկու ծովային բրամի փորոտիքը: Փորձում եմ որսալ շների հոտն ու խժոեյ բամբինելաները: Փորձում եմ արթնացնել նիրհող ասպետին ու ուսումնասիրել նավակայանի տակ եղած ապաստարանը, այցելել լողաններից ներքև սովերոտ տարածքները: Բայց իրականում մնում եմ անշարժ, ձեռքերս ծալած:

Վաղև առավոտյան շուտ կարթնանամ: Կցատկեմ փոքրիկ փայտե նավակի մեջ, որի շարժիչը ծուլորեն պտտվում է, ինչպես թույլ կրակի վրա շոգեխաշվող ճագարի միսը, ու կհսաքնած կշարժվեմ դեպի հորիզոն, որտեղ արևն ուր որ է դուրս կգա իր դարբնոցից, ու միասին կերգենք այդ սքանչելի ներբողը, որ ժամանակին, երբ շատ երիտասարդ էի, այնքան լավ գիտեի, իսկ այսօր մոռացել եմ:

---

<sup>10</sup> *Դորադո ձկան մարթերեն անվանումն է:*

## ՍՈՒՐԲ ՖՐԵՆԱՍԻ ՓՈՂՈՅ

Աստված գիտի, թե քանի տարի առաջ են մեր փողոցը կոչել Սուրբ Ֆրենսիսի անունով: Մայրս միշտ պնդում էր, որ երբ փոքրիկ աղջիկ էր, մի առավոտ տեսել է նրան փողոցի անկյունում: Իր պատառոտված, փոշոտ փարաջայով էր, ջուր էր խմում քարե շատրվանից, որի մեջ հավաքվում էր հոսող առվակի ջուրը: Ժպտաց նրան: Շատրվանն այլևս չեն օգտագործում, բայց այն հիմա էլ անկյունում է, իսկ սուրբը երբեմն ծարավում է, նստում է այնտեղ՝ հուսալով, որ մի կաթիլ ջուր կգա: Իմ աչքով եմ տեսել:

Փողոցի ծայրին՝ Ծառուղի համար 2-ի անկյունում, ապրում է Յենսու-Ի-Բիսը: Երկու ընտիր մեքենա ունի՝ Dacia և Ford Consul, որ ինքն ու որդին՝ Մայքը, օգտագործում են իրենց տաքսի ծառայությունում: Նրանց կարելի է հաճախ տեսնել փողոցում մեքենաները լվանալիս, ոտքի պոմպով անիվները փչելիս, որ դրանք գեղեցիկ ու փքուն լինեն և ամեն մի փոքր մանրուքի հետ՝ գլուխ դնելիս: Մեքենայի շարժիչը միացնելուց առաջ Յենսուն միշտ խաչակնքում է: Արդեն բավականաչափ անգլերեն գիտի, խոսում է իր հաճախորդների հետ, քաղաքավարի դիմում նրանց ու լայն ժպիտ նկարում դեմքին: Բայց որդին՝ Մայքը, կոպիտ է խոսում (ես քո...) ու նրանց միջև կայծեր են թռնում, ասես երկու լուցամոմ՝ շարժիչում:

Շատրվանից քիչ ներքև ապրում է Սպեդիտու անունով մի տղամարդ, ապրում է մենակ, մեծ տանը, որտեղ երկու ընդարձակ սենյակ կա միջանցքի երկու կողմում, որոնք տանում են դեպի ընդարձակ այգի: Ապրում է մենակ, եթե չհաշվենք նրա էլզասցուն՝ Սպաքսինին: Ամեն առավոտ և ամեն երեկո Սպեդիտուն շանը զբոսանքի է տանում տնամերձ փողոցներում, ու նրանք երբեմն հասնում են մինչև գյուղի կենտրոնական հրապարակ: Հիշում եմ, թե Սպաքսինն ինչպես էր մերկացնում ատամներն ամեն անգամ, երբ անցնում էին ինչ-որ մեկի կողքով: Եվ թե Սպեդիտուից ինչ մեծ ջանք էր պահանջվում նրան շնափոկով վերահսկելու համար: Սպաքսինը մի անգամ հարձակվեց Թերեզա 2-Շլուկկայրայի վրա, ու կինը սպառնաց, որ այդ մասին կհայտնի ոստիկանությանը, իսկ նրանք կքնեցնեն շանը: Բայց

այն ժամանակ՝ մոտ երկու տարի առաջ, երբ նրանք անցնում էին Սուրբ Ֆրեսեսիսի շատրվանի կողքով, Սպաքսիըը կանգ առավ, անթաթթ նայեց առաջ, գլխին կպած երկու ականջներով սկսեց անօգնական դողողոլալ: Հետո պառկեց գետնին՝ խելահեղորեն թափահարելով պոչիկը: Այդ պահից սկսած շունն ուրախանում էր, երբ տեսնում էր հանդիպող որևէ մարդու, ու այնքան հանգիստ, սիրալիր ու հնազանդ էր դարձել, որ Սպեդիտուն այլևս կարիք չունեիր շնափոկ օգտագործել:

Ինձնից ոչ շատ հեռու ապրում է ինը հոգուց բաղկացած մի ընտանիք: Դումինկուն, նրա կինը՝ Չոլինան, և յոթ երեխաները, բոլորն էլ տղաներ: Դումինկուն հսկա է: Մարզվում է, ծանր առարկաներ բարձրացնում ու պարծենում է, որ օրական երեք անգամ անընդմեջ հարյուր ձգում է անում: Երկու տարի առաջ երկրորդ տեղը գրավեց Համրունի Ռադիո Սիթի հովում անցկացված բողիբիդիկի մրցույթում: Մի անգամ, երբ Dacia-ի վրա աշխատելիս Ցենսուի ամբարձիչը սղղաց, Դումինկուն այնքան հեշտությամբ բարձրացրեց մեքենան, ասես կարտոֆիլի պարկ լիներ: Ու որպեսզի բոլորն իմանան, որ հոգ է տանում ինչպես մարմնի, այնպես էլ հոգու մասին, ամառային երեկոներին ընտանիքի անդամներին հավաքում է մայթին, իրենց տան դիմաց, ու այնքան բարձր է տերողորմյա արտասանում, որ ամբողջ փողոցը լսի: Հերիք է տղաներից մեկն աղոթքների ընթացքում քնով անցնի, Դումինկուն կապարե կշռաքարի պես հարձակվում է նրա վրա ու գոռում.

– Ինչո՞ւ ես լուռ: Անիծվա՛ճ Մադոննա:

Փողոցի անկյունում ապրող Կլարան տասնհինգ տարիների լավագույն մասն անցկացրել էր մայրիկին՝ Ռոզինային խնամելով և իրենց տան տանիքին աղավախներ պահելով: Չգիտեմ, թե ինչ էր եղել Ռոզինային, բայց նա երբեք չէր համարձակվում դուրս գալ տան շեմից: Քնում էր վերևի՝ փայտե պատշգամբով սենյակում, իսկ ամառային շոգ գիշերներին, երբ Կլարան լայն բացում էր նեղիկ պատուհանները, որ զով օդը ներս գա, դուրս էին լողում Ռոզինայի վիրավորանքները: Նա բղավում էր աղջկա վրա, հայիտում՝ անվանելով անշնորհակալ, որովհետև հրաժարվում էր իրեն տանել Riche սրճարան, որտեղ նրան սպասում էր մի պեպենտո անգլիացի կավաստի՝

թւերը դաջվածքներով ծածկված: Երբեմն Ռոզիկան բացում էր պատուհաններից մեկն ու կախվում պատշգամբից, որ լիքը գիշերանոթը դատարկի Դումիկուոի տղաների վրա, որոնք գնում էին ժամը վեցի պատարագին: Վերջիվերջո Կլարան հասկացավ, որ պետք է մորը կապել մահճակալին: Հետո հայիոյանքները վերաճեցին աստվածանարգության՝ զուգակցված հաճույքների անպարկեշտ նկարագրություններով, որոնք անզիպի հավաստի կպարզներ իրեն, երբ գար ու ազատեր դաժան դստեր ճիրաններից: Չորս տարի է անցել այն օրվանից, երբ Ռոզիկան մահացավ՝ իր նավաստու հետ լողալով դեպի մայրամուտ: Դրանից հետո Կլարան ամբողջությամբ նվիրվել է աղավկներին: Շրթներկ է քսում, դիմափոշի ցանում, հազնում իր կիպ գիշերազգեստներից մեկը, երբ երեկոյան բարձրանում է տանիք՝ աղավկատուները բացելու:

Մինչև վերջերս Բերտուն երգում էր թաղման պատարագներին: Հետո իրեն նվիրեց Էժան գինի խմելուն, որը ծեռք է բերում հրապարակի Նենուից: Մենակ է խմում՝ իր դռան շեմին նստած: Երբ լավ է զգում ու արբում է, բարձրանում է տանիք ու երգում *Dies Irae*-ն: Դումիկուոի տղաները հետո հավաքվում են փողոցում, ու երբ նա հասնում է այն մասին, երբ ցասման օրերն իրենց տեղը զիջում են *tuba Miriam spargens Sonum*-ին, նրանք այնքան բարձր են տոտոացնում, ինչպես շեփոխները, որոնց մասին նա երգում է: Բերտուն պատասխանում է՝ ասելով, որ նրանք զնան ու պայթեցնեն իրենց հոր, ձեռքի հետ էլ՝ անառակ մոր հետույքը, իսկ դրանից հետո զնում է ներս:

Ամեն օր՝ ժամը երեքից չորսը, Եսթերն ու քույրը՝ Տուդիտան, լայն բացում են մուտքի դուռն ու նստում իրենց նախասրահի զույգ ծղոտե հյուսկեն բազկաթոռների: Եսթերն իր երեքուն ձայնով անմիջապես սկսում է կարդալ *Id- Destin ta' Lucija*-ն՝ ընտրելով հաջորդ գլխում կնոջ ճակատագրի մասին սագան, իսկ Տուդիտան մարգարտաձողիկներ է ասեղնագործում շրջանակի մեջ ամրացրած կտորի վրա: Երբ պատմությունն անտանելիորեն տխուր է դառնում, ու Եսթերի աչքերը լցվում են արցունքներով, ինչի պատճառով էլ դժվարությամբ է տեսնում Էջի բառերը, նա գիրքը փոխանցում է քրոջը, չորացնում աչքերն ու շարունակում ասեղնագործություն

այնտեղ, որտեղ Եսթերը կանգ է առել: Հետո, այն պահին, երբ «Հայր Սիրորն ավարտում էր վերջին ծեսերը, իսկ Էսմերալդան թույլ էր ու արագորեն թառամում էր», իսկ Տուրիտայի սիրտն արդեն բավականաչափ կտորկտոր է լինում, նա գիրքը վերադարձնում է քրոջը: Այդպես շարունակում են վիշտը փոխանցել մեկմեկու, մինչև Էսմերալդան մահանում է դստեր՝ Լուչիայի գրկում, իսկ ասեղնագործ երիցուկները լիարժեք շրջան են կազմում փայտե շրջանակին:

Դումինկուի երեխաները կատաղում են: Մեղմում են տարբեր մարդկանց դռների գանգերը, հետապնդում Սպաքսինին, ու եթե նկատում են, որ Թերեզա 2-Շլուկկայրան շորեր է փռում տանիքին, միզում են նրա շքամուտքի առաջ: Հետո նա մեղադրում է Սպաքսինին ու կռվում Սպեդիտուի հետ:

Վերջին յոթ տարիներին Մաքբլին ջերմոց է կառուցում իր տան տանիքին: Հենց որ աշխատանքից տուն է գալիս, մի բաժակ սև սուրճ է խմում ու թոստ ուտում, որ Մանուելան պատրաստում է նրա համար, հետո բարձրանում է տանիք, որտեղ մնում է մինչև ուշ գիշեր ու աշխատում է. դասավորում է տախտակներն ու այնպես մեխում, որ բոլորը լսեն: Մաքբլին նպատակ ունի մեծ քանակով լույլի արճեցնել ջերմոցում: Նախատեսում է հսկայական բերք հավաքել պահածոյացնելու համար, իսկ հետո գյուղի նպարավաճառներին ապակյա տարաներով լույլի մածուկ վաճառել: Բայց որոշ պարապ լեզուներ չարամտորեն ենթադրում են, թե տանիքի հանդեպ Մաքբլիի հետաքրքրությունը պայմանավորված է նրանով, որ այնտեղից տեսնում է Կլարայի պիրկ, հյուսիս կրծքերը, որոնք երևում են, երբ նա բացում է աղավառումն ու աղավառներին բաց թողնում հրապարակ: Մյուս հարևաններն ավելի հեռու են գնում ենթադրությունների մեջ՝ ասելով, թե աղավառներից մեկն իջնում է Մաքբլիի կիսակառույց ջերմոց, որ նա քանդի ոտքին կապված թղթի փոքրիկ կտորը: Ջերմոցին նայելիս թվում է, թե այն երբեք չի կառուցվի, ու աղավառները երբեք չեն դադարի սավառնել Մաքբլիի տանիքի վրայով:

Ամեն առավոտ՝ արևածագից առաջ, գնում են շատրվանի մոտ: Վերջին անգամ սրբին տեսել են Սուրբ ծննդից անմիջապես առաջ: Նստել էր

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

զետնին, հենվել սյանն ու հետևում էր, թե արյունն ինչպես է հոսում ձեռքերից ու ոտքերից: Նա ինձ խնդրեց հսկել իրեն ու խոստացավ, որ մի օր կգա ու կտանի այնտեղ, ուր գնացել են Ռոզինան ու նրա անգլիացի նավաստին: Ղեռ սպասում եմ: Գուցե ես էլ մի օր նորից տեսնեմ, թե ջուրն ինչպես է հոսում շատրվանից:

## ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

Ես մասնակցեցի Ադել Բուզեջայի թաղման արարողությանը: Գրեթե չէի ճանաչում նրան, բայց մտածեցի, որ ճիշտ կլինի ներդրություն տալ ինձ, քանի որ նրա որդին՝ Ֆրանկոն, իմ մանկության ընկերներից էր: Հիմա էլ մեր քաղաքապետն է: Եվ ահա սարսափելի շոգ օգոստոսյան այդ օրը՝ վաղ հետկեսօրյա այդ անգին ժամերին, որոնք սովորաբար տրամադրում են սիեստային, լեփ-լեցուն եկեղեցում էի: Նստելու տեղ ընտրեցի միջանցքի մոտ՝ հուսալով, որ այդտեղով գոնե թեթև քամի կանցնի, ու առաջինը ես կզգամ դա: Բայց այդպես չեղավ: Թարմ օդի փոխարեն ներս մտավ մանկության ևս մի ընկեր, ու ես ստիպված եղա փոխել տեղս՝ միջանցքի նստարանը զիջելով նրան: Մանուել Սկիավոնեն, որ հիմա կիպ նստած էր կողքիս, ինձնից չորս անգամ գեր էր: Քրտինքի մեջ կորած՝ խռխռում էր, սվսվում ու փնչացնում, ինչպես մսի կտորը բաց կրակի վրա: Իր հոտավետ ներկայությամբ, որով խլացրել էր մոմերի ու խնկի հոտը, սկսեց շահակրատել, թե խեղճ Ադել Բուզեջան ինչպես երկու տարի դաժան պայքար մղեց մահվան դեմ, որ նախանձում է մեռյալներին, որովհետև այս աշխարհը մեզ համար չէ, և բազմաթիվ այլ սերտած նախադասություններ, որոնք ամենուր անպատեհ են, առավել ևս՝ սիեստայի ժամին, եկեղեցու տեսքով այս գազօջախում: Մանուելն այն մարդկանցից էր, որոնք սիրում են բարձրաձայնել ակնհայտի մասին: Հետո լավեցին ոտնաձայներ ու հատակի վրա աթոռների ճոճոց, ու ես նկատեցի լուսանկարիչ Ջոնիին և մի ուրիշ տղայի, որի ուսին տեսախցիկ կար:

– Եկել ենք հարսանիքի՞, – Ֆշացրի քթիս տակ:

Ավելի լավ կլիներ բերանս փակ պահեի, որովհետև դրանից ևս նորից ոգևորվեց. ասաց, որ սա իր կյանքի լավագույն պահն է, որ արժի այն անմահացնել ու վավերագրել լուսանկարներում և ֆիլմում: Հենց որ նկատեց, որ մարդիկ ուներին բարձրացրած ներս են բերում դազաղը, կոպիտ հրեց ինձ արմունկով ու ասաց.

– Տեսնո՞ւմ ես՝ որքան մարդ կա եկեղեցում: Եվ միայն մեզնից մեկն է

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

իսկապես ողջ, Աղելը: Իսկ մնացած բոլորս մեռած ենք:

Փորձելով վերջ տալ նրա հնաճ փիլիսոփայություններին՝ ծուռ ժպիտով պատասխանեցի.

– Դու քեզից խոսիր:

Մանուելն արհամարհեց իմ հեգնանքն ու միանգամայն լրջորեն ասաց.

– Ընկերս, մեռյալին ողջից ո՞վ է կարող է տարբերել:

Մոտ մի շաբաթ անց պատահաբար հանդիպեցի Տոնիին: Բոլորը ճանաչում են նրան: Մենք նրան համարում ենք գյուղի պաշտոնական լուսանկարիչ: Ոչ միայն ներկա է բոլոր հարսանիքներին ու Առաջին հաղորդություններին, այլև մեր հովանավոր սրբի տոնակատարություններին, Զատիկի շաբաթվա երթին, քաղաքական գործիչների հանդիպումներին, նարնջի բերքահավաքի տոնին, ամեն անգամ, երբ հուշատախտակ է բացվում, կամ երբ մի մեքենա բախվում է պատին: Տոնին կարող էր հրատարակել սուրճի սեղանի ամենամանրամասն գիրքը, որ աշխարհը երբևէ տեսել է:

– Շտապո՞ւմ ես, – հարցրեց նա, բայց առանց կարգին պատասխանի սպասելու՝ բռնեց թևս ու ինձ տարավ ստուդիա, որը եկեղեցու հետևում էր՝ փողոցի ծայրին:

Պետք է խոստովանեմ, որ այդ օրն առանձնապես անելիք չունեի, և ընդամենը մի քանի ժամ ուղքով եկել էի հրապարակ: Տոնին լավ տղա էր՝ ժպտուն աչքերով ու պատմությունների մի ամբողջ շարանով, որոնք կարձեռն շուրթերին շարված լինեին:

– Մանուելը նշեց, որ այնքան էլ սեր չունես թաղման լուսանկարների հետ, հա՞: Թույլ տուր քեզ մի բան ցույց տալ:

Մանուել Սկիավոնեն բամբասկոտ էր, չէր կարողանում լեզուն ատամների հետևում պահել ու միշտ քիթը խցկում էր ուրիշների գործերի մեջ: Իրականում Մանուելն էր, որ բոլորովին դուր չէր գալիս ինձ: Նա շատ արագ էր փոխանցել իմ փոքրիկ մեկնաբանությունը: Երբ հասանք ստուդիա, Տոնին ուղիղ գնաց պահեստ, մի քանի վայրկյանից ինձ ներս հրավիրեց ու



առաջարկեց նստել:

Փոքրիկ սեղանի վրա մի մեծ գիրք բացեց:

– Տեսնո՞ւմ ես, – հարցրեց, – մեռյալների գիրքն է: «Սուք քողից անդին. հետմահու և սգո լուսանկարչություն»: Դեռ Վիկտորյանական դարաշրջանում կարծես նորածն էր լուսանկարել մեռյալներին, ընդ որում՝ ոչ միայն հուղարկավորությունից անմիջապես առաջ՝ մահվան մահճում կամ դագաղի մեջ: Նրանք նաև տեսարաններ էին հորինում, որտեղ մեռյալներին հազցնում էին, տեղավորում բազմոցների վրա, ու ընտանիքի անդամները հավաքվում էին նրանց շուրջ:

– Տե՛ս, – ասաց Ջոնին ու սկսեց թերթել էջերը. երեք տղամարդ՝ գրկախառնված, մայր, որը դստերը դրել է ծնկներին, երկու աղջիկ, նրանց արանքում տիկնիկ, աթոռին նստած կին՝ թիկունքին կանգնած ամուսնուհետ, հարսանեկան զգեստով երիտասարդ կին, շուրջը՝ հարազատներ, մայր ու հայր՝ շրջապատված երեխաներով:

– Բայց մի վայրկյան սպասի՛ր, – ասացի ու շրջվեցի, որ նայեմ Ջոնիին, – այդ ինչպե՞ս է ստացվել, որ բոլոր մեռյալների դեմքերն աղոտ են, լողզված, ասես արդեն վերածվել են հոգիների:

Ջոնին ծիծաղեց:

– Լուսանկարչությունն այն ժամանակ դեռ սաղմնային փուլում էր, – բացատրեց նա:– Որպեսզի լուսանկարը հստակ լինի ու ճիշտ ֆոկուս ունենա, առարկաները մի քանի րոպե անշարժ պահում էին ֆոտոխցիկի առաջ, իսկ այդ ընթացքում լուսանկարիչը բաց էր պահում օբյեկտիվը: Նրանք, ովքեր լողզված են երևում, գոլորշացող հոգիների պես, իրականում ողջերն են, իմ լավ բարեկամ: Անշարժ են միայն մեռյալները, որոնք հստակ, վառ ու կյանքով լեցուն են երևում:

## ԱՐՄԱՎԻ ԿՈՉԻ

Վաղուց, շատ վաղուց, արմավենիների կղզում աճում էին ծառեր՝ շատ փոքրիկ, համեղ արմավներով, որոնք հասունանում էին համեստ ողկույզներով, ու նրանց բարակ, հյութեղ փափկամիսը ներծծված էր քաղցրանուշ հոտով: Գերազանց արմավներ էին, կղզու բնակիչների հպարտությունը. նրանք իրենց միրգն անվանում էին թամալ, իսկ իրենց՝ թամալցիներ: Բայց մի օր զավթիչներ եկան (կղզու նմանատիպ ներխուժումների երկարատև պատմության մեջ սա հերթական ալիքն էր) ու իրենց հետ բերեցին արմավենու տարբեր տեսակների սերմեր, որոնք տալիս էին մեծ, ծանր ողկույզներով խոշոր արմավներ: Բնակություն հաստատելուն պես սկսեցին հարյուրավոր ծառեր տնկել: Թամալցիներն արագորեն տարվեցին նոր մրգով և չնկատեցին, որ համը բոլորովին էլ սքանչելի չէ, ինչպես իրենց հին արմավներինը, կամ որ կառուցվածքով բավական չոր են ու ոչ այնքան քաղցր: Նրանց կարծիքով՝ ավելի կարևոր էր այն, որ նոր արմավները մեծ էին, փամփուխ ու հրաշալի տեսք ունեին: Երբ թամալցիները լքեցին իրենց տեղական արմավենիները, ծառերը ծարավեցին, հիվանդացան ու ենթարկվեցին մակաբույծների հարձակումներին: Ու ընդամենը մի քանի տարի անց վախճանվեցին:

Կղզին ուներ մայրենի լեզու, բայց զավթիչները բերեցին իրենց լեզուն, որն արդեն տարածվել էր աշխարհի չորս ծագերում: Այն պրակտիկ էր, արդյունավետ ու ժամանակակից: Թամալցիներն արագորեն գլխի ընկան. ով նպատակ ունի մագլցել սոցիալական աստիճանն ի վեր կամ զոնե մեկ-երկու քայլ առաջ գնալ ու հաջողության հասնել, պիտի հևարավորին չափ արագ սովորի այս նոր լեզուն: Դա նոր տիրակալների վրա տպավորություն գործելու նրանց միակ միջոցն էր, ու քանի որ կղզու բնակիչները ծնված օրվանից ճարպիկ ու խորամանկ էին, իզուր ժամանակ չվատնեցին և շատ արագ սկսեցին սահուն խոսել: Սկզբում պարծենում էին, որ երկու լեզու ունեն՝ մայրենին և այս նոր լեզուն: Սակայն աստիճանաբար զգա-

ցին, որ հին բառերն այլևս պետք չեն, քանի որ ամբողջ աշխարհը խոսում է իրենց զավթիչների լեզվով, ու իրենցից բացի ոչ ոք չի խոսում մայրենի լեզվով: Նավահանգստի սահմաններից դուրս, երբ ազատության մեջ էին լինում, նրանց լեզուն խուլուհամրի լեզվի պես անպիտան էր: Հին լեզուն ապրում էր միայն ազարակատերերի, ձկնորսների, որմնադիրների, հովիվների, լվացարարուհիների, մուրացկանների ու թափառաշրջիկների շուրթերին: Եվ բոլոր նրանց սրտերում, ուլքեր չէին ձգտում մի աստիճան բարձրանալ, կամ ուլքեր հավատացած էին, որ իրենց ճանաչած կյանքն ուղղակի լավն է, բավականին լավը:

Կային նաև գրողներ, թեպետ շատ քիչ, որոնք գրում էին հին լեզվով, բայց ժամանակի ընթացքում նրանք էլ աստիճանաբար դադարեցին գրել կղզու հոգու մասին, այն մասին, ինչ փոխանցվել էր նրանց, ձևավորել նրանց սիրտն ու եռությունը: Նրանք ամաչում էին գրել սրբերի, հրավառությունների ու գյուղական տոնակատարությունների մասին: Գյուղերի գունատ կրաքարի, ծովի կոբալտագույն կապույտի: Հանկարծ զգացին, որ կարգավիճակով զգալիորեն բարձրացել են իրենց փոքրիկ կղզուց, երես թեքեցին արմավենիներով ծածկված այս հողակտորից ու փոխարենը սկսեցին գրել մեծ քաղաքների մասին՝ ստորգետնյա ու վերգետնյա գնացքներով, սիրո գործին ճառայող թաղամասերի պատուհանների մեջ թրթռացող կարմիր լույսերով, բերնեբերան լի օդու բաժակներով, ծխախոտի ծխի թանձր խավարով: Դարձել էին կոսմոպոլիտան, կարծես նրանց աշխարհի քաղաքացիություն են շնորհել, և հիմա շատ ավելին էին, քան աստճու կողմից մոռացված այդ փոքրիկ վայրի տեղաբնիկներ: Փոխանված բառերը սկսեցին զարդարել նրանց գիրը, մինչև որ հսկա զավթիչ ձուկն անխուսափելիորեն ու ամբողջությամբ կոպ տվեց փոքրին, ու նրանց մնաց միայն մի լեզու:

Հին լեզվով գրված գրքերը տրտմում էին գրադարաններում, ու նրանց մեջ թունելներ էին փորում փայտաթրթուրները: Ոչ ոք չէր վերցնում դրանք, ու վերջապես մի օր գրադարանավարները ստիպված որոշում կայացրին: Հավաքեցին գրքերը, տրցակներ կապեցին չոր խոտի հակերի պես ու այդպես նետեցին ներքև՝ նկուղներ: Այնտեղ՝ խավարի ու խոնավության մեջ,

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

հին գրքերի ողնաշարները քայքայվեցին ռևմատիզմից, ու երբ բացում էիր, ճաք էին տալիս: Այլևս ոչ ոք չէր ուզում լսել դրանց մասին: Վերջիվերջո, կղզու բոլոր բնակիչները հանձնվեցին համազգային դեմենցիայի մի տեսակի: Մարդիկ մոռանում էին իրենց անունները, ազգանունները, մոռանում էին, թե որտեղից են եկել, ու այնքա՛ն գոհ էին այս շատ օգտակար հիշողության կորստից: Հիվանդությունը տարածվեց ևույնիսկ ագարակատերերի, ևավաստիների, հովիվների ու մյուսների վրա, որոնք ժամանակի ընթացքում ևույնպես սկսել էին խոսել միայն ևոր լեզվով: Ի վերջո, հին լեզվի պատվին հուշատախտակ դրեցին:

Միակ երկարակյացը, ով դեռ խոսում էր հին ձևով, ի վերջո հասկացավ, որ մնացել է անտեսված ու մեկուսացած, լքված ու ծաղրի ենթարկված: Ոչ ոք չէր հասկանում նրան, ուստի որոշեց միայնակ հեռանալ անտառի խորքը: Ապրում էր այնտեղ մռայլ խրճիթում, ուր այցելում էին ագռավներն ու թութակները: Մի քանի ամսում թռչունները սովորեցին նրա լեզուն ու սկսեցին պատասխանել:

Մի առավոտ ծերունին հայտնաբերեց հին արմավենիներից երկուսը, այն վաղուց, շատ վաղուց կանգուն ծառերից, որոնց վրա աճում էին փոքրիկ, համեղ արմավներ: Մեկը տղամարդ, մյուսը՝ կին: Սկսեց հավաքել դրանց սերմերը: Հավաքեց, տնկեց, ջրեց, ու աճեցին տնկիներ: Առաջին անձրևից հետո ևուրբ ծառաբներն ամրացան, տերևները պնդացան: Բայց ծեր թամայցին այդպես էլ չտեսավ, թե դրանք ինչպես աճեցին ու մեծացան, չտեսավ առաջին բերքի ևուրբ կախված ողկույզները, որովհետև մահացել էր իր խրճիթում, մենության մեջ:

Այսօր միայն թութակներն ու ագռավներն են արտաբերում այն հին հնչյունները, որոնք ոչ ոք չի հասկանում: Բայց հարյուրավոր տեղական արմավենիներ սպասում են, թե երբ կհասունանան իրենց պտուղները. գուցե մի օր մի ճանապարհորդ մոլորվի, հայտնվի անտառի սրտում ու համտեսի փոքրիկ, հյութեղ պտուղները: Ագռավներն ու թութակները նրան բարի լույս կմաղթեն:

Գուցե ճամփորդը ճանաչի՞ նրանց հնչյունները: Ո՞վ գիտի:

## ՊԻԵՍԵ

Գրում եմ կնոջս հետ հենց սոր կովելուց հետո: Լյուսին երբեք չի ցանկացել, որ հանրայնացնեմ մեր կյանքի որոշակի դրվագներ: ԽՆԵՂԸ Լյուսին չի հասկանում, որ գրողը պարզապես չի կարող գաղտնիքներ ունենալ, որ նա ուզում է մերկացնել հոգին: Երբ սա բացատրեցի Լյուսիին, շատ արագ պատասխանեց.

– Քո գրողի տարած կյանքն ինչքան ուզում ես լայն բացիր, բայց իմը թող մնա կողպեքի տակ:

Ես զգում եմ, որ քիչ առաջ մեր միջև եղածը ոչինչ է, եթե համեմատեմ նրա հետ, թե ինչպես կարծագանքի՝ այս հուշերը տպագիր վիճակում տեսնելով:

Երբ դեռ բավական փոքր էի, մեր ավանդական պիեսները բեմադրվում էին միայն գյուղի թատրոններում: Եվ միայն տարիներ անց դրանցով հետաքրքրվեցին նաև պետական հեռուստակայանները: Այն ժամանակ սիրում էի բեմը: «Դոմուսում» տարբեր ֆարսեր էին բեմադրում, հապճեպ մոգոնաձև նմանակումներ անում, ներկայացնում սրբերի անխուսափելի կյանքը: Մարդիկ՝ մոլի թատերասերներ ու պարտաճանաչ մասնակիցներ, կրոնական կամ ոչ կրոնական բնույթի աղմկոտ մեկնաբանություններ էին ավելացնում ներկայացմանը: Մեր սիրած բոլոր պիեսների մեջ կար մեկը, որին ամեն տարի շունչներս պահած սպասում էինք. այն պատմում էր Սուրբ Կատերինայի կյանքի ու նահատակության մասին: Պիեսը բեմադրել էր «Դոմուս» թատերախումբը՝ Ջաննի Բրիտերտի ղեկավարությամբ: Տեքստը գրվել էր դարասկզբին, հեղինակը Հայր Սիդորն էր, որի կերպարն այն աստիճան էր սրբացվել, որ մենք համոզված էինք՝ նրա խոսքերը ոգեշնչող են, ու ջանում էինք երբեք ոչ մի հանգ անգամ չփոխել: Հանդիսատեսի շարքում նստած տարեց մարդկանց աչքերում արցունքներ էին հայտնվում, երբ Կատերինան ասում էր. «Օ՛, փեսացո՛ւ իմ, որ երկնքում ես, մեկ-նի՛ր ձեռքդ ու վերցրո՛ւ հոգիս, ու այն մի քանի վայրկյանում կթռչի դեպի

Քեզ: Արի, սիրելի՛ թուր, արի ու բաց դուռը, որն ինձ կտանի Նրա մոտ, ով  
Իր առեղծվածային մատանիով ինձ դարձրել է իր հարսնացուն: «Ամեն», –  
պատասխանում էին շատերը հանդիսատեսի շարքերից:

Հիսունական թվականներին միայն տղամարդկանց ու տղաներին էին  
թույլ տալիս բարձրանալ «Դոմուսի» բեմ, ուստի նրանք մարմնավորում էին  
նաև կանանց կերպարներ: Գլխավոր դերը՝ Սուրբ Կատերինան, միշտ բա-  
ժին էր ընկնում Չարլի Դեսիրային, ոչ միայն որովհետև նա բարետես էր ու  
բարեկազմ, այլ որովհետև բարձր ձայնը թախծալի տեմբը ուներ:

Բայց մենք գնում էինք՝ ոչ միայն Չարլի Դեսիրային կեղծամով տես-  
նելու: Անհամբեր սպասում էինք այն տեսարանին, երբ պարանից կախ-  
ված հրեշտակին, թուրը ձեռքին, իջեցնում էին բեմ, որ նա ոչնչացնի Կայսր  
Մաքսիմիլուս Երկրորդի տանջանքների դիվական անիվը, որը նախա-  
տեսված էր Կատերինայի համար: Ամեն տարի այս հրեշտակային տեսա-  
րանում ինչ-որ զավեշտալի դեպք էր պատահում: Դերը պետք է խաղար  
Տոնի թաչ-Չինիզան՝ մոտավորապես իմ տարիքի մի տղա՝ Սերաֆիմի  
տեսքով: Նա նաև փետուրի պես թեթև էր, ինչը նշանակում էր, որ երկու ու-  
ժեղ երիտասարդ տղաները կարող էին հեշտությամբ վերահսկել պարան-  
ները: Մի տարի հրեշտակին կապեցին իրանից ու սկսեցին պտտել, պտտել  
այնքան, մինչև նա հասավ ներքև՝ անվին, վայրէջք կատարեց հետույքով  
դեպի հանդիսատեսը, և երբ պարանը բարձրացրեց բեմական կոստյումը,  
բոլորը տեսան նրա վարտիքը, : Դահլիճից Ուիգի Սկիավոնեն գոռաց.

– Ոչ թե սրով փշրիր, այլ տռի՛ր դրա վրա:

Հաջորդ տարի Տաննի Բրիերետն ուրիշ մոտեցում կիրառեց: Վերևից  
իջնելու փոխարեն հրեշտակը պիտի մտներ բեմի աջ կամ ձախ թևից, ինչը  
թռիչքի ավելի լավ զգացողություն կհաղորդեր: Եվ այսպես, հրեշտակա-  
յին Տոնին Տարզանի պես թռավ այն պիսի արագությամբ, որ երբ անցավ  
անվի վրայով, թուրը վրիպեց ու չդիպավ դրան, հետո նորից ու նորից վրի-  
պեց, երբ նա բեմի մի կողմից մյուսն էր ճոճվում ժամացույցի ճոճանա-  
կի պես: Կատերինայի անվի ուղղությամբ թրի յուրաքանչյուր հուսահատ  
թափահարման հետ հանդիսատեսը գոռում էր՝ գո՛ր: Ու երբ սուրբը գխի

ընկավ, որ Աստծո ուղարկած հրեշտակը ոչ մի բանի պիտանի չէ, Չարլիս բարձրացավ ծնկներից ու իր ձեռքով ջարդեց անիվը. դահլիճից ծափահարություններ լսվեցին, ու հանդիսատեսը գոռաց՝ ուռա՛, Չարլի, այ սա ուրիշ բան: Այդ ժամանակ Տանկի Բրիերետը ստիպված եղավ արագորեն փակել վարագույրները, որովհետև ոչ ոք չէր մտածել, թե հրեշտակն ինչպես պիտի դուրս գա բեմից:

Ինչ խոսք, սրանք ինտերակտիվ թատրոնի հրաշալի օրինակներ էին:

Ամենազվարճալի աղետը, թերևս, եղավ այն ժամանակ, երբ հրեշտակն ընկավ: Կարծես ոչ ոք չէր նկատել, որ Տոնին, ով այդ ժամանակ արդեն մոտ տասնչորս տարեկան էր, այլևս փետուրի պես թեթև չէր: Երբ նա դեռ գետնից վեց ֆուտ բարձրության վրա էր, բեմի աշխատողները բաց թողեցին պարանը, ու հրեշտակը թրմփոցով ընկավ Չարլի Դեսիրայի վրա: Այդ տարի հարվածն այդպես էլ չեղավ, ու անիվն անխաթար մնաց: Փոխարենը Չարլիի ներքևի շուրթը ճաքեց, ու Սուրբ Կատերինայի խոսքերը դուրս թռան այսպես.

– Երկնային ամպերից հայտնվել է Գիշուս Թրիստոսը, որ ֆրկի՛ ինձ:

Հետո Տանկի Բրիերետը մահացավ: Նա ներկայացումը բեմադրել էր ուղիղ երեսուն տարի և այդ ամբողջ ընթացքում նաև խաղացել էր Մաքսիմիլուսի դերը, ևույնիսկ թեթև կաթվածից հետո, երբ բերանը մի քիչ թեքվել էր ձախ: Դերասաններին ղեկավարելու գործը բաժին հասավ Սալվինու Գալեային:

Այս պահին ավելի լավ է ընդհատեմ պատմությունս ու ներկայացնեմ այս անվանի տեղացուն: Այդ ժամանակ Սալվինուն մոտ երեսունհինգ տարեկան էր: Մաշկը մի բաժակ մուգ շոկոլադի գույն ուներ, իսկ կանաչ աչքերը նախանձում էին բոլորին, այդ թվում և անտուն կատուներին: Ասում էին, որ չորս անգամ նշանված է եղել, իսկ վերջին հարսնացուի հայրը մի անգամ քլունգը ձեռքին հրապարակով մեկ ընկել է նրա հետևից: Բայց Սալվինուն քաղցր լեզու ուներ ու աչքեր, որոնք ի գորու էին մեղմել անգամ դաժանագույն Մաքսիմիլուսի զայրույթը: Նա խաղում էր կայսեր զորահրամանատարի՝ Պորֆիրուսի դերը, իսկ երբ միանում էր ներկայացման

Ավագ շաբաթվա ընթացքում, միշտ Մարիամ Մագթաղիևացի էր խաղում: Մեջքին թափվող գայթակղիչ երկար ոսկե խոպոպիկներով կեղծամով Սալվինու Գալեան ձևի էր բերում դահլիճի բոլոր տղամարդկանց:

Երբ Սուրբ Կատերինայի կյանքի դեկը վստահեցին Սալվինուին, ևս սկսեց համոզել ծխական քահանային ու հայր Տուանին, որը ղեկավարում էր «Դոմուսը», որ իրավիճակը փոխվել է, և ժամանակն է թույլ տալ, որ կանայք բեմ բարձրանան: Բազմաթիվ հանդիպումներից ու քննարկումներից ու թերևս մի քանի նովենաներից<sup>11</sup> հետո նրանց թույլ տվեցին՝ այն կարևոր պայմանով, որ հայր Տուանը ներկա լինի բոլոր փորձերին և ներկայացումներին: Դրանից հետո ամեն ինչ ժամացույցի պես աշխատում էր: Առաջին Կատերինան Ռոզին էր՝ Տաննի Բրիերետի գարմուհին: Հիմա, երբ Սալվինուն ժառանգել էր ռեժիսորի աշխատանքը, ստանձնեց ևսև Մաքսիմիլուսի դերը: Եթե Հայր Տուանի ուրվականային ներկայությունը չհետապնդեր նրան բեմի վրա ու հետևաբեմում, սուրբը հաստատ անբիժ չէր ապրի մինչև մարտիրոսություն և օծում, և Սալվինուն հավանաբար հինգերորդ անգամ կնշանադրվեր: Այդ տարվա ներկայացումները գերազանցեցին բոլոր ռեկորդները: Բացի զլխավոր դերը մարմնավորող Ռոզիից, դերասանական կազմում ներառվեց ևսև Գրեյսը, որի ընտանիքը հացի փուռ ուներ: Նա խաղում էր Սանտա Ֆաուստինայի դերը, ինչպես ևսև հինգ-վեց ստրուկների ու սպասուհիների, որոնց Սալվինուն ընտրում էր ոչ թե ըստ դերասանական հմտությունների, այլ գեղագիտական չափանիշների: Բեմադրությունն այնպես սիրվեց, որ այդ տարի ևս երկու լրացուցիչ ներկայացում եղավ:

Այդպես անցավ յոթ տարի: Ես հանդիսատեսի շարքերում մոլորված փոքրիկ տղայից վերածվեցի երիտասարդ դերասանի՝ բեմական կոստյումով, մետաղյա սաղավարտով ու սովարաթոթ գենք ու գրահով, ձեռքիս շղթաներ, որոնք նախատեսված էին Սուրբ Կատերինայի համար: Հայր Տուանն այլևս չէր գալիս բոլոր փորձերին, իսկ երբ գալիս էր, առաջվա պես զգոն չէր լինում: Հարմար տեղավորվում էր բազկաթոռի մեջ, հետևաբեմի աղոտ լույսի տակ, ու մինչ մանուկ Հիսուսը մատանին կտար Կատերինա-

<sup>11</sup> *Երկրպագության ձև*



յին, նրա աչքերն արդեն փակվում էին: Դերասանները, որոնք տարիների ընթացքում անգիր էին արել իրենց անփոփոխ տողերը, ազատորեն ուրիշ գործերով էին զբաղվում հետևաբեմում. հենց այնտեղ Կատերինան ևահատակությունից առաջ կորցրեց կուսությունը, իսկ Մաքսիմիլուսի կինն ու սպասուհիները, առանց բռնության դիմելու, բանակի ուշադրությունը շեղեցին Ալեքսանդրիայից: Բայց մի օր՝ վերջնական փորձի ընթացքում, Հայր Տուսան արթնացավ շտապ գուգարան գնալու պահանջով ու դեմ առ դեմ հանդիպեց Սանտա Ֆաուստինային ու փիլիսոփաներից մեկին: Առաջինը նստած էր՝ վերնազգեստը կիսով չափ արծակած. կուրծքն ամբողջությամբ երևում էր: Փիլիսոփան էլ, աստվածային վստմացման զագաթնակետին, հանում էր տոգան: Դրան հաջորդած երկարաշունչ բղավոցը շատ հանգիստ կարող էր գրված լինել անձամբ Հայր Սիդորի գրչով: Աթոռների ու այլ բեմիքների հրոցի, դրխկոցի ու դմբիկոցի մեջ ևս վնդեց բուրդին, չեղարկեց ներկայացումը, և բուրդին արգելեց մտնել «Դոմուս»:

Այդ ժամանակ մի նոր խնդիր առաջացավ: Փոքր-ինչ դժվար է չեղարկել ներկայացումն այն դեպքում, երբ երեք երեկոյի բոլոր տոմսերն արդեն վաճառված են: Եվ որն ավելի վատ էր, Հայր Տուսանը ոչ միայն չեղարկեց ներկայացումները, այլև արժեպիսկոպոսի թույլտվությամբ արգելեց սուրբ գրի հետագա օգտագործումը:

Հենց այդ ժամանակ ի հայտ եկավ ռեժիսոր Սալվինու Գալեայի յուրահատուկ հանճարը: Գրեթե երկու շաբաթում նրան հաջողվեց վարձակալել այլընտրանքային բեմահարթակ՝ «Ստելլա բենդ» ակումբը, թոցնել «Դոմուսի» ներկայացման բոլոր բեմական կոստյումները և ընդամենը երեք օրում գրել ամբողջությամբ նոր պիես: Պիեսի իրադարձությունները տեղի էին ունենում շատ յուրօրինակ թուրքական հարեմում, հնդկական պալատում և բեդվինական օազիսում: Կատերինայի փոխարեն Ռոզին խաղում էր ստրկուհի Սաբրինայի դերը: Գրեյսը դարձավ Մահլուք փաշայի խանդոտ կինը, իսկ գյուղի բոլոր գեղեցիկ աղջիկները պահպանեցին ստրկուհիների ու աղախիկների իրենց դերերը: «Ստելլա Բենդ» ակումբում՝ Հայր Տուսանի սրատես աչքից շատ հեռու, ստրկուհիներն ու աղախիկները կարող էին հանգիստ մերկացնել փորն ու պորտը, հագնել շիֆոնից լայն տաբատներ,

որոնք Սալվինուն վարձակալությամբ վերցրել էր «Սանտել» թատրոնից: Վերջիվերջո, վաթսուևականներն էին՝ անթիվ-անհամար ուսանողական ցույցեր, Beatles և Rolling Stones: Նույնիսկ տեղական թատերական ընկերությունները ստիպված էին ժամանակի հետ համընթաց քայլել:

Պիեսը բացվում էր մի տեսարանով, որտեղ Սալվինու Գալեան պահպանում էր ցածր բազմոցի վրա, հուկա է ծխում, իսկ երեք ստրկուհիներ զովացնում են նրան հսկայական փետրե հովհարներով: Իսկ Կատերինայի շղթաների փոխարեն ես ամուր բռնել էի Լյուսիին. նա խաղում էր անհնազանդ ու դավաճան ստրկուհու դերը, որը հյուսում էր Փաշային թունավորելու դավադիր ծրագիրը: Այնքան էի ընտելացել նրան ամուր բռնելուն, որ նույնը շարունակվում էր հետևաբեմում, ինչպես նաև բեմից ներքև, հանդերձարանում և քարտուղարուհու գրասեղանին: Ես պատռում էի նրա շիֆոնե տաբատը, իսկ նա ջախջախում էր իմ մետաղական սաղավարտը:

«Ստրկուհի Սաբրինան» պիեսն ուղղակի տապալվեց: Վաթսուևականները կարող էին հանգեցնել Եվրոպայում խոշոր հեղափոխական փոփոխությունների, բայց ամեն ինչ ավարտվեց նրանով, որ Ստեյլային սուլեցին, փտած լույիկ ու փչացած ձու նետեցին վրան: Առաջնախաղի երկույան պիեսը նույնիսկ երրորդ ակտին չհասավ, իսկ մնացած նախատեսված ներկայացումները մեռան բնական մահով:

Բայց այդ ներկայացումն իմ ու Լյուսիի սեփական պիեսի նախերգանքն էր: Կարիք չեղավ, որ նրա հայրը՝ Տուլինը, քլունգը ձեռքին հետապնդի ինձ: Խոստացա, որ կամուսնանամ նրա հետ, ու չնայած մեծ շտապողականությանը՝ Լյուսին ստրկուհուց վերածվեց արքայադստեր, ու մենք հրաշալի հարսանիք արեցինք: Տուլինը շուտով մոռացավ, թե ինչու էր իմ դեմ և ոգևորված գրկեց ինձ: Բայց երբ նրան ասացինք, որ մեր դստերը Սաբրինա ենք անվանելու, շատ զայրացավ:

Ահա այսպես, սիրելի՛ Լյուսի: Համենայն դեպս, իմ պատմածը նորություն չէր: Ամբողջ գյուղը գիտի մեր պատմությունը: Վստահ եմ, շատ կբարկանաս, երբ կարդաս գրածս, բայց, սիրելի՛ս, ամուսնական մոտ հիսուն տարիների ընթացքում մենք այնքան ենք վիճել ու այնքան ենք հաշտվել: Սա էլ կավելացնենք մեր ցուցակին. իմ սիրելի, իմ սրտի չարածճի ստրկուհի՛:

## ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

Մուրաբայի տարաներ – 82

Պլաստմասե պատառաքաղներ, դանակներ և գդալներ – 570

Պաղպաղակի գդալներ – 133

Խցաններ – 745

«Սվեյտոյի» շշեր – 48

Գարեջրի մետաղյա շշեր – 674...

Սանուել Միզգին ոչ միայն հավաքում էր ամեն մի մանրուք, որ տեսնում էր շուրջը, այլև ամենայն մանրամասնությամբ գրի էր առնում ձեռք բերած աղբի բոլոր կտորները մարմարակազմ հաշվապահական գրքում: Շատ տարօրինակ զբաղմունք էր, թեպետ ոչ այնքան տարօրինակ, որքան Ֆրիդա Ֆորմոսայինը: Սանուելը բավական մեծ միսենյականի կողաշենք ուներ բակի մի անկյունում, որը կահավորել էր բացառապես դարակներով, և ևս մի այդպիսի սենյակ էլ տանիքում կար: Երբ մայրը մահացավ, ևս սկսեց ամբողջ դատարկ տարածքը լցնել այն ամենով, ինչ կգտներ: Տունըլի էր սովարաթղթե տուփերով, յուրաքանչյուրը թվագրված ու հաշվառված, ասես ազգային պահոցի մաս լիներ: Ցանկացած ապակե տարա, որ պատահում էր նրա ճանապարհին, ցանկացած շիշ, փաթեթ կամ սովարաթղթից տուփ սրբվում կամ լվացվում էր, հետո գրանցվում գրանցամատյանում ու խնամքով տեղավորվում համապատասխան արկղի մեջ: Նա հավաքում էր Nescafe-ի մետաղյա տուփերի կլոր կնիքները, ինչպես ևսև վարսակի տուփերինը: Իսկ երբ հերթը հասնում էր գարեջրի կամ ոչ ալկոհոլային խմիչքների տարաներին, ևսխ կտրում էր վերևև ու ներքևը, հետո բացում հաստ մկրատով, գրտնակով հարթեցնում ու ի վերջո դասավորում արկղի մեջ, որի վրա գրված էր՝ «Մետաղյա տարաներ. Գարեջուր/ 7Up/Sprite/ Սառը թեյ և այլն»: Նա բացում ու պահում էր եգիպտացորենի փաթիլների տուփերը, թեյի կամ սպագետիի փաթեթները և ևույնիսկ տոպրակները, որոնց մեջ սովորաբար վերևաշապիկներն էին

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

լինում: Տասներկու ձվի սովորաբար թե տուփերի հավաքածու ուներ, նաև վեց ձվի պլաստիկ սկուտեղների հավաքածու: Դարակները լեփ-լեցուն էին մետաղյա տարաներով, որոնցում մի ժամանակ լոլիկ, ոլոռ, եփած լոբի, լոլիկի մածուկ էր եղել. բոլորը մաքրությունից շողում էին, կոկիկ շարված էին, ինչպես տակառը, որը նավահանգստում նստած սպասում է, թե երբ իրեն կբարձրացնեն բեռնատար նավ:

Մանուելի հոբբին երեկ չէր սկսվել, ի տարբերություն Ֆրիդա Ֆորմոսայի: Ամեն ինչ սկսվեց, երբ պապիկը նրան առաջարկեց սիգարետի տուփեր հավաքել: Ծերունին նրա համար հաստ դեղին թղթից ալբոմ պատրաստեց ու ցույց տվեց, թե ինչպես կարելի է զգուշորեն բացել սիգարետի տուփերը (ինչպես նա հիմա անում է գարեջրի մետաղյա տարաների հետ), և ինչպես արդուկի օգնությամբ հարթեցնել, որպեսզի պահպանվի փաթեթի ամբողջականությունը: Մանուելի մանկության զգալի մասն անցել էր զբոսանքներով, որոնց ընթացքում հայացքը չէր կտրում գետնից՝ շարունակ դեն նետված գանձեր որոնելով: Մանուելը գոհ էր, որ մարդիկ այդքան շատ բան են նետում փողոց. դա նշանակում էր, որ կարիք չի լինի փորփրել աղբամանները: Այն դեղին ալբոմը մինչև հիմա նրա տանն է՝ լի խաչված տուփերով. Marlboro, Guards, Senior Service, Bristol, Workman, Three Cats, Piccadilly և այլն: Երբ Մանուելի բարեկամները մեկնում էին արտասահման, նա պնդում էր, որ իրենց հետ բերեն այն բոլոր արտասովոր փաթեթները, որ կհանդիպեն այնտեղ:

Սակայն աստիճանաբար Մանուելը սկսեց հասկանալ, որ չարժի սահմանափակվել միայն սիգարետի տուփերով: Չէ՞ որ կան նաև գինու խցաններ ու պիտակներ, և տարիների ընթացքում նրա հոբբին վերածվեց նախ սովորության, իսկ հետո՝ կաչուն մտքի: Այսօր Մանուելը երջանիկ է, ու նրան թվում է, թե Ալի Բաբայից ավելի հարուստ է:

Ֆրիդա Ֆորմոսայի հոբբին ծայրահեղ տարօրինակ էր: Նրա գլխում ծագեց իրեն պատահած բոլոր արտասովոր մարդկանց լուսանկարների հավաքածուի գաղափարը: Հենց ալբոմի կազմի վրա՝ պատվավոր տեղում,

## ԵՐԵՎԱՆԻ ՃԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

տեղադրեց Սասունի Միզգիի մեծ սկարը: Բայց այսօր Ֆրիդան չի մտածում իր հավաքածուի մասին, որովհետև նրա օրը վատ է սկսվել: Իր Alfa Romeo -ի կափարիչի վրա երկու խոր քերծվածք է տեսել, իսկ մեքենայի նշանն անհետացել է: Լավ է, որ չգիտի. հարևանությամբ բնակվող Ռոնալդը մեքենաների նշաններ է հավաքում:

## ԹԵՐԹԵՐ

Քառասուն երկարուծիգ ամուսնական տարիների ընթացքում Պաուլիան այդպես էլ երբեք ցույց չտվեց իր Նենուին, որ գիտեր. ամուսինն իրենց ամուսնությունից առաջ հանդիպում էր Սյուզաննայի հետ: Երբեք ցույց չտվեց նաև, որ գիտեր. Սյուզաննան լքել էր նրան, որովհետև վախենում էր, իսկ Նենուն այնքան էր վշտացել, որ քիչ էր մնում վեր կենար ու արտագաղթեր Ավստրալիա: Նենուն էլ իր հերթին երբեք կնոջը ցույց չտվեց, որ գիտի, որ նա գիտի: Այս երկուսի արանքում Սյուզաննան էր՝ թերթավաճառը, որի կրպակը հրապարակում էր՝ ավտոբուսի կանգառի մոտ, որտեղ նա տարբեր ամսագրեր, էժան գրքեր ու դպրոցական պարագաներ էր վաճառում: Նա այդպես էլ երբեք չամուսնացավ:

Ամուսնական քառասուն տարիների ընթացքում չէր եղել ոչ մի օր, որ Պաուլիան չմտածեր Սյուզաննայի մասին: Չէր կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ ինքն ուղղակի մխիթարական մրցանակ է Նենուի համար: Պաուլիան ինչպե՞ս կարող էր մոռանալ. չէ՞ որ Նենուն ամեն առավոտ գնում էր Սյուզաննայի խանութ՝ նրանից թերթ գնելու: Երբ Նենուն թոշակի անցավ, նրա առօրյան սկսվում էր ուղիղ մեկ ժամ The Horizon թերթը ծայրեիծայր ուսումնասիրելուց: Պաուլիան նրան փոխանցում էր սուրճն ու թոստը, բայց Նենուն հազվադեպ էր բարձրացնում աչքերը, որ նայի նրան: Թվում էր՝ տեղյակ էլ չէ, թե ինչ է ուտում կամ խմում. այդ անիծյալ թերթն ամբողջությամբ կլանում էր նրա ուշադրությունը: Բայց նա գիտեր. ամուսինն իրականում ավտոբուսների գործադուլի կամ վերջին խորհրդարանական քննարկումների մասին չի կարդում: Պե՞տ տեսնում էր նրա կապույտ աչքերը, ով քիչ առաջ իրեն էր տվել թերթը: Պե՞տ զգում էր Սյուզաննայի մատների մեղմ ու գողացված հպումը, երբ իրեն էր տալիս մանրը: Չարմալի չէ, որ երբեմն ավելի քան տասնհինգ րոպե նայում էր էջի տույն տողին:

Մի օր Նենուն ասաց, որ դուրս է գալիս՝ ավիափոստի թուղթ գնելու. ուզում էր նամակ գրել Տորոնտո գաղթած որդուն՝ Ջոնիին: Հաջորդ իսկ օրը Պաուլիան շտապեց խանութ՝ երեք տասնյակ թուղթ գնելու. այդ դեպքում

և ստիպված չի լինի ավելորդ անգամ գնալ Սյուզաննայի կրպակ: Բայց խորամանկ ամուսինը միշտ ինչ-որ պատրվակ էր հորինում. գծագրական մատիտ, թելի կծիկ կամ էլ մի շիշ «Սթիվենս» թանաք, կարծես թղթի հետևից ամեն առավոտ գնալը բավարար չէր: Իսկ The Spike-ի բացվելուց հետո ավելացրել էր ամեն շաբաթ երեկոյան այցերը:

Պաուլինան երբեմն անհանգստանում էր, որ շուտով ստամոքսի խոց կունենա: Նրա համար անտանելի ծանր էր հետևել, թե ինչ խնամքով է սրում գծագրական մատիտը, որը գնել էր Սյուզաննայից, տեսնել նրա ժպիտը, երբ ձեռքերը կեղտոտվում էին թանաքից: Պաուլինային միայն վրեժի մի տարբերակ էր մնացել: Սոխի ու կարտոֆիլի կեղևը մաքրելիս բացում էր The Horizon-ի կամ The Spike-ի մի քանի թերթ, ու հոգին փառավորվում էր, երբ դրանք ծածկվում էին կեղտոտ, լարծուն կեղևներով: Ու երբ ավարտում էր, կոպիտ փաթաթում էր թերթն ու նետում աղբարկղը՝ ինքն իրեն ասելով. «Ահա՛ թե որն է քո տեղը, անիծվա՛ծ թերթ»: Բայց սոխի կեղևից նրա աչքերը լցվում էին արցունքներով, և այդ խայթոցը խոցում էր սիրտը:

Սիլեզիեո ճակատագիրն անակնկալ էր պատրաստել նրա համար: Սի գեղեցիկ առավոտ Սյուզաննայի խանութը փակ մնաց:

– Լսել եմ՝ նրան մեռած են գտել, – ասաց Պաուլինան՝ հայացքը վճռականորեն չհեռացնելով ամուսնուց:

– Չէ՛, – պատասխանեց Նենուն՝ աչքերը չկտրելով սև սուրճի բաժակից:– Լեյայի Փիթերն ինձ ասաց, որ նրան հաջողվել է կապվել զարմուհու՝ Մարիսայի հետ, սա էլ զանգել է հայր Լորենսին, և վերջինս ժամանակին տեղ է հասել, որ անցկացնի նրա վերջին ծեսը:

«Բախտը բերել է: Փաստորեն հասցրել է ամեն ինչ խոստովանել, ինչպիսի՛ լկտիություն», – սա էր ուզում ասել Պաուլինան, բայց բերանը պինդ փակեց: Սյուզաննան վերջապես մեկընդմիշտ անհետացել էր նրանց կյանքից, ու Պաուլինայի համար միևնույն էր՝ դրախտ է գնացել, դժոխք թե մոռացության գիրկը: Կարևորն այն է, որ ինքն այլևս չի տեսնի այն թերթերը, որոնց նա դիպել է, թելի կծիկները, ավիափոստի թուղթը կամ գծագրական մատիտները: Այս քառասուն տարիների ընթացքում առաջին անգամ

զգաց, որ ուսերի վրա թևեր են աճում: Յանկացավ բարձրանալ տանիքի պատշգամբ, որ երգի ու պարի, պտտվի ու պտտվի՝ թևերը լայն բացած: Նենուն դադարեց թերթեր գնել՝ ասելով, որ այլևս իվիճակի չէ երկար քայլել մինչև Տուլիսի խանութ, որը գյուղի մյուս կողմում էր: Սյուզաննայի խանութը փակ մնաց: Ահա, Սյուզաննան, խոր թաղված է հողի տակ, իսկ ինքը՝ Պաուլինան, դեռ այստեղ է, աշխույժ վազվզում, զբաղվում է իր կյանքով: Առավոտները Նենուին բերում էր նրա սև սուրճն ու թոստը, ու շուրթերի վրա ժպիտ էր խաղում, իսկ Նենուն սկսեց ժամանակն անցկացնել իրենց փոքրիկ պարտեզում, զբաղվել բույսերով: Ճիշտ է, նա ավելի շատ գրուցում էր ոչ թե կնոջ, այլ խորդենիների հետ, բայց գոնե այդ խոցող թերթերը գրողի ծոցն էին գնացել: Այդպես սկսվեց Պաուլինայի կյանքի խաղաղ շրջանը:

Դժբախտաբար, խաղաղությունը չափազանց կարճ տևեց: Սյուզաննայի մահից ընդամենը ինը օր անց, երեկոյան պատարագից տուն վերադառնալով, Նենուն ասաց, որ սուր ցավ է զգում կրծքավանդակում ու շտապեց զուգարան՝ փսխելու: Երևում էր, որ շատ վատ է զգում: Մի վայրկյանում ամեն ինչ գլխիվայր շրջվեց Պաուլինայի կյանքում. եկան հարևանները, բժիշկ Բոնանևոն և Հայր Լորենսը: Մեկ ժամ հետո Նենուն քարացած նայում էր առաջ՝ դեպի անձայրածիր հորիզոնների դատարկությունը:

Պաուլինան լաց եղավ ու սկսեց հիստերիկ հարվածել դեմքին, մինչև որ Լելան ու Մարիան նրան քարշ տվեցին խոհանոց ու ստիպեցին երկու բաժակ սև սուրճ խմել: Ավելի ուշ եկան՝ Նենուի մարմինը թաղման արարողությանը պատրաստելու, ու երբ Դուարդուն՝ դագաղագործը, նրան տեղավորեց դագաղի մեջ, Պաուլինան բոլորին ուղարկեց իրենց տները՝ ասելով, որ ուզում է վերջին գիշերը մենակ անցկացնել ամուսնու հետ: Նրա արցունքոտ աչքերն արագ չորացան, երբ տեսավ ամուսնուն. նա հանդարտ էր ու խաղաղ, մանր զուլավոր կոստյումով ու փայլեցրած կոշիկներով: Մոտեցավ նրան ու ամբողջ ուժով ապտակեց:

– Չկարողացա՞ր հեռու մնալ նրանից, չէ՞, այլանդան՝ ծերուկ:

Հետո շրխկացրեց դագաղի կափարիչն ու այլևս երբեք չնայեց նրա երեսին:



Անքուն գիշերներին ու ցերեկային վառ անուրջներում Պաուլինաս չէր կարողանում ազատվել այդ երկուսից: Մտովի անվերջ տեսնում էր, թե նրանք ինչպես են վազվզում դրախտի Էկզոտիկ այգիներում, ծիծաղում ու կատակում, թերթ կարդում ու զրկզուկ ծիծաղում The Spike-ի կատակների վրա, գծագրական մատիտների մի ամբողջ անտառ ցանում ու հիրիկներ ու պատատուկներ նկարում «Սթիվենս» թանաքի մուգ երանգներով: Հետո հայացքով հետևում էր, թե ինչպես են բարձրանում բլուրներն ու երեք տասնյակ ավիափոստային թուղթ տալիս քամուն: Պրանք նրանց այլևս երբեք պետք չեն գա:

Երբեմն Պաուլինաս արթնանում էր կեսգիշերին՝ քրտինքի մեջ կորած ու ծանր հևալով: Մի գիշեր գլխում մի գաղափար ծնվեց. գուցե մի քանի շիշ ասպիրին խմի ու միանա նրա՞նց: Անսպասելիորեն կհայտնվի ու կոչնչացնի նրանց ցանած մատիտներն ու նկարած ծաղիկները: Կկանգնի նրանց արանքում, ցույց կտա, թե ինչ հեշտությամբ կարող է դրախտը վերածել դժոխքի: Բայց հերիք է մտածեր դժոխքի մասին, ու ամեն բան, որ լսել էր մանկության տարիներին, հեղեղի պես թափվում էր գլխին: Ինքնասպանությունը մահացու մեղք է, ու եթե երկու շիշ դեղորայք կուլ տա, իրեն կուղարկեն ուղիղ դժոխք, իսկ նրանք միասին կմնան դրախտում: Մինչ ինքը կայրվի հավերժական կրակների մեջ, նրանք կմոտենան, կնայեն իրեն, ավիափոստի թղթերից կտրատած բաց կապույտ ու կարմիր կոնֆետներ կթափեն, որ կրակն ավելի ուժեղ բոցավառվի:

Չէ՛, անհույս է: Նրան մնում էր միայն համբերատար սպասել, մինչև գար վրեժի պահը: Ու նա սպասում էր ու սպասում: Ու երբ վարչապետն ու նախագահն այցի եկան, ծաղիկներ ու նվերներ բերեցին՝ շնորհավորելով ծննդյան հարյուրերորդ տարեդարձը, Պաուլինաս ասաց, որ դեռ սպասում է: Ու երբ վեց տարի անց նրան ցույց տվեցին հեռուստացույցով՝ ներկայացնելով որպես երկրի ամենատարեց կին, Պաուլինաս զլուխը կախեց ու հագիվ լսելի ձայնով մրմնջաց.

– Պե՛ռ սպասում եմ:

## ԴԱԳԱՊՆԵՐ

Նիկոլետտան ամբողջ գիշեր այք չփակեց: Վախենում էր փոթորիկներից: Երբ Ռենուն դեռ ողջ էր, կատաղի անծրեր խփում էր փայտե պատշգամբը շրջապատող ապակուն, ևս սեղմվում էր Ռենունին ու պաշտպանված զգում: Ամպրոպի առաջին իսկ հարվածից Լիզան ու Վալերիան դուրս էին թռչում մահճակալներից ու վազում նրանց մոտ: Համենայն դեպս այդպիսի բոլակներին փոթորիկն այլևս չէր վախեցնում: Բայց Ռենուն հեռացել էր, ու իրենց երկտեղ մահճակալը թողել էր Նիկոլետտայի միանձնյա օգտագործմանը, աղջիկներն ամուսնացել էին ու հեռացել տնից, և ահա այս գիշեր մռնչում էր ատամնավոր փոթորիկը: Հիմա նրա միակ պաշտպանությունը երկու երկձալ ծածկոցներն են: Տեղատարափ անծրեր չի հանդարտվել, քամին ավելի է ուժգնանում, ու ամեն մի նոր պոռթկում նախորդից ավելի կատաղի է:

Լուսադեմին Նիկոլետտան վեր կացավ, դուրս եկավ պատշգամբ, որ դուրս նայի: Թափվող ջրի մի մեծ լիճ, լողացող կտորված ճյուղեր, կայծակի բռնկումներ: Շտապ վերադարձավ տուն, գնաց ուղիղ խոհանոց, որ սուրճ պատրաստվի: Փորձում էր հանդարտվել:

Նա իսկապես պիտի որոշեր, թե ինչ անել. զուցե ժամանակն է տեղափոխվել ինչ-որ պաշտպանված կացարան: Մի բան հաստատ էր. այսպես չէր կարող երկար շարունակվել: Սիայնությունը կրծում էր սիրտը, ու վերջին շրջանում ևս սկսել էր անհանգստանալ ևսև Ֆրեդոյի համար: Երբ Ռենուն ողջ էր, իսկ դուստրերը դեռ իր հետ էին, նրա մտքով երբեք չէր անցնում, որ դազադագործ Ֆրեդոյի պահեստը գոմի մեծ դռան հետևում էր՝ տնից ընդամենը երկու քայլի վրա: Իրենք նույնիսկ կատակներ էին անում դրա մասին: Ամեն անգամ, երբ նրանք տեսնում էին, թե Ֆրեդուն ինչպես է հիվանդանոց գնում՝ ֆուրգոնի մեջ մի նոր դազաղ դրած, Ռենուն ասում էր.

– Երևում է՝ հարուստ մեկն է: Կաղնեփայտ է, ոչ ավել, ոչ պակաս: Այն էլ՝ բռնակներով:

Հիմա, երբ Ռեևուիկն արդեն դուրս էին բերել իր Էժան կարմիր դագաղով, ևա զգում էր, թե մեջքով ինչպես է դող անցնում ամեն անգամ, երբ տեսնում էր Ֆրեդրուիկն տևից հեռանալիս: Այսպիսի գիշերներին, երբ անձրև էր հեղում, ու կայծակը պատռում էր երկինքը, ևա դողում էր միայն այն մտքից, որ մի քանի տուն վերև պահեստ կա, որը լի է իրար վրա դարսած դագաղներով, ճիշտ իր նման, դեմքով դեպի վեր: Իսկապես պիտի խելքը գլուխը հավաքի և շարժվի տեղից: Բայց ևսիս ուզում էր տեսնել, թե այս անգամ ինչպես կվերջանա Վալերիայի հղիությունը: Հուսով էր, որ այսերկու ամիսներն արագ կթռչեն: Ամենաքիչն էր ուզում հիշել վերջին դեպքերը. յոթերորդ ամսում Վալերիան երկու երեխա կորցրեց: Առայժմ ամեն ինչ կարգին է, ինչպես և պիտի լիներ: Բժիշկը հանգստացրել էր նրանց, բայց ախր դրանից առաջ էլ մի քանի անգամ նույնն էր ասել: Եվ տեսե՛ք, թե ինչ պատահեց, ինչպես կայծակը ջինջ երկկըրում: Սաևտա Մարիա: Հիմա էլ սա՝ յոթերորդ ամսում: Անգութ փոթորիկն ասես ամբողջ ծանրությամբ ընկել էր նրա վրա, կարծես եկել էր, որ տանջեր նրան:

Բիանկան վաղ արթնացավ: Այդ անիծյալ «Գիտելիքի համակարգեր» նախագիծը խելագարության էր հասցնում նրան: Երկար ժամանակ հետաձգեց, իսկ հիմա ընդամենը երկու օր էր մնացել, որ հավաքի բոլոր թելերն ու կապի, միացնի: Մայրը, Աստված նրան օրհնի, ավելի վաղ էր արթնացել ու թունդ սուրճ եփել, որ օգնի նրան սկսել կիսատ գործը: Բիանկան ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե Դանթեն ինչ կապ ունի հաշվապահի կարիերայի հետ, որին ձգտում էր: Ուղղակի սիրում են գործ շարտել իրենց վրա, մտածում էր ևա, ինչպես ինքն էր գրքերը շարտում խոհանոցի սեղանին: Դանթեն գուցե և դուր էր գալիս թափառել դժոխքում, բայց ինքը մի գրամ ցանկություն չուներ միանալ նրան: Այս խոսքն ասելուն պես մոտակայքում կայծակը խփեց գետնին ու վախեցրեց նրան: Այս փոթորիկը հերիք էր, որ գլխում ամեն ինչ խառնվեր: Բիանկան նայեց պատուհանից, բայց անձրևն այնքան ուժեղ էր, որ հարևանների տները հագիվ էին երևում: Փողոցը վերածվել էր գետի, բայց անկախ եղանակից՝ նրան պետք էր կենտրոնանալ ու ավարտել այդ անիծված նախագիծը: Ուզի թե չուզի, ստիպված է լինելու իջնել դժոխքի հինգերորդ պարունակ՝

հուսալով, որ Ֆլեգիասն առանց չարչարվելու լաստանավով կանցկացնի իրեն Ստիքս գետով:

Դիմիտրիս խցկվել էր փոքրիկ խցում, փակվել-մնացել բեռնատար նավում, որը խարիսխ էր գցել նավահանգստից դուրս: Երբ լսեց, որ հայրը մահացել է, կապիտանը խոստացավ ժամանակին հասցնել թաղման արարողությանը: Բայց ո՞վ կարող էր կանխատեսել, որ այսպիսի ահեղ փոթորիկ, այսպիսի Գրիգալատա կլինի: Կապիտանը պահեց խոստումը, բայց մինևույն է, նավը չհասավ նավահանգիստ, ուստի Դիմիտրիս մնաց խցիկում փակված, ինչպես թութակը՝ վանդակում, ու երբ նավը ճոճվում էր փոթորկահույզ ծովի ջրերի վրա, նա հետ ու առաջ էր շարտվում: Լամպը, որ վառվում էր նրա գլխավերևում, հանկարծ թարթեց, թշտաց, ու մի վայրկյան հետո նա թաղվեց խավարի մեջ: Դժվար էր ընդունել, որ հայրն ընդմիջտ հեռացել է: Նա այնքան լի էր էներգիայով, այնքան ծիգ ու արագաշարժ, որ թվում էր՝ երբ քայլում էր, կայծեր էին թռչում: Ոչ ոք չէր հավատում, որ յոթանասուն տարեկան է, ու երբ միասին դուրս էին գալիս տնից, մարդիկ կարծում էին, թե եղբայրներ են: Լուրը շատ անսպասելի էր նրա համար. հայրիկը չկա: Գլխավերևում լույսն անջատվեց, ու խավարը թանձրացավ: Հիմա նույնիսկ թաղմանը չի հասցնի: Որտեղի՞ց եկավ այս դաժան փոթորիկը:

Դագաղագործ Ֆրեդուն քայլում էր սենյակում ու քորում գլուխը: Արդեն մի ժամ է, ինչ փորձում էր կապվել ծխական քահանայի հետ, բայց եղանակը կամ ինչ-որ անեծք կարծես խցանել էր բոլոր բջջային ցանցերը: Ստացիոնար հեռախոսով նույնպես չկարողացավ կապվել: Թաղման թափորը պետք է հիվանդանոցից դուրս գար ժամը ութին, բայց այս առավոտ եղանակը կործանել էր բոլոր ծրագրերը: Ռադիոն բոլորին զգուշացնում էր դուրս չգալ տնից: Հիմա ի՞նչ անի: Հոյս ուներ, որ անձրևն ու քամին կնահանջեն մինչև լուսաբաց, բայց վիճակն ավելի էր վատանում: Փողոցները վերածվել էին ջրային ուղիների հսկայական ցանցի, բայց ճիշտը մնում է ճիշտ. եթե ինքը չի կարող դուրս գալ տնից, ուրեմն հաճախորդի ընտա-

և ի՞նչ ու ընկերները նույնպես չեն կարող: Հանգուցյալը չի նեղվի, եթե նրան ևս մեկ-երկու օր չիջեցնեն գերեզմանափոսի մեջ: Այնտեղ նրան սպասում է մի ամբողջ հավերժություն: Բոլորն էլ ստիպված են համբերատար սպասել այս վախճանին:

Միայն թե փոթորիկը չէր դադարում:

Ֆրեդոյի մտքով երբեք չէր անցնի, որ այդ առավոտ, ժամը ինն անց երեսունին, ճանապարհից քիչ վեր կառավարական ջրամբարը կպայթի: Ջրի բարձրացրած ալիքը փշրել էր նրա թաղման բյուրոյի հին հետին պատը, բացել հակառակ կողմի դուռն ու ցնցել այնտեղ լուռ շարված դագաղները:

– Բիանկա, արագացրու՛: Շտապի՛ր, – կանչեց մայրը:

Բիանկան թողեց, որ Ֆլեգիասը թիավարի նավակն ու վազեց դեպի պատշգամբի պատուհանները՝ մոր մոտ: Փոթորկուն գետի մեջ, որ մի ժամանակ իրենց փողոցն էր, երևում էին մոտեցող փոքրիկ շոգեմակույկները. կաղնուց, կարմիր սոճուց, մի քանիսը՝ նուրբ կարմրափայտից, մյուսները՝ ընկուզենու և սոճու փայտից, ու բոլորին առաջ էր մղում ջրի կատաղի ուժը, հարվածում իրար ու հրում ամենազոր գետի ուժով:

Նիկոլետտան նույնպես տեսնում էր դրանք իր պատշգամբից: Դագաղները մոտենում էին թափորի պես, մեկը մյուսի հետևից, ճոճվելով ջրի մակերեսին, ասես պարում էին *Timor mortis conturbat me* երգի մեղեդու ներքո: Ուզում էր ներս վազել, բայց չէր կարողանում պոկվել տեսարանից. ասես ներքևում շարժվում էր թաղման թափորը, իսկ ինքը միակ լացողն էր: Հետևում էր, թե դագաղներն ինչպես են լողում դեպի բլուրը, և թեթևություն զգաց, որ շուտով ամեն ինչ կավարտվի, երբ հանկարծ տեսավ (բարեգու՛թ Մադոննա) վերջին դագաղը. այն հետ էր մնացել ու բաց էր: Փոքրիկ սպիտակ դագաղ, երեխայի համար:

Դիմիտրիս մի րոպե ավելի չէր դիմանում այդ նեղվածքին: Երբ զգաց, որ քամին ու ալիքները փոքր-ինչ հանդարտվում են, մի կողմ նետեց մոմլաթն ու դուրս եկավ ճոճվող տախտակամածի վրա: Ամպերի արանքից

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

փոքրիկ ճեղքը դուրս էր թողնում արևի ճառագայթները, և հենց այդ ժամանակ տեսավ, թե ինչպես են գալիս, ճոճվելով ալիքների վրա, բարդուց, կարմիր սոճուց, կարմրափայտից, ընկուզենուց ու սոճուց պատրաստված մակույկների պես: Երբ մոտեցան ու անցան նավաքթի տակով, ճչաց.

– Հայրի՛կ, հայրի՛կ, որտե՞ղ ես, հայրի՛կ: Ո՞ր ես գնում:

Մակույկները շարունակեցին ընթացքը դեպի հյուսիս:

Գրիգալատան սկսեց նահանջել:

Բիանկան սեղմեց save կոճակը, դուրս եկավ Word-ից, փակեց լեփ-թոփն ու հորանջեց:

– Սա՛, ի՞նչ կասես, եթե տաք շոկոլադ պատրաստեմ մեզ համար:

Վերջապես, «ինֆերնոն» ավարտվեց: Հիմա կարող է ընդմիջում անել, բարձրանալ վերև ու հանգստանալ դրախտում:

## ԳԱՉԱՆՆԵՐ

Ամեն անգամ, երբ հայրը բարձրանում էր տանիք, միշտ կանգնում էր, որ նայի ներքև՝ այգուն: Ոչ թե մեր փոքր այգուն, այլ այն հսկայականին, որ սահմանակից էր մերին: Լքված այգի էր, մեծ, ինչպես ծովը, որտեղ մուխտուն աճում էր չորս ֆուտ բարձրությամբ, ու որտեղ հանգրվանում էին մետաղական տարաները, արկղերն ու կոտրտված սպասքը, որ հարևանները նետել էին պատի վրայով:

Հայրս ասում էր, որ մի ժամանակ այն պատկանում էր հրապարակի մեծ տանը, որ համարյա պալատ էր: Ըստ պատմության՝ տանտիրոջ և վարձակալի միջև ինչ-որ վեճ էր ծագել, և առաջինը որոշել էր հետ վերցնել այգին՝ մերժելով մուտք տալ պալատից: Այնտեղ կարելի էր մտնել միայն հետևաբանի փոքրիկ նեղ դռնով: Եվ ահա, բոլորը շուտով լքեցին ու մոռացան թե՛ այգին, թե՛ պալատը, բացի հայրիկիցս:

– Մի օր կզենեմ այդ այգին, – կրկնում էր հայրս ամեն անգամ, երբ բարձրանում էր տանիք, որտեղից թախանձագին նայում էր մուխտոտով պատված ամայի տարածությանը:– Եվ այն կվերածեմ երկրային դրախտի:

Հիշում եմ, յոթ տարեկանից քիչ ավելի էի, երբ հայրս ասում էր այս խոսքերը, ու դրանք ականջիս հեքիաթի պատառիկ էին թվում: Երբ շոգ օգոստոսյան գիշերներին բարձրանում էինք տանիք՝ մի քիչ թարմ օդ շնչելու, հայրս ինձ հեքիաթներ էր պատմում տարօրինակ արարածների մասին, որոնք ապրում էին այգու աղոտ սուվերներում. մանուշակագույն չղջիկը, որը ցածր էր թռչում, ու մարմնից արյուն էր կաթում, դաժան արջ-նագռավը, որ բույն էր հյուսում մեծ ձիթապտղի ծառի վրա, և լուսարձակող խիտունջը, որը գիշերները թափառում էր լիալուսնի տակ: Բայց իմ ամենասիրելի պատմությունը, որից նաև մարմնովս սարսուռ էր անցնում, վայրի գազանի մասին էր. նա տարբեր կերպարանքներ էր առնում, որոնք դեռ ոչ ոք չէր տեսել, թեպետ հարևանները նկատում էին դա եղևջի տերևների շարժումից. դրանք թեքվում էին կողք, երբ գազանը շարժվում էր թփերի միջով: Յերեկները մենակ բարձրանում էի տանիք ու թաքնվում ցածրիկ

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

ճաղաշարի հետևում, որ ծիկրակեմ ու լրտեսեմ՝ հույս ունենալով, որ կտեսնեմ այն արարածներից մեկին, որոնց հայրս կարծես շատ լավ էր ճանաչում:

Մի շաբաթ առավոտ մեր տուն եկան երկու բանվոր: Նրանք մտան՝ ծանր գործիքների բեռան տակ կքած, և շուտով սկսեցին դուռ բացել մեր փոքրիկ այգու և հսկայական այգու միջև: Հայրս իրականացրել էր երազանքը. նրան հաջողվել էր գնել այգին: Կամ գուցե վարձակալությամբ էր վերցրել. հաստատ չեմ հիշում: Եվ հենց այդ օրը սկսվեց արկածը:

Երբեք չեմ մոռանա, թե առաջին անգամ ինչպես ոտք դրեցինք շեմից. միայն ես, հայրս և ավագ եղբայրս, ով այն ժամանակ արդեն տասնինը տարեկան էր: Տեսադաշտում ոչ արահետներ կային, ոչ անցումներ. բաղդդի ու պասիֆլորայի, բորբոսևած դառը կարնջի, գլեռի ու իրար սեղմված ամենատարբեր ծարավ ցիտրուսային ծառերի իսկական ջունգլի էր, որ կասկածանքով էր վերաբերվում մեզ ու ամեն քայլափոխի ընկնում ոտքի տակ: Բաց դեղին վայրի մարգարտածաղիկների արանքով մի զույգ լայն բացած աչքեր և գանգուր մազերի խուրձ նկատեցինք, ու շուտով հայտնաբերեցինք, որ մի ժամանակ այնտեղ փոքրիկ լճակ է եղել: Հայրս սկսեց պոկոտել մարգարտածաղիկների ճյուղերը, ու անմիջապես ի հայտ եկավ հսկայական աշխետ ծիուն հեծած մի թմբիկ քերովբե: Նրա ժպիտը ծածկված էր մամուռով ու քարաքոսով: Երբ հայրս կանգնեց, որ մի լավ ուսումնասիրի, հայացքը սահեց ամբողջ ջունգլիի վրայով, ու լսեցի, թե քթի տակ ինչպես ասաց.

– Չմտածե՛ս... Մենք կընտելացնենք այս վայրի գազանին: Շուտով այն կուտի մեր ձեռքից:

Մոտեցա նրան: Այս խոսքերն ինձ հիշեցրին գազանների մասին նրա պատմությունները, ու աչքիս պոչով տեսա, թե եղևջի թփերն ինչպես հեռացան իրարից, ու լսեցի շրշյունը: Հետո մի ձայն, խայթող քրքջոցի պես, որ գալիս էր կոշտ վայրի խոտի արմատների միջով: Բացի շատրվան-քերովբեի լճակից, այդ օրը մենք ուրիշ բացահայտումներ էլ արեցինք. ծիթենու ծառի հետևում թաքնված փոքրիկ ծածկ՝ լիքը հին իրերով, քարից



ջրանցքներ ոռոգման համար, երկու ջրհոր, խոռոչավոր քար՝ լի ժանգոտ մետաղյա տարաներով, շան կմախք: Բայց միտքս դեռ կենտրոնացած էր գազանի վրա, որին ոչ ոք չէր տեսել, բայց հայրս երդվել էր ընտելացնել:

Այն ժամանակ տանը հիկնով էինք, և շուտով բոլորս ներգրավվեցինք ընդհանուր մաքրության գործում: Ոչ միայն եղբայրներս, քույրերս ու ես, այլև՝ մորաքույրներս ու նրանց երեխաները: Հաճախ դա նման էր խոշոր ու աշխույժ պիկնիկի, հատկապես շաբաթ առավոտները, երբ բոլորը հավաքվում էին՝ եղինջն ու մոլախոտը պոկելու, դրանք դուլներով ու ձեռնասայլակներով դուրս տանելու: Ինչքան խիսունջ տեսանք, հավաքեցինք: Ու է՛լ ավելի շատ մետաղյա տարաներ ու սպասք, քան կարելի էր պատկերացնել: Թվում էր՝ այս քաղհանին երբեք վերջ չի լինի: Երբ եղբայրներիս և հորաքույր-մորաքույրներիս երեխաների հետ էի լինում, ինձ թվում էր՝ յոթերորդ երկնքում եմ, բայց երբ մենակ մնացի այգու անկյուններից մեկում, զգացի, թե մարմնովս ինչ դող անցավ: Սկսեցի երևակայել, որ գազանը թաքնվում է, աչքերը չորս արած հետևում ինձ, ու միայն մի միտք ունի՝ ինձ մենակ բռնել, մոտենալ ու հարձակվել, մինչև հայրս կհասցնի վարժեցնել:

– Ե՞րբ ես վարժեցնելու, հայրի՛կ, – հարցրի, երբ պոկում էինք մոլախոտերը:

– Շուտով, շուտով, – պատասխանեց նա:– Բայց նախ պիտի զսպենք նրան: Ինչ է, չէ՞ս հասկանում:

Մի անգամ, երբ վազում էի բաց դեղին թիթեռնիկի հետևից, շատ հեռացա մյուսներից: Հայտնվեցի ծառուղու դռան մոտ, որտեղ այգու պատն առնվազն մի գլուխ բարձր էր ու ամբողջությամբ կառուցված հին խճաքարից: Վազելիս խում էի, որ ինչ-որ բան շարժվում է քարերի վրայով, ու պատի ճեղքից տարօրինակ ստվեր լողաց. կարծես վերքից դուրս եկող լպրծուն կամ թանձր լերդացած արյուն լիներ: Ինչքան ուժ ունեի, ճչացի.

– Գազա՛նը: Գազա՛նը:

Բայց երևում է՝ ձայնս այդպես էլ դուրս չէր գալիս կոկորդիցս այն ուժով, որ պատկերացնում էի. ոչ ոք չլսեց ինձ, ոչ ոք չնկատեց: Եվ դա հավանաբար լավ էր. չէ՞ որ անվերջ կծաղրեին, հատկապես ավագ եղբայրս, որը

երբեք չէր հոգևում ինձ վախեցնելուց ու հետո վրաս ծիծաղելուց:

Հաստատ չգիտեմ, թե ինչքան ժամանակ խլեց մաքրությունը, բայց ինչքան հիշում եմ, մի ակնթարթում այգին պատշաճ տեսք ստացավ: Հայրս ու եղբայրս սկսեցինք ուղյակներ կառուցել: Մի լավ մաքրեցինք լճակը, և որոգեցինք շատրվանը, ու շուտով քերովբեի դեմքին ժպիտ և որից հայտնվեց: Տրիտերները հավասարեցնելու համար մարդ հրավիրեցին: Էտեցին ցիտրուսային ծառերը, կտրեցին դեղձենիների ճյուղերը, որոնք ծանրացել էին մրգահյութի կաթիլներից: Եվ փետրվարի վերջին սկսեցին հայտնվել եղբորս տնկած առաջին ֆրեզիաները, հետո սպիտակ արում շուշանները, ապա և հրանունկները: Հաջորդ տարի մի մարգ փշոտ վարդ ու մի թուփ ոջլախոտ ցանեցին: Հետո հայտնվեցին թրաշուշաններն ու գետրգիկները, և շուտով ջունգլին ամբողջությամբ անհետացավ: Հայրս մեծ տարածություն բացեց լճի շուրջ, և ամառային երեկոներին մենք բացում էինք ծալովի աթոռներն ու հավաքվում մորաքույրներիս և ևրանց երեխաների հետ. շատախոսում էինք, պատմություններ պատմում, իսկ ևոր ջրված անանուխի հոտը տարածվում էր օդում: Մի երեկո, մինչ մյուսները կհավաքվեին, պատահեց այնպես, որ մենակ մնացի հայրիկի հետ ու հարցրի, թե ուրիշ պատմություն գիտի՞ կատաղի գազանի մասին:

– Դե, հիմա գազանն ուտում է մեր ձեռքից, – պատասխանեց հայրս՝ ևսայելով այգու խավարի մեջ:

– Որտե՞ղ է, հայրի՛կ: Որտե՞ղ է, – արագ հարցրի ես:– Երբեք չեմ տեսել:

– Դե իհարկե տեսել ես, – ասաց, – ու օգնել ես, որ ընտելացնեմ ևրան:

Ու հանկարծ հիշեցի այն լպրծուն սև արարածին, որը սահում էր պատի քարերի արանքով:

Տարիներ անցան: Մենք մեծացանք ու ամուսնացանք: Հայրս մահացավ, բոլորս պապ ու տատ դարձանք: Լքեցինք հորս տունն ու այգին: Թե ինչպես դա պատահեց, երկար պատմություն է, իսկ հիմա պատմելու տեղը չէ: Երկար տարիներ չէի եղել այնտեղ, բայց երկու շաբաթ առաջ երազում տեսա թրաշուշանի ու հրանունկի ծաղկող ցողունները և արթնացա մեր

այգի այցելելու հսկայական ցանկությամբ:

Ու սորից ինձ թվաց, թե յոթ տարեկան եմ, քայլում եմ վայրի մուխոտների միջով, ապահով, հայրիկիս ու եղբորս արանքում: Ուղյակները, լճակն ու թմբիկ քերովբեն անհետացել են: Բաղեղն ու պասիֆլորան փաթաթվել են արևադարձային ծառերին ու տանձենիներին ու կախվել դրանցից: Դեղձի ծառերը սորից հեղում են հին արցունքները: Հանկարծ ուժեղ խշշոց լսվեց: Տեսա, թե մոլախոտերն ինչպես մի կողմ քաշվեցին, ու մարմնովս սորից սառը դող անցավ:

– Ոչ ոք ընդմիջտ չի վարժեցնի ինձ: Ես առայժմ ծիծաղում եմ քեզ հետ: Խաղում եմ քեզ հետ: Բայց իմ ճանապարհը միշտ հաղթում է: Ես միշտ վայրի եմ եղել ու կլինեմ: Ես գազան եմ:

## Ambra Solare

Մենք լողացինք հեռու, շատ հեռու՝ հուսալով, որ ոչ ոք չի տեսնի մեզ. դու պառկած էիր լիլոյի վրա, իսկ ես լողում էի կողքիդ: Երբ շատ հեռու էինք, եղբայրներին ու քույրերին, զարմիկներին ու ծնողներին հետաքրքրաշարժ աչքից բավական հեռու, ես արագորեն թառ կողքիդ, քեզ սեղմեցի ինձ ու շուրթերիցդ ըմպեցի հուպիսի աղի համը: Երկար ժամանակ այնտեղ մնացինք մենակ, ձեռքդ ձեռքիս մեջ: Մեղմ ալիքները բարձրացնում էին մեզ, ու մենք ոչ մի բառ չէինք խոսում: Ծովը մեզ դանդաղ հետ տարավ, ու երբ մեր ոտքերը դիպան տաք ավազին, փաթաթվեցինք փափուկ սրբիչների մեջ ու պառկեցինք՝ նայելով երկինք ու լսելով Տիկո Պաուլիի Sapore di Sale-ն, որը ճայթում էր փոքրիկ տրանզիստորային ռադիոյից: Ծարավը հագեցնելու համար բացեցինք դառը նուշից պատրաստված ռուջջատայի շիշը և շուտով ընկանք երանության գիրկը: Վեց այդ ժամանակ ինձ խնդրեցիր, որ տրորեմ մեջքդ Ambra Solare յուղով, որը բերել էիր այդ օրվա համար, ու մենք այն առաջին անգամ միասին օգտագործեցինք, որ թե՛ արևը, թե՛ ես փայփայենք մարմնիդ քնքշությունը: Լողափը մեզ շրջապատում էր աղմկոտ երեխաների ձայներով, պաղպաղակի ֆուրգոնի զևզվզոցով, մայրերի բղավոցներով, ալիքների ճողփյունով, ճայերի ճիչերով, բայց մենք փակում էինք աչքերը, ամուր սեղմվում իրար ու Տիկո Պաուլիի հետ գնում հեռու-հեռու: Այն ժամանակ գիտեցինք, թե ինչպես փակել դռները բոլորի համար և բացել միայն մեր աշխարհի առաջ: Այդ օրը ես հենվեցի արմունկիս վրա ու բարձրացա, որ տեսնեմ, թե ինչպես ես թեթև շնչում ու ժպտում. նույնիսկ փակ աչքերով գիտեիր, որ հետևում եմ քեզ: Իսկ ես գիտեի, որ դու ես լինելու իմ պատանեկության սերը և իմ ծերության սերը: Գիտեի, որ դու ես լինելու երեխաներիս մայրը: Ես կարծում էի, թե ամեն ինչ գիտեմ: Դու սեղմեցիր ձեռքս ու ինձ քո կողմը քաշեցիր, ու պարանոցիցդ առա Ambra Solare-ի բույրը: Մեզ վախեցրին ծովի ալիքները, որոնք փոթորկվում ու այնքան էին բարձրանում, որ դիպչում էին մեր ոտ-

Լաթաթերին: Ծիծաղելով վեր կացանք, որ բարձրացնենք մեր սրբիչները: Որովհետև այն ժամանակ հեշտությամբ էինք ծիծաղում, ու ամբողջ լողափը ծիծաղում էր մեզ հետ: Հետո ամառներն արագ գլորվում-անցնում էին, մեկը մյուսի հետևից, իսկ մենք չէինք էլ նկատում: Ես փորձեցի քեզ պահել սրբիչի վրա՝ շարունակելով կայել երկնքին, բայց ալիքներն անգույթ էին: Հեռու տարանք մեր սրբիչները, որ ալիքները չհասնեն, բայց ապարոյուն: Պրանք հետապնդեցին այնքան, մինչև որ նվաճեցին մեր ամբողջ լողափը: Ես փորձեցի Ambra Solare-ով տրորել մեջքդ, որ արևը չտանջի քեզ, բայց անգույթ ճառագայթները ծիծաղում էին իմ ջանքերի վրա: Երբ քո խաչից ասացիր, որ ծարավ ես, քեզ փոխանցեցի Լուչի դառը ռուջջատան: Բայց դու ուղղակի թրջեցիր շուրթերդ ու հանդարտ բարձրացար սրբիչից, Լստեցիր լիլոյի վրա ու մենակ ճամփա ընկար դեպի հեռավոր ու մշուշոտ հորիզոն:

Եվ ես պայքարում էի մենակ՝ շրջապատված դատարկ լողափի ճայերի ճչոցներով, փորձելով լսել Տինո Պաոլիի խոսքի ձայնը, որ հասկանալի, թե այն օրն ինչու էի կարծում, թե ամեն ինչ գիտեմ: Ու իզուր փորձելով օդում որսալ Ambra Solare-ի բույրը:

## ՔԱՐ ՈՒ ԿԱՎ

Երբևէ լսե՞լ եք երկու ծեր եղբայրների մասին, երկուսն էլ ամուրի, օրերը գլորում են միասին նույն տանը՝ առանց մի բառ փոխանակելու: Ահա այդպես իմ մեծ հորեղբայր Տաննիկն ապրում էր իմ մեծ հորեղբայր Ռաֆելի հետ: Նրանք հորս ընտանիքից էին, ուստի տարեկան երկու-երեք անգամ հայրս այցի էր գնում նրանց Հալ Կիրկոյա՝ իր հետ քարշ տալով նաև ինձ: Այն ժամանակ մեր ընտանիքում ոչ ոք մեքենա չունեի, ուստի Զեյտունից ավտոբուսով էինք գնում, ու ճանապարհը բավական երկար էր:

Երբ դեռ շատ փոքր էի, մի քիչ վախենում էի իմ մեծ հորեղբայրներից, հատկապես հորեղբայր Տաննիկից՝ շիլ աչքերով ու մեծ դեղնած ատամներով, ասես այժի ատամներ լինեին: Կասկածամիտ հայացք ուներ: Բայց երբ մեծացա, անհամբեր սպասում էի այդ այցերին: Առաջ մտածում էի, որ Հալ Կիրկոյան Աստուծու կողմից մոռացված վայր է, իսկ նրանց տունն այնքան թաքնված է, որ կարծես թե սատանան էլ է մոռացել դրա մասին:

Հորեղբայր Տաննիկն ապրում էր առաջին հարկում, որտեղ ուներ թույլ լուսավորված խոհանոց, ճաշասենյակ, որի պատուհանները նայում էին պարտեզին, և ննջարան: Հորեղբայր Ռաֆելն ապրում էր վերևի հարկում: Մի անգամ հայրս ասաց, որ սկզբում նրանք լուռ համաձայնության են եկել, որ Տաննիկն ունեյիք է պատրաստելու, իսկ Ռաֆելը զբաղվելու է մաքրությամբ: Բայց երևում է՝ պայմանավորվածությունը երկար չի տևել: Ես գիտեի, որ նրանք լռիվ առանձին ու լուռ են ապրում: Տաննիկն իր համար ճաշ էր պատրաստում ներքևում, իսկ Ռաֆելը՝ տանիքում: Տաննիկն հագուստը կախում էր այգում, իսկ Ռաֆելը՝ տանիքում: Երբեք ոչ մի բառ չէր ասվում:

Ամեն անգամ, երբ այցի էինք գնում, հորեղբայր Տաննիկն էր բացում դուռը: Նա մեզ առաջնորդում էր ճաշասենյակ, հորս համար սուրճ բերում, ինձ համար՝ մի բաժակ դառը նուշի ռուջջատա և մի քանի պինդ թխվածքաբլիթ թեյի համար: Հետո հարմար տեղավորվում էր մեր կողքին, որ լսի հորս բերած նորությունները: Սակայն այս ծիսակատարությունից առաջ

հայրս նրան էր փոխանցում մի փաթեթ դեռ տաք պաստիցցի՝ ռիկոտա պանրով լցունաձ, որը ճանապարհին գնում էինք հրուշակագործ Իլ-Միջնենից: Այդպես անցկացնում էինք մոտ կես ժամ. ուտում էինք, խմում ու սպասում, որ Տաննին բացի բերանն ու մի բան ասի: Իլ-Միջնենի համեղություններն ուտելուց հետո հանգստանում էր ու հայրիկիս ներկայացնում այն բոլոր գյուղացիների ցուցակը, որոնք մահացել էին, ամուսնացել էին, ով ում հետ էր ամուսնացել, ովքեր էին արտագաղթել Ավստրալիա, ով էր գնել բժիշկ Վելլայի տունը, որն արդեն մի ամբողջ երեսուն տարի դատարկ էր: Այս ամբողջ պատմության ընթացքում հորեղբայր Տաննիի հայացքը շարունակ գամված էր այգուն, ասես իր պատմած նորությունները հավաքում էր կիտրոնի ծառից կամ խիտ ծաղկամանի մեջ աճած անանուխի թփից:

Հետո հայրս տեղից վեր էր կենում ու ասում.

– Հիմա պիտի մենակ թողնենք քեզ, հորեղբայր:

Իսկ հորեղբայր Տաննին պատասխանում էր.

– Իմ կողմից բարևեք Մարիին ու էլի հյուր եկե՞ք ինձ:

Ու դուրս էր գալիս այգի:

Դա այցի առաջին մասի ավարտն էր և երկրորդ մասի սկիզբը: Մինչ հորեղբայր Տաննին հասնում էր կիտրոնի ծառին, մենք արդեն աստիճանների մոտ էինք լինում, որտեղ հայրս բարձրաձայն կանչում էր հորեղբայր Ռաֆելին:

Եվ Ռաֆելը հորիցս ավելի սրտագին ձայնով պատասխանում էր.

– Եկե՛ք, եկե՛ք վերև:

Հորեղբայր Ռաֆելը սպասում էր մեզ սանդղահարթակին, հագին միշտ ֆլանելից վանդակավոր վերնաշապիկ էր, մուգ կանաչ տաբատ, որն ամրացնում էր տաբատակալներով, և սև կեպի: Բաց կապույտ աչքերն ինձ հիշեցնում էին քրոջս՝ Գրեյսի տիկնիկները: Դեմքը մաքուր սափրված էր, ու թեև շրթունքները ծածկված էին վրձնի պես ծակող բեղերով, ժպտում էր: Հայրս միշտ Իլ-Միջնենից թղթե փաթեթ էր բերում նաև Ռաֆելի համար, որը նախընտրում էր ոլոռով լցունաձ պաստիցցի: Եվ մենք նստում էինք, ևս մի բաժակ սուրճ խմում, ևս մի բաժակ ռուջջատա խմում ու ևս մի քանի կլոր թեյի թխվածքաբլիթ ուտում, որովհետև եթե ասեինք, որ

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

եղբայրը հյուրասիրել է, ու արդեն կշտացել ենք, հորեղբայր Ռաֆելը սաստիկ կնեղանար, և նրա բեղերի հետևից այլևս ժպիտ չէր երևա: Ռաֆելի ճաշասենյակում նորից լսում էինք վերջերս մահացածների ու Ավստրալիա գաղթածների ցուցակը, և հայրս լայն բացում էր աչքերը՝ ձևացնելով, թե առաջին անգամ է լսում: Նա հատկապես ուշադիր նայում էր ինձ, ուստի ես զգույշ էի, որ հանկարծ որևէ կերպ չհասկացնեմ Ռաֆելին, որ ընդամենը մի քանի րոպե առաջ արդեն լսել ենք այդ ամենը:

Երբ առաջին անգամ տեսա հորեղբայր Տանկիի քարե արձանները, ապշեցի, կորցրի խոսելու ունակությունը: Նա նամակ էր ստացել ինչ-որ կառավարական վարչությունից ու խնդրել, որ հայրս պատասխան գրի իր փոխարեն: Մինչ նրանք թերթում էին փաստաթղթերն ու քննարկում հարցը, ես մենակ թափառում էի այգում: Թաքնվելով վանդակաշարից կապված խաղողի որթի տակ՝ նկատեցի տղամարդու արձան, ձեռքին մուրճ: Նուան ծառի տակ մի ուրիշ արձան էր. վանական էր՝ գլխանոցով ու պարեգոտով: Տրիորի մոտ կանգնած էր ծաղրածուի արձանը: Հավաքելի մոտ՝ խոշորամարմին մկանուտ տղամարդ, ձեռքին մեծ քլուկ: Երբ աչքերս ընտելացան լույսին, հասկացա, որ այգին լիքն է քարե արձաններով, բոլորը՝ մոտավորապես մեկ ֆուտ բարձրությամբ, թաքնված, պատսպարված ծառերի ու ծաղիկների տակ, ասես պահմտոցի էին խաղում: Բոլորը կլոր դեմքեր ունեին, լայն բացած աչքեր, որոնք է՛լ ավելի շիլ էին, քան հորեղբայր Տանկիինը:

– Թեզ դո՞ւր են գալիս:

Նրա ձայնը վախեցրեց ինձ:

– Տե՛ս, թե սա ինչ է կարողանում անել, – ասաց նա:

Մոտեցավ ու քաշեց քլուկգով տղամարդու հետևում թաքնված հաստ պարանը. նա անմիջապես բարձրացրեց քլուկն ու նայեց աջ ու ձախ:

– Իսկ այս մեկը գիտի, թե ինչպես են աշխատում մուրճով, – շարունակեց նա՝ ինձ առաջնորդելով դեպի ճաղաշար:

Ես հասկացա, որ բոլոր արձանիկները շարժվում են: Կիևը պարում էր՝ շարժելով իրանը: Ծաղրածուն կետի պես լայն բացում էր բերանն ու



գլուխը հետ գցում: Ստրակը թափ տվող կառապան կար, հրացանը բարձրացնող և իջեցնող զինվոր: Բոլորը կենդանանում էին, երբ ձգում էիր թելը կամ լարը:

– Իսկ այս մեկն ի՞նչ է անում, – հարցրի հորեղբորս, երբ կանգ առանք նռան ծառի տակ, որտեղ վանահայրն էր:

Նրա աչքերը մեծացան, երբ պատասխանեց.

– Վանահայրն է. գոռում է ու տազնապ բարձրացնում: Նայի՛ր նրա բերանին: Տեսնո՞ւմ ես անցքը: Այն տանում է դեպի գլխի թագը: Իսկ այստեղ, նայի՛ր, գլխարկի հետևում թիթեղյա ձագարափոս է: Երբ փչում է հյուսիսային քամին, այն անցնում է փոսի միջով ու հասնում փոքրիկ անցքին, և նա սկսում է բղավել:

Կորցրել էի խոսելու ունակությունս ու նայում էի վանահոր արտահայտիչ շրթունքներին՝ հուսալով, որ հիմա հանկարծ կատաղի քամի կփչի, որ լսեմ նրա ձայնը:

– Բայց ինչի՞ համար են դրանք, – հարցրեցի՝ նույնիսկ չհասկանալով, թե ինչու:

Հորեղբայր Տաննին նստեց քարերի վրա և նայեց ուղիղ դեմքիս:

– Գողի, – պատասխանեց նա: Չայնն այնքան կամացուկ էր, որ հագիվ էի լսում:– Բոլորը նրան են փնտրում: Հենց որ վանահայրն ազդանշան է տալիս, ազարակատերը ճոճում է քլունզը, դարբինը բարձրացնում է մուրճը, զինվորը պատրաստում է հրացանը, կառապանը թափ է տալիս մտրակն ու պատրաստում ձիերին. բոլորը կազմ ու պատրաստ սպասում են գողին:

– Իսկ ծաղրածուն ու պարող կի՞նը, – պնդեցի ես:

– ՉԷ, չի պարում, – պատասխանեց նա. շչառությունը ծանրացել էր սուրճի ու տապակած սխտորի հոտից:– Նա փորձում է փախուստի դիմել: Փորձո՞ւմ է: Իսկ ծաղրածուն ծիծաղում է բոլորի վրա: Ղե, որովհետև հիմար է և ուրիշ ոչինչ չի կարող անել. անիմաստ ծիծաղում է ու ստիպում, որ ամբողջ գյուղն էլ իր վրա ծիծաղի: Բոլորը գիտեն գողի մասին, բացի նրանից: Տգետ ու տխմար ծաղրածու է: Հիմա՛ր: Ապուշի մեկը:

Ես վաղուց գիտեի, որ հորեղբայր Ռաֆելի ննջասենյակի ապակե պահարանում փակված արծանիկներ կան: Մինչև նա ու հայրս զրուցում էին, վիզս երկարացնում էի, որ տեսնեմ դրանք: Սկզբում մտածում էի, որ դրանք կապված են եկեղեցու հետ. ինչ-որ խնջույքի, կամ գուցե Պահքի շաքաթվա հետ: Մի անգամ ուսումնասիրելիս այնքան էի մոլորվել մտքերիս մեջ, որ հորեղբայր Ռաֆելը նկատեց հետաքրքրասիրությունս: Տեղից վեր կացավ, բռնեց ձեռքս ու հարցրեց՝ կուզե՞մ տեսնել:

Պատասխանի չսպասելով՝ ինձ տարավ ննջասենյակ, հագուստի սևդուկից հանեց բանալին ու բացեց պահարանը: Հետո մեջտեղի դարակից հանեց արծանիկն ու դրեց մահճակալի կողքի սեղանին, որ մի լավ նայեմ: Գուցե սխալվում եմ, երբ այն արծանիկ եմ անվանում: Իրականում դա հինգ-վեց մասից բաղկացած մի ամբողջ արծանախումբ էր, յուրաքանչյուրը՝ վեց դյույմ բարձրությամբ: Դրանց շարքում մի տղամարդ կար՝ ավանակով ու սայլով. միրգ ու բանջարեղեն էր վաճառում: Նրա շուրջ չորս հաճախորդ կար: Արդեն հիսուն տարի է անցել այն օրից, երբ առաջին անգամ տեսա, բայց մինչև հիմա կարծում եմ, որ երբևէ տեսածս ամենագեղեցիկ պատկերն էր: Մանրամասները սքանչելի էին: Սայլի վրա ութ եղեգնյա զամբյուղ կար. մեկը լիքն էր դեղձով, մյուսը՝ կանաչ պղպեղով, մյուսի մեջ կարտոֆիլ էր: Բոլորն էլ փոքր էին, բայց պատրաստված էին ամենայն ճշգրտությամբ: Բանջարեղեն վաճառողի մի ձեռքում փոքրիկ կշեռք էր, մյուս ձեռքում՝ մոտ կես ֆունտ դեղձ: Շագանակագույն երկար գանգուր մազերով երիտասարդ կինը բռնել էր գոգնոցի անկյուններից, պատրաստ վերցնելու միրգը, որ վաճառողը կշռում էր իր համար: Մյուս սայլի մոտ երեք ուրիշ կանայք էին. մի քիչ գիրուկ կինը կանաչ պղպեղ էր ընտրում, մի ծեր կին՝ գլխի շուրջ փաթաթած շարֆով, հոտոտում էր վայրի սեխը, իսկ վերջինը փորձում էր սանձել փոքրիկ որդուն, որը երկար սպասելուց կախվել էր մոր կիսաշրջագգեստից՝ ստիպելով, որ գնան: Ավանակի գլուխը կախեր.զրուցում էրորսորդական շան հետ: Նրանց քթերը համարյա դիպչում էին իրար:

Այս տեսարանի մեջ մի ամբողջ պատմություն էր թաքնված: Այնպե՛ս էի ուզում իմանալ, թե մայրն ինչ է ասում իր չարածճի որդուն, ծեր կինն ին-

չու է հոտոտում սեխը, երիտասարդ գանգրահեր կիսն ինչու է ուզում դեղձը տանել ոչ թե հյուսկեն զամբյուղով, այլ գոզկոցի մեջ: Ես կարող էի ժամեր շարունակ զննել սայլի անիվների ճաղերը, բանջարեղենի ծղոտե զամբյուղները, ավանակի ծղոտե զխարկը: Ամեն ինչ պատրաստված էր կավից, բայց դրանց մեջ կյանքն ավելի ուժգին էր բաբախում, քան Ադամի սիրտը Եդեմի այգում: Սակայն հորեղբայր Ռաֆելն ինձ ժամանակ չտվեց: Մի քանի րոպեից արծանիկները վերցրեց սեղանիկից, հետ դրեց ու հանեց մի ուրիշ արծանախումբ: Այստեղ դանակ սրող կար, որը, ինչպես բանջարեղեն վաճառողը, շրջապատված էր մի խումբ մարդկանցով: Հորեղբայր Ռաֆելն ու ես կորցրեցինք ժամանակի զգացողությունը. նա մեկը մյուսի հետևից հանում էր արծանախմբերը՝ ոչ մի բառ չասելով, միայն հայացքով հետևում էր ինձ ու բեղերի տակից ժպտում: Մեկը ծովային ոզնիներ էր վաճառում, մյուսը՝ ձուկ: Հացթուխը՝ սայլի հետևում դրած մեծ քառակուսի փայտե արկղով, թիթեղագործը՝ զողիչը ձեռքին գետնին նստած, շրջապատված տարբեր ծաղկամաններով ու մետաղական դույլերով, օպունցիա վաճառողը, կոշկագործը: Բոլորը շրջապատված էին կանանց խմբերով, որոնք ինչ-որ բան էին զնում, սպասում կամ վիճում, սակարկում, իսկ շուրջը միշտ բազմաթիվ շներ ու կատուներ էին: Դեմքի արտահայտությունները հազարավոր պատմություններ էին պատմում: Կոշկագործը հոգևած էր երևում մի ամբողջ օր կոշիկների ներբանները մեխելուց հետո: Թիթեղագործը կորցրել էր կենտրոնացումը ցնցուղի հատակը գողելու ընթացքում: Բերանը բաց, աչքերը լայն բացած երիտասարդ տղան սպասում էր, որ օպունցիա վաճառողը փշոտ կեղևի միջից հանի ալ կարմիր միրգը: Ամեն ինչ ներկայացված էր կոբալտագույն-կապույտի, օքրայագույնի ու արևակարմիրի վառ գույներով:

Երբ հայրս ու ես ճամփա ընկանք դեպի տուն, ու հենց այն պահին, երբ ավտոբուսի ճոճքից համարյա քնով էի անցել, չգիտես որտեղից հանկարծ հասկացա, որ բոլոր կավե արծանիկները տարբեր էին, բացի շագանակագույն մազերով երիտասարդ կնոջից, որին առաջին անգամ տեսել էի, երբ գոզկոցը լայն բացած, սպասում էր դեղձերին: Նա կար բոլոր տեսարաններում: Մի տեղ ափսոսն ձեռքին սպասում էր, որ իր համար տասնյակին

## ԹՐԱՆՍ ԶԱՀՐԱ

մոտ ծովափներ մաքրեն, ապա կանգնած նայում էր, թե կոշկագործն ինչպես է ամառային կոշիկներ նորոգում, հետո կռացած ինչ-որ բան էր ասում թիթեղագործին. ու միշտ նույն կիսն էր, հազին նույն սև կիսաշրջագետտը՝ երկու դեղին կապերով, կապույտ-սպիտակ վանդակավոր զոզկոցով, կրեմագույն բլուզով և ուսերին գցած սև շալով: Թանձր շագանակագույն մազերը փայլում էին պահարանի ապակե դռների արանքով, իսկ դեմքի արտահայտությունը միշտ լուրջ էր, գրեթե արտասովորաբար:

Մոտ երկու տարի հետո հորս նշանակեցին Գոգոյի տարրական դպրոցի տնօրեն: Մենք ամբողջ ընտանիքով տեղափոխվեցինք Մալթա, և Շահրայում անցկացրած ժամանակն իմ կյանքի լավագույն չորս տարիներն էին: Ծանրացած սրտով ու արցունքոտ աչքերով հեռացա այնտեղից, երբ հորս տեղափոխեցին Բիրգեբբուջա: Մինչ մենք Գոգոյում էինք, մի քանի ամսվա ընթացքում մեկը մյուսի հետևից մահացան երկու հորեղբայրները: Առաջինը հեռացավ հորեղբայր Տաննին. նա մեքենայի տակ էր ընկել, երբ մտքով անցել էր ինչ-որ գործով գնալ Վալլետտա, իսկ հետո մահացավ հորեղբայր Ռաֆելը. սայթաքեց, ընկավ աստիճաններից և երկու օրվա ընթացքում մահացավ: Քանի որ նրանք վարձակալում էին տունը, սեփականատերը հետ պահանջեց այն ու վաճառեց: Չեմ հիշում, թե ինչ եղավ հորեղբայրներիս անձնական իրերի հետ: Բացի հորիցս, կային ևս վեց զարմիկներ ու զարմուհիներ, ու բոլոր անձնական իրերը հավանաբար բաշխվեցին նրանց միջև:

Մի ամիս առաջ մանկությանս ընկերներից մեկը, որը տարված է հին կահույքով՝ Սալվինու Դեգուարան, համոզեց ինձ գնալ աճուրդի: Ասաց, որ այնտեղ վաճառքի են հանվելու հազվագյուտ գրքեր: Իրականում գրքերը շատ էին, բայց բոլորն էլ այնքան թանկ էին, որ չէի կարող գնել, ուստի մի քիչ հիասթափված էի, մինչև որ աճուրդավարը հայտարարեց.

– Լոտ համար 67. կավե արձանախումբ, մալթական աշխատանք, նախորդ դար. բանջարեղեն վաճառող: Մեկնարկային գինը՝ հարյուր հիսուն եվրո:

Իմ առջև դրված էր հորեղբայր Ռաֆելի արձանախումբը: Գույները

խամրել էին, ներկը՝ շերտատվել, սեխով ձեր կնոջ ձեռքը պոկվել էր: Շունն այլևս չէր գրուցում ավանակի հետ, այլ գոտկատեղն ու գլուխը կոտրվել էին, ու հիմա ազատ ընկած էր կանաչ պղպեղի զամբյուղի կողքին: Բայց մնացած ամեն ինչ նույնն էր: Դա իմն էր, ու ես թույլ չէի տա, որ ինչ-որ մեկն ինձնից գողանար: Երբ սկսվեց աճուրդը, երկու մրցակից ունեի, բայց երբ հասա երեք հարյուրի, նրանք՝ նահանջեցին, ու աճուրդավարի մուրճն իջավ սեղանին:

Տունդարձի ճանապարհին ուրախությունից տեղս չէի գտնում, նույնիսկ ավելի երջանիկ էի, քան այն օրը Հալ Կիրկոպում: Որոնումներից հետո գտա մի վարպետի, ով մասնագիտացած էր կավե արձանների վրա, ու չնայած աշխատանքի համար պահանջեց այնքան, որքան արդեն վճարել էի աճուրդում, նրա աշխատանքը բարձրակարգ էր: Այն օրը, երբ տուն բերեցի արձանիկները, նաև այցելեցի հայրիկին՝ Սան Վինչենզի ձերանոց, և մենք պայմանավորվեցինք, որ հաջորդ կիրակի կգամ ու կտանեմ նրան, և նա օրը կանցկացնի իմ տանը. ամեն ամիս այդպես էինք անում:

Ութսուն տարեկանից հետո հայրս սկսել էր լաց լինել ամեն մի մանրուքի համար: Կիրակին եկավ, ու երբ նրան ուղեկցեցի հյուրասենյակ, տեսավ փոքրիկ սեղանի վրա դրված արձանիկները: Ստիպված հանեց ակնոցն ու գրպանից դուրս բերեց թաշկինակը: Չարմացած էր ինչպես այն օրը, երբ հորեղբայր Ռաֆելն առաջին արձանախումբը դրեց մահճակալի կողքի սեղանիկին: Հայրս օրորեց գլուխն ու սրբեց աչքերը: Անվստահ էր, բայց ժպտում էր: Հետո շատ կամացուկ ասաց.

– Մանուէ՛լան:

– Ո՞վ, հայրիկ: Ո՞ւմ մասին ես խոսում:

Թեև հայրս հիվանդ չէր, սկսել էր ամեն ինչ խառնել: Սկզբում շատ լավ էր խոսում, իսկ հետո հանկարծ ասում էր, թե երեկ բոլոր դպրոցականներին տարել է Բուսկետ՝ պիկնիկի: Ինձ թվաց, թե դարձյալ հիշողության այդ փոսերից մեկն է ընկել:

– Մանուէ՛լան, – կրկնեց նա ու ցույց տվեց շագանակագույն մազերով երիտասարդ կնոջը, որը բարձրացրել էր գոգնոցի փեշերը:– Նա գեղեցիկ էր և ուժեղ բնավորություն ունեւ, – շարունակեց՝ առանց աչքը նրանից

կտրելու և իր սովորական հանդարտ ձևով պատմեց մի պատմություն, որը երբեք չէի լսել, ու պատմեց այն առանց դադար առնելու:– Այն ժամանակ հորեղբայր Ռաֆելն ընդունվել էր Սանտա Լիբերատայի Կապուցինների միաբանություն՝ որպես աշխարհիկ վանական եղբայր: Ասում են՝ միշտ լուռ, տնակյաց կերպար էր: Հորեղբայր Տաննին շատ ավելի աշխույժ էր: Նա աշխատում էր բրիտանացիների մոտ ու կարգին փող էր վաստակում: Սկսեց հանդիպել Մանուելայի՝ գյուղի ամենազեղեցիկ երիտասարդ կնոջ հետ, ուսերին հասնող գանգուր շագանակագույն վարսերով: Նրանք արդեն հասել էին այն փուլին, երբ կարելի էր այցելել միմյանց տներ, և ամեն ինչ հարթ էր ընթանում, մինչև մի օր, երբ Մանուելան գնաց իր տատիկ-պապիկի մոտ, իսկ եղբայր Ռաֆելը նրանց այցի գնաց: Չգիտեմ, թե կոնկրետ ինչ պատահեց այդ օրը, բայց մայրս ասում էր, որ ինչ-որ առեղծվածային բան ժայթքեց, որը միավորեց Ռաֆելին ու Մանուելային: Մանուելան արագորեն խզեց կապերը Տաննիի հետ ու սկսեց գաղտնի հանդիպել Ռաֆելի հետ: Բայց օղն աչքեր ունի, պատերն՝ ականջներ, ու ամբողջ գյուղն ինչ-որ կերպ իմացավ այդ մասին: Ռաֆելի վանահայրը վրոնդեց նրան, ու ասում են՝ նա որոշ ժամանակ ապրեց մորաքույր Չեթթինայի մոտ: Նրա ծնողները՝ հորս պապն ու տատը, շատ էին ամաչում: Շատ լուրջ սկանդալ էր, և քանի որ նրանք հասկանում էին, որ էլ չեն կարող նայել գյուղացիների աչքերի մեջ, շուտով հավաքեցին իրերն ու տուն վարձեցին Հալ Կիրկոպում, որտեղ նրանց ոչ ոք չէր ճանաչում:

Հորեղբայր Տաննին շատ էր տառապում, գայրույթ ու ատելություն էր զգում եղբոր հանդեպ, իսկ Մանուելան կոտրել էր նրա սիրտը: Բազմաթիվ կամակներ գրեց նրան, խնդրեց, որ ծխական քահանան իր անունից խոսի նրա հետ, բայց ամեն ինչ ապարդյուն: Մանուելան սիրտը կփրկել էր Ռաֆելին: Բայց ինչպես մայրս էր սիրում ասել, Աստված ըստ պահանջի չի հատուցում: Մանուելան ծանր հիվանդացավ ու շուտով մահացավ: Բուրբոն կարծում էին, թե կյանքի այս գլուխն ավարտվեց: Բայց եղբայրներն այդպես էլ չներեցին իրար: Տաննին ասում էր, որ եղբայրը գողացավ իր հարսնացուին, Ռաֆելն էլ ասում էր, որ եղբոր կամակները Մանուելային հասցրին խելագարության ու սպանեցին նրան:

Տատիկս ու պապիկս ի վերջո ներեցին Ռաֆելին ու հետ ընդունեցին նրան Հալ Կիրկոպի իրենց տուն, ու քանի դեռ նրանք ապրում էին, թվում էր, թե ամեն ինչ փակվել ու մոռացվել է: Բայց նրանց մահով Ջաննիի ու Ռաֆելի միջև սկսվեց սառը պատերազմը:

Բանջարեղեն վաճառողի արձանախումբը դեռ իմ տանն է, հյուրասենյակիս պահարանի ապակե դռան հետևում: Կորալտագույնն ու օքրայագույնը վերադարձել են ու վառ են, ինչպես տարիներ առաջ, ու երբ մտնում եմ սենյակ, ինձ ողջունում է Մանուելայի տխրադալուկ դեմքը: Նա նայում է կշեռքին՝ չիմանալով, թե այն որ կողմ կթեքվի, ու դեռևս սպասում է, որ միրգը թափվի գոգնոցի մեջ: Ու երբ փչում է հյուսիսային քամին, լսում եմ, թե վանահայրն ինչպես է կանչում.

– Գո՛ղ: Գո՛ղ:

Ու տեսնում եմ, թե ագարակատերն ինչպես է բարձրացնում քլունգը և շրջվում՝ փորձելով փախչել: Բայց չի կարողանում:

## ԿԱՐԱՐԱՀԵՐԸ

Լավ հիշում եմ, թե առաջին անգամ ինչպես պատահեց: Կիրակի էր, 2010 թվականի ապրիլի 18-ը, երբ Պապն այստեղ էր: Վալլետտայի ափին նա հանդիպում էր երիտասարդների լեզեոնների հետ, իսկ ես, անկողնում պառկած, ուղիղ եթերով հետևում էի հանդիպմանը: Տեսախցիկը դանդաղ սահում էր բազմության վրայով, որպեսզի մեզ ցույց տա այնտեղ հավաքված հազարավոր մարդկանց. նրանք դրոշներ էին թափահարում, ցատկոտում, երգում, ցուցանակներ բարձրացնում: Հետո հանկարծ վայրկյանի մեկ հարյուրերորդական պահին կանգ առավ մի մարդու վրա. է՛ս էի: Այո, ես ինձ տեսա բազմության մեջ, սպիտակ շորերով, կարմիր գանգուրներով աղջկա ձեռքը բռնած: Ամփջապես ուղղվեցի անկողնում և տրորեցի աչքերս, բայց մինչև նորից կնայեի, նրանք անհետացել էին: Հաստատ աչքիս էր երևացել: Ես այստեղ, անկողնում, հեռուստացույց էի դիտում: Ինչպե՞ս կարող էի այդ նույն պահին Վալլետտայի ափին լինել: Հաստատ այդ մարդն ուղղակի նման էր ինձ: Բայց մի վայրկյան սպասեք. հեռուստացույցի ես-ը իմ կապույտ շապիկով էր՝ կանաչ ու սպիտակ գծերով. այդ շապիկն Ամանդան էր նվիրել անցած տարի, երբ քսանմեկ տարեկան դարձա: Հեռուստացույցի տղան չի կարող ուրիշ մարդ լինել, ես եմ: Իսկ ո՞վ էր ձեռքս բռնած աղջիկը: Ինչ էլ շքեղ մազե՛ր ուներ. փայլուն, կարմիր նարնջի պես, խոշոր ու ու ծիգ, միմյանց փաթաթված գանգուրներ: Ամանդան չէր:

Մի քանի օրից լրիվ մոռացա այդ մասին: Երևի մի վայրկյան քնով էի անցել ու երազ էի տեսել: Այո, այդպես էլ կար: Բոլորը գիտեն, թե ես ինչ արագ եմ քնում: Ամանդան մի անգամ ծաղրեց ինձ. մեքենայի մեջ հենց նոր սեր էինք արել, երբ նա սկսեց խոսել ինչ-որ բանի մասին: Մոտ տասնհինգ րոպե անդադար խոսում էր, մինչև որ լսեց խոմփոցս: Հաստատ այս անգամ էլ էր այդպես պատահել: Վայրկյանական քնով էի անցել ու երազում ինձ տեսել էի այս երիտասարդների մեջ:



Այդպես էլ կշարունակեի ինքս ինձ այդպես բացատրել, եթե նորից չկրկնվեր: Ես սիրում եմ անկողնում պառկած հեռուստացույց դիտել: Երկրորդ անգամ լուրերն էի նայում, որտեղ տեսանյութ էին ցույց տալիս նախօրեին տեղի ունեցած MTV կղզու համերգի մասին: Ես չկարողացա գնալ. մոռացել եմ, թե ինչու, բայց կարևոր չէ: Եվ հանկարծ բազմության մեջ տեսա ինձ, համարյա առաջին շարքում: Հագիս նույն կապույտ զուլավոր շապիկն էր, և կողքիս՝ դարձյալ սպիտակ շորերով կարմրահեր աղջիկը: Հիմա հաստատ երազ չէի տեսնում: Տեսախցիկը բավական երկար կանգ առավ մեզ վրա, ուստի հանգիստ ուսումնասիրեցի նրան: Նա նայում էր ոչ թե բեմին, այլ ինձ, հեռուստացույցի ինձ: Ու նորից երկու ձեռքով բռնել էր ձեռքս, ու դեմքին դարձյալ տխրություն կար: Այս անգամ այնքան ցնցված էի, որ ինձ թվաց՝ սենյակը պտտվում է շուրջս: Նույնիսկ մահճակալից վեր կենայրու ուժ չունեի: Ի՞նչ էր կատարվում ինձ հետ: Խելագարվո՞ւմ էի: Այդ աղջիկն ինչո՞ւ է միշտ ինձ հետ: Այնքան շփոթված էի, այնպե՛ս էի ցնցվում, որ անմիջապես քնով անցա:

Գաղափար չունեմ, թե քանի օր կամ շաբաթ էր անցել: Միայն վստահ եմ, որ հաջորդ դեպքը տեղի ունեցավ 2010 թվականի օգոստոսի 16-ին՝ նորին գերազանցություն Էմերիտուսի նախագահ Գուլիդե դե Մարկոյի թաղման օրը: Մինչ զինվորները դագաղը տեղավորում էին դիակառքի մեջ, իսկ հավաքված բազմությունը բղավում էր՝ Գուլիդո՛, Գուլիդո՛, այնտեղ նորից տեսա ինձ՝ սպիտակ շորերով աղջկա հետ: Այս անգամ տեսախցիկը, թվում էր, փորձում է միտումնավոր ցույց տալ ինձ, որ իսկապես ես եմ: Այն սկսեց հանդարտ մոտենալ մեզ, ու ես տեսա, որ աղջիկը դեմքի նույն տխուր արտահայտությամբ նայում էր աչքերիս մեջ, շոյում մազերս: Եվ հագիս էլի նույն կապույտ շապիկն էր, թեպետ այս անգամ նկատեցի, որ այն ամբողջությամբ ներկոտ է ու բծավոր: Հիմա բոլորովին կասկած չկար: Մինչ Համար մեկ-եսը իմ տնից հեռուստացույցով հետևում էր թաղման արարողության ուղիղ հեռարձակմանը, Համար երկու-եսը Վալլետտայում մասնակցում էր այդ նույն արարողությանը, ընդ որում, մի կնոջ հետ, որին չէի ճանաչում: Մարմնովս սառը քրտինք անցավ: Սկսեցի ցնցվել, աչքերս

## ԹՐԱՌԻ ՁԱՀՐԱ

լայն բացեցի ու բղավեցի:

Բուժքույրը սեղմեց շտապ օգնության կոճակը, և մի վայրկյանում ներս վազեցին ուրիշ բուժքույրեր և մի բժիշկ:

– Երկու անգամ սեղմեց ձեռքս, – ասաց բուժքույրը բժշկին, – և շարժում է աչքերը:

Բոլորը գիտեին, որ Կարոլին Չամմիթը նվիրված բուժքույրերից մեկն էր, բայց այդ երիտասարդի հանդեպ սովորականից ավելի ուշադիր էր: Այն պահից, ինչ տեսավ, թե նրան ինչպես բերեցին՝ ամբողջությամբ արյան մեջ թաթախված կապույտ գուլավոր շապիկը հագին, կինը տարվեց նրանով: Ամեն ինչ անում էր, որ հերթափոխները փոխի գործընկերների հետ և հնարավորին չափ շատ ժամանակ անցկացնի նրա մահճակալի մոտ: Համարյա հինգ ամիս էր, ինչ կոմայի մեջ էր. աչքերը չէին կենտրոնանում, մշտապես անթարթ նայում էր հեռուստացույցին: Նա երկու ձեռքով բռնում էր երիտասարդի ձեռքը, թեև նրա ձեռքի մեջ կյանքի թույլ նշույլ անգամ չկար: Այնուամենայնիվ, մնում էր նրա կողքին, շոյում մազերն ու շարունակում հուսալ:

– Տես՛՞ք, նորից սեղմում է ձեռքս, – նորից ասաց նա բժշկին:

Այդ պահին երիտասարդը դեմքը շրջեց բուժքրոջ կողմն ու կամացուկ ասաց.

– Քո մազերից ավելի գեղեցիկ կարմիր մազեր երբեք չեմ տեսել:

## ԵՐԵՎԱՆԻ ՄԵՐ ՀՈՍԱՆՔԸ ԱՆՋԱՏԵԼ ԷՒՆ

Անցած գիշեր մեր հոսանքն անջատեցին, և «Յոթ քույրերն ու շունը»՝ իմ երիտասարդության աստղերը, ևորից վառվեցին երկնքում: Պաստառի հետևից բարձրացավ լուսնի տաշեղը, եկավ, որ լսի հայրիկիս պատմությունները փոքրիկ թզուկների մասին, որոնք գիշերները ուրախ-զվարթ թռչկոտում են լույսի թփերի տերևների տակ՝ ծեռքերին լապտերիկներ: Անցած երեկո մեր հոսանքն անջատեցին, և մայրս դուրս եկավ կրիայի պատյան հիշեցնող կազմով ֆոտոալբոմից, կոշիկը ծեռքին. ևս ընկել էր թռչնի չափ ուտիճի հետևից, իսկ այդ ընթացքում կրտսեր քույրս սեղանի վրա կանգնած բղավում էր, իսկ հայրս գետնընկույզի դատարկ կեղևներ էր նետում վրան, որ էլ ավելի վախեցնի: Պարտեզի պատի վրա հայտնվեց երկու լուսատուիկ՝ դողացող լույսով. իսկ ինձ թվում էր՝ դրանք ընդմիջտ անհետացել էին: Սողում էին դանդաղ, դանդաղ, ու երբ տեսողությունս հարմարվեց խավարին, հասկացա, որ հայրս իրավացի էր. բոլորովին էլ լուսատուիկներ չէին, այլ լապտերիկ պատրաստողներ, որ թզուկները չարաճճիություններ անեին լույսի թփերի մեջ: Օղափոխիչներից զրկված մարդիկ ևորից դուրս եկան մայթեր՝ հանելով ծավվող բրեզենտե աթոռները, և սկսեցին պատմել ուրվականի պատմությունը, որը հարստություն է բերում նրանց, ովքեր լուռ են, և պատժում ու հաշմում նրանց, ովքեր չափից շատ են խոսում:

Անցած գիշեր մեր հոսանքն անջատեցին, և երկնքից տարածվեց աստղային գիշերվա բույրը, ու լուսնի տաշեղը, որ բարձրացել էր պաստառի հետևից, բերեց վայրի սեխի բույրը: Երբ պատմությունների շատրվանը չորացավ, ու քնելու ցանկությունը հաղթեց մեզ, ծավեցինք կտորից աթոռներն ու ներս գնացինք: Լուսատուիկներին թողեցինք իրենց մենության մեջ. թող զրուցեն փոքրիկ թզուկների և ուտիճի հետ, որին մայրիկս այդպես էլ չկարողացավ խփել կոշիկով: «Յոթ քույրերը» շարունակում էին հետապնդել Շալը՝ աչքով տալով իրար, ինչպես իմ երիտասարդության երկնքում:

Անցած գիշեր մեր հոսանքն անջատեցին: Ավելի ճիշտ՝ անցած գիշեր լույսը վերադարձավ:

## Մոռագածը

Եվս մի քանի ամիս, և կլրանա քո մահվան քսանհինգ տարին: Ես ստիպված եղա կանգ առնել ու հաշվել, որ հասկանամ, թե ինչքան ժամանակ է անցել: Ամեն անցնող տարվա հետ քո պատկերը փափկում է, ինչպես արցունքներով ողողված ջրաներկը, մի ակնթաթթում, ինչպես ծիածանն արևային անձրևի տակ: Դեմքիդ միակ նկարը, որ հստակ արտացոլված է իմ մտքում, նայում է ինձ քո սև-սպիտակ լուսանկարից. նստած ես հյուրասենյակում: Այդ պատկերն այնքան հզոր է, որ երբ փորձում եմ մտածել, որ սովորականի պես շարժվում ես խոհանոցում, քեզ տեսնում եմ մոխրագույնի սավերների մեջ:

Մոռացել եմ նույնիսկ ձայնիդ տեմբրը: Երբեմն առանց պատճառի արթնանում եմ գիշերվա կեսին՝ փորձելով հիշել, թե ինչպիսին էր ձայնը: Քաղցր էր, թե՛ մեղրածոր: Բա՞րձր, թե՛ ցածր: Խռպո՞ւտ, թե՛ դողդոջուն: Կուզեի պարտիտուրա լսել՝ քո ձայնի նոտաներից, լի այն մեղեդիներով, որոնք հյուսում էիր ծիծաղիդ ու վեճերիդ մեջ, զայրացկոտ նոտաներով ու քնքուշ նոտաներով: Միևնույն անգամ այն լի է դադարներով, և իմ հարցերի հեղեղը ճեղքում է պատեշը: Ինչի՞ մասին էինք խոսում, երբ տուն էի գալիս ճաշելու, և արդյոք միայն երկուստ՞ով էինք լինում: Ի՞նչ էինք քննարկում: Ի՞նչ ծրագրեր մշակում: Ամառային երեկոներին, երբ ամեն օր զբոսանքի էինք գնում Ուիդ իլ-Աայնից Սուրբ Թոմասի ծովածոց ու հետ, ի՞նչ էինք խոսում: Հնէաբանի պես արագորեն սկսում եմ փորփրել անցյալի շերտերն ու հուսալ, որ կգտնեմ մի բեկոր, որի վրա խզբզված կլինեն քո օգտագործած բառերը: Բայց կանգնած եմ այստեղ, ձեռնունայն, և մատներիս արանքով սահում-ընկնում եմ դատարկության բեկորները: Երբ եղբայրներս ու քույրերս հիշատակում են ժամանակին քո ասած խոսքերը, ինձ թվում է, թե խոսում են անձանոթի մասին, որին երբեք չեմ ճանաչել:

Ես մոռացել եմ կարդիզաններիդ հոտը, որովհետև ինձ դուր չէին գալիս նրանք, որ ինձ էին բաժին ընկնում, երբ դասավորում ու բաժանում

Էինք: Այստեղ քեզնից ոչինչ չի մնացել. ոչ կարողգան, ոչ կիսաշրջագգեստ, ոչ շապիկ: Կամ եթե նույնիսկ ժամանակ առ ժամանակ հայտնվում է մի փոքրիկ կտոր, անմիջապես ազատվում եմ, որ չտրվեմ դրա մեջ ինձ թաղելու ցանկությանը: Պատահում է, երևակայում եմ, թե վերադարձել ես, և ուրախությամբ ընդունում ես այն բոլոր փոփոխությունները, որ այս քսանհինգ տարիների ընթացքում արել եմ այս տանը: Ուշադիր զննում ես նոր կաղնեփայտից դռները, նոր խոհանոցը, որը հիմա ավելի մեծ ու գեղեցիկ սենյակում է, մեխակներով ու խորդենիներով ողողված կտուրը, ժամանակակից լոգարանները: Ինձ ասում են՝ այնքան գոհ ես, որ հոգ եմ տարել տան մասին, ու որ իմ շնորհիվ հիմա այն շատ ավելի գեղեցիկ է, քան երբևէ կարող էիր պատկերացնել: Երբեմն էլ նկատում եմ, թե ինչպես են հոնքերդ բարձրանում ամեն ինչին նայելիս, ու դու լրջանում ես, շրջվում իմ կողմն ու ասում. «Քեզ ո՞վ է խնդրել, որ գլխիվայր շրջես տունս: Որտե՞ղ է ճաշասենյակը: Ի՞նչ իրավունքով ես փոխել խոհանոցը, որն այնքան շատ էի սիրում: Սա այլևս իմ տունը չէ»: Հետո շտապում ես դուրս՝ վերադառնալու այնտեղ, որտեղից եկել ես: Ու երբ տեսնում եմ, թե մառախուղն ինչպես է կուլ տալիս քեզ, սկսում եմ կասկածել՝ ապրե՞լ ես արդյոք: Գուցե իմ պատմություններից էիր հյուսված, գուցե մեկն էիր այն կերպարներից, որոնց հետ ապրում եմ, մտերմանում եմ, մինչ հյուսվում է պատմությունը, բայց որոնք անմիջապես և ընդմիջտ անհետանում են, հենց որ գրվում է վերջին նախադասությունը, ու ես փակում եմ նոթատետրը:

Պիտի խոստովանեմ, որ Մոռացության քաղցր հրեշտակն իմ սիրտն է մտել ու տարել այն, ինչ մի ժամանակ քոնն էր: Երբեմն անիծում եմ նրան, ուզում եմ վռնդել իմ տնից: Բայց դրա ժամանակն անցել է: Մոռացությունը կարողացել է ավելի խոր թաղվել, քան ես կուզեի, տարածել է իր արմատներն ու խճճվել իմ մտքում և հոգում: Հավանաբար մի օր նույնիսկ կմոռանամ, թե ով եմ: Ո՞վ գիտի, գուցե հենց այդ ժամանակ նորից գտնեմ քեզ:

## ՏՈՒՆ

Ամեն անգամ, երբ Radio Maria-ի հետ աղոթք էր արտասանում, Սալվինան երբեք չէր մոռանում սրտաբուխ աղոթքով շնորհակալություն հայտնել Մեր տիկնոջն ու Սուրբ Աստուծոսին, որոնց ջերմեռանդորեն նվիրված էր, որովհետև նրանք օգնել էին իրեն, երբ քիչ էր մնում կորցնել աջ ոտքը: Ավելի քան յոթ տարի էր անցել այդ օրվանից, բայց Սալվինան երբեք չէր մոռանում: Նա դեռ միայնակ ապրում էր իր տանը, որն անբիծ-մաքուր էր պահում՝ նախասրահից մինչև տանիքի դուռը. դեռ հագուստ էր փռում, գնումներ կատարում ու սնունդ պատրաստում, և այդ ամենը՝ մեն-մենակ ու կայծակնային արագությամբ: Բայց մինչև այսօր ոչ մի կերպ չի հասկանում, թե ոտնաթաթն ինչու հանկարծ այդպես կարմրեց ու կոշտացավ: Ճիշտ է, երբեք առանձնապես ուշադրություն չէր դարձնում իր սննդակարգին, երբեք բաց չէր թողնում կես տուփ թխվածքաբլիթը ժամը չորսի մի բաժակ թեյի հետ: Եվ քնելուց առաջ՝ շոկոլադի մի քանի սալիկ, իսկ երբ դուրս էր գալիս նպարտդենի խանութից, մի բաժին թուրքական հալվա էր ուտում: Բայց երբ այլևս չէր կարող դիմանալ ցավին, ստիպված եղավ գանգել բժիշկ Սպիտերիին, ու բժիշկը նրան ուղիղ հիվանդանոց ուղարկեց: Հետո միանգամից շատ բաներ եղան՝ ռենտգեն հետազոտություններ, բուժումներ ու վիրակապեր. և այդ ամենն ավարտվեց նրանով, որ դուստրը՝ Սոնիկան, Կանադայից սլացավ այստեղ, որ իրավիճակն իր ձեռքը վերցնի: Եվ օրերից մի օր Սալվինան հասկացավ, որ հայտնվել է ձերանոցում:

Բայց գոնե իր երկու ոտքի վրա էր եկել այստեղ, շնորհիվ Մեր տիկնոջ և Սուրբ Աստուծոսի սուրբ միջնորդության, անխառով պնդում էր Սոնիկան:

– Մամ, դու այլևս չես կարող մենակ ապրել, – ասաց նա ու հիշեցրեց մորը, որ նա համարյա ութսուն տարեկան է, և ամեն անգամ չէ, որ ամեն ինչ ինքնիրեն կստացվի: Եվ Սոնիկան էլ չէր կարող Կանադայից Մալթա հասնել ամեն անգամ, երբ մոր սիրտն էլի հալվա ուզեր: Բայց Սալվինան չէր կարող հաշտվել այն մտքի հետ, որ ստիպված է հեռանալ իր տնից և փակվել տարեց մարդկանց համար նախատեսված ինչ-որ տանը:

– Բախտդ բերել է, Սուրբ Ազնեսի տունը քո տևից երկու քայլի վրա է, մամ, – շարունակեց աղջիկը՝ էլ ավելի կոշտ պնդելով:– Դու հո բանտ չես գնում: Երբ ուզես, կարող ես ոտքով գնալ տուն ու որոշ ժամանակ մնալ այնտեղ: Ընդամենը հինգ րոպեի ճանապարհ է: Ավելի լավ տարբերակ չէր էլ կարող լինել:

Եվ հիմա այստեղ էր, մահճակալի մեջ կծկված, ու ապահով սենյակը կիսում էր իրենից քիչ ավելի տարիքով կնոջ՝ Ռոզարիայի հետ: Եթե չհաշվենք այն, որ այս Ռոզարիան օրվա մեծ մասն անցկացնում էր համրիչների հուլունքները, թաշկինակը, սենյակի բանալին, ընթերցելու ակնոցը փնտրելով և անվերջ մեղադրում էր Սալվինային, թե իբր նա է թաքցրել, հավանաբար կկարծեք, որ նրա կյանքն այնքան էլ վատ չէ: Այս երեկո օդը ծանր էր, մութն էլ շուտ ընկավ, ուստի Սալվինան ու Ռոզարիան ստիպված եղան գնալ քնելու Radio Maria-ի հետ աղոթք ասելուց անմիջապես հետո: Լսվում էր, թե քամին ինչպես է մոլեգնում Լուրդեսի Աստվածամոր արձանի շուրջ: Սալվինան լսում էր, թե անձրևն ինչպես է քերծում պատուհանները: Ռոզարիան արդեն խոմփացնում էր, բայց Սալվինան նույնիսկ չէր փակել աչքերը: Փոթորիկները միշտ ազդում էին նրա վրա: Առաջ, երբ դեռ մենակ էր ապրում, վախենում էր դրանցից: Կայծակի ճայթյունը սարսափեցնում էր նրան: Այստեղ գոնե մենակ չէր, ու եթե հանկարծ անձրևը ներս լցվեր պատուհանի շրջանակից, ընդամենը կտեղմեր կարմիր կոճակը, ու ինչ-որ մեկը կգար ու կտեսներ: Իսկ եթե ջուրը հիմա իր տո՞ն է լցվում: Ամեն անգամ, երբ հյուսիսից անձրև էր գալիս, լցվում էր պատշգամբի դռան տակ: Մի անգամ նույնիսկ հատակի տակ էր լցվել ու կեղտոտել հյուրասենյակի առաստաղը: Որտեղի՞ց իմանար՝ այսօրվա անձրևը հյուսիսից էր, թե ոչ: Այստեղ տեղափոխվելուց հետո կորցրել էր ուղղությունները զգալու ունակությունը: Օ՛հ, և երբեմն անձրևը լցվում էր այգու դռան տակից: Եվ օ՛հ, հիմա փոթորիկն ուժեղանում էր: Սենյակը հանկարծ լուսավորվեց կայծակի հզոր ճայթյունով, ու նա արագորեն ծածկեց գլուխը ծածկոցով: Սարի՛ն Սանտա: Ամպրոպի ինչպիսի՛ հարված: Ռոզարիան ինչպե՞ս էր շարունակում քնել այս ընթացքում: Ամենայն հավանականությամբ, այս անգամ անձրևը պատշգամբի կողմից էր, ու եթե ոչ ոք չմաքրեր, հյուրասենյակի

առաստաղն ավելի կկեղտոտվեր: Ամպրոպն այնպե՛ս էր ծանրացել սրտին. սիրելի տունը մենակ է մնացել, իսկ ինքն ընդամենը մի քանի քայլ հեռու է, բայց չի կարող առաջվա պես հոգ տանել դրա մասին: Համենայն դեպս գալլետտի բույսերը մի լավ կթրջվեն այս անձրևից: Այնպե՛ս էր հպարտանում դրանցով: Երբ ամուսինը՝ Գուստավը, շուկայից նրա համար գնեց առաջին գալլետտին, սիրահարվեց թխվածքաբլիթ հիշեցնող փայլվիուն տերևներին: Հաջորդ տարի արդեն նոր բույսեր աճեցրեց, իսկ ևս մի տարի հետո՝ ավելի շատ, մինչև որ բակն ամբողջությամբ վերածվեց գալլետտիների ջունգլիի: Հարևանները զարմացած էին ու միշտ ասում էին, որ երբեք ավելի գեղեցիկ ծաղիկներ չեն տեսել: Թվում էր, թե նրա այգում գալլետտիներն աճում են նույնիսկ սալիկների ճեղքերից: «Տեսես դեռ ո՞րջ են», – մտածեց Սալվինան: Նախորդ տարի՝ ամռանը, Ռոզարիայի որդին ասաց, որ շատ տաք հարավային քամի է փչել, որն այրել է իր դեղձենու կեղևը: Ով գիտի, գուցե քամին անցել է նաև իր պարտեզի վրայով ու չորացրել բոլոր գալլետտիները:

Եկեղեցու ժամացույցը մեկն անց տասնհինգ րոպեն ազդարարեց նույն զևգոցով, ինչ պապիկի ժամացույցն իր տան սանդղահարթակում: Ամեն երեկո քնելուց առաջ նա բացում էր երկար ու փուչ արկղն ու ձգում շղթաները, որ կշռաքարը բարձրանա: Այդ ժամացույցը երբեք ոչ մի վայրկյան հետ չէր ընկնում ու առաջ չէր ընկնում: Այն գնել էին կահույքի ամենամյա տոնավաճառում, երբ դուստրը՝ Մոնիկան, դեռ նշանված էր: Գուստավին ավելի շատ հետաքրքրում էր փոքրն ու Էժանը, իսկ ինքը տատանվում էր. չէր ուզում ասել նրան, որ խենթանում է առաջինի համար: Բայց Մոնիկան նկատեց:

– Վայ չէ՛, հայրիկ, այդ մեկը մի՛ գնիր: Ախր շատ տգեղ է: Տե՛ս այն մեկը, դրա կողքին, ավելի դասական է: Վերջիվերջո, ժամացույցը մի անգամ են գնում:

Գուստավը երբեք աղջկան ոչ մի հարցում չէր մերժում, ուստի նրա օգնությամբ Սալվինային հաջողվեց ձեռք բերել իր ուզած ժամացույցը: Բայց Գուստավի մահից մոտ մեկ ամիս հետո, երբ գնում էր քնելու, նկատեց, որ բարձր արկղի ներսից իրեն անթարթ նայում է Գուստավի դեմքը: Զգաց, թե



սառը դողն ինչպես անցավ մարմնով, մինչև որ հասկացավ, որ դա ընդամենը դիմացի պատին կախած Գուստավի լուսանկարի արտացոլանքն է: Հաջորդ իսկ առավոտյան այն փոխարինեց իր նկարով:

Այդուհետ Սալվինան տեսնում էր իր դեմքը (ժամացույցի փոքր սլաքը դանդաղ շարժվում էր այտի վրայով) ամեն անգամ, երբ ձգում էր շղթաներն ու զգում սրտի բաբախյունը ճոճանակի նույն դանդաղ ռիթմով: Նա հիշում էր Գուստավին, ով փակել էր աչքերն ու ընդմիջտ հեռացել: Եվ Մոնիկային, ով նույնպես գրեթե ընդմիջտ հեռացել էր: Ով գիտի, պապիկի ժամացույցը գուցե նույնպես ընդմիջտ լռել է. չկա ոչ ոք, ով կբարձրացնի կշռաքարերը: Ուղղակի մնացել է սանդղավանդակում կանգնած, փոքր սլաքը՝ իր ճակատի կենտրոնում, ու իր պես մտածում է Գուստավի, Մոնիկայի ու բոլոր նրանց մասին, ովքեր հեռացել էին կամ շուտով պիտի հեռանային:

Քամին հանդարտվեց, ու հանգստացնող ռիթմով սկսեց անձրև թափվել: Կարծես Սուրբ ծննդյան եղանակ լիներ: Իհարկե, մտածում էր, արդեն համարյա նոյեմբերի կեսն է, շուտով կսկսեն զարդարել միջանցքներն ու ճաշասենյակը: Նախասրահում կտեղավորեն Բամբինին: Այն նման է իր «Մանուկ Հիսուսին», մտածեց, նրան, որ ինքն ու Գուստավն էին գնել պարոն Կորդիլանի խանութից իրենց առաջին համատեղ Սուրբծննդյան տոնի համար: Բայց իրենն ավելի գեղեցիկ էր, քան այստեղ դրվածը: Նրա մաշկը վարդագույն էր ու նուրբ, ինչպես Մոնիկայինը լոգանքից հետո, երբ նա ցանում էր Johnson's Baby փոշին: Սալվինան միշտ Բամբինին դնում էր աստիճանների տակ՝ անտիկ սնդուկի վրա, որ մայրն էր թողել իրեն: Հիմա աչքերը լայն բացած պառկած էր պահարանի մութ արգանդում. սպասում էր դեկտեմբերին ու հույս ուներ, որ նորից կծնվի:

Բայց ինչո՞ւ երբեք չվերադարձավ, չստուգեց զալլետոտիները, պապիկի ժամացույցը, Բամբինին, հյուրասենյակի կեղտոտված առաստաղը, իր համար թանկ բոլոր իրերը: Մոնիկան իրավացի էր. տունն ընդամենը մի քանի քայլի վրա էր: Բայց հետո, ախր ոտքերն այնքան ուժեղ չեն, որքան առաջ, և շուկն զտրվում է: Դե, հետո էլ այս վատ եղանակը...

Բայց երբ քնով անցավ, ու մինչ անձրևը թխկթխկացնում էր պատուհանի ապակիներին, Սալվինան աղոթեց Սուրբ Անտոնիոսին, որ հաջորդ

օրը եղանակը լավ լինի, ու որ ինքը կարողանա գնալ ու մի լավ ուսումնասիրել տունը:

Եվ, ինչպես միշտ, սուրբը լսեց նրան:

Հաջորդ առավոտ բացեց մահճակալի սեղանիկի դարակն ու հանեց շագանակագույն դրամապանակը, որտեղ խնամքով թաքցնում էր տան բանալին: Այնքան վաղուց չէր օգտագործել: Եվ այնքան վաղուց էր իր մոտ, ավելի քան հիսուն տարի: Հիշում էր, թե ինչպես էր երկու կողմից բացում շքամուտքի հին երկփեղկ դուռը, որ տեղ ազատի Մոսկվայի սայլակի համար, ինչպես էր բացում, որ ներս տանի գնումների մեծ տոպրակները: Հետո եկավ ժամանակ, երբ ընդամենը մի դուռ էր պետք, և նրան դիմավորում էր միայն պապիկի ժամացույցի թկթկոցը այն օրվանից, երբ Մոսկվան մեկնեց Կանադա, իսկ չորս տարի անց ընդմիշտ հեռացավ Գուստավը: Նա նայեց բանալուն, որի վրա փորագրված էր Միության առևտրային նշանը, ապահով տեղավորեց այն դրամապանակի մեջ ու սկսեց կրիայի դանդաղ քայլերով շարժվել դեպի տուն: Ուզում էր ժամանակն անցկացնել բույսերի հետ զրուցելով: Ուզում էր մի քիչ փոշի ցանել Բամբինի մաշկին: Ինչպե՞ս կարելի էր չսիրել Սուրբ Աստուծոսին: Շունչն այնքան էլ չէր կտրվում, որքան սպասում էր, իսկ ոտքերը հրաշալի ծառայում էին: Արդեն հասել էր Տոնիի նպարտեղենի խանութ: Մտում էր միայն թեքվել անկյունում, անցնել Լեյիի ավտոտնակի կողքով ու թեքվել իր փողոց: Չէր լսել, որ Գրեյսիի տունը քանդել են: Ի՞նչ էլ տգեղ բազմաբնակարան շենքով են փոխարինել: Եվ Սարիա՛ Սանտա: Միայն տեսնեք, թե քանի մեքենա է կայանաճ այնտեղ:

Այնտե՛ղ, հեռվից նկատել էր իր տունը: Երանի կարողանար վազել այնպես, ինչպես անում էր առաջ, երբ Մոսկվային տնից հանում էր սայլակով, ու երբ վերադառնում էին տուն, ասում էր նրան՝ հասա՛նք, տանն ենք, ու վազում էր դեպի դուռը, որ գվարճացնի Մոսկվային:

Ահա արդեն հասավ: Հենվել էր դիմացի ցածրիկ պատին՝ հանգստանալու: Իր տունն էր: Շեմին ու դռան դիմացի անկյունում թերթերի ու ամսագրերի, հայտարարությունների ու ծանուցագրերի տրոցակ էր: Ամեն ինչ ծածկված էր մեքենաների փոշով ու մրով: Շներն ու կատուները հարմար տեղավորվել էին անկյունում: Դռների բռնակները ժամանակի ըն-

թացքում կանաչել էին: Շերտավարագույրները փոշուց սպիտակել էին: Պատշգամբի պատուհաններից ոչինչ չէր երևում:

Արդեն հասել էր բանալին, երբ կանգ առավ դռան մոտ: Մտածեց, որ նորից կլսի պապիկի ժամացույցի հառաչանքը, հետո շղթաները տեղի տվեցին, ու կշռաքարերն ընկան: Աչքերը փակ՝ տեսնում էր իր ու Գուստավի դեմքերը, արտացոլված երկար ապակե արկղի վրա:

Միության բանալին վերադարձավ դրամապանակի մեջ, իսկ նա դեռ տեսնում էր վարդագույն մաշկով Բամբինին՝ դատարկ մթության մեջ աչքերը լայն բացած, ու դեռ լսում էր սանդղահարթակին հանգրվանած ժամացույցի արկղի դողն ու ճռռոցը:

Եվ Սալվինան դանդաղ քայլերն ուղղեց դեպի տուն:

## ԵՊԵՏԱԿԱ ԱՐԻԱԳՈ

Ամեն տարի՝ Լոյեմբերի երկուսին, լուսադեմին, Կաստել դի Բիագոյի երեխաներն արթնանում են, դեն նետում ծածկոցներն ու դուրս ցատկում անկողնուց, չնայած որ եղանակն արդեն ցրտում է: Ցանկացած ուրիշ օր նախընտրում էին ավելի երկար թավալ տալ անկողնում, մինչ մայրերն ամբողջ կոկորդով գոռում էին, որ վեր կենան: Բայց ո՛չ այսօր: Վենց որ ծածկոցները մի կողմ են նետում, անմիջապես սուզվում են իրենց մահճակալների տակ, որպեսզի իմանան՝ արդյոք այնտեղ սպասո՞ւմ է կնոջ կամ տղամարդու կերպարանքով, տիկնիկի չափսի շաքարապատ արձանիկ: Դրա ներկայությունը հաստատում է, որ իրենց լավ են պահել, լսող երեխաներ են եղել, և որ վերջերս կյանքին հրաժեշտ տված հարազատները հիշում են նրանց ու յուրաքանչյուրի համար նվեր են թաքցրել: Շաքարապատ արձանիկը գտնելուն պես վազում են տնով մեկ՝ ամենուր փնտրելով իրենց նվերները:

– Միգուցե խոհանոցի պահարանո՞ւմ է: Չէ՛, չէ՛, այստեղ նվեր չկա:

– Իհարկե՛ ոչ, դա Նանու Դիեգոյի թաքստոցն էր անցյալ տարի, ու նա գիտի, որ սկզբում հենց այդտեղ եմ փնտրելու: Գուցե պահարանի վերևում է՝ մեծ ննջասենյակում: Ոչ, այնտեղ միայն փոշի ու սարդոստայններ են: Իսկ անկյունում դրված պահարանի հետևո՞ւմ: Բազմոցի տա՞լ: Տանիքի սենյակո՞ւմ՝ դարակի վրա: Սնդուկո՞ւմ: Այո, սնդուկում: Ահա՛: Մի տես, թե ինչ գեղեցիկ կացին է: Նանու Դիեգոյի նվերն ամենալավն է, նա գիտի, թե ինչ վաղուց եմ ուզում իմ կացինն ունենալ, որ կարողանամ ինքնուրույն փայտ կոտրել:

Այս տարվա Լոյեմբերի երկուսին Կոնչետտան վաղ դուրս սահեց մահճակալից, ինչպես Կաստել դի Բիագոյի մյուս բոլոր երեխաները: Եվ նրանց նման էլ սողաց մահճակալի տակ՝ փնտրելով իր շաքարապատ մարդուկին: Սակայն երբ գտավ, ոչ վազեց, ոչ էլ ցատկոտեց տնով մեկ՝ մարդու-

կին թափահարելով: Փոխարենը նրան սեղմեց կրծքին ու փակեց աչքերը: Իհարկե, անցյալ տարի խելագարի պես վազում էր, որովհետև տատիկը՝ Նաննա Նատալիան էր ինչ-որ բան բերել: Կոնչետտան վաղուց արդեն ամեն գիշեր քնից առաջ աղոթում էր Նաննայի համար, չնայած գրեթե բուրոսով չէր հիշում տատիկին, ու նրա մտքում Նաննան նույնացել էր շաքարապատ կնոջ հետ, ով անցյալ տարի հուլիսի թաքցրել շագանակների զամբյուղի մեջ, իսկ դրանից երկու տարի առաջ կտորից տիկնիկ էր բերել, որը մի ամբողջ ժամ որոնելուց հետո Կոնչետտան գտել էր լվացքի զամբյուղում:

Բայց այս տարի Նաննա Նատալիան մի կողմ կքաշվի ու հերթափոխը կհանձնի որդուն, ով ավելի լավ գիտի, թե Կոնչետտան ինչ խաղալիքներ է ուզում: Այս մտքով՝ դուստրը համբուրեց շաքարապատ մարդուկին և նրա զլուխը սեղմեց կրծքին: Արդեն տասն ամիս է: Նա դեռ տեսնում էր, թե շխատողներն ինչպես ներս բերեցին հայրիկին ու տեղավորեցին խոհանոցի սեղանին: Բժիշկ Ֆեդերիկոն և Դոն Իգնասիոն միասին եկան ու քնքշորեն տարան նրան խոհանոցից, որպեսզի չտեսնի հոր՝ գրքի պես բացված գլխի այն մասը, որտեղ հարվածել էր շագանակեղևու ճյուղը: Բայց նա տեսնում էր, ու մինչև հիմա էլ տեսնում է ամեն օր, ամեն անգամ, երբ մայրն այնտեղ բանջարեղեն է կտրատում: Ուղիղ տասն ամիս փորձում էր մտքից ջնջել կոտրված գլխի պատկերը, պատռել-դեն նետել հիշողությունից, ճիշտ ինչպես մայրն էր բորակով խոզանակում սեղանը: Փորձում էր հիշել նրան կյանքով լի, երբ վազելիս ուսերի վրա տանում էր իրեն, երբ բարձրացնում էր, բռնում ձեռքերն ու պտտեցնում այնքան, մինչև ոտքերը կտրվում էին գետնից, ու հողմաղացի պես պտտվում, մինչև երկուսի գլուխն էլ պտտվում էր: Եվ եղեգնյա սրիկզբ: Հիշողություններից ամենագեղեցիկը: Երբ մայրը Կոնչետտային տեղավորում էր մահճակալին ու վերմակները քաշում մինչև կզակը, հայրը ներս էր մտնում, նստում կողքին ու գաղտնի պատմություններ պատմում թզուկների մասին, որոնց հանդիպում էր, երբ գնում էր անտառ՝ վառելափայտ կտրելու, կամ խոսող բլի մասին, որը նրան ասում էր, թե որտեղ փնտրի ամենահամեղ սևկերը: Կոնչետտան սիրում էր այս պատմությունները, բայց հաճախ ասում էր.

– Հայրի՛կ, ինձ համար սրիևզ նվագիր:

Հոր աչքերը փայլում էին, որովհետև նա, ինչպես և դուստրը, սրիևզը նախընտրում էր պատմություններից: Շտապ վերցնում էր այն օջախի վրայի դարակից, խոնավեցնում շուրթերը, փակում աչքերն ու երաժշտությունը բաց թողնում ազատ թռիչքի: Կոնչետտան նույնպես փակում էր աչքերն ու լողում մեղեդիների քնքուշ նոտաների ներքո, որոնք քաղցրանում էին ցողից ծանրացած խոտի բույրից, մեղեդիների, որոնցից տապակած շագանակի հոտ էր գալիս, երգի, որի կրկներգն աշխարհի տերևների պես նարնջագույն էր: Եվ Կոնչետտան հալչում էր թավշե քնի մեջ, որտեղ հանդիպում էր փայտ հավաքող թզուկներին և սևկապուր եփող բվին:

– Երբ մեծանաս, կսովորեցնեմ նվագել, – ասում էր հայրը, երբ տեսնում էր, որ նա էլ է տարված սրիևզով:

Բայց սովորեցնելու ժամանակ չունեցավ, ուստի սրիևզը մնաց իր տեղում՝ օջախի վերևում, անցքերով, որոնք ասես չսպիացող վերքեր լինեին, որոնք ծածկվում են լերդացած արյունով:

– Արագացրո՛ւ, Կոնչետտա, արի՛, փևտրի՛ր նվերդ, – կանչեց մայրը, երբ մտավ ննջասենյակ ու տեսավ, որ նա ուղղակի կանգնած է մահճակալի մոտ, կրծքին սեղմած շաքարապատ մարդուկին:– Դե, դե, արի տեսնենք, թե հայրդ ինչ է բերել քեզ:

Կոնչետտան վախվորած սկսեց քայլել տնով մեկ՝ ավելի շատ մորը գոհացնելու, ոչ թե նվերը գտնելու ցանկությամբ: Հրաշալի գիտեր, որ լավագույն նվերը պառկած էր Սան Վիտտի գերեզմանի մարմարե սալի տակ: Նա նայեց շագանակի զամբյուղի մեջ, որտեղ Նաննա Նատալիան անցյալ տարի թաքցրել էր հողը:

– Չէ՛, չէ՛, այդտեղ պետք չէ փևտրել, – ասաց մայրը թեթև ժպտալով:– Արի, թող օգնեմ քեզ: Ինձ թվում է՝ պետք է որ մեծ ննջասենյակում լինի:

Կոնչետտան գնաց ու փևտրեց ներքևակի տակ, սևդուկի դարակներում, հայելու սեղանիկի հետևում, բարձերի տակ, կերամիկական սափորի մեջ: Այո՛, այն սափորի մեջ էր: Երկար սովորաբար թե տուփ էր՝ փաթաթված շագանակագույն թղթով: Ու երբ Կոնչետտան հանեց այն, արդեն գի-

տեր, թե ինչ էր, և ույնիսկ առանց բացելու: Եղեգնյա սրինգն էր:

– Նվագի՛ր, – պնդեց մայրը, երբ դուստրը սկսեց ուշադիր զննել նվե-  
րը:

Բայց Կոնչետտան շարունակում էր շոյել այն ու ժպտալ՝ ցուցամատը  
սահեցնելով անցքերի շուրջ ու փորձելով որսալ հին մեղեդիների բույրը:

Ստալվորապես ժամը տասին մայրն արդեն հագցրել էր վարդագույն  
զգեստը, որի գոտկատեղին ժապավեններ կային, այն զգեստը, որ նա հա-  
գել էր Սանտա Ռոզալիայի տոնին: Եվ հսկայական ծաղկեփնջով ու սրինգը  
դարչնագույն թղթի մեջ փաթաթած՝ նրանք ճամփա ընկան գերեզմանոց:

Երեմբերի երկուսի այսպիսի առավոտները լիքն էին երեխաներով.  
բոլորը խաղալիքները ձեռքներին վազվզում էին գերեզմանաքարերի  
արանքով: Լուիջին ստվարաթղթից ձի ուներ ու ձին ձեռքին՝ կանգնում էր  
մորաքույր Արխանգելայի գերեզմանի առաջ: Բեռնարդոն ու Ելենան ցատ-  
կոտում էին իրենց Նաննու Դոնատոյի գերեզմանի առաջ, որպեսզի ցույց  
տան նրան, որ գտել են գնացքն ու թեյի ճենապակե հավաքածուն, որ նա  
էր բերել: Այդ ընթացքում նրանց մայրերն ու հայրերը ծաղիկներ էին դնում  
ծաղկամանների մեջ ու մոմեր վառում: Այդ արևոտ առավոտյան Սան Վի-  
տտոի գերեզմանոցը վերափոխվում էր զվարճանքի այգու, որը լուսավոր-  
վում էր ծաղիկների գույներից, մոմերի լույսերից, խաղալիքներից և երե-  
խաների ծիծաղից:

Կոնչետտան կանգ առավ գերեզմանոցի անկյունում, որտեղ թաղված  
էին Նաննա Նատալիան ու Նաննու Ալոիսիոն, մորաքույրների ու այլ հա-  
րազատների հետ, որոնց նա ճանաչում էր միայն մարմարե սալաքարերի  
վրա շրջանակված լուսանկարներից: Կոնչետտայի հայացքը կանգ առավ  
բոլորովին նոր լուսանկարի վրա: Երբեք այդպես չէր տեսել հորը՝ բաճկո-  
նով ու փողկապով: Նա միշտ վանդակավոր ֆլանելե վերնաշապիկներ էր  
հագնում, որոնցից թզուկների, բվերի և սնկապուրի հոտ էր գալիս: Մայ-  
րը խաչակնքեց ու սկսեց աղոթել նրա հավերժական հանգստի համար, և  
որոշ ժամանակ ծիծաղն ու գոռոռոցները մարեցին:

– Շնորհակալություն հայտնե՛լ ես հորդ, – հարցրեց մայրն աղոթքնե-  
րից հետո, երբ նկատեց, որ Կոնչետտան ոչ մի բառ չի արտաբերել:

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

Բայց Կոնչետտան չպատասխանեց: Նա այքը չէր կտրում նոր լուսանկարից, իսկ ձեռքում դեռ ամուր պահել էր սրիկը: Այդ պահին մայրը զգաց, որ հոր ու դստեր միջև ինչ-որ գաղտնի խոսակցություն է գնում, գրույց, որը ոչ մի մայր չպիտի ընդհատի:

– Դարպասի մոտ կսպասեմ քեզ, – քնքշորեն ասաց նա ու հեռացավ մենակ թողնելով նրանց:

Տունդարձի ճանապարհին մայրը նկատեց, որ Կոնչետտան դատարկածեռն է:

– Որտե՞ղ է սրիկը, – հարցրեց նա:

– Թողել եմ նրա մոտ, – պատասխանեց աղջիկը՝ գլուխը կախ, աչքերը գետնին հառած:– Նա ասաց, որ էլի՛ կնվագի ինձ համար:

Այդ օրվանից Կոնչետտան մի նոր ծիսակարգ հորինեց: Դպրոցից վերադառնալիս քայլում էր Սան Վիտտի կողքով: Օրվա այդ ժամին դարպասն արդեն փակ էր, բայց մետաղե ճաղերի արանքից տեսնում էր անկյունային գերեզմանները: Այնտեղ դատարկ էր ու լուռ, ծաղիկները չորացել էին ծաղկամանների մեջ, մոմերը հանգել էին: Կոնչետտան դարոցական պայուսակը գցում էր գետնին, գլուխն անցկացնում մետաղե ճաղերի արանքով ու ականջ դնում:

Նա մեղք չունի: Համարյա մի տարի է անցել այն օրվանից, երբ վերջին անգամ նվագեց: Գուցե մի քիչ ավելի շատ ժամանակ է պետք, որ հիշի: Կամ էլ, ո՞վ գիտի: Ձայնը գուցե այնքան էլ հստակ չի լսվում մարմարի տակից:

Բայց երեկ լսեց: Ճանաչեց նույն կրկներգը, որ նարնջագույն էր աշնանային տերևների պես: Ու այն գիշեր, երբ կույզ էր եկել իր անկողնում, թզուկներն ու բվերն ուզում էին, որ հավատա, որ այն, ինչ լսել էր, ընդամենը կիպարիսների և սոճիների սաղարթների արանքով սուլող քամու ձայնն էր:

Բայց ինքն ավելի լավ գիտեր:

Գիտե՛ր:



## Մայր

Ալբերտը տասնութ տարեկան էր, երբ մահացավ մայրը: Երբեք չափազանց քնքուշ չէր եղել նրա հանդեպ, թեպետ միակ երեխան էր: Կարծես հետևում էր հին խորհրդին՝ երեխաներին սիրիր, բայց երբեք ցույց մի՛ տուր: Երբեք ամուր չէր գրկում ու չէր համբուրում նրան: Միակ սիրատուջոր արտահայտությունը, որ մանկության տարիներին պարզվում էր նրան, շշուկով «Քաղցր երազներն» էր, երբ ծածկոցներով փաթաթում էր նրան, ու մի անգամ էլ, մինչև ննջասենյակի լույսն անջատելը: Ալբերտը նույնիսկ չէր հիշում, թե նա երբևէ անկեղծորեն ծիծաղած լիներ: Երբ հայրը հեռուստացույցով հաղորդումներ էր կայում, ինչպես, օրինակ, «Դեյվ Ալենն ազատության մեջ» կամ «Ահա և Հարիս», պայթում էր ծիծաղից, իսկ մայրը միայն թեթև ժպտում էր: Ու երբ Դեյվ Ալենի կատակները վերաբերում էին եկեղեցուն կամ սեքսին, նա ծամածռում էր դեմքը, վեր կենում բազմոցից ու քայլում խոհանոց: Մի անգամ Ալբերտը նրա ներկայությամբ ասաց՝ fuck, ու մայրն ամիջապես խոհանոցի սեղանից ճանկեց դանակն ու սպառնաց նրան. եթե կարծում է, թե արդեն մեծացել է, որովհետև դեմքին մի քանի մազ է սափրում, ու որ կարող է վերածվել խուլիգանի, իր ձեռքից չի պրծնի: Հայրը մոր թիկունքում ժպտում էր, բայց երբեք չէր հակաճառում կնոջը. ինքն էլ մի քիչ վախենում էր նրանից:

Երբ նա անսպասելիորեն մահացավ, Ալբերտը կարծես մոլորված լիներ: Սովորում էր համալսարանի առաջին կուրսում, իսկ հայրը դեռ աշխատում էր: Ալբերտի ընկերուհին՝ Շերոնը, լքել էր նրան երկու ամիս առաջ ու ասել, որ չի հասցնում պատրաստվել քննություններին, բայց ընդամենը մեկ շաբաթ անց Ալբերտը տեսավ նրան Սայմոնի հետ գրկախառնված: Նրա աշխարհին արագորեն փոփոխվել էր գալիս: Ինքն ու հայրը ստիպված էին ինքնուրույն կարգավորել կյանքը: Երբ Ալբերտը հորից շուտ էր տուն գալիս, դատարկ սենյակներում արծազանք էր լսվում: Այդ փոքրամարմին կնոջը հաջողվում էր իրենով լցնել մի ամբողջ տուն: Երբ հեռացավ, նրանցից տարավ իր պատրաստած ճաշատեսակների սքանչելի բույրե-

րը, ճաշասենյակում սեղանի շուրջ նստելը, հեռուստացույցի առջև դրված բազմոցը, պարտեզի բույսերը, գորգերը, նկարները: Առանց նրա տունն ուղղակի բաղկացած էր առաստաղից ու պատերից:

Անցավ ընդամենը երկու շաբաթ, ու սկսվեցին երազները:

Արթևանում էր գիշերվա կեսին, շնչակտուր, վախեցած ու սարսափահար: Իր ամբողջ կյանքում մայրն ամենայն բարության, արդարության ու սրբության վառ օրինակ էր: Հիմա՝ մահից հետո, վերածվել էր սրբի: Ինչպե՞ս կարող էր նրա մասին այդպիսի երազներ տեսնել: Խավարի մեջ Ալբերտը մեղավոր էր զգում, որ իրականություն էր դարձրել այդ երազը, որ ներսում, ինչ-որ տեղ ապաստան էր տվել ահարկու ցանկություններին, որոնց գոյության մասին չէր էլ իմացել:

Չորս օր հետո նորից երազ տեսավ: Այս անգամ մայրն էր նրան իր մոտ կանչում: Ցատկեց մահճակալի վրա, մոր կողքին, ու զգաց, թե մարմինն ինչպես է սեղմվում նրան:

– Մի՛ անհանգստացիր, – շնչաց նա:– Այնքան ժամանակ ունենք, որքան մեզ պետք է: Այսօր հայրդ աշխատանքից ուշ է տուն գալու:

Հաջորդ առավոտ, երբ իջավ խոհանոց՝ սուրճ ու թոստ վերցնելու, հազիվ էր բարձրացնում հայացքը, որ նայի հորը: Նրան թվում էր, թե դավաճանել է հորը, ու վախենում էր, որ եթե իրենց աչքերը հանդիպեն, հայրը գլխի կընկնի իր զզվելի երազների մասին: Ի՞նչ է կատարվում իր հետ: Մի՞թե բոլորն անցնում են այս ամենի միջով, երբ հարազատ մարդ են կորցնում: Ցնցո՞ւմ է: Բայց եթե այդպես է, ինչո՞ւ է երազում տեսնում նրա պատրաստած մսով կարկանդակը, ամենահամեղն աշխարհում: Կամ նրա գործած սվիտերները: Ինչո՞ւ չի տեսնում իր ճանաչած կնոջը՝ լուրջ, բայց բարի, անուշիկ ու կենսախիղ, ու միշտ պատրաստ օգտակար լինել: Այդ ի՞նչ սատանաներ են թաքնվել նրա ծածկոցների տակ ու ինչո՞ւ են կեղտով լցնում նրա մահճակալը:

Հաջորդ շաբաթվա երազն առաջիններից ավելի վատն էր: Այս անգամ դարձյալ երեխա էր: Փոթորիկ էր, ու երբ ամպրոպը մոտեցավ, թռավ մոր սենյակ, որտեղ մայրը նրան հարմար տեղավորեց իր կողքին: Հենց որ մոր մարմինը հավեց իրեն, ինքն էլ զգաց, թե ինչպես տղամարդ դարձավ:

Հայրը քնած էր նրանց կողքին, մեջքը մոր մեջքին հենած, բայց նրանց համար միևնույն էր: Կարծես ընտելացել էին դրան, որովհետև տղան զգում էր իրենց միջև դավադիր կապը: Երկուսն էլ գիտեին, թե ինչ են ուզում իրարից. տղան զգում էր, որ մայրը հաճույքից խելթափացել է իրեն, շատ ավելի, քան Շերոնը, երբ բացահայտեց նրա մարմնի սքանչելի հաճույքները: Երազում ամուր սեղմվեց մորն ու զգաց, որ դա հենց իր տեղն է, ու թվաց՝ լավագույն, ամենալարված, ամենագեղեցիկ սեռական փորձառությունն է, որ երբևէ ունեցել է: Երբ առավոտյան արթնացավ ու հայտնաբերեց, որ ամբողջ մարմինը կեղտոտ է ու լարծուն, շունչը պահեց ու անհիծեց իրեն:

Հաջորդ օրը՝ առավոտյան, երբ Ալբերտն ու հայրը լուռ նստած էին խոհանոցում, մի բաժակ սուրճի շուրջ, նա դարձյալ խուսափեց հոր հայացքից: Այս անգամ հաստատ չի մատնի իրեն: Հայրը վեր կացավ, երկու բաժակն էլ դրեց լվացարանի մեջ ու մեջքով Ալբերտին դարձած՝ ասաց.

– Նա շատ քաղցր խոսքեր չէր ասում, չէ՞: Բայց վստահ եղիր, շատ էր սիրում քեզ, գուցե ավելի շատ, քան ինձ:

Ալբերտը զգաց, որ դատապարտված է: Տանջվում էր սիրտն ինչ-որ մեկի առաջ բացելու ցանկությունից: Չէր կարող թույլ տալ, որ սատանաները փակված մնան մույթ պահարանում: Դիմեց իր լավագույն ընկերոջը՝ Մարթինին: Նաև՝ Տոնաթանին: Եվ Տորջին: Առաջ միասին զվարճանում էին ու խոսում տարբեր բաների մասին: Բայց երբ Շերոնը հեռացավ, միայն Մարթինն էր իր կողքին. ամեն օր զանգում էր, ստիպում, որ դուրս գա տնից ու պատրվակներ հորինում, որ մտքից հանի նրան: Վստահ էր, որ Մարթինը չի զարմանա: Բայց երբ երկու ընկերները դեմ առ դեմ նստեցին ճաշարանում, Ալբերտն ուղղակի չկարողացավ խոսել այդ մասին: Մարթինը միշտ ասում էր, թե ինչքան կուզեր ավելի նմանվել Ալբերտին. լուրջ, բայց երջանիկ, աշխատասեր, բայց կենսուրախ: Ալբերտն ինչպե՞ս կարող էր փչացնել իր մասին տպավորությունն ու բացահայտել, թե ինչ այլասերված հրեշ է ինքը: Կեղտի մեկն է կամ էլ խելագար: Կերավ բուրգերն ու խմեց սառը թեյը:

Ուրվականներն ավելի ու ավելի համարձակ էին դառնում, և ավելի

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

լացնում էին գիշերային այցերի քանակը: Այդ այցերից մեկի ժամանակ Ալբերտը միտումնավոր ավելի շուտ դուրս եկավ դասից, որպեսզի երկուսով մնան, մինչ հայրն աշխատանքի էր: Մի ուրիշ անգամ էլ երագում տեսավ, թե մայրն ինչպես մոտեցավ իր մահճակալին ու մտավ անկողին: Երբ հարցրեց, թե որտեղ է հայրը, մայրն ասաց, որ քնաբեր հաբ է գցել նրա թեյի մեջ, ու հիմա նա խռմփացնում է: Իսկ մի ուրիշ երագում լսեց հոր մոտեցող ոտնաձայները, երբ նրանք հասել էին հաճույքի գազաթնակետին: Մայրն արագ վեր թռավ տեղից, հագավ խալաթը, իսկ հայրն այդ ընթացքում ծածկոցը քաշեց մինչև կզակն ու ձևացրեց, թե քնած է: Յուրաքանչյուր երագում, երբ ինքն ու մայրը միավորվում էին մեկ ամբողջության մեջ, ավելի մեծ հաճույք էր զգում, քան արթուն ժամանակ: Բայց հենց որ արթնանում էր, մեղքի զգացումը ծանրանում էր սրտին: Նա սկսեց խուսափել հոր հետ ցանկացած խոսակցությունից, խուսափել նրա աչքերից, նրա ներկայությունից: Սկսեց վախենալ, որ մորը կորցնելուց հետո հիմա նաև հորը կկորցնի:

Մի գիշեր, երբ փորձում էր քնելուց առաջ անկողնում կարդալ, հայրը մի բաժակ թեյ բերեց նրան, ինչպես հաճախ էր անում, երբ տեսնում էր, որ մինչև ուշ գիշեր պարապում է: Սովորաբար թեյի բաժակը դնում էր մահճակալի կողքի սեղանիկին և ուղղակի բարի գիշեր մաղթելով՝ դուրս գալիս սենյակից: Բայց այս անգամ մեկ-երկու վայրկյան կանգնեց դռան մոտ ու մեջքով որդուն դարձած՝ ասաց.

– Քաղցր երագներ:

Ալբերտն այնպես վախեցավ, որ քիչ էր մնում թեյի բաժակը գցեր սեղանից:

Հաջորդ առավոտ՝ մոտավորապես հինգն անց կես, Ալբերտն արթնացավ հերթական սարսափից: Բջջային հեռախոսն էր զանգում: Տնաթանկ էր:

– Կներես, որ այսքան վաղ եմ զանգում, բայց դու երևի տեղյակ չես Մարթինի մասին, չէ՞:

– Ի՞նչ է եղել:

– Ավտոլթար... ամբողջ ընտանիքը: Ահավոր է, Բերտ: Մարթինը վերականգանա՞ցման բաժնում է:

Հայրն աշխատանքի ճանապարհին նրան թողեց հիվանդանոցում: Տոնաթանն ու Տորջն արդեն այնտեղ էին: Նրանց ներս չէին թողնում ընկերոջ մոտ: Մարթինի հայրն ու քույրն էլ վերականգանա՞ցման բաժնում էին, իսկ մայրը՝ դիախեռարանի դարակներից մեկում: Ալբերտին թվաց, թե ապակե սափորում է, որտեղից կարելի է միայն հետևել, թե ինչ է կատարվում, բայց ոչինչ չի լսվում, ոչինչ չի հասկացվում: Ճակատագիրը նրա դեմ էր. խլել էր մորը, գիշերվա քունն ու հանգիստը, գողացել էր հոր հոգու հանգստությունը, հիմա էլ տանում էր իր լավագույն ընկերոջը:

Բայց չտարավ:

Մոտ երեք ամիս խնամքից ու բուժումներից հետո Մարթինը վերադարձավ համալսարան: Եվ դարձյալ նրանք երբեմն երեկոյան դուրս էին գալիս՝ մտքերը ցրելու:

Մի օր, երբ ճաշարանում նստած բուրգեր էին ուտում ու սառը թեյ խմում, Մարթինը դարձավ Ալբերտին ու առանց աչքն ուռելիքից կտրելու՝ ասաց.

– Ուզում եմ մի բան ասել քեզ, Բերտ: Միայն քեզ եմ ասում: Անհարմար եմ զգում: Մորս մահից հետո զգվելի երազներ եմ տեսնում:

## ԴժՔԱՆՑ ՊԱՏԱՀԱՐԱՆԵՐ

Պառույուն իր Սուրբծննդյան պատմությունը միշտ ավարտում էր արցունքներով:

– Եվ ի՞նչ էիր նվագում, Նաննու, – Լինոն միշտ բազմաթիվ հարցեր էր տալիս պապիկին, որ նա շարունակի պատմել:

Պառույուն բարձրացնում էր կեպին, ձեռքով շոյում գլխին մնացած սակավաթիվ մազափնջերը: Չգիտես ինչպես, դա արթնացնում էր քնած հիշողությունները:

– Ինչպես միշտ, – կեպին նորից գլխին դնելով՝ պատասխանում էր նա:– Սուրբ ծննդյան մեղեդին, որ հայրս էր սովորեցրել: Մենք խելագարության էինք հասցնում գյուղը: Տաննիկողը դափ էր խփում, իսկ Սպիրուն փայտով թփթփացնում էր զաֆզաֆա թմբուկի կաշվին: Իսկ իմ թևի տակ հին զաքք պարկապուկի փորիկն էր: Գյուղի բոլոր երեխաները վազվզում ու թռչկոտում էին մեր շուրջ, նրանց հետ և հայրս: Այն ժամանակ քո տարիքին էր: Դեռ չէր սովորել կիթառ նվագել, բայց ամեն դեպքում զալիս էր ու դմփդմփացնում փոքրիկ խաղալիք թմբուկը: Այդպես էինք ամեն տարի նշում Սուրբ ծննդյան նախօրեն: Ամբողջ գյուղը սպասում էր մեզ:

– Իսկ հետո?՝ Դադարեցի՞ք դրսում նվագել, – ասում էր Լինոն ու փայտի ևս մի կտոր գցում կրակի մեջ:

Ու հենց այդ ժամանակ Պառույուի աչքերից արցունքներ էին հոսում:

– Հետո եկավ ողբերգությունը, – ասում էր նա, ու այնպես էր հառաչում, ասես սիրտը դեռ վառվում էր:– Դա պատահեց Սանտա Կատերինայի տոնակատարությունից երկու շաբաթ առաջ. հրավառության պայթյունը ցնցեց գյուղը: Խրճիթից միայն ծխացող խճաքարի մի կույտ մնաց: Չգիտեմ, թե ինչու նրանց հետ չէի. մանուկ Հիսուսն ինձ հետ պահեց այդ օրը: Մինչև հիմա ավերածություններն աչքիս առաջ են: Աջուձախ թափված քարեր ու ծխի ամպեր: Տաննիկոլն ու Սպիրուն կտոր-կտոր էին եղել, ու նրանց մարմնի մասնիկները տարածվել էին ամբողջ դաշտով մեկ:

Պաուլոսն շարունակում էր պատմել մեզ, թե ինչպես տեսավ Սպիրոսի կտրված գլուխը ջրհորի կողքին, և Տաննիկոյի թևերը՝ եղջերենու տակ: Այդ տարի Սանտա Կատերինայի տոնակատարությունը չեղարկվեց, ու փոխարենը հանդիսավոր պատարագ մատուցվեց: Այդ տարի Սանտա Կատերինայի դեմքով բացիկներից բացի մեզ տվեցին նաև երկու տղամարդու նկարով և աղոթքով բացիկներ: Այդ տարվա Սուրբ ծննդին գյուղն ապարդյուն սպասում էր պարկապզուկների ու թմբուկների երաժշտությանը:

Լինոն նաև սիրում էր հարցնել պապիկին, թե ինչից է պատրաստված նրա պարկապզուկը, և ծերունին ասում էր, որ ամեն ինչ սկսվում է երիտասարդ այծից, որի նախ կոկորդն են կտրում, իսկ հետո՝ գուխը: Ապա մարմնի բոլոր ոսկորները հեռացվում են պարանոցին արված բացվածքի միջով, զգուշորեն, որպեսզի այդ ընթացքում մաշկը չծակվի: Նա բացատրում էր, թե մաշկն ինչպես պետք է շրջել և կրաքարով տրորել: Լինոյի նաննուն միշտ պատմությունն ավարտում էր՝ ասելով, որ մաշկը կչորանա ու կճաքճքի, եթե երկար ժամանակ չօգտագործես: Հենց այդպես էր պատահել իր պարկապզուկի հետ, որը վերջին անգամ օգտագործել էր շատ տարիներ առաջ: Այսօր այդ խեղճ գլխատված այծիկը լքված ու լուռ ընկած էր հին սևղուկի խավարի մեջ: Այն այլևս երբեք ոչ կմայի, ոչ էլ կվնգվեցա:

– Հիմա այն ոչ մի բանի պիտանի չէ, – մի անգամ Լինոյին ասել էր Նաննու Պաուլոս, երբ տղան խնդրել էր ցույց տալ այն:– Վաղուց էր պետք դեն նետել, – կամացուկ, համարյա քթի տակ կրկնեց նա, երբ նայեցին ցած, ու նա թեթև շոյեց պարկապզուկի դեղնավուն մորթը:

Բայց Լինոն հեշտ չէր հանձնվում: Ամեն տարի՝ Սուրբ ծննդին, պապիկին հիշեցնում էր պարկապզուկի մասին, որը դանդաղ քայքայվում էր դարակում, ու ավելացնում, որ ամբողջ գյուղը դեռ հիշում է նրա երաժշտությունը, Տաննիկոյի ու Սպիրոսի երաժշտությունը: Նա Պաուլոսին աղաչում էր նոր պարկապզուկ պատրաստել, դուրս գալ ու նորից նվագել, որպեսզի ինքն էլ, ինչպես ժամանակին իր հայրը, պապիկի հետ նվագի փոքրիկ թմբուկը: Երբ նորից հասկանում էր, որ պապիկը տեղի չի տալու, Լինոն դիմում էր հորը կամ տատին՝ հուսալով նրանց մեջ դաշնակից գտնել:

– Միայն դա է նրան պակաս, – կոպտում էր տատը:– Առանց այդ էլ

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

անվերջ բողոքում է մեջքի ու ոտքերի ցավից: Ինչ է, մոռացել ես, պապո համարյա ութսուն տարեկան է:

Իսկ հայրն ասում էր.

– Հերիք չէ՞, որ ամեն կիրակի քեզ տանում եմ Ջուբբեյի մոտ:

Լինոյի հայրն ու նրա կիթառը հայտնի էին այնտեղ: Կիրակի առավոտները Ջուբբեյի բարը լցվում էր մարդկանցով, որոնք գալիս էին՝ ոչ միայն լավագույն իմպրովիզացված տեքստերը, այլև Ֆրեդուի հանճարեղ կատարումները լսելու: Լինոն երբեք բաց չէր թողնում առիթը, հոր նվագած մեղեդիների ներքո նուշի ռուջջատա էր խմում: Բայց հենց այդ պատճառով էլ հույս ուներ, որ հայրը կօգնի իրեն համոզել նաևնու Պաուլուսի նորից նվագել:

Մի առավոտ, լույսը հենց նոր բացված, Պաուլուս արթնացավ ու հայացքը հառեց Սանտա Կատերինայի նկարին: Երազ չէր. Սպիրոսն ու Ջաննիկոլն էին խոսում: Նա հայտնվել էր հրավառությունների ավիրված խրճիթի մոտ, ու Սպիրոսի ու Ջաննիկոլի կտրված գլուխներն ակնդետ նայում էին նրան փլատակների կույտից:

– Դեռ ինչքա՞ն պիտի հետաձգես, – միաձայն ասում էին գլուխները:– Չգիտե՞ս, որ գլխիդ վերևում արդեն սուր է կախված:

– Արդեն արթնացե՞լ ես, – հարցրեց ծեր կինը, երբ ներս մտավ ու տեսավ նրա լայն բացված աչքերը:

– Արթնացել եմ, – պատասխանեց Պաուլուս՝ անկողնուց դանդաղ բարձրանալով, – ուզում եմ գնալ Նուրատա, Կոլայից այժմ գնել:

Եվ այդ առավոտ, մինչ ծեր կինը եկեղեցում էր, իսկ Լինոն՝ դպրոցում, լսվում էին փոքրիկ այծի մկկոցն ու ճիչերը. Պաուլուս պատրաստվում էր կտրել նրա կոկորդը: Հետո գլուխն ընկավ ու գլորվեց ջրհորի կողմը: Մինչ ծեր կինը վերադարձավ նպարեղենի խանութից, Պաուլուս արդեն արյունը լվացել էր բակից ու ամեն ինչ տեղափոխել տանիքի սենյակ՝ աշխատանքն այնտեղ շարունակելու: Անցավ մի քանի շաբաթ, մինչև նա վերջապես փակեց պարանոցին արված կտրվածքը, որտեղ զգուշորեն տեղադրեց կովի պոզն ու ոսկորը, որի միջով փչելու էր: Հետո մատների համար բացված



անցքերով եղեգներ տեղադրեց այնտեղ, որտեղ դիմացի ոտքերն էին եղել, իսկ հետևի ոտքերը զարդարեց ժապավեններով ու երիզներով. դրանք հետևից երևում էին, երբ Պաուլոսն այն խցկում էր թևի տակ ու ամուր սեղմած նվագում:

Լինոն աչքերին չհավատաց, երբ տեսավ նոր զաքքը: Ու երբ պալան այն դրեց թևի տակ ու լցրեց իր շնչով, այժը դարձյալ ճչաց, ինչպես բակում: Բայց այս անգամ նրա ձայնը քաղցր էր ու հնազանդ, ինչպես հանգուցյալների լուսանկարով բացիկը:

Եվ ահա, չնայած ծեր կնոջ բողոքներին, Պաուլոսն հաջորդ տարվա Սուրբ Ճննդին նորից դուրս եկավ նվագելու երկու երաժիշտների ուղեկցությամբ, որոնք եկել էին Չումբրել բարից. մեկը դափ էր խփում, իսկ մյուսը՝ թմբուկ՝ պատրաստված կավե կճուճի վրա ձիգ քաշած կենդանու կաշվից: Իսկ Լինոն կանգնած էր առջևում ու խփում էր փոքրիկ խաղալիք թմբուկը, որը նրան բաժին էր հասել հորից: Բայց միևնույն ժամանակ կհասնեին գյուղի հրապարակ, Պաուլոսի ոտքերը սկսեցին տեղի տալ, ու այժի մեղեդին վերածվեց հազիվ լսվող տնքոցի: Նրան տարան քահանայի տուն՝ հանգստանալու ու մի բաժակ թունդ կակատ տվեցին: Պաուլոսն հաճույքով խմեց ու երբ ուշքի եկավ, ու գիտակցությունը պարզվեց, պարկապզուկը հանձնեց Լինոյին ու սկսեց նրան ցույց տալ, թե ինչպես այն լցնել օդով ու ձայն հաղորդել գլխատված ուլիկին:

Պաուլոսի կինը մեծ աղմուկ բարձրացրեց, երբ ծերունուն տուն բերեցին: Նա մեղադրեց Լինոյին, Ֆրեդուին ու Նուրատայից Կոլային, ով նրան վաճառել էր այժը: Ու եթե Լինոն չվազեր վերև՝ տանիքի սեկյակ, պարկապզուկը թաքցնելու, հացի դանակով կտոր-կտոր կաներ այն: Պաուլոսն, բազմոցին լուռ պառկած, նայում էր դանակի շեղբին:

– Մի՛ անհանգստացիր, – շշուկով ասաց Լինոյին:– Մյուս տարի այս ժամանակ արդեն լավ նվագելիս կլինես: Գնա, նվագի՛ր ինձ համար հորդ ու մյուսների հետ:

– Բայց դու էլ կգաս ու կնվագես մեզ հետ, – արագ պատասխանեց Լինոն:

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱԿ

– Հա, ես էլ այնտեղ կլինեմ:

Ձեռքով թեթև գրկել էր թոռան պարանոցը, իսկ հայացքը գամված էր շեղբին, որը Սանտա Կատերինայի դահիճը պահել էր ձեռքում, պատի պատկերում, որտեղ սրբի աչքերը հառած էին երկինք:

## ՈՒՆՈՐՈՒԹՅՈՒՆ

Երբ 1950 թվականին գյուղական ակումբը բացեց «Օսիրիս» կինոթատրոնը, մատերո Ղեջիրջիոն արդեն յոթանասուն տարեկան էր: Նա ապրում էր անմիջապես եկեղեցու դիմացի փողոցում, երկու քայլի վրա: Լավ եղանակին լայն բացում էր առաջին հարկի հյուրասենյակի փեղկափակոցները, ուստի կողքով անցնողները կարող էին վայելել Բրամսի «Հունգարական պար համար 5»-ի՝ նրա փոքր-ինչ հնարամիտ տարբերակը: Ասում են՝ երբ երիտասարդ էր, ջութակ էր նվագում Թագավորական նվագախմբային ակումբում, ու որ երբեմն հանդես էր գալիս սուլո կատարումով: Գյուղի բամբասկոտները գուցե ավելացնեին, որ այն ժամանակ նա նշանված էր Պալերմոյից մի սոպրանոյի հետ, բայց երբ նա հանկարծ հեռացավ ու ամուսնացավ կալաբրիացի ալտ նվագողի հետ, նա այլևս չնայեց ուրիշ կնոջ կողմն ու մինչև կյանքի վերջ մնաց համոզված ամուրի: Երաժշտության մասնավոր դասեր էր տալիս ու լավ եղանակին շարունակում էր նվագել Բրամսի «Պար համար 5»-ը: Ամեն ամիս ուրիշ գյուղից մի քանի օրով երկու ընկեր էին այցի գալիս: Նրանք նվագակցում էին դաշնամուրով ու մանդոլինայով՝ թողնելով, որ Բրամսը մենակ պարի, իսկ նրա տեղը զբաղեցնում էին նեապոլիտանական երգերը, ինչպես, օրինակ, Marechiare-ն և Core'ngrato-ն: Մոտակայքում ապրող բոլոր երեխաները հավաքվում էին նրա հյուրասենյակի բաց պատուհանի մոտ՝ ոչ միայն ավելի լավ լսելու, այլև որպեսզի տեսնեն, թե արցունքներն ինչպես են զորովում Մատերո Ղեջիրջիոյի աչքերից, երբ նվագվում էր՝ մեծ հայելու առաջ հետուառաջ ճոճվելով: Այն ժամանակ պարոն Նիկո Կաչչիատտոլոն դեռ չէր գնել գյուղի առաջին հեռուստացույցը, ուստի նեապոլիտանական երգի այս ինքնաբերական երեկոներն ինքնին իրադարձություն էին, նույնքան ուրախ ու զվարճալի, որքան գյուղի ամենամյա փառատոնը:

Բայց այս ամենը տեղի էր ունենում, մինչ կբացեին «Օսիրիսը»՝ գյուղին կից կառույցը, որը փոխեց մատերո Ղեջիրջիոյի կյանքը. «Օսիրի-

սը» պարերը սուվերում էին Բրամսի ստեղծագործությունները: Բացման երեկոյին ներկայացվեց հրաշալի «Չառլի շքերթը», իսկ գյուղի երաժշտության վարպետն ամենաառաջինն էր, ով տոմս գնեց: Նրան տրամադրեցին միջանցքին մոտ M/10 տեղը: Երբ լսում էր այդ սքանչելի երգերն ու դիտում Տուդի Գարլանդի և Ֆրեդ Աստերայի անթերի պարային համարները, հասկանում էր, որ իր հին հունգարական պարը ոչ այլ ինչ էր, քան խաղացկուն մեղեդի: Վերադարձավ սուվելով «Ղա պատահում է միայն, երբ պարում եմ քեզ հետ» երգը, ու հենց որ տուն հասավ, փորձեց այն ջութակով: Թերևս դա վերջին անգամ էր, որ ձեռքն առավ գործիքը. այդ օրվանից սկսած մաեստրո Ղեջիրջինն համարյա դարձավ «Օսիրիսի» կահ-կարասիի և իրերի մի մասը, հսկայական մետաքսե վարագույրներից ավելի մշտական, որոնք մի կողմ քաշեցին Էկրանի վրա «Համաշխարհային կորությունների» հայտնվելուց անմիջապես առաջ: Նրա դեմքն ավելի մեծ վստահություն էր ներշնչում, քան Վիվիեն Լին, Դորոթի Լամուրը, Քերի Գրանտն ու մյուսները, որոնց լուսանկարները տարիներ շարունակ հանդիսավոր շարված էին պատերին: Բանը հասավ նրան, որ նա ակումբի հետ մասնավոր պայմանագիր կնքեց, ըստ որի M/10 տեղը պիտի պահեին միայն իր համար, ու այդ օրվանից սկսած մաեստրո Ղեջիրջինն իր համար հրաշալի կոր օրակարգ սահմանեց. ամեն օր՝ ցերեկվա չորսն անց կեսին լվացվում էր, սափրվում, հագնում տվիդե պիջակը, սև վերարկուն ու գլխարկը և քայլերն ուղղում եկեղեցի՝ աղոթք ասելու և Սուրբ ընծաները երկրպագելու: Հետո գնում էր սրճարան՝ մի քանի պաստիցցի ու մի բաժակ սուրճ խմելու, և ուղիղ յոթն անց կես՝ դեպի M/10 տեղը: Ամեն օր: Երբեք չէր հարցնում, թե ինչ ֆիլմ են ցուցադրելու: Երբ առյուծի գլուխը երկու անգամ մոնչում էր, կամ հայտնվում էր թիկնոցով երիտասարդ կինը՝ աջ ձեռքում պահած ջահը, կամ նա տեսնում էր սարը, որի գագաթի շուրջ աստղեր էին պտտվում, աչքերը կենտրոնացնում էր Էկրանի վրա, որը մեծ էր, ինչպես ինքնին ամբողջ աշխարհը, ու անմիջապես ընկղմվում կախարդանքի մեջ: Դանդաղ, դանդաղ սովորեց բոլոր դերասանների անունները. հատկապես «Չենդայի բանտարկյալը» ֆիլմում իր սրտի մի մասը նվիրեց Ղեբորա Քերին, իսկ հետո ավելի մեծ մասը՝ Ղեբբի Ուեյնլոյսին «Անձրևի տակ երգո-

ղը» ֆիլմից, և վերջապես մնացածը՝ Ավա Գարդներին «Կիլիմանջարոյի ձյունները» ֆիլմից: Ամեն անգամ, երբ տեսնում եր Ավա Գարդներին Գրեգորի Փեքի գրկում, հիշում եր իրեն Անիեսի գրկում, երբ նրանք ընդմիջումներին սողոսկում էին հանդերձարան: Ու մտածում եր այն ժամանակների մասին, երբ սուպրանոն հանում եր վերնազգեստը, ու ինքը դեմքը թաղում եր նրա փարթամ կրծքի մեջ:

Հարմար տեղավորվելով M/10-ում՝ մատուրո Դեջիրոջինն թալանում եր Չիկագոյի բոլոր բանկերը, անփութորեն վարում մեքենան Սան Ֆրանցիսկոյի ոլոր-մոլոր փողոցներում, մահանում ու վերածնվում, այնպիսի քաղց եր զգում, որ պատրաստ եր ուտել իր երկարաճիտների կաշին ու կոշկաքուղերը, այնպես եր ոսկի տեսչում, որ պատրաստ եր քանդել ֆիլիստինների տաճարը: Նա կրծքին սեղմում եր տիեզերքի ամենազեղեցիկ կանանցից մի քանիսին, մինչև որ Էկրանը մթնում եր, ու այնտեղ հայտնվում եր «Վերջ» գրությունը:

Երբ պիտի ցուցադրվեր «Ֆաթիմայի հրաշքը», նա իմացավ դպրոցականների, հոգևորականների ու միանձնուհիների համար նախատեսված հատուկ ցուցադրությունների օրերը: Մի սարսափելի գիշեր անցկացրեց՝ կուչուձիգ լինելով ու մի կողմից մյուսը պտտվելով, որովհետև չէր կարողանում հարմարվել այն մտքի հետ, որ ինչ-որ չարածճի դպրոցական կամ սմբած ու թորշումած միանձնուհի պիտի զբաղեցնի իր անգին M/10-ը: Ակումբի տնօրենի ու քարտուղարի հետ երկարատև քննարկումներից հետո լուծում գտան, և արդյունքում նա չորս անգամ դիտեց ֆիլմը:

Մատուրո Դեջիրոջինն մոտ տասը տարի պահպանեց այս օրակարգը, մինչև վերջապես սկսեց ամբողջ մարմնի ծանրությամբ հենվել M/9-ի թևերին, ապա դանդաղ ու զգուշորեն հասնել M/10-ին: Ու երբ յուրաքանչյուր ընդմիջման ժամանակ գնում եր զուգարան, բարմեն Տոլուն որդուն ուղարկում եր, որ օգնի նրան վերադառնալ իր տեղը: Երբեմն քնով եր անցնում, հատկապես եթե պատահում եր, որ լրտեսական կամ բռնցքամարտի մասին ֆիլմ էին ցույց տալիս: Բայց երբեք թույլ չէր տալիս, որ նստարանն ապարդյուն սպասի իրեն: Ոչ մի ցուցադրություն բաց չէր թողնում, նույնիսկ

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

երբ մարմնի վրա ցան առաջացավ, ու բժիշկը սպառնաց, որ հիվանդանոց կուղարկի նրան: Այդ օրը տվիդե պիջակին ու սև վերարկուին ավելացրեց նաև շարժիչ ու մի զույգ ձեռնոց ու սովորականի պես դուրս եկավ տնից: Հերթական անգամ դիտում էր «Հրաշքը», ու հնարավոր է, որ հրաշքն իսկապես տեղի ունեցավ, որովհետև այդ երեկո մանկան պես քուն մտավ ու երբ հաջորդ առավոտյան արթնացավ, արդեն լավ էր զգում: Ցանկանալով էր:

Բայց երբ դիտում էր «Ուղևորությունը», ուղղակի չէր հասկանում, թե ինչ է կատարվում իր հետ: Երևի նորից քնով էր անցել, բայց հանկարծ զգաց, որ ինչ-որ մեկը բռնեց ձեռքն ու սեղմեց: Վեր թռավ ու տեսավ, որ կողքին Դեբորա Քերրն է: Ուղիղ նայեց նրա աչքերի մեջ ու ասաց.

– Այո, տարիքի հետ ավելի զգայուն եմ դառնում:

Հետո հասկացավ, որ դիմացի շարքում նստած է Ավա Գարդները, ինչպես նաև Դեբբի Ռեյնոլդսը, Էնն Բաքստերն ու Նատալի Վուդը. բոլորը ժպտում էին, ձեռքերը մեկնում նրա կողմը: Հետո Դեբորան նորից սեղմեց նրա ձեռքն ու ասաց.

– Ուղևորություն՛ը:

«Օսիրիս» կինոթատրոնը մինչև վաթսուևականների սկիզբը հարյուրավոր մարդկանց էր ընդունում, բայց M/10-ը միշտ դատարկ էր մնում: Ոչ ոք չէր ուզում զբաղեցնել այն, նույնիսկ երբ ցուցադրում էին «Մեծ մրցավազքը», ու դահլիճը լեփ-լեցուն էր: Այդպես շարունակվեց այնքան, մինչև «Օսիրիս» ի վերջո փակեց իր դռները, իսկ հանդիսասարահը վերածվեց մի վայրի, որտեղ տեղավորում էին գյուղի փառատոնի համար նախատեսված զարդարանքներն ու ակումբում հավաքված հին ու անպիտան իրերի կույտերը: Որոշ գյուղացիներ դեռ ասում են, որ եթե զբաղեցնես խախուտ M/10 տեղը, անմիջապես կլսես առյուծի մռնչոցը, իսկ մի կին շշուկով կասի.

– Ուղևորություն՛ը: Ուղևորություն՛ը:

## ՀՈՒՇԱՐԱՐ

Ժամանակին մի տարեց հուշարար կար, որը երկար տարիներ թատերախումբ էր ղեկավարում Վալլետտայում: Նաև պիեսներ էր բեմադրում երկու շաբաթը մեկ նոր գործ՝ ներկայացնելով քաղաքի հին բեմի վրա: Նրա պատմությունները սիրո, դավաճանության, սրբերի կյանքի մասին էին, ողբերգություններ, միստերիաներ, կատակերգություններ. արցունքի ու ծիծաղի կատարյալ հավասարակշռություն: Դերասանները շատ էին հպարտանում իրենց ծեր հուշարար-ռեժիսորով, որին լիարժեք վստահում էին: Նա միշտ իր տեղում էր՝ բեմի տակ, անմիջապես ներքևում՝ բեմեզրի լույսերի մեջ, նրանց համար բառեր էր շփշփում կամ արտաբերում, ազդանշան տալով հիշեցնում բեմ մտնել կամ բեմից դուրս գալ ձախ կամ աջ թևից, նստել թե կանգնած մնալ: Շատ արդյունավետ էր ղեկավարում նրանց, Էներգիա ու ոգեշնչում պարգևում, որն անհրաժեշտ էր՝ իրենց դերերին կյանք հաղորդելու համար: Եվ այսպես երջանակի ապրում էին երկար ու ձիգ տարիներ, իսկ բեմը, որի վրա խաղում էին, միշտ պայծառ լուսավորված էր, ծաղկուն, կյանքով ու հուզմունքով լի:

Բայց դերասանները ժամանակի հետ սկսեցին դառնալ թևեր առնել, ու նրանց հանկարծ թվաց, որ տարեց հուշարարը գլխացավանք է իրենց համար: Ինչո՞ւ ամեն բառն արտաբերելիս պիտի կախված լինեն նրա տված ուղղությունից: Ինչո՞ւ պիտի ազդանշանի սպասեն՝ բեմ մտնելու կամ դուրս գալու, բեմի մի կողմից մյուսը տեղափոխվելու համար: Նրանք ի վիճակի են մտածել իրենց դերերի մասին ու անգիր անել յուրաքանչյուր մանրուք, շատ շնորհակալություն: Կարող էին ինքնուրույն բեմադրել պիեսը: Լուրեր տարածվեցին, թե հուշարարը մահացել է, իսկ դերասաններն առանց նրա էլ վատ չեն գլուխ հանում:

Եվ իսկապես, նրանք շարունակում էին մեկը մյուսի հետևից պիեսներ ներկայացնել: Ամեն ինչ մետաքսի պես հարթ էր: Այլևս կարիք չունեին ականջ դնել բեմեզրից լսվող շշուկին: Նրանք հստակ գիտեին, թե ինչ պիտի ասեն, և ինքնավստահ մարմնավորում էին իրենց դերերը: Յուրաքանչ-

## ԹՐԱՆՐ ԶԱՀՐԱ

յուր նոր ներկայացման ավարտին հանդիսատեսն ինչպես հարկն է տպավորված, նույնիսկ ցնցված էր լինում: Պարտերում ոտքի էին կանգնում, բղավում ու ծափահարում, իսկ օթյակներից ծաղիկներ էին նետում բեմ:

Սակայն մի երեկո, պիեսի ամենադրամատիկ տեսարանի կեսին գլխավոր հերոսուհին քարացավ բեմի վախի սուր նուպայից: Նրան թվաց, թե վարագույրն ընկավ իր սովորած բոլոր տողերի վրա: Նրան թվաց, թե բեմի ու բեմեգրի բոլոր լույսերն անջատվեցին, ու միտքը թաղվեց անթափանց խավարի մեջ: Մյուս դերասանները շփոթվեցին, ու որքան շատ էին փորձում օգնել, այնքան նա ավելի էր խարխափում ստվերների մեջ:

Թատրոնի ամենաբարձր օթյակներից մեկից տարեց հուշարարը հետևում էր այդ ամենին: Նա փորձեց շուրջով հուշել դերասանուհու տողերը, ինչպես հին ժամանակներում, և ուզում էր, որ նա լսի ու նայի վերև, տեսնի քաջալերող ժպիտը, որն ինքնավստահություն կհաղորդի նրան: Բայց ոչ ոք ուշադրություն չէր դարձնում, թե ինչ էր կատարվում աղոտ լույսի տակ: Դերասանուհուն մնում էր միայն դուրս գալ բեմից, ու երբ նրա անձնական վարագույրն այդ երեկո ընկավ, ընկավ նաև Վալլետտայի հին թատրոնի վարագույրը: Այդ երեկո հոտնկայս ծափահարություններ չեղան, ու ոչ ոք ծաղիկներ չնետեց բեմ:

Հաջորդ օրը դերասանները հավաքվեցին սեղանի շուրջ ու որոշում կայացրեցին, որ չնայած հուշարարի դարև արդեն իրավամբ ավարտվել է, և որ իրենք ինքնուրույն էլ հրաշալի գլուխ են հանում, գուցե այնքան էլ վատ չէր լինի, որ բեմի թևերի խավարի մեջ լինեիր մեկը, պիեսի տեքստը ձեռքին, և արտակարգ իրավիճակի դեպքում հուշեր իրենց տողերը: Նրանք չէին ուզում պարտավորված զգալ, ինչպես առաջ: Իսկ ինչ վերաբերում է հուշարարին, որոշեցին պայմանավորվել մեկ ուրիշի հետ: Նաև չէին ուզում, որ ինչ-որ մեկն անընդհատ կանգնած լինեիր իրենց դիմաց ու անվերջ հետևեր: Ուզում էին մոռանալ, որ իրենց հետևում են, բայց միևնույն ժամանակ կողքին աջակից ունենալ, որից կարելի է կառչել ճգնաժամի պահերին:

Այդպես էլ արեցին:

Իր օթյակի բարձրությունից երբեմնի հայտնի տարեց հուշարար-ռե-



## ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Ժխտորը ներկա է նրանց բոլոր ներկայացումներին, ճիշտ՝ ինչպես նախկինում: Ամեն երեկո մարգարտաձաղիկների ու քրիզանթեմների մի մեծ փունջ է բերում իր հետ՝ հուսալով, որ մի օր իր մեջ ցանկություն կարթնանա ամենաբարձր օթյակից բեմ նետել ձաղիկները: Իսկ մինչ այդ աչքերը չորս արած հետևում է ներքևում կատարվողին ու ժպտում:

## ՉԵՐՐԻ

Երբ հայրս առաջին անգամ համացանցում բացեց աշխարհի քարտեզը, որ ցույց տա ինձ, թե որտեղ է ծնվել, մտածեցի, թե կատակում է:

– Տե՛ս, Չերրի, – ասաց, – երկարաճիտ կոշիկի տեսքով Իտալիան է: Դրա տակ՝ Սիցիլիան, իսկ փոքր-ինչ ներքևում՝ Մալթան:

Քարտեզի վրա այն հազիվ էր երևում: Ես անմիջապես պատկերացրի մուլտիպլիկացիոն չափսի փոքրիկ կղզիներից մեկը, որի կենտրոնում մենավոր արմավենի էր աճում: Այն ինձ հիշեցնում էր Էկրանի պաշտպանիչ պատկերը, որ հայրս մի ժամանակ ուներ համակարգչում: Կարծեմ կոչվում էր Տոննի Քասթոնեյ: Եղբայրս՝ Էնդրյուն ու ես, ժամերով ուսումնասիրում էինք: Բայց հայրս մեզ ասաց, որ կղզու վրա, որտեղ ինքը ծնվել է, տներ, ճանապարհներ ու քաղաքներ կան: Այդքան բան ինչպե՞ս կարող էր տեղավորվել այդ փոքրիկ կետի վրա: Հաստատ մեր հոգու հետ էր խաղում:

Բայց լավ կլինի ինչպես հարկն է սկսեմ պատմությունը: Միսս Գլենդան միշտ ասում է մեզ, որ յուրաքանչյուր էստե պետք է սկսել լավ նախաբանով. մի բան, որն ինձ այդպես էլ չհաջողվեց: Բայց նորից կփորձեմ: Եվ այսպես, անունս Չերրի է: 12 տարեկան եմ: Ազգանունս Կամիլլերի է, որովհետև հայրս ծնվել է Մալթա կոչվող երկրում, երկարաճիտ կոշիկի տակ տեղավորված այն փոքրիկ կետի վրա: Երբ հայրս 16 տարեկան էր, ավագ եղբոր հետ տեղափոխվեց Ավստրալիա ու մնաց այնտեղ: Երբ մի քիչ մեծացավ, հանդիպեց մայրիկիս, ով ավստրալուտի է (թեև ասում է, որ իր նախա-, նախա-, նախապապն ու տատն իռլանդացիներ էին), նրանք ամուսնացան ու շարունակեցին ապրել այստեղ, Աբոթսֆորդում, Մելբուրնում: Նրանց ամուսնությունից երկու տարի հետո ծնվեց եղբայրս՝ Էնդրյուն, իսկ դրանից երեք տարի անց ծնվեցի ես: Կարծում եմ լավ նախաբան է, ու եթե միսս Գլենդան կարդա, կհավանի:

Մայթայում Ռուզ անունով տատիկ ունեմ ու բազմաթիվ մորաքույրներ ու կուզիկներ: Նաննա<sup>12</sup> Ռուզը յուրահատուկ կիև է: Ոչ միայն որովհետև երբեք չի մոռանում ընտիր նվերներ ուղարկել ինձ ծննդյան տոներին ու Սուրբ ծննդին, այլև վերջերս սկսել ենք էլեկտրոնային նամակներ ուղարկել իրար: Նաննա Ռուզն ապրում է հորեղբայր Փոլի ընտանիքի հետ: Փոլը նրա կրտսեր որդին է: Նա դեռ շատ աշխույժ է, ու երբ տեղափոխվեց որդու մոտ ապրելու, պնդեց, որ իրեն սովորեցնի օգտվել համացանցից, որպեսզի կարողանա կապ պահպանել բոլորիս հետ (այդ թվում և մորաքույր Կարմենի, ով ապրում է Լոնդոնում): Դրանից հետո մենք համարյա ամեն օր հաճույքով գրում էինք իրար. ես նրան պատմում էի, թե ինչ ենք արել դարոցում, ինչով ենք զբաղվել հանգստյան օրերին, իսկ նա ինձ գրում էր Մայթայի ու Հալ Բալզանի՝ այն քաղաքի մասին, որտեղ ապրում էր: Սկզբում ամեն ինչ հարթ էր, բայց շատ շուտով իրավիճակը մի փոքր տարօրինակ դարձավ: Բայց գուցե ես չափից շատ եմ շտապում: Մինչ սկսելս ճիշտ կլիներ ավելի լավ ծրագրել, ուստի մի քանի կետ եմ նշել ու սխեմա գծել, ինչպես միսս Գլենդան է անվերջ քարոզում մեզ:

Դետք է խոստովանեմ, որ, այո, սկսեցի գրել առանց սխեմայի, բայց պատճառն այն է, որ իրականում ընդամենը ցանկանում էի ինձ համար գրել այս պատմությունը, ծանր բեռը զցել ուսերիցս: Դրա համար էլ սկսեցի նրանից, որ զարմացա, երբ առաջին անգամ քարտեզի վրա տեսա Մայթան: Չնայած ավելի ուշ, երբ սեփական աչքերով տեսա կղզին, փոխեցի կարծիքս: Այո, ճիշտ հասկացաք, ես տեսել եմ այն: Անցած ամառ արձակուրդներին գնացիք այնտեղ: Ավստրալիայի համեմատ Մայթան ընդամենը հացի փշուր է, բայց երբ այնտեղ ես, չես զգում դա: Գեղեցիկ վայրեր կան, հիևավուրց տաճարներ, հին պալատներ ու ամրոցներ: Բայց ամենալավ բանը, որ տեսա, Նաննա Ռուզն էր: Նրա աչքերը մոշի պես սև են, ինչպես հորս աչքերը, մազերը՝ բաց դարչնագույն, ներկած, ու նա սենյակից սենյակ այնպես է շարժվում, ասես ոչ մի տեղ հանգիստ չի գտնում: Մի օր ինձ կանչեց իր սենյակ ու ասաց.

<sup>12</sup> *Տարիկ (մայթերեն)*

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

– Տե՛ս, Չերրի, գիտե՞ս, թե սա ինչ է:

Նրա ձեռքին մեծ, ծալծլված անկյուններով ու մաշված կազմով գիրք էր:

– Այս գիրքը հայրիկինդ էր, երբ նա համարյա քո տարիքին էր: Տե՛ս, նրա անունը գրված է այստեղ: Ժամերով թերթում էր այն, իսկ երբեմն նույնիսկ իր հետ անկողին էր տանում:

Հեքիաթների գիրք էր. Սպիտակածյունիկը, Մոխրոտիկը, Կարմիր գլխարկը, Ռապունցելը: Տատիկս հանկարծ բացեց այն ու սկսեց կարդալ: Անկեղծ ասած՝ սկզբում ինձ մի քիչ ձանձրալի թվաց, որովհետև չափազանց մեծ էի այսպիսի պատմության համար, բայց տատիկիս ընթերցանությունը միապաղաղ չէր, ի տարբերություն միսս Գլենդայի: Նա կարդում էր երեք-չորս տող, հետո աչքերը կտրում էր գրքի էջերից, անթարթ նայում ինձ ու մեկնաբանում.

– ... Որովհետև Կարմիր գլխարկի տատիկը շատ նման էր ինձ, ու ինձ նման սիրում էր տորթեր ու քաղցրավենիք: Միայն նայիր այս զամբյուղի նկարին: Այն ծածկված է անձեռոցիկով, բայց գիտեմ, թե ինչ կա այնտեղ: Մի մեծ շոկոլադե տորթ՝ մեջտեղում կտրտած ու մրգեր լցրած: Նաև մի շիշ կարմիր գինի կա, ոչ շատ թունդ ու ոչ շատ քաղցր...

Եվ նա սկսեց ինձ պատմել բոոր մանրամասները. անտառի կենտրոնի տան ձևը, ծաղիկները, որոնք աճում են կաճանի երկայնքով, երգերը, որոնք սիրում էր երգել Կարմիր գլխարկը, և ամենահետաքրքիրն այն էր, որ նա գիտեր աղջկա ու գայլի բոլոր խոսքերը: Ու երբ խոսեց գայլի մասին, հիշում եմ, ասաց մի բան, որ մինչ այդ երբեք մտքովս չէի անցել.

– Եվ ես կարծում եմ, որ այն, ինչ պատահեց Կարմիր գլխարկին, իր մեղքով եղավ: Մայրը նրան զգուշացրել էր կանգ չառնել ու չխոսել նրա հետ, իսկ նա ոչ միայն խոսեց, այլև ասաց, թե ուր է գնում: Քո կարծիքով՝ ինչո՞ւ էր այդպես անում:

Ես ուղղակի նայում էի տատիկիս աչքերին ու ոչ մի բառ չէի ասում:

– Ասաց գայլին, թե ուր է գնում, որովհետև Կարմիր գլխարկը չափից դուրս ինքնահավան էր ու հաճույք էր ստանում գայլի ուշադրությունից: Նրան դուր էր գալիս ծաղրել գայլին: Ուզում էր գրավել նրան, իսկ հետո... բո՛ւմ...

Տատիկը շրխկոցով փակեց գիրքն ու այնպես վախեցրեց ինձ, որ քիչ էր մնում ընկնելի աթոռից: Ավելի ուշ՝ Մելբուրն վերադառնալուց առաջ, տատիկն ինձ տվեց գունավոր թղթի մեջ փաթաթած գիրքը՝ ասելով.

– Ահա, քեզ հետ վերցրու սա, իսկ հորդ անվան տակ կարող ես քո անունը գրել:

Ավստրալիա վերադառնալուց կարճ ժամանակ անց հայրս համակարգչում ծրագիր ներբեռնեց, որպեսզի Ռոուզ տատիկն ու ես կարողանանք էլեկտրոնային նամակներ ուղարկել իրար ու գրուցել: Եվ հենց այստեղ սկսվեցին խնդիրները:

Ես օգտատիրոջ անունը թողել էի «Չերրի», իսկ Նանա Ռոուզը՝ ուղղակի «Նան»:

Չերրի. Բարև, Նանա, ո՞նց ես:

Նան. Բարև, ի՛նչ լավ է, որ համացանցում ես: Դպրոցում այսօր ո՞նց անցավ: Նկարչության մրցույթի արդյունքներն արդեն հայտնի՞ են:

Չերրի. Դեռ ոչ: Բայց չեմ կարծում, թե կհաղթեմ, որովհետև Փեթի նկարը գեղեցիկ էր...

Այդպես խոսեցինք մոտ տասնհինգ րոպե, երբ հանկարծ տատիկիս փոխարեն Էկրանին հայտնվեց մի ուրիշ անուն: Ուրիիս:

Ուրիիս. Ողջույն, Չերրի, սիրունս: Այնքան վաղուց եմ ուզում երկու բառ փոխանակել քեզ հետ: Ո՞նց ես:

Չերրի. Ես ձեզ չեմ ճանաչում: Ո՞վ եք:

Ուրիիս. Ճանաչում ես: Սի՛ անհանգստացիր նկարչական մրցույթի համար: Դու կհաղթե՛ս: Այ կտեսնես:

Դրանից հետո Նանա Ռոուզն անհետացավ երկխոսության պատուհանից: Ամեն անգամ, երբ մտնում էի համացանց ու փորձում կապ հաստատել նրա հետ, հայտնվում էր Ուրիիսը: Կարծես լրտեսում էր ինձ: Ես փորձում էի փոխել օգտատիրոջ անունը. Փոփփի, Ելակ, Ազարա. բայց

անօգուտ: Բացի նրանից, որ Ուրիխը միշտ գլխի էր ընկնում, որ ես եմ, նաև ամեն ինչ գիտեր իմ մասին: Գիտեր, որ մի քանի ամիս առաջ արձակուրդին գնացել եմ Մալթա, հանդիպել Նաննա Ռուզին: Գիտեր հեքիաթների գրքի մասին, որ նա տվել էր ինձ: Գիտեր, որ մի ժամանակ այն պատկանում էր հայրիկիս: Ու երբ ես իսկապես հաղթեցի նկարչական մրցույթում, նույնիսկ գիտեր, թե ինձ ինչ մրցանակ են տվել: Երբ հասկացա, որ այլևս չեմ կարող գրուցել Նաննա Ռուզի հետ, որոշեցի էլեկտրոնային նամակ ուղարկել նրան: Բայց երբ ստացա նրա պատասխանը, այն դատարկ էր, իսկ վերևում գրված էր. «Այս հաղորդագրության բովանդակությունը վիրուս էր պարունակում և ջնջվեց. Ուրիխ Վեբսկան»:

Ես ոչ մեկին չպատմեցի կատարվածի մասին: Գուցե եթե ասեի հայրիկիս, նա իրավիճակից ելք կգտներ: Չգիտեմ, թե ինչու չասացի, ինչու էի ուզում գաղտնի պահել ամեն ինչ: Սկզբում ՌԷրիխը վախեցնում էր ինձ: Սիրտս տակնուվրա էր լինում, երբ միացնում էի համակարգիչը: Բայց դանդաղ, դանդաղ ընտելացա նրան ու արդեն դեմ չէի գրուցել նրա հետ: Մի օր, երբ նրանից առաջ մտա երկխոսությունների պատուհան, հիասթափվեցի:

Հետո մի օր՝ առավոտյան ժամը երկուսին, հորս բջջային հեռախոսը գանգեց: Քնած էի, գրեթե չլսեցի գանգն ու ուշադրություն չդարձրի: Առավոտյան իմացանք, որ հորեղբայր Փոլը նրան ասել է, որ Նաննա Ռուզին տարել են հիվանդանոց:

– Լո՞ւրջ բան է եղել: Ի՞նչ է պատահել, – հարցրինք ես ու Էնդրյուն:

– Նրանք դեռ չգիտեն, – պատասխանեց հայրիկը:– Բարձր ջերմություն ունի, որը չեն կարողանում վերահսկել: Հորեղբայր Փոլը մեզ տեղյակ կպահի, թե ինչ է կատարվում:

Այդ նույն օրը սկսեցի առեղծվածային էլեկտրոնային նամակներ ստանալ: Առաջինը Հանաուից էր, Գերմանիայից.

Guten morgen<sup>13</sup>

Մի՛ անհանգստացիր... Մենք այստեղ ենք, որ օգնենք քեզ: Նա մեզ ոչինչ չի անի, որովհետև լավ ենք ճանաչում նրան ու սովոր ենք նրա խա-

<sup>13</sup> *Բարի լույս (գերմաներեն)*

դերին: Խոստովանում ենք, երբ իր թաթերը թաթախեց այլուրի մեջ, կարողացավ խաբել բոլորիս ու քիչ էր մտում հանձնվեինք, բայց հիմա անգոր է մեր դեմ: Ավելի ուշ կկապվենք: Մինչ այդ ոչինչ մի՛ արա:

Auf Wiedersehen<sup>14</sup>

Յոթ եղբայր

Երկրորդը եկավ մի տեղից, որի մասին երբեք չէի լսել, ու հույս ունեմ, որ կկարողանամ ճիշտ գրել: Կրասնոյե:

Սիրելի՛ Չերրի,

Նրանց հարցը մեզ թող: Ես գիտեմ, թե ինչ կանեմ: Մտադիր եմ մի լավ դաս տալ իմ բաղին ուտելու համար: Ինձ հետ կբերեմ թռչնակին, որովհետև նա այնքան սրամիտ է ու խելացի, որ հաստատ օգնության ձեռք կմեկնի: Ես նանուխի չեմ պատմել այս մասին, որովհետև նա շատ է անհանգստանում ամեն մի մանրուքից: Չգիտեմ՝ արդյոք Յոթ եղբայրներն արդեն կապի են դուրս եկել թե ոչ, բայց ես արդեն հանդիպել եմ նրանց: Հանգիստ եղիր: Նրա վերջը եկել է:

Peter & Co.

Հետո Էլեկտրոնային նամակներ եկան նաև Հունաստանից ու Փարիզից.

Խաղաղությունն քեզ, գեղեցկուհի Չերրի,

Ոչ ոք, այդ թվում և ես, չգիտենք, թե ինչպես է շրջադարձներ ավելացնում սյուժեին: Նա նույնիսկ ունակ է թաքուն սողոսկել մաշկի մեջ, որն իրեն չի պատկանում: Բայց ես նրան հինգ մատիս պես ճանաչում եմ: Լուրը տարածել եմ աշխարհի չորս ծայրերում, ու ոչ ոք չի կարող ասել, որ իրեն չեն զգուշացրել: Դու դեռ երիտասարդ ես ու քնքուշ: Նուրբ ճաշատեսակ՝ պատրաստված ճիշտ և ճիշտ նրա սիրած ձևով: Բայց անհանգստանալու կարիք չկա: Համենայն դեպս, մենք ժամանակին հասանք քեզ:

<sup>14</sup> Յրեսություն (գերմաներեն)

## ԹՐԱՆՐ ԶԱՀՐԱ

Ավելի ուշ կխոսենք:

Քեզ լավ նայիր:

Ե. Սոափ

Սամոս

Ma chere Cerise<sup>15</sup>,

Ներիր ինձ, կարծում եմ այս ամենը մասամբ նաև իմ մեղքով է: Ես այնպիսի տպավորություն ունեի, որ գրքի վերջին էջը գրվել է ու ամուր փակվել: Բայց նա շատ ավելի խորամանկ է, քան ես եմ ստեղծել: Սահել է էջերի արանքով ու գնացել իր ճանապարհով: Բայց մենք ամեն ինչ պատրաստել ենք նրա համար: Ցանցը նետված է: Պատրաստ եղիր, երբ ձայն տանք քեզ:

Voyez-vous bientot.

Respect de

Շառլ Պ.

Փարիզ

Երբ ստացա այս բոլոր նամակները, փորձեցի մտնել երկխոսությունների պատուհան, որպեսզի պարզեմ, թե ինչ է կատարվում. արդյոք Ուլրիխը որևէ բան գիտի՞ նրանց մասին, ի՞նչ նկատի ունեն նրանք, որևէ կապ ունի՞ նրանց հետ: Բայց Ուլրիխը ոչ մի տեղ չկար: Այդ գիշեր ժամը երկուսին հորեղբայր Փոլը նորից գանգեց, որ մեզ տեղյակ պահի, որ Նաննայի վիճակը վատանում է: Հայրս որոշեց այլևս ժամանակ չկորցնել ու Մալթայի թռիչքի տոմս պատվիրեց:

Կիրակի առավոտ էր: Հազիվ էի մտել համացանց՝ Էլեկտրոնային փոստ ստուգելու, երբ Էկրանի անկյունում թրթռացող արկղիկ հայտնվեց. «Խա՛ղ ներքեմնիր», իսկ փոքրիկ տառերով գրված էր՝ «Լավագույն ցանկություններով, Շառլ Պ, և քո բոլոր ընկերներ»:

<sup>15</sup> Իմ սիրելի Չերի (ֆրանսերեն)



Չկարողացա զսպել ինձ: Չափից շատ հետաքրքրասեր էի: Առանց մի վայրկյան մտածելու սկսեցի ներբեռնել: Աչքիս առաջ հայտնվեց մի խիտ անտառ՝ կաճաններով, որոնք օձի պես գալարվում էին՝ տանելով ծառերի ստվերների միջով ու հասցնելով հսկայական անտառի սիրտը: Գլխավոր կաճանի մեջտեղում սև կերպարանք կար. դժվար էր ասել՝ մարդ էր, կենդանի, թե ծառի մռայլ ստվեր: Դրա հետևում՝ քիչ ավելի հեռու, փոքրիկ բալ էր փայլատակում: Կարիք չկար, որ որևէ մեկն ինձ ասի, թե ինչ անեմ: Ես պիտի գրավեի նրա ուշադրությունը, ստիպեի գալ իմ հետևից, բայց թույլ չտայի, որ բռնի ինձ: Հենց որ առաջին քայլն արեցի, ստվերը զգաց ներկայությունս ու շրջվեց իմ կողմը: Հենց այդպես էլ սկսվեց մրցավազքը: Ամբողջ ուժով մի կաճանից մյուսը վազելով, ծառերի ճյուղերի, փոսերի ու ջրափոսերի վրայով ցատկելով, վազելով ու հեկալով՝ չգիտեի, թե ուր եմ գնում: Բայց գիտեի, որ եթե թեկուզ մի վայրկյան կանգ առնեմ, ստվերը կհասնի ինձ: Սկզբում Էկրանին տեսա այն ամենը, ինչ կատարվում էր. անտառը, մռայլ ստվերը, բալը: Ձեռքս շարժում էր մկնիկը կայծակի արագությամբ: Բայց որոշ ժամանակ հետո չհասկացա, թե ինչ եղավ: Ես դեռ տեսնում էի Էկրանը ու շարունակում էի կտկտացնել, բայց միևնույն ժամանակ զգում էի, որ իսկապես անտառում եմ: Լսում էի սեփական ոտնաձայներս թփուտների մեջ. ստվերի ոտնաձայները նույնպես լսում էի: Շունչս կտրվում էր, ու ոտքերս սկսեցին ծանրանալ: Անհանգստացա, որ ի վերջո կընկնեմ, բայց հենց որ թեքվեցի կաճանի վրա, տեսա մի փոքր տուն՝ թեք տանիքով: Շատ լավ գիտեի այդ տունը: Այն շրջապատված էր ցածրիկ սպիտակ պատով, կարճիկ դարպաս ուներ, ու երբ բացում էիր այն, հայտնվում էիր ոջլախոտով ու թավաձաղկով լի այգում, իսկ խճաքարերից կառուցված արահետը տանում էր դեպի շքամուտքի դուռը: Հավաքեցի բոլոր ուժերս ու վազեցի այդ ապաստանի կողմը, բացեցի դարպասը, հասա գունավոր արահետին, ու հենց որ բռնեցի դռան բռնակը, ներսից թույլ ձայն լսեցի.

– Նե՛րս արի, իմ փոքրի՛կ: Նե՛րս արի:

Հայտնվեցի մեծ սենյակում. հյուրասենյակ-ճաշասենյակ-ննջասենյակ-խոհանոց. ամենը՝ մի տեղում: Եվ այնտեղ թույլ, ուժասպառ պառկած էր Նաննա Ռոուզը: Վազեցի նրա մոտ ու հարցրի, թե ինչ է պատահել, ինչի

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

կարիք ունի, ինչով կարող եմ օգնել նրան, բայց հենց որ հասա նրա մահճակալին, դուռը լայն բացվեց, ու ստվերը ներս մտավ:

– Հերիք է, վերջ տուր խաղերիդ, – ասաց նա:– Երբևէ տեսե՞ր՞ ես այսպիսի գեղեցիկ ատամներ:

Գաղափար չունեմ, թե այդ ժամանակ ով ճչաց՞ ե՞ս, թե Նաննա Ռոուզը կամ էլ այն արարածներից մեկը, որոնք հայտնվում էին մի ակնթարթում: Մահճակալի տակից, պահարանից և բոլոր տեղերից: Պապիկի ժամացույցից յոթ մուկ փախավ, յուրաքանչյուրի ձեռքին՝ մի-մի մեծ խոհանոցի դանակ: Սենյակից դուրս եկավ մի տղա, ինձնից մի քիչ փոքր: Չեռքում պարան էր, հանգույցով, իսկ գլխավերևում կապույտ թռչուն էր սավառնում: Հետո շքամուտքով ներս մտավ երկու տղամարդ և ուղղակի կանգնեց ստվերի երկու կողմում: Հաստատ չգիտեմ, թե ինչ պատահեց այն ժամանակ: Ուժեղ ցնցվեցի ու հայտնվեցի համակարգչի դիմաց. մկնիկը դողացող ձեռքոմս էր: Իսկ Էկրանին հայտնվեցին բառերը՝ «Խաղն ավարտված է: Չերրի. 100 միավոր»:

Հաջորդ առավոտ հայրս չմեկնեց Մալթա, ինչպես նախատեսում էր: Հորեղբայր Փոլը գանգահարեց ու տեղեկացրեց մեզ, որ Նաննա Ռոուզի վիճակը լավանում է: Ասաց, որ բժիշկներն ապշած են տարօրինակ հիվանդությամբ և ևույնքան զարմացած նրա առեղծվածային ապաքինումով: Եվ հիմա այնպե՛ս կուզեի, որ միսս Գլենդան կողքիս լիներ, օգնության ձեռք մեկներ ինձ, որովհետև գաղափար չունեմ, թե ինչպես ավարտեմ պատմությունս: Օրինակ կարող եմ ասել, որ այլևս երբեք չբացեցի հեքիաթների այդ գիրքը, որ այն գունավոր թղթով փաթաթած դրված է դարակում: Կամ էլ ասել, որ տատիկս ու ես նորից սկսել ենք զրուցել, առաջվա պես, առանց միջամտության: Բայց չգիտեմ՝ կարելի՞ է այս ամենից լավ եզրակացություն անել: Այո, հիմա հիշո՞ւմ եմ: Հայրս ասաց, որ եթե հաջորդ տարի ոչինչ չպատահի, մենք կվերադառնանք Մալթա: Մտադիր եմ Նաննա Ռոուզին պատմել պատահածի մասին:

Այսպես ավելի լավ է: Ա՛յ սա հաստատ լավ վերջաբան է:

## ՍՏԵՖԱՆԱ

Լուսացույցի լույսը նարնջագույնից փոխվեց կարմիրի: Թոնին սահուն արգելակեց, կանգնեցրեց մեքենան ու սպասեց: Մի ուրիշ մեքենա կանգնեց մյուս գծի վրա. սովորական բան էր, ուստի սկզբում ուշադրություն չդարձրեց: Բայց մինչ լույսերը կարմիր փոխվում էին, մեքենայի մեջ նկատեց Ստեֆանիային: Աղջիկը նայում էր նրան աչքերը լայն բացած, ու հենց որ լույսը կանաչեց, ինչքան ուժ ուներ սեղմեց գազի ոտնակն ու արագացրեց մեքենայի ընթացքը: Թոնին խելագարի պես ըջում էր, որ հասներ նրան, բայց նրանց արանքում հայտնվեց մի ուրիշ մեքենա, ու մինչ կկարողանար առաջ անցնել դրանից, Ստեֆանիայի հետքը կորել էր:

Մտավ կայանատեղի ու արգելակեց: Մինչև հոգու խորքը ցնցված էր և պիտի շունչ քաշեր: Հաստատ Ստեֆանիան էր: Պարզ տեսել էր նրան: Նրա դեմքից երևում էր, որ ինքն էլ էր ճանաչել:

Վստահ էր, որ նա է:

Իր կինն էր:

Բայց արդեն տասնմեկ տարի է, ինչ մահացել էր:

Երբ նետվեց անկողնու վրա, որ վերլուծի իր տեսածը, ու փորձեց ինքն իրեն համոզել, որ կինն ուղղակի շատ նման էր իր կնոջը, սկսեց հիշել որոշ մանրամասներ, որոնք այն ժամանակ վրիպել էին ուշադրությունից, իսկ հիմա մեխվել էին մտքում: Նրա կապույտ Mini Minor-ը, այն, որը տեսնել չէր ուզում պատահածից հետո: Հազին մոխրագույն զգեստ էր, այն զգեստը, որով վերջին անգամ տեսել էր նրան: Պարանոցին կապույտ քարով կախազարդն էր, որ նրա համար էր գնել ծննդյան երեսուներեքամյակի առթիվ: Այո՛, Ստեֆանիան էր: Իսկապե՛ն նա էր:

Ժամանակը գուցե հանգստացներ նրան և օգներ մոռանալ պատահածը, եթե նման դեպքերն անընդհատ չկրկնվեին: Կինոթատրոնում ոչնչով աչքի չընկնող ֆիլմ էր դիտում: Ամեն անգամ, երբ անելիք չէր ունենում, ամեն ինչ ավարտվում էր նրանով, որ գնում էր կինոթատրոն՝ բացարձակ

չմտածելով, թե ինչ է նայում: Կարևորը հսկայական Էկրանի գույների մեջ կորչելն էր... ու մոռանալը: Ֆիլմն արդեն քսան րոպե էկրանին էր, երբ նա զուխը թեքեց դեպի դիմացի շարքի ծայրն ու տեսավ նրան: Ստեֆանիան էր: Չնայած խավարին՝ նկատեց նույն մոխրագույն զգեստն ու ճանաչեց պարանոցի կախազարդի շղթան: Երբ տեսավ նրան, աղջիկը նույնպես նկատեց: Ու դարձյալ լայնացած աչքերով, բերանը բաց նայում էր նրան, ինչպես առաջ: Հետո մի ակնթարթում վեր կացավ տեղից ու դուրս նետվեց: Նրա շարքը դատարկ էր, ու աղջիկն արագորեն հայտնվեց միջանցքում, իսկ իրենը լիքն էր մարդկանցով: Նա ստիպված էր անցնել մարդկանց կողքով՝ ներողություն խնդրելով, որ հրում է նրանց ու բարձրանում ոտնաթաթերին: Մարդիկ փորձում էին ճանապարհ տալ նրան՝ քթի տակ կամացուկ փնթփնթալով, բայց ամեն ինչ չափազանց դանդաղ էր ստացվում: Մինչև հասավ կախասրահ, Ստեֆանիան արդեն անհետացել էր:

Հարցերը սկսվեցին նորից: Ի՞նչ է կատարվում իր հետ: Ինչու՞ է Ստեֆանիան ամեն անգամ փախչում, երբ տեսնում է իրեն: Եվ այդ ի՞նչ արտահայտություն է նրա դեմքին, երբ նայում է իր աչքերի մեջ: Տարակուսա՞նք: Խուճա՞պ, կամ գուցե նույնիսկ վա՞խ:

Շաբաթներ հետո նորից տեսավ նրան Վալլետտայում: Այնտեղ էր գնացել Նոտտե Բիանկայի առիթով, միայնակ, ինչպես միշտ: Հույս ուներ, որ կկորչի մարդկային ամբոխի ու աղմուկի, նվազախմբերի երաժշտության և մարդկանց հրմշտոցների մեջ: Այս անգամ տեսավ նրան, տեսավ շատ ավելի պարզ, քան առաջ: Այս անգամ բարձրածայնեց նրա անունը:

Աղջիկը հետ նայեց ու տեսավ նրան, բայց շփոթված ու խուճապահար՝ խցկվեց բազմության մեջ, որ փախչի: Այս անգամ թույլ չի տա: Ուժեղ հրեց իր դիմաց կանգնած մարդկանց, քիչ էր մնում գետին տապալեր երկու աղջկա: Արմունկներով ու ուներով ճանապարհ էր բացում մարդկանց արանքով՝ ընթացքում անվերջ բղավելով նրա անունը: Ամեն անգամ, երբ Ստեֆանիան լսում էր նրա ձայնը, նայում էր հետ ու ավելի հեռանում: Ո՛չ: Ինքը թույլ չի տա, որ Ստեֆանիան նորից կորչի իր տեսադաշտից, ուստի շարունակում էր գոռոզալ ու հրել՝ զգալով, որ ավելի է մոտենում

նրան: Աղջիկը շարունակ խուճապահար նայում էր հետ, չնայած զգում էր, որ տղամարդը մոտենում է, բայց հետո հանկարծ թեքվեց ձախ ու մտավ սրճարան: Այ այնտեղ հաստատ կհանդիպի նրան:

– Ստեֆանիա:

Մարդաշատ սրճարանը քարացավ. մարդիկ կտրուկ դադարեցին ու տել իրենց պաստիցցին, քասաստին, ֆտիրաները: Նրանք նայում էին՝ սուրճի կամ տաք շոկոլադի բաժակները շուրթերին պահած: Ցնցո՛ւմ: Անակնկալ:

– Տեսա՞ք, որ նա ներս մտավ: Ո՛ր գևաց:

Նայեց աջ, նայեց ձախ, հետո քայլեց սեղանների արանքով՝ ճանապարհին քաշելով սփռոցները: Իսկ երբ տեսավ, որ ոչ ոք չի պատասխանում, փլվեց: Հատակին ընկած, արտասվելով ու գոռգոռալով, աղաչում էր, որ ասեն իրեն.

– Ի՞նչ է կատարվում: Ես խելագարվո՞ւմ եմ: Ստեֆանիա: Օգնե՛ք ինձ, խնդրում եմ, մեկնումեկդ օգնե՛ք: Խղճացե՛ք:

Ստեֆանիան արթնացավ գիշերվա կեսին, իր բղավոցից: Մայրը վագեց նրա մոտ:

– Մամ, երազում նորից թռչելիս տեսա:

– Իմ խեղճ Ստեֆանիա: Սո՛ւրբ Մադոննա:

– Նախորդ անգամների պես եղավ, մա՛մ: Երբ կանգնեց կողքիս, լուսացույցի տակ: Երբ երազում տեսա նրան կինոթատրոնում, հետևի շարքում: Այս անգամ էլ Վալլետտայում էի: Երեկո էր, փողոցները լեփ-լեցուն էին մարդկանցով, ինչպես տոն օրերին: Տեսա, որ թիկունքից մոտենում է ինձ, ու վագեցի, փախա: Մայրիկ, ես միշտ տեսնում եմ նրան արևաշաղախ, դեմքի կեսը ջարդովխուրդ եղած, ինչպես դիահերձարանում, վթարից հետո: Մարսափելի է, մամ: Ահավոր:

– Աղջի՛կս: Նա դեռ խաղաղություն չի գտել, – ու խաչակնքեց:– Արի աղոթենք նրա հոգու համար:

## ԱՌԱՎՈՏՅԱՆ ԺԱՌՆ ԶՈՐԱՆ

Մի ժամանակ՝ մանուկ հասակում, ես էլ եմ անցել ձեռնադրման այն ծեսը, որ հավանաբար ծանոթ է երեխաների մոտ յոթանասուն տոկոսին. դաշնամուրի դասերի եմ գնացել: Չեմ կարծում, թե տարուց ավելի տևեց, որովհետև հիշում եմ միայն մի քանի պատահական պատառիկ, մի քանի ստեղծագործություն և թե ինչպես էի սովորում գամմաները: Ո՞ն է մաժոր. ահա թե ինչ եմ հիշում: Մենք պահեցինք դաշնամուրը, ու երբ ամուսնացա, այն տարա ինձ հետ՝ որպես մանկության հիշատակ, ու որովհետև կահույքի նրբաճաշակ կտոր էր, որը շատ դուր էր գալիս կնոջս: Երբ դուստրս երաժշտության հանդեպ մի քիչ հետաքրքրություն դրսևորեց, առաջարկեցի սկսել պարապմունքները՝ հուսալով, որ նա կշարունակի այնտեղից, որտեղ ես կանգ էի առել: Բայց պարզվեց, որ նա հայրիկի աղջիկն է, ու գուցե նույնիսկ ավելի վատը, որովհետև նույնիսկ չհասավ Ո՞ն մաժորին: Այնպես որ, դաշնամուրը մնաց իր տեղում՝ լուռ հանդիմանելով բոլոր երեխաներին, ովքեր իրեն ստիպում էին հույսով ապրել և հուսահատ մեռնել:

Բայց ես սիրում էի երաժշտություն: Երբ երիտասարդ էի, հայրս պնդում էր, որ լավ երաժշտությունը սկսվում է Վերդիից ու ավարտվում Պուչինիով, բայց ես ժամանակի ընթացքում բացահայտեցի Վիվալդիին, Շոպենին, Լիստին, Մոցարտին, Բեթհովենին և մյուսներին: Մեքենայի մեջ դասական FM ռադիո էի լսում, սկսել էի հավաքել ձայնասկավառակների բավականին լավ հավաքածու: Սակայն որքան էլ շատ սիրեք դասական երաժշտություն, միևնույն է, հաստատ դուր չի գա, երբ ձեզ առավոտյան ժամը չորսին արթնացնի թավջութակի ձայնը:

Ահա թե ինչ պատահեց ինձ հետ:

Ուղիղ ժամը չորսն էր, երբ լսեցի Բախի «Թավջութակի սյուիտ համար 1, սոլ մաժորի» նոտաները: Կես քնած, կես արթուն էի, բայց անմիջապես ճանաչեցի այն: Սկզբում չէի հասկանում երազ է, թե իրականություն, բայց երբ երաժշտության ձայնը բարձրացավ, ավելի ու ավելի հասկացա, իսկ հետո հանկարծ դադարեց, երբ կտրուկ ևստեցի անկողնուս մեջ: Գու-

ցե հարևաններից մեկն է: Չէ, չի կարող պատահել: Իմ տունն անկյունում էր, մի կողմում փողոցն էր, մյուս կողմում՝ այգիս: Պատկից տուն չկա: Եվ ոչ ոք չի ապրում դիմացի տանը: Հանդիպակաց փողոցի ընդարձակ տունն արդեն երկար տարիներ է, ինչ դատարկ է, դե, ուրեմն երազ էի տեսնում: Վերադարձա անկողին:

Բայց հաջորդ առավոտ ուղիղ ժամը չորսին թավջութակի ծայրը կողմից արթնացրեց ինձ: Նույն ստեղծագործությունն էր: Այս անգամ երաժշտությունը ցնցեց ինձ, ու ես ուժ չունեցա տեղից վեր կենալու, ուստի թաղվեցի ծածկոցի մեջ: Երկու քարի արանքում էի. մի կողմից հիացած էի երաժշտության գեղեցկությամբ, մյուս կողմից նյարդայնացած էի, թե այդ ում մտքով է անցել, որ վաղ լուսաբացի այս կուրբ ժամին արթնանալն ու թավջութակ նվագելը լավ գաղափար է: Երբ բավականաչափ ուժ հավաքեցի, որ նստեմ, կատարումը կտրուկ դադարեց: Եվ դարձյալ վեր կացա ու նայեցի պատուհանից, անցա ամբողջ տևով ու ստուգեցի ստերեոն ու առդին: Ամեն ինչ անջատված էր, ինչպես և պետք է լիներ:

Նույնը կրկնվում էր ամեն գիշեր. կարծես թավջութակահարն արդեն բավականաչափ ինքնավստահ էր դարձել, ու կանոնավոր կերպով, առավոտյան ուղիղ ժամը չորսին սկսում էր նվագել: Ինձնից շատ երկար ժամանակ չպահանջվեց, որ հասկանամ. երաժշտությունը ոչ թե դրսից է գալիս, այլ ներսից: Իմ գլխից, ահա թե ինչ: Ամեն ինչ կատարվում էր իմ խելագար ուղեղի մռայլ միջանցքներում: Ամեն անգամ, երբ լսում էի թավջութակի առաջին նոտաները, նախորդ անգամվանից ավելի էի խորասուզվում թմրեցնող ընդարմացման մեջ ու հազիվ էի ուժ գտնում, որ շարժեմ ոտքերիս մատները: Ուրիշ ոչինչ չէր մնում. միայն պառկել տեղում ու մինչև վերջ լսել սյուիտը, մի ամբողջ քսան րոպե:

Հետո մի առավոտ տեսա նրան. երիտասարդ կնոջ աղոտ, լողզված պատկերը: Նստած էր ընդարձակ դատարկ սենյակի կենտրոնում, ոտքերով թավջութակը գրկած, աչքերը փակ, գլուխը մեղմիկ շարժվում էր մեղեդու վերելքի ու վայրէջքի հետ: Սև հագուստով էր, մետաղական շրջանակով ակնոցով: Ձգեստի պես սև մազերը կոկիկ հավաքված էին: Դեմքը մեկամաղձոտ արտահայտություն ուներ: Ու չնայած սկզբում պատկերն աղոտ

Եր, ամեն անցնող օրվա հետ ավելի վառ ու պայծառ էր դառնում, մինչև որ այնքան հստակ տեսա նրան, որ թվաց, թե մի քանի մետր է ինձնից հեռու:

Օրվա մնացած մասը հազիվ էի ոտքի վրա մնում, կարծես հանգստացնող դեղի ազդեցության տակ լինեի: Ի՞նչ էր դա: Չառանցա՞նք: Ինչ որ հիվանդությամբ էի տառապում, գուցե այժիս տեսիլքներ՞ը էին երևում: Բախի երաժշտությունը վերածվել էր մղձավանջի, ու ես ցնցվում էի ամեն անգամ, երբ լսում էի այն. ամեն օր՝ առավոտյան ժամը չորսին, ուրվական-թավջութակահարը խորհրդավոր համերգ էր տալիս: Այլևս դիմանալն անհնար էր: Բայց երբ հասկացա, որ սա վերջն է, որ շուտով խելքս կթոցնեմ, մտքումս գաղափար ծնվեց:

Քնելուց առաջ զարթուցիչս դրեցի չորսին հինգ պակաս, ու երբ լսեցի գանգը, դուրս թռա անկողնուց, հագա խալաթս, վագեցի հյուրասենյակ ու բացեցի դաշնամուրը: Ի՞նչ կարող եմ նվագել: Գամմաներից բացի ոչինչ չէի հիշում: Եվ ահա սկսվեց իմ առավոտյան ժամերգությունը, ելավ և իջավ ռե մաժորում մի օկտավայից մյուսը սահելով: Մի ամբողջ քսան րոպե տունը լցրեցի իմ աղմուկով: Հետո փակեցի դաշնամուրն ու կորից մտա դեռ տաք ծածկոցների տակ ու քնով անցա: Քնի մեջ խորասուզված՝ մոթմոթացի.

– Այսօր ես քո հախից եկա:

Այդպես շարունակեցի մեկ շաբաթից ավելի.. արթնանում էի, մինչև նա կսկսեր, ինձ նետում էի գամմաների գիրկը, միշտ Ռե մաժոր, ու պիտի ասեմ, որ արդեն լավ էր ստացվում: Մի երեկո, սակայն, գնացել էի համալսարանականների հանդիպման և այնտեղ հին ընկերներիս հետ ավելի շատ խմեցի, քան պետք էր: Եվ ամեն ինչ խառնեցի: Չգիտեմ էլ, թե ինչպես կարողացա մեքենայով վերադառնալ, բայց հենց որ տուն հասա, առանց հագուստս հանելու փվվեցի մահճակալին ու անմիջապես քնեցի: Մնաս բարո՛վ, զարթուցիչ:

Արթնացա ժամը չորսին: Ավելի ճիշտ՝ չէ, նա ինձ արթնացրեց, բայց ոչ իր նվագով: Ահա նա, քայլում է իր դատարկ սենյակում. շփոթված է, հուզված: Աթոռը սենյակի մեջտեղում է, իսկ կողքին՝ հատակին, ընկած է թավջութակը՝ մեջքի վրա, դեմքով դեպի վեր, քարացած, ինչպես թրածուկը մահվան եզրագծին, ծովի մակերեսին սահելիս: Եվ այդ պահին հեռվից



լսեցի զամմաների ձայնը: Ոն մաժոր Է: Աղջիկը վազեց պատուհանի մոտ, նայեց դուրս, ու աչքերն արցունքոտվեցին: Պատուհանից տեսնում էի իմ տունը: Հետո նա արագ վերադարձավ աթոռի մոտ, ծանր նստեց, դեմքն առավ ձեռքերի մեջ ու հեկեկաց: Թվում էր՝ թավջութակը նույնպես մեղմորեն արտասվում է՝ հատակի սալիկների վրա փռված: Հանկարծ լսեցի, թե նա ինչպես խոսեց... կամ ավելի ճիշտ՝ լսեցի նրա մտքերը:

– Ինչո՞ւ, – հարցրեց նորից ու նորից:– Ինչո՞ւ չես ուզում լսել: Դու իմ միակ հանդիսատեսն ես: Քեզնից բացի ուրիշ ոչ ոք չունեմ: Ինչո՞ւ ես այդքան քարսիրտ:

Ես սկսեցի զգալ նրա ցավը, միայնությունը, իմ դավաճանությունը, ու այլևս չդիմացա: Հասկացա, թե ինչքան դաժան եմ եղել: Լաց եղանք միասին, երեքով. երիտասարդ կինը, նրա թավջութակն ու ես:

Աղաչեցի, որ ների ինձ:

Հաջորդ առավոտ՝ ժամը չորսին, նորից արթնացա թավջութակի նոտաներից: Այս անգամ Բախի «Սյուիտ համար1»-ը չէր, այլ մի ուրիշ ստեղծագործություն, որը, ինչպես ավելի ուշ պարզեցի, Վիվալդիի «Լարգոն» էր Սի միևնորում: Հիմա նա նվագում էր աչքերը բաց, ուղիղ նայում էր ինձ, ու երբ լարգոն ավարտվեց, վեր կացավ ու ձեռքով ցույց տվեց իմ կողմը:

Այդ օրվանից հետո ոչինչ չի փոխվել: Ամեն օր՝ նոր կատարում, առավոտյան ուղիղ ժամը չորսին: Վերջերս նկատել եմ, որ մազերը թափում է ուսերին ու կարծես այլևս չի կրում կլոր ոսպնյակներով ակնոցը: Յուրաքանչյուր ստեղծագործության հետ, որ կատարում է ինձ համար, նրա մեջ ինչ-որ նոր բան եմ հայտնաբերում. նրա անցյալը, երազանքները, որ այդպես էլ երբեք չիրականացան, չիրագործված ցանկությունները, դատարկ համերգասրահը:

Եվ հիմա էլ չի անհետանում, երբ ցած է դնում թավջութակը: Գալիս է ինձ մոտ, մտնում ծածկոցներիս տակ ու հպվում ինձ: Ստիպել է, որ խոստանամ, որ այս վերջին մասը ոչ ոքի չեմ պատմի:

Կներեք:

## ԿԱՐՄԻՐ ՏԵՏՐԵՐ

Սալվիանս նստեց աթոռի եզրին ու երկար ու կենտրոնացած նայում էր աշխատասենյակի պատերից շրջանակների մեջ կախված դիպլոմներին ու հավաստագրերին: Միակ բանը, որ հասկանում էր, «Օրացիո Դարմանին» անունն էր, որը մուգ տառերով ու ձևավոր ձեռագրով գրված էր դրանց վրա: Սալվիանս տասնիներ տարեկան էր: Շփոթված էր: Ուրախ էր, որ աշխատանքի է անցել պարոն Հորացիո Դարմանինի՝ իրենց քաղաքի լուրջ ու հարգված ներկայացուցչի մոտ, բայց սա նրա առաջին աշխատանքն էր, ու վախենում էր, որ անհարմար կզգա՝ աշխատելով մի ջենթլմենի տանը, որի պատերը ծածկված են դիպլոմներով:

– Եվ այսպես, Սալվիանս, սկզբում կգաք շաբաթական մեկ անգամ, ամեն հինգշաբթի: Ահա տան բանալին: Իմ տունը ձեր տրամադրության տակ է, – ասաց նա, հետո բացեց գրասենյակի դարակն ու հանեց կարմիր կազմով մի տետր:– Տեսնու՞մ եք, – շարունակեց:– Ես այն կթողնեմ սուրճի սեղանիկի վրա: Ամեն անգամ, երբ պետք լինի ինչ-որ բան ասել ձեզ, երկտող կգրեմ տետրում: Նույնը կանեք նաև դուք: Խնդրում եմ զնեք այն ամենը, ինչ պետք է՝ տունը մաքուր պահելու համար, և գրեք տետրում, թե որքան եք ծախսել: Ես փողը կթողնեմ տետրի կողքին:

Այն, ինչ ասաց դրանից հետո, իսկապես ցնցեց աղջկան:

– Չեմ կարծում, թե մենք երբևէ նորից կհանդիպենք:

Վեր կացավ, բերանը ծամածոցեց պարտադրված ժպիտով ու մեկնեց ձեռքը: Սալվիանս իր մոխրագույն, փոքր ու թափանցող աչքերով նայում էր նրան: Նկատեց, որ թանձր մազերը տեղ-տեղ ճերմակին են տալիս, իսկ մազափունջն ընկել է ձախ աչքի վրա: Ձեռքը ոսկրոտ ու սառն էր թվում:

Նույն օրը բացվեց կարմիր տետրի առաջին էջը:

Այն ժամանակ պարոն Հորացիոն ընդամենը քառասուններեք տարեկան էր, բայց ավելի մեծ էր երևում: Ընդամենը չորս ամիս առաջ կնոջ

կորուստը քայքայել էր նրա սիրտը, միտքն ու վարքուբարքը: Երեխաներ չկային, ու միակ բանը, որ մնացել էր նրա կյանքից այս հին տանը, որտեղ ծնվել ու մեծացել էր, խոնավ պատերից կախված հավաստագրերն էին, որոնք ոչ մի տեղ չէին նայում:

Հանկարծ Սալվինան հասկացավ, որ պատասխանատու է այս ահռելի տան համար ու իր առաջադրանքները կատարում էր հատուկ բժախնդրությամբ ու նվիրումով: Ժամանակի ընթացքում սովորեց պլանավորել աշխատանքը. մի օր առաջին հարկն էր մաքրում, հաջորդ օրը՝ երկրորդը, մի ուրիշ օր՝ պատուհանները, ապա՝ գորգերը, և ժամանակ առ ժամանակ՝ ջահերը: Անգիր գիտեր տան յուրաքանչյուր միլիմետրը, հաստ պատերի մեջ ներկառուցված բազմաթիվ սպասքապահարանները, պտուտակավոր քարե աստիճանը տան հետևամասում, որը տանում էր ուղիղ տանիքի մահան, դատարկ ծաղկամաններով լի ընդարձակ այգին, ապակեպատ ցուցափեղկերը, զգեստապահարանները, ծաղկապատվանդանը: Նույնիսկ փնտրում էր սարդերի ու գեկոնների բները: Ամեն հինգշաբթի պտտում էր շքամուտքի բանալին և քայլերն ուղղում ուղիղ դեպի սուրճի փոքր սեղանիկը, բացում կարմիր տետրը: Գիտեր, այնտեղ կգտնի պարոն Հորացիոսի ձայնը, որը սպասում էր իր հետ խոսելու հնարավորությանը:

«Բակ տանող դռան ապակին ավելի լավն է: Շնորհակալություն, Սալվինա»:

«Եթե դժվար չէ, հատուկ ուշադրություն դարձրեք հյուրասենյակին, խնդրում եմ. կիրակի օրը հյուրեր ունեմ: Շնորհակալություն, Սալվինա»:

«Առավոտյան հագուստս կախել եմ այգու պարանից: Եթե դժվար չէ, հեռանալուց առաջ ներս բերեք, խնդրում եմ: Այսօր մի քիչ ամպամած է: Շնորհակալություն, Սալվինա»:

Մինչ երկտողերը կարդալը նախ փնտրում էր «Շնորհակալություն, Սալվինա» բառերը, մի րոպե նայում դրանց, ժպտում: Ու երբ կարգի էր

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

բերում նրա գրասեղանը, փորձում էր մտածել, թե ինչպես պատասխանի, նույնիսկ երբ կոնկրետ ասելիք չէր ունենում: Նրան թվում էր, թե հուսախաբ կանի տանտիրոջը, եթե մի քանի բառ չգրի կարմիր տետրում, չնայած գիտեր. իր գրածը խղճուկ է, բազմաթիվ տառասխալներով, իսկ ձեռագիրը բոլորովին էլ կոկիկ չէ, ինչպես նրանը:

«Պարոն Հորացիո, հատակի երկու շոր եմ գնել և մի շիշ մանրեագերծող կոպ: Ահա կտրոնը»:

«Ավելը (կներեք) բանի պիտանի չէ: Նորը գնե՛մ»:

«Պարոն Հորացիո, պատվիրված նամակ է եկել: Ստորագրել եմ»:

Երբ առաջին անգամ մտավ նրա ննջասենյակ՝ մաքրելու, ասես փշերի վրա լիներ: Ներսում կանգ առավ, տեսավ, որ տնից դուրս գալուց առաջ կոկիկ հավաքել է իր երկտեղանոց մահճակալը: Կնոջ հետ այստեղ ինչքան սեր արած կլինի. բայց սաստեց իրեն, հասկացավ, որ ներխուժել է անձնական կյանք: Եվ միայն ամիսներ հետո ազատ ու հանգիստ զգաց նրա ննջասենյակում ու կարողացավ ներս գալ նույնքան թեթևաքայլ, ինչպես ուրիշ սենյակներ էր մտնում: Մի առավոտ, երբ մահճակալը սովորականի պես կոկիկ հավաքված չէր, գնաց ծածկոցն ուղղելու և տեսավ, որ այն դեռ տաք է: Պարոն Հորացիոն այդ առավոտ երևի քնով էր անցել ու շտապ դուրս եկել տնից: Ծածկոցներն ուղղելիս շոյում էր տաք սավանները, ու երբ հասկացավ, թե ինչ պատկերներ են անցնում մտքով, ձեռքն արագ հետ քաշեց ու խաչակկեց: Պրանից հետո ամեն անգամ, երբ մաքրում էր նրա ննջասենյակը, ձեռքը մոցնում էր ծածկոցի տակ ու միշտ հայտնաբերում, որ սավանները սառն են ու հարթեցված:

Մի օր մտքով անցավ մի քանի խորդենի տնկել բակի դատարկ ծաղկամանների մեջ: Հաջորդ շաբաթ Հորացիոն գրեց. «Ի՛նչ գեղեցիկ ծաղիկներ են: Ընտրիակալություն, Սալվինա», ու նա էլի ծաղիկներ բերեց: Ամեն հինգշաբթի՝ ավելի ու ավելի շատ խորդենիներ, ծարխոտ, գոքանչի լեզու,

ցախկեռաս, մեխակ, մինչև որ մոռացված տարածությունը կտոր առ կտոր լցվեց գարնան բոլոր գույներով ու սկսեց գրավել թիթենիկների ուշադրությունը: Հիմա սովորական ծրարից բացի, որի մեջ տանտերը փող էր թողնում, նաև երկրորդ ծրար էր գտնում: Այս մեկի վրա գրված էր՝ «Բույսերի համար», բայց նա երբեք չէր վերցնում: Թողնում էր սուրճի սեղանիկին, կարմիր տետրի կողքին, որի մեջ պատասխանում էր. «Գումար պետք չէ. ի սրտե»:

Երբ Սալվինան գրեց, որ պատրաստվում է ամուսնանալ, Հորացիոն վարդագույն ծրար թողեց նրան, որի մեջ բացիկ կար ու նվեր՝ հիսուն լիրա: Մեկ տարի անց տետրում գրեց, որ հարսանիքի տարեդարձն է: Այս անգամ ոչ միայն բացիկ թողեց, որի մեջ երկու հարյուր լիրա էր, այլև ասաց, որ ամբողջ ամիս արձակուրդ վերցնի ու վայելի իր կյանքի գրքի ամենագեղեցիկ գլուխը:

Ամեն տարի՝ Սուրբ ծննդին, գումարով բացիկ էր թողնում ու միշտ գրում նույն խոսքերը. «Շնորհակալություն, Սալվինա: Ձեր օգնությամբ իմ տունը ոչ միայն անթերի է, այլև միշտ լիքն է լույսով ու անուշ բույրով»: Սալվինան ի պատասխան բացիկ էր թողնում ու մի շիշ լավ գինի: Մի տարի մայրը մեղրով փքաբլիթներ էր թխել, ուստի հինգ-վեց փքաբլիթ թողեց նրա համար, ու երբ հաջորդ շաբաթ նայեց տետրի մեջ, Հորացիոն գրել էր, որ երբեք ավելի համեղ փքաբլիթներ չէր համտեսել: Այդուհետ դրանք դարձան Սուրբ ծննդի նվերի անբաժան մաս:

Մի առավոտ, երբ Սալվինան ընդամենը վեց ամիս էր աշխատել պարոն Հորացիոյի տանը, իր ծննդյան տոնից մի քանի օր առաջ գումարով բացիկ գտավ: Առաջին անգամ էր այդպիսի նվեր ստանում. ի՞նչ անակնկալ: Որտեղի՞ց էր իմացել ամսաթիվը: «Այս յուրահատուկ օրը ցանկանում եմ ձեզ միայն խաղաղություն և շատ սեր», – գրել էր նա: Նա մտածեց, մտածեց, թե ինչպես մի ձև գտնի ու պարզի, թե երբ է նրա ծննդյան օրը: Արդեն ուզում էր հանձնվել, երբ հիշեց Լեյլին՝ սարկավագին և հոր մոտ ընկերոջը, և հայր Անտոնին, որը վարում էր եկեղեցական գրանցամատյանը: Երբ Լեյլին հոգևորականին համոզեց, որ Սալվինան ազնիվ մտադրություն-

ներ ունի, ևա կատարեց խնդրանքը: Սալվինան երկու ամիս սրտի թրթիռով սպասեց պարոն Հորացիոյի ծննդյան տարեդարծին՝ մտածելով, թե ինչ անի, որ է՛լ ավելի գարմացնի նրան: Եվ ստացվեց: Ծաղկեփունջ՝ սուրճի սեղանիկին, կամիր տետրի կողքին, բացիկ ու մեղրով փքաբլիթների մի ամբողջ տոպրակ, որ մայրն էր թխել հատուկ նրա համար: Հաջորդ շաբաթ տեսավ, որ տետրը բաց է, իսկ կողքին՝ կարմիր մեխակ. «Սալվինա: Սալվինա: Ձեզկից բացի ոչ ոք չի հիշել ծննդյանս տարեդարծը: Ի սրտե շնորհակալ եմ: Ձեր մայրը պիտի Անժելա կոչեր ձեզ»:

Այդպես լցրեցին նրանք հաջորդ երեսուներկու տարիները՝ մաքրութուն անելով, փոշին մաքրելով, ապակին ու պղինծը փայլեցնելով և իրար հաղորդագրութուններ գրելով: Կարմիր տետրը լցվում էր, մեկ ուրիշն էին վերցնում, հետո էլի ուրիշը, հետո էլի: Ու ինչպես կանխատեսել էր առաջին հանդիպման ժամանակ, այլևս երբեք չտեսան իրար:

Մինչև մի առավոտ Սալվինան, շքամուտքի դուռն իր հետևից փակելուց հետո, վերևի հարկի սենյակից խռպոտ հագի ձայն լսեց: Անշարժ կանգնել էր, աչքերը լայն բացած, մեջքով դռանը հենված: Երբ փակվող դռան ձայնը դադարեց արծագանքել տևով մեկ ու մարեց, լավեց ևս մեկը, իսկ հետո թոյլ կանչ՝ Սալվինա:

Ինչքան ուժ ուներ, արագ վազեց վերև, գնաց ուղիղ նրա սենյակ ու կանգնեց դռան շեմին: Անկողնու մեջ, երկու բարծի վրա պառկած էր մի ծեր տղամարդ՝ մանրիկ, կոպ գնացած մոխրագույն աչքերով:

– Պարոն Հորա՛ցիո, – ասաց Սալվինան շեմից:

– Սալվինա, – կրկնեց նա, ու դղրոջուն ձեռքով ցույց տվեց մահճակալից ոչ հեռու աթոռը:

Սալվինան դանդաղ ներս գնաց ու սահեց-սստեց աթոռին: Մտքում-թերթեց պատկերները, որ գտնի այն մեկը, երեսուներկու տարվա վաղեմությամբ. թափանցող աչքերը, մազերի անհնազանդ խոպոպը, ծուռ ժպիտը: Դրանցից ոչինչ չէր մնացել, բայց Սալվինան վստահ էր, նա էր. նա իր անունը տվեց նույն երաժշտական տոնայնությամբ, որը լսում էր ամեն անգամ տետրը բացելիս:

– Պարոն Հորացիո, լավ չե՞ք զգում:

Նա նորից ու նորից հազաց ու ամբողջ ուժով փորձելով ավելի բարձր հենվել բարձերին՝ ասաց.

– Ոչ թե ես եմ վատ զգում, Սալվինա, այլ աշխարհն այլևս չի կարող գլուխ դնել ինձ հետ: Ձգում եմ, այն դանդաղ դուրս է մղում ինձ: Այլևս տեղ չունի ինձ համար:

Սալվինան ուզում էր ասել, որ նա սխալվում է, որ այս աշխարհում բոլորի համար էլ տեղ կա, բայց երբ Հորացիոն տեսավ, որ ուր որ է կբացի բերանն ու կխոսի, ու ձեռքով հասկացրեց, որ լռի ու չխանգարի իրեն:

– Ես ապրում եմ մի աշխարհում, որը չեմ ճանաչում, ու աշխարհն էլ ինձ չի ճանաչում, – սկսեց բացատրել նա: Քաղաքը, որտեղ նա ապրել էր յոթանասունհինգ տարի, այլևս նույնը չէր: Ամեն օր ջնջվում էր նրա կյանքից ևս մի կտոր: Ընդամենը անցյալ տարի վերափոխել էին քաղաքի հրապարակը, ու հիմա այն անճանաչելի էր: Գեղագիտական բարեկարգում. այդպես էին կոչել արմավենիներ տնկելը, ևստարանները փոխելն ու մանր քարերով մայրերը սալարկելը:– Եվ Մանսուետոուի դաշտերը, որտեղից ընկերներս ու ես միշտ բակլա ու խաղող էինք գողանում, նույնպես չկան: Դրա տեղում տնկվել է կառավարական մի մասնաշենք, իսկ իմ մանկության բոլոր փոքրիկ խանութները փակվել են: Հիմա հազիվ եմ ճանաչում փողոցները: Չէ, Սալվինա, սա այլևս այն քաղաքը չէ, որ ճանաչում էի փոքր ժամանակ:

Նա դադար առավ, որ խոր շունչ քաշի, ու երբ Սալվինան տեսավ, որ դարձյալ ցանկանում է բարձրանալ, բարձերը դասավորեց մեջքի հետևում:

– Նույնիսկ ծխական քահանան իր քարոզներում սկսել է նոր բաներ օգտագործել, – շարունակեց նա:– Ուրիշ բաներ, այս ժամանակներից հարմար բաներ, գուցե երիտասարդներից գրավելու, իր կողմը քաշելու համար: Հիմա աշխարհը նրանցն է, ու բոլորը փորձում են հաճոյանալ: Մեր օրերը հաշված են, Սալվինա: Ոչ ոք այլևս հետաքրքրված չէ մեր կյանքում ինչ-որ ներդրում անելով: Փոփոխությունների ժամանակներ են, հագուստի, խոսքի, հրապարակի ծառերի, ճանապարհների, որոնք հատում են գյուղական տարածքը: Եվ ի՞նչ արագությամբ: Հին փոփոխությունները դեռ

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

տեղի չեն ունեցել, իսկ տորերն արդեն գալիս են: Աշխարհը դուրս է մղում ինձ հիմա, ինչպես արգանդը, որը պատրաստվում է ծնունդ տալ մանկիկին, որովհետև նա այլևս տեղ չունի այնտեղ:

Հանկարծ լռեց ու տորից սուզվեց ծածկոցների տակ: Սալվինան ուզում էր հարցնել՝ արդյոք կուզի՞, որ մի բաժակ սուրճ կամ տաք մեղրաջուր կամ մի կտոր թոստ բերի, ինչ-որ բան, ցանկացած բան, որ կշեղի նրան այսադո՞քից: Բայց նա աչքերը համարյա փակ շրջվեց Սալվինայի կողմն ու ասաց.

– Բացի՞ր դարակը: Վերևում մեծ դարչնագույն ծրար կգտնեք: Ձեզ համար է: Բացեք, երբ տուն հասնեք: Իսկ հիմա գնացեք, Սալվինա: Դուրս գալուց առաջ տան բանալին դրեք աշխատասենյակի սուրճի սեղանիկին:

Սրանք Սալվինային ասած նրա վերջին խոսքերն էին: Նա աստիճաններով շատ դանդաղ իջավ աշխատասենյակ ու բանալին դրեց սեղանին: Հեռանալուց առաջ իր հետևից փակեց դուռը: Պայուսակի մեջ, դարչնագույն ծրարի կողքին դրեց նաև բոլոր կարմիր տետրերը:

Դրանք երբեք չեն փոխվի:

Իրեն են պատկանում:



## ՑԵՆՏՐՈՒՆԸ

Կնոջ հանդեպ Ցենտրոնի Չարենի խանդն ակներև էր, ինչպես ոսկե շղթան, որ կրում էր պարանոցին, կամ որ կախել էր տան կողքին՝ հին կառքամառանի դռնից, որպեսզի ուշադրություն գրավի այնտեղ գործող իր շինարարական խանութի վրա: Կամ Red Party սկումբի դրոշմը, որ կախել էր տանիքից: Գյուղում անկասկած չկար մեկը, ով ավելի շատ խանդեր կնոջը, քան Չարեն Ցենտրոնը: Նենային արգելված էր մենակ որևէ տեղ գնալ: Ամուսինը կատարում էր գնումներն ու ամեն առավոտ ուղեկցում նրան ժամը յոթի պատարագին: Երկուշաբթի օրերին Նենան լվացք էր անում ու բարձրանում տանիք՝ կեսօրին շորերը փռելու, որովհետև այդ ժամին խանութը փակ էր, ու ամուսինն էլ կարող էր բարձրանալ տանիք, քանի որ նրանց հարևան Փիջուն գիշերային հերթափոխով էր աշխատում, իսկ ցերեկները տանիքում զբաղվում էր աղավախներով: Ամեն շաբաթ երեկո Չարենը կնոջն ուղեկցում էր քրոջ՝ Թերեզայի տուն, ու մի քանի ժամ մնում այնտեղ, չնայած գիտեր, որ Թերեզան ավելի շատ է ատում իրեն, քան սատանան՝ խաչը: Ու չնայած այս ամենին, դեռ պնդում էր, որ Նենան նայում է ուրիշ տղամարդկանց, որ նրան դուր է գալիս նայել ուրիշ տղամարդկանց և որ մտածում է այդ ուրիշ տղամարդկանց մասին ամեն անգամ, երբ իրենց սեր են անում: Երբ ամեն առավոտ ժամը տասին Նենան մի բաժակ սուրճ էր պատրաստում նրա համար, երկու անգամ թակում էր խանութի դուռը: Չարենը մի քիչ բացում էր դուռը ու նրա ձեռքից վերցնում բաժակը, որովհետև այդ ժամին խանութում միշտ շատ տղամարդիկ կային, ու հաստատ Նենան քիթը չպիտի խոթեր այդպիսի տեղեր:

Նենան գեղեցիկ, փոքրամարմին կին էր՝ խոշոր կապույտ, համարյա փիրուզագույն աչքերով: Գանգուր, ալիքվող շագանակագույն մազեր ուներ, մազափնջերով, որոնք լույսի տակ կակաչի ու հրանունկի էին նման: Պատահական չէ, որ շատ տղամարդիկ հայացքով խժռում էին նրան, չնայած Չարենի անհավանական խանդը հայտնի էր բոլորին: Իր հերթին Նե-

ևան միշտ քայլում էր՝ հայացքը մայթին մեխած, որովհետև հրաշալի գիտեր. եթե նույնիսկ մի վայրկյան բարձրացնի աչքերն այն պահին, եթե հանկարծ կողքով տղամարդ կանցնի, նույնիսկ եթե դա Հայր Անջեյուն էր, տուն հասնելուն պես Չարենն անկասկած վեճ կսկսի:

Չարենը գյուղում հայտնի էր ոչ միայն կնոջ հանդեպ հիվանդագին խանդով: Ոչ էլ շինարարական խանութով, որտեղ միշտ կարգուկանոն էր տիրում: Եվ նույնիսկ ոչ նրա համար, որ միշտ ընդառաջում էր նրանց, ովքեր չէին կարող վճարել: Չարենն ամենից շատ հայտնի էր Ավագ շաբաթվա երթին իր մասնակցությամբ: Ամեն տարի հազվելով էր հռոմեացի ցենտուրիոնի պես, ու երբ մարդիկ տեսնում էին, թե նա ինչպես է քայլում փողոցներով ու կատաղած նայում բազմությանը, քիչ էր մնում հավատային, որ ուրիշ կյանքում իսկապես կայսերական բանակ է ղեկավարել: Կոստյումը նրան մի փոքրիկ հարստություն էր արժեցել. մետաղի յուրաքանչյուր կտոր նիկելապատ էր, սաղավարտի վրա սիրամարգի պոչի չափ փետուրներից հովհար էր, թիկնոցը կարված էր նուրբ թավշից, ասեղնագործված կես դյույմ հաստությամբ ոսկեթելով, վահանը կռված էր առյուծի գլխի տեսքով, թրի բռնակը զարդարված էր թանկարժեք քարերով, իսկ սանդալներին շղթաներ էին ամրացված. Չարեն Յենտուրիոնն անկասկած ի զորու էր միայնակ հաղթել Պունիկյան պատերազմներում: Նա միշտ դուրս էր գալիս անմիջապես հսկայական խաչված Զրիստոսի առջևից, ում բարձր պահած տանում էին, իսկ նրանց հետևում էր Stella Band ակումբը: Երթին մասնակցում էին նրա զինվորներից տասներկուսը, վեցը աջ կողմում, վեցը՝ ձախ, իսկ Չարենը՝ վերջում, վերջին երկուսի արանքում: Այդ պահին նույնիսկ հարազատ հայրը չէր համարձակվում անցնելիս ձեռքով անել նրան:

Եթե Չարեն Յենտուրիոնը լուսավորում էր փողոցը, ապա Տոնի Մեխանիկը ոչ պակաս տպավորիչ էր հովհաննես Սկրտչի կերպարում. նա քայլում էր թափորի առջևից՝ կանխագուշակելով Փրկչի գալուստը: Տոնիին խոշորամարմին տղամարդ էր, մորուք էր պահում Սուրբ Ճննդյան հաջորդ իսկ օրվանից, որպեսզի մինչև Մեծ պահքի սկիզբն արժանի լինի այդ դերին: Երբ տեսնում էին, թե ինչպես է քայլում՝ հագին այժի կաշի, ձեռքին խաչի տեսքով ցուպ, գյուղում բոլորը հասկանում էին. ժամանակը, որ անց-

կացրել է անապատում՝ մորեխ ու վայրի մեղր ուտելով, ավելի լավ է ազդել նրա վրա, քան ցանկացած մարգասրահ: Տոնսին ավելի քան վեց ֆուտ հասակ ուներ, լայն մեջք, ծիծեռնու բուն հիշեցնող ոտքերի մկաններ և պողպատե սրունքներ: Ի՛նչ ճիշտ էր սատանան, որ վախենում էր նրանից:

Հետո մի տարի Տոնսին հիվանդացավ բրոնխիտով, հենց Ծաղկազարդի կիրակի օրը: Այնքան թուլացավ ու տկարացավ, որ ստիպված կանչեցին նրա զարմիկ Բերտուին, և նա Բերտուին փոխանցեց այժի կաշին ու ցուպը՝ աղաչելով, որ իր փոխարեն դուրս գա հրապարակ ու տարածի Աստծո գալստյան բարի լուրը: Բերտուն առանձնապես էքսիբիցիոնիզմի երկրպագու չէր, բայց արդեն մորուք ուներ ու համարյա նրա հասակին էր: Երբ Տոնսին նրան աղաչեց ուրիշին չհանձնել Փրկչի դերը, Բերտուն ուրիշ ոչինչ չկարողացավ անել, միայն ի նշան համաձայնության կախեց գլուխը: Բայց եթե հասակը չհաշվենք, Բերտուն մի գրամ նման չէր իր զարմիկին. փոցխի պես նիհար էր ու քայլելիս թեթև կռանում էր: Ամաչկոտ ու անճոռնի տղայի հայացքի մեջ Հովհաննես Մկրտչի ամենագոր ուժի նշույլն անգամ չկար: Բայց Բերտուն անուշիկ դեմք ուներ ու շագանակագույն խոնավ աչքեր, ու երբ հագավ այժի կաշին, բոլորը համաձայնեցին, որ նա իսկապես նման է սուրբ մարգարեին:

Եվ հենց այստեղ էլ սկսվեց ամեն ինչ:

Ամեն տարի Նենան երթի ընթացքում հիևզ ժամ անցկացնում էր քրոջ՝ Թերեզայի ընտանիքի հետ: Սկզբում գնում, տեղ էին գտնում Red Party ակումբի դիմաց, որպեսզի տեսնեն, որ երթը դուրս է գալիս, իսկ հետո վերադառնան Թերեզայի մոտ՝ մի քանի կտոր ռիկոտայով, մի քանիսն էլ՝ անչոուսով կարկանդակ ուտելու: Հենց որ հնչում էր զանգակատան փայտե կոչնազանգը, վերադառնում էին հրապարակ՝ տեսնելու, թե մարդկանց թափորն ինչպես է հետ գալիս ու միանալու նրանց: Բայց այդ տարի, երբ Բերտուն, կենդանու կաշվի մեջ փաթաթված ու ցուպն ամուր բռնած, անցնում էր Նենայի կողքով, թափորը ստիպված եղավ կանգնել: Ու նրանց աչքերը հանդիպեցին: Նենան արագորեն կախեց գլուխը, հայացքը հառեց մայթին, իսկ Բերտուն՝ անապատին: Բայց հենց որ Նենան տեսավ, որ թա-

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

փորն ուր որ է կշարժվի, բարձրացրեց աչքերն ու նորից հանդիպեց Բերտու-  
ւի աչքերին: Երթի մնացած մասն անցկացրեց՝ հուսալով, որ Նենան կմտնի  
Հորդանան գետը, որպեսզի մկրտություն ընդունի: Իսկ Նենան անչոուսով  
կարկանդակն ուռելիս պատկերացրեց, թե ինչպես է կերակրում Սկրոչին,  
իսկ նա ասում է, որ իր առաջարկածը վայրի մեղուների մեղրից մի քանի  
անգամ լավ է:

Սուրբ Գրիգորիի տոնակատարությունից առաջ և քրոջ օգնությամբ  
Նենան առաջին նամակը ստացավ Բերտուից. այն նվաճեց նրա սիրտն ու  
շնչակտուր արեց: Նրանց նամակագրական հարաբերությունները սկսվե-  
ցին հենց այսպես և Լապսիի Աստվածամոր տոնից առաջ նամակներն  
արդեն հուզմունքից դողդողում էին: Սուրբ Հովհաննեսի տոնի նախօրեին  
խարույկի պես վառվում էին, իսկ Սանտա Մարիայի տոնից առաջ արդեն  
վերածվել էին պայթուցիկներ ուղեկցող պահակախմբի: Այդպես անցավ  
տարին, և մինչև Մոխրե չորեքշաբթի Թերեզան կնքված ծրարներով նա-  
մակներ էր տանում-բերում, իսկ Վեգուվն արդեն ուր որ է ժայթքելու էր  
Պոմպեյի վրա:

Ամեն ինչ ծրագրված էր, երբ եկավ Զատիկի նախորդ շաբաթը: Նենան  
ու Թերեզան սովորականի պես դուրս եկան՝ թափորին նայելու, բայց երբ  
Խաչված Քրիստոսն ու Յենտուրիոնն անցան, այս անգամ Նենան շտա-  
պեց իր տուն՝ սուրալով դատարկ փողոցներով, որովհետև ամբողջ գյուղը  
հավաքվել էր հրապարակում: Կամացուկ ներս մտավ՝ դուռը բաց թողնե-  
լով: Բերտուն նրա հետևից սողոսկեց ներս ու փակեց դուռը: Նրանք ըն-  
դամենը մի ժամ ունեին միասին, ամեն ինչից ու ամենքից ազատ: Մինչ  
Յենտուրիոնը քայլում էր գյուղում՝ բոլորին վախեցնելով իր սպառնալից  
հայացքով ու տարածելով հին կրքերի ամբողջ տառապանքը, Նենան նոր  
կիրք էր գտել շագանակագույն աչքերի ներքո: Հրաբուխը ժայթքեց, ծած-  
կեց նրանց հավված լավայով, ու նրանք իրար խոստացան, որ ոչինչ ու ոչ  
ոք երբեք չի բաժանի իրենց: Հետո ճայթյուն լսվեց, նրանք արագ հագնվե-  
ցին ու ամեն ինչ դրեցին իրենց տեղը: Բերտուն քայլերն ուղղեց իր տուն,  
իսկ Նենան վերադարձավ հրապարակ, որտեղ քույրը սպասում էր նրան  
Red Party ակումբի դիմաց: Ավելի ուշ, երբ Սուրբ շաբաթ օրը սկսեցին երգել

«Գլորիան», Նենան հրեց իր գերեզմանի վրա դրված քարն ու դուրս եկավ տևից՝ ծիծաղելով, երգելով, բղավելով ու պարելով, հարևանների հետ բարեմադթանքներ փոխանակելով Սուրբ զատիկի կապակցությամբ: Չարենը ներս քաշեց նրան՝ մտածելով, որ խելքը թռցրել է:

Նամակները շարունակում էին գալ ու գնալ: Բերտուն սկսեց մասնակցել ժամը յոթի պատարագին. նստում էր առջևի շարքում, կողային զոհասեղաններից մեկի մոտ, որտեղից կարող էր հեշտությամբ հետևել Նենային: Շաբաթական մեկ անգամ գնում էր՝ մեխեր, կես դյույմանոց վրձին կամ հղկաթուղթ գնելու, ճիշտ այն պահին, երբ Նենան մասամբ բաց դռան արանքից փոխանցում էր սուրճի բաժակը: Եվ ամեն շաբաթ գնում էր սուրճ խմելու Պաուլուի անկյունի սրճարանում, որտեղից երևում էր, թե ինչպես է Նենան ամուսնու հետ գնում քրոջ տուն: Նենան էլ իր հերթին շաբաթներն, ամիսներն ու տարվա եղանակներն էր հաշվում՝ անհամբեր սպասելով Չատիկի նախորդ շաբաթվան, որ Աստված իր վրայից վերցնի խաչը, որ կրում էր ամբողջ տարի:

Այսպես անցան տարիները, մինչև այդ տարվա Ավագ շաբաթը, որը մնաց պատմության մեջ: Նենան ու Բերտուն դարձյալ գրկախառնվել էին, ինչպես նախորդ տարիներին, ուստի ոչ մի կերպ չէին կարող կռահել, թե ինչ կպատահի երթի ընթացքում: Հիմա ոչ ոք հստակ չի կարող ասել, թե ինչ եղավ. շատ տարիներ են անցել, բայց ոմանք ասում են, որ մեղավորը Stella Band ակումբն էր, որովհետև նրանք զինվորներին հրեցին Վերոնիկայի արձանի վրա: Մյուսներն էլ ասում են, որ Stella Band-ը միտումնավոր այդպես վարվեց, որովհետև բոլոր տասներեք զինվորները Red Party ակումբի անդամներ էին, որոնց քարտուղարի հետ նրանցից մեկը մի քանի շաբաթ առաջ կռվել էր: Ոմանք էլ պնդում են, որ ամբողջ պատմությունը սկսվեց այն ժամանակ, երբ Լեյին, որը տանում էր Աստղը, դրանով խփեց Չարենի գլխին, և նա բոլորի աչքի առաջ հայտնվեց ծիծաղելի վիճակում: Ինչևէ, բոլորը տաքացան, արյունը գլուխներին հասավ, վիրավորանքներ ու հայիոյանքներ թռան, ու Չարենն իր վահանով գետնին տապալեց Լեյին: Այս լուրը տարածվեց բազմության մեջ, ու Red Party ակումբն ամբողջ կազմով հարձակվեց Stella Band ակումբի վրա: Չինվորները, սրերն ու

## ԹՐԱՌԻ ԶԱՀՐԱ

Նիզակները մերկացրած, վազեցին Վերոնիկայի կողմը, և շուտով ճակատամարտ սկսվեց, ավելի կատաղի, քան երբևէ տեսել էին Հաննիբալն ու Սկիպիո Աֆրիկացին: Բեռնակիրներից ոմանք ցած դրեցին արծանները, և թափորը ցրվեց: Ոմանք մինչ օրս երդվում են, որ լսել են, թե ամենամեծ արծանը՝ Խաչված Քրիստոսը, ինչպես էր անվերջ կրկնում. «Հայր, ներիր նրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում»:

Նենան ու Բերտուն ցատկեցին մահճակալից, երբ լսեցին, թե մուտքի դուռն ինչպես աղմուկով բացվեց ու փակվեց: Նենան խեղազարվեց: Վայրկյանի հարյուրերորդական մասում հազավ գիշերանոցը, իսկ Բերտուն սլացավ դեպի տանիք տանող դուռը: Չարեն ոտքերը թմփթմփացնելով բարձրանում էր աստիճաններով՝ աջուձախ հրելով կահույքը: Երբ հասավ ու տեսավ, որ Նենան պառկած է անկողնում, աչքերից կայծեր թռան:

– Վատ եմ զգում, – ասաց նրան Նենան:– Ինձ թվում է՝ ջերմություն ունեմ:

Բայց Չարենը զգաց հավաճ լավայի հոտը, որով ներձձված էր ամբողջ տունը: Պատյանից հանեց թուրն ու կռացավ, որ նայի մահճակալի տակ:

– Որտե՞ղ ես: Դու՛րս արի: Պիտի վերջդ տամ:

Նա վազում էր տնով մեկ, սենյակից սենյակ, բացեց զգեստապահարաններն ու սպասքապահարանները, պատռեց վարագույրները, որ նայի դրանց հետևում, ծվեն-ծվեն արեց բարձերը՝ ամբողջ տունը լցնելով թռչող փետուրներով: Դուրս եկավ բակ, որ այնտեղ կույնպես փնտրի:

– Երկուսիդ էլ կսպանեմ:

Նենան սարսափահար վազեց խոհանոց ու թաքնվեց գազօջախի ու պատի արանքում:

Հետո Չարենը թեքվեց դեպի տանիք տանող աստիճանները ու երբ տեսավ, որ վերևի դուռը բաց է, ավելի բարձր մոնչաց, քան վահանի վրա պատկերված առյուծը: Վերադարձավ խոհանոց, մագերից բռնեց Նենային ու բարձրացրեց թուրը: Բայց ինքն էլ չիմանալով, թե ինչպես, Նենայի ձեռքը հասավ գրտնակին, որով ճաշի համար պատրաստած ռավիոլի

խմորն էր հարթեցրել, գերբնական ուժով հարվածեց ամուսնու աչքերի ուղիղ կենտրոնում: Չարենն ընկավ մեջքի վրա, անշարժ, ասեղնագործ թիկնոցը վրան:

Շուտով վրա հասան հարևանները և խումբ կազմած՝ Յենտուրիոնիսի բժիշկ Դեբնոյի մոտ տարան, ով Չարենի գլխից հեռացրեց ջախջախված սաղավարտը, հայտարարեց, որ քթի կոտրվածք ունի, և ուղարկեց հիվանդանոց: Այդ ընթացքում Նենան արդեն հավաքել էր շորերն ու գնացել քրոջ տուն: Չատկի կիրակիի լուսաբացին ինքն ու Բերտուն արդեն Գոզոյի ճանապարհին էին:

Այդ տարվա Չատկի շաբաթվա իրադարձությունները մնացին հիշողության մեջ ոչ միայն աղետալի երթի պատճառով, ու ոչ էլ որովհետև ոմանք տեսել էին տանիքից տանիք ցատկող ու ջրհորդաններով վեր մագլցող կիսամերկ մարդկանց, այլև՝ գյուղի պատմության մեջ առաջին անգամ մի փոքրամարմին կին հաղթել էր ցենտուրիոնին:

Ասում են՝ Չարենն այլևս երբեք չմասնակցեց երթերին: Նորոգեց սաղավարտն ու արագորեն վաճառեց կոստյումը՝ ասելով, որ այլևս չի ուզում կապ ունենալ դրա հետ: Սակայն ոմանք ասում են, որ իրականում նա շարունակում էր մասնակցել. դեմքը փակած քայլում էր Մեղքերը քավող Քրիստոսի հետևից՝ մեջքին տանելով աշխարհի մեղքերից ծանրացած խաչը:

## Անգլերեն թարգմանչի խոսքը

Թրևոր Չահրան սիրված ժամանակակից մալթացի գրող է: Նա մեծ հարգանք է վայելում, նրա ստեղծագործությունները զվարճալի են, ստիպում են խորհել: Չահրան բազմաթիվ ժանրերի վարպետ է, և նրա ստեղծագործությունները ծանոթ են ընթերցողների մի քանի սերունդների: Նրա մանկական գրքերը տարիներ շարունակ ծիծաղով են լցրել բազմաթիվ տներ ու դասասենյակներ: Նրա վեպերն ու պատմվածքների ժողովածուները հուզել են նաև անհամար չափահաս ընթերցողների սրտերն ու մտքերը: Նրա նշանակալի ներդրումը մալթերեն գրականության ոլորտում բարձր գնահատականի է արժանացել Մալթայի Գրքի ազգային խորհրդի կողմից, որը 2020 թվականի դեկտեմբերին նրան մրցանակ է շնորհել գրական նվաճումների համար:

«Երեկոյան ժամերգություն» ժողովածուի երեսունյոթ պատմվածքներն ընդգծում են Չահրայի պատմողական տաղանդը. նա մեզ ծանոթացնում է մարդկային իրավիճակների ու զգացմունքների լայն ու հարուստ շրջանակի հետ, որոնց մեծ մասը հաղորդում են տեղական համուհոտը, քանի որ իրադարձությունները ծավալվում են Մալթայում, ընդ որում՝ դրանք տեղի են ունեցել թե՛ անցյալում, թե՛ ներկայում: Որոշ պատմվածքներ ընդհանուր հիշողություններ են անցած-գնացած ժամանակների մասին, ինչպես, օրինակ, «Needles and Pins» պատմվածքը, մյուսները ներկայացնում են կորսված սիրո ցավը, ինչպես «Ambra Solare» պատմվածքը: Մի քանիսը խորհրդավոր հնչերանգ են հաղորդում, ինչպես, օրինակ, «Չորսով՝ առավոտյան» պատմվածքը, խորհրդածություններ ավերածությունների մասին՝ «Արմավի կղզի» պատմվածքը, մանկական ուրախ շփոթմունք՝ «Պիեսը», հեքիաթների ու մանկական ոտանավորների նոր մեկնաբանություններ՝ «Չերրի» և «Ջեքն ու Ջիլը», ինչպես նաև բանաստեղծական կարճ ակնարկներ «Բացիկում»: Ժողովածուն բազմազան է, գրավիչ, հետաքրքրաշարժ ու ճանաչողական:



Թարգմանության ընթացքում փորձել են հնարավորինս մոտ մնալ ժողովածուում Ձահրայի հաղորդած զգացողությանն ու տոնայնությանը, որպեսզի ընթերցողներին փոխանցեն նրա մտքի թեթևությունը. այն ընդգծվում է ձիշտ բառապաշարով ու արտահայտչամիջոցներով, որոնց շնորհիվ Ձահրան դարձել է մալթերենով պատումի վարպետ: Երբեմն, պատմվածքների վրա աշխատելու ընթացքում, սևագրերը փոխանցում էի Թրևորին, և նա գոհ էր մնում՝ վստահեցնելով ինձ, որ զգացողությունը ձիշտ է փոխանցված, և որ ըստ նրա՝ անգլերեն տարբերակում ոճն ընկալված ու հաղորդված է նույնությամբ:

«Երեկոյան ժամերգության» անգլերեն հրատարակությանը երկար էինք սպասում, քանի որ Մալթայում հրատարակիչները սակավաթիվ են և ունեն հստակ պահանջներ: Ուստի երախտապարտ են Merlin Publishers հրատարակչությանը, որն ինձ հնարավորություն տվեց հրատարակել այս գիրքը: Անգլերեն թարգմանությունների առավելությունն այն է, որ պատմվածքները փոքր լեզվից, որով խոսում է գրեթե կես միլիոն մարդ, փոխադրվում են համաշխարհային լեզվի և դառնում հասանելի: Անգլերեն թարգմանվելու դեպքում այս գրական ստեղծագործությունները հասանելի կդառնան բոլոր այլ լեզուների թարգմանիչներին, որոնք յուրօրինակ ցատկահարթակի գործառնությ են իրականացնում: Իրականում «Երեկոյան ժամերգության» անգլերեն թարգմանությունը կամուրջ դարձավ նաև հետագայում ֆրանսերեն թարգմանության համար: Ժողովածուն, որը ֆրանսերեն կոչվում է *Quandvientlafindujour* և հրատարակվել է 2019 թվականին, Փարիզում, L’Harmattan հրատարակչությունում, թարգմանել է Ռոլան Վիարդը: Հնարավոր է, որ ի հայտ գան այլ թարգմանիչներ, որոնք պատմվածքները կթարգմանեն ուրիշ լեզուներով, և ժամանակի ընթացքում ժողովածուն նոր ընթերցողներ կգտնի նաև տարբեր մշակույթներում:

Վերջին մի քանի տարիներին համատեղ ջանք է գործադրվել՝ մալթերեն գրված ստեղծագործություններն այլ լեզուներով թարգմանելու նպատակով ֆինանսական միջոցներ հայթայթելու ուղղությամբ: Այդ համատեքստում հարկ է ընդգծել Մալթայի արվեստի խորհրդի ջանքերը, որն ինձ դրամաշնորհ հատկացրեց ժողովածուի թարգմանության համար: Այն

ինձ հնարավորություն տվեց սերտորեն համագործակցել տաղանդավոր ամերիկացի գրական խմբագիր Մարի Էլեն Քերանսի հետ, ով իր փորձառությանը մեծապես օգնեց վերարտադրել Չահրայի պատմվածքները: Համատեղ աշխատանքն առավել հաճելի ու արդյունավետ է և հրաշալի հավասարակշռում է այն աշխատանքային ժամերը, երբ թարգմանիչը մեկուսանում է՝ որևէ գործ թարգմանելու համար:

Բացի այդ, Գրքի ազգային խորհուրդը ջանասիրաբար աշխատել է գրքի միջազգային տոնավաճառներում՝ փորձելով ուշադրություն հրավիրել մալթացի գրողների, բանաստեղծների և դրամատուրգների վրա, իր վրա վերցնելով մալթերեն ստեղծագործությունների թարգմանությունների համար օտարերկրացի հրատարակիչներ գտնելու առաքելությունը: Վերջապես մալթերեն թարգմանվող գրքերի ամենամյա մրցանակաբաշխության ստեղծումը նույնպես կարևոր դեր է խաղացել գրական թարգմանության հանդեպ տեղացիների շրջանում հետաքրքրությունն ավելացնելու հարցում, հատկապես Մալթայի համալսարանի Թարգմանաբանության բաժնի ասպիրանտական ծրագրի հետ զուգահեռ և, մասնավորապես, այնտեղ վերջերս բացված գեղարվեստական թարգմանության մասնագիտացված հոսքի շնորհիվ:

Քլար ՎԱՍՍԱԼՈ

*Քլար Վասսալոն Մալթայի համալսարանի թարգմանաբանության և նշանագիտության ֆակուլտետի դասախոս է, դասավանդում է Թարգմանության տեսություն և պատմություն, ինչպես նաև՝ գրական թարգմանություն:*

## Հեղինակի մասին

Թրևոր Չահրան ծնվել է 1947 թվականի դեկտեմբերի 16-ին, Մալթայի Չեյտուն քաղաքում:

Ավելի քան 130 հրապարակման հեղինակ է: Առաջին տպագիր գործը՝ *Il-Pulena tad-Deheb* («Ոսկե արձանիկը»), մանկական արկածային վեպ է, հրատարակվել է 1971 թվականին: Այդ ժամանակից ի վեր նա չի դադարել վեպեր, բանաստեղծություններ, աշխատագրքեր ու պատմվածքներ գրել: Մեծերի համար Չահրայի առաջին վեպը՝ *Ta't il-Weraq tal-Palm* («Արմավենու տակ»), 1974 թվականին Մալթայում արժանացել է առաջին մրցանակի: 1995 թվականին նա Գրական մրցանակ է ստացել իր *Is-Seba' Tron'iet Mewwija* («Յոթ կախարդված ցիտրուսային միրգ») վեպի համար: Գրքի ազգային մրցանակաբաշխության ռեկորդակիր է. քսան անգամ մրցանակի է արժանացել երեխաների ու մեծահասակների համար գեղարվեստական ստեղծագործությունների համար:

Չահրայի պիեսները բեմադրվել են Մանոել, Համալսարանական և *St James Cavallier* թատրոններում:

2004թ. դեկտեմբերի 13-ին Մալթայի մախագահը նրան հանձնել է «Հանրապետությանը մատուցած ծառայությունների համար» շքանշան՝ ի նշանավորումն մանկական գրականության ասպարեզում ներդրման: 2012թ. Արվեստի միությունը նրան շնորհել է ոսկե մեդալ, մեկ այլ ոսկե մեդալի էլ արժանացել է Մալթայի ակադեմիայի կողմից: 2018թ. Չահրայի «Նաննա Գենովեֆֆայի գաղտնի կյանքը» վիպակը հրատարակվել է անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և նորվեգերեն թարգմանություններով: Մեծահասակների համար նրա պատմվածքների երկու ժողովածուները հրատարակվել են Ֆրանսիայում:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ջեսաբել .....	6
Ջեքն ու Ջիլը .....	8
Պատրիկը .....	11
Սիրելին .....	15
Շիկահավը .....	17
Անտեսանելի .....	20
Needles and Pins .....	24
Սերը խոլերայի ժամանակ .....	28
Հիսուն սովեր .....	33
Նամակ հորեղբորս .....	36
Դաշնամուր .....	40
Քայլի՛ր .....	44
Բացիկ .....	48
Սուրբ Ֆրենսիս փողոց .....	50
Լուսանկարներ .....	55
Արմավի կղզի .....	58
Պիեսը .....	61
Հավաքածուներ .....	67
Թերթեր .....	70
Դագաղներ .....	74
Գազանը .....	79
Ambra Solare .....	84
Քար ու կավ .....	86
Կարմրահերը .....	96
Երեկ գիշեր մեր հոսանքն անջատել էին .....	99
Մոռացվածը .....	100

Տունը .....	102
Եղեգնյա սրինգը .....	108
Մայր .....	113
Դժբախտ պատահարներ .....	118
Ուղևորությունը .....	123
Հուշարարը .....	127
Չերրի .....	130
Ստեֆանիա .....	139
Առավոտյան ժամը չորսին .....	142
Կարմիր տետրեր .....	146
Ցենտուրիոնը .....	153
<i>Անգլերեն թարգմանչի խոսքը .....</i>	<i>160</i>
<i>Հեղինակի մասին .....</i>	<i>163</i>

Թրևոր ԶԱՀՐԱ

# ԵՐԵԿՈՅԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

*պատմականություն*

Թարգմանություններն անգլերեն տարբերակից՝  
Աստղիկ ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

Մալթերենից անգլերեն թարգմանությունը՝  
Քլար ՎԱՍՍԱԼՈ

Երևան 2023

Հրատ խմբագիր՝ Հ. Ալեքսանյան  
Սրբագրիչ՝ Թ. Մաթևոսյան  
Էջադրումը՝ Ն. Գևորգյանի  
Կազմի ձևավորումը՝ Ա. Օհանջանյանի

Թուղթը՝ օֆսեթ 60x84 1/16: Ծավալը՝ 11 տպ. մամուլ:

Տպագրվել է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպագրատանը:

## **«ԳԵՂԱՐԱՆ» ԽԱՆՈՒՄԻ ԱՄՈՒՆԱԶԱՐՈՎ ԼՈՍԿԱՆ ԵՆ ՄԵՆԵԼ**

- Թատերախաղեր Արևմտյան գրականությունից – 2010
- Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարավի շայունը» (բանաստեղծություններ) – 2011
- Միխայիլ Բախտին. «Դոստոևսկու պոետիկայի խնդիրները» – 2012
- «Սիրիուսի սրնգահարները» (Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով,  
Վ.Խոդասևիչ), (բանաստեղծություններ) – 2012
- Սերգեյ Դովլատով. «Միայնակների երթը» (պատմվածքներ) – 2012
- Յուրի Լոտման. «Միֆ. Անուն. Մշակույթ» – 2012
- Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ» – 2012
- Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»  
(հեքիաթ-վիպակ) – 2013
- Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» – 2014
- Ռուս կոնցեպտուալ պոեզիա (Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,  
Լ.Ռուբինշտեյն) – 2014
- Հենրիխ Սապգիր. «Զուգահեռ մարդը» (բանաստեղծություններ) – 2014
- Վասիլի Գրոսման. «Կյանք և ճակատագիր» (վեպ 2 գրքով) – 2014
- «Կամուրջների խռովությունը. մետամետաֆորիստներ»  
(բանաստեղծությունների անթոլոգիա) – 2015
- Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կավածքը»  
(պատմվածքներ) – 2015
- Անդրեյ Պլատոնով. «Չևենգուր. Գուրը. Պատմվածքներ» – 2015
- Արդի ռուսական վերլիբը (բանաստեղծությունների անթոլոգիա) – 2015
- Չինաստանի մշակույթի քրեստոմատիկա – 2015
- Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» (բանաստեղծություններ) – 2015
- Սա Քայ. «Սրտի արձագանքներ» (բանաստեղծություններ) – 2015



- Եվգենի Վոդյազկին. «Լավը» (վեպ) – 2015
- Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» (բանաստեղծություններ) – 2015
- Ռուս այլախոհական պոեզիա (բանաստեղծությունների անթոլոգիա)– 2015
- Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ (հատորներ 1-9) – 2016-2021
- Յու Ջիան. «Անձրևից պատսպարվող թռչունը» (բանաստեղծություններ) – 2016
- Պավել Բասինսկի. «Լև Տոլստոյ. Փախուստ դրախտից» (վավերագրական վեպ) – 2016
- Զժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» (բանաստեղծություններ) – 2016
- Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո պատմությունը» – 2016
- Լյուդմիլա Պետրովչևսկայա.«Սեր. Երջանկություն. Ռեքվիեմ» (պատմվածքներ)– 2016
- Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» (վեպ) – 2016
- «Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան» (բանաստեղծությունների անթոլոգիա) – 2016
- Ռուս մինիմալիստներ (բանաստեղծությունների անթոլոգիա) – 2016
- Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, բուդդայականությունը, դաոսիզմը, քրիստոնեությունը և չինական մշակույթը» – 2016
- Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» (վեպ) – 2016
- Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» (ազգագրություն) – 2017
- Դոնգ Քիանգ. «Կացարաններ» (ազգագրություն) – 2017
- Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» (պատմվածքներ և բանաստեղծություններ) – 2017
- Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչև Մայակովսկի» (բանաստեղծություններ)– 2017

- Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուղ» (վեպ) – 2017
- Դոնգ Քիանգ. «Թաղում» (ազգագրություն) – 2017
- Դոնգ Քիանգ. «Փառատոներ» (ազգագրություն) – 2017
- Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» (ազգագրություն) – 2017
- Սյաո Ցյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ նախագծերի»  
(գրականագիտություն)– 2017
- Ուան Ցուլիան. «Մերձակցության աստիճաններ»  
(գրականագիտություն) – 2017
- Ֆյոդոր Սոլոգուբ. «Չնշաղևը» (վեպ) – 2018
- Ու Չուն. «Չինական մշակույթ. Փիլիսոփայություն» – 2018
- Մարտիրոս Ռբն. «Մոմերն իգուր են այրվել մեղքերիս համար»  
(վիպակ) – 2018
- Ս.Ուեյսին, Ճ.Սյուն. «Չինաստանի յուրահատկությունները:  
Չինաստանի համաշխարհային ժառանգությունը» – 2018
- «Աղի ձայնը» (20-րդ դարի հետախուսման թվականների սերնդի  
չին գրողների պատմվածքներ) – 2019
- 20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) – 2019
- Գվինեթ Լյուիս. «Քառսի հրեշտակները»  
(բանաստեղծություններ) – 2020
- Պավել Բասինսկի. «Լև Տոլստոյ. Ազատ մարդը»  
(վավերագրական վեպ) – 2020
- Ցերինգ Նորբու. «Փրկված գառը» (տիբեթյան պատմվածքներ) – 2020
- Չժան Յավեն. «Դարերի կանչը. Ստորումներ Հոնկոնգի մասին» – 2020
- Կոնֆուցիոս. «Զրույցներ» – 2020
- Մարիա Գրեչ Գանադո. «Երիզվածք» (բանաստեղծություններ) – 2021
- Էլիզաբեթ Քրիստին Յոկուլսդոտիր. «Մեր, նյարդերի քայքայում.  
Ոչ մի պար Չուկ-քարի վրա» (բանաստեղծություններ) – 2021

Ալեքսեյ Վառլամով. «Մտագայլը» (վեպ) – 2021

Միխայ Այվազ. «Այլ քաղաք» (վեպ) – 2021

Իմանուել Միֆսուդ. «Յուտա Հայմ» (վեպ) – 2021

Խոսեբա Սարիոնանդիա. «Բանտեր և աքսորներ»

(բանաստեղծություններ) – 2022

Չինական ավանդական բժշկության հիմնական հասկացությունների

հանրագիտարան (հատորներ 1-2) – 2022

Նիկոլա Դուրետիչ. «Մահվան և անհետացման ժամանակագրությունը»

(պատմվածքներ) – 2022

Սլավենկա Դրակովիչ. «Ֆրիդա կամ՝ ցավի մասին» (վեպ) – 2022

Սիգիզմունդ Կրժիժանովսկի. «Հիշողություններ ապագայի մասին»

(երեք վիպակ) – 2022

Եվգենի Վոդյազկին. «Կղզու արդարացումը» (վեպ) – 2022



Ոգի-Նաիրի  
Vogi-Nairi

[www.vogi-nairi.am](http://www.vogi-nairi.am)

Էլ. հասցե՝ [vogi.nairi@mail.ru](mailto:vogi.nairi@mail.ru)

հեռ.։ +374 97252323, +374 94259161